


Բարձր

ԳԳՐՆԵՎ ԻՆՑ ՍԻՐՈՎ ՍԻ
ՏՆՈՒՔ
ԲԱՅՐՆԵՐՍԻ,

ԵՆ
ԵՆ ՍԻ
ԳԻՐԵՎ ԻՆՑ
ԻՆՏԵՆՍԻՎՈՒՄ ԻՆՏԵՆՍԻՎՈՒՄ:

PHOTO
MIKE



ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ



* * *	«Ոսկի երակը հնամեայ ցեղիս»
Ե. ԶԱՐԵՆՑ	Բանաստեղծուքի մեներ
Ն. ԱՂԲԱԼԵԱՆ	Եզիշէ Զարեմցի ու Ես
Յ. ՕՇԱԿԱՆ	Եզիշէ Զարեմց
Մ. ՄԱԶՄԱՆԵԱՆ	Եզիշէ Զարեմցի դիմանկարը
Մ. ՍԱՐԵԱՆ	Եզիշէ Զարեմցի դիմանկարը
Բ. ՅՈՎՍԷՓԵԱՆ	Գրական լեզուի ուղին գոեհկացումը չէ
Ե. ԶԱՐԵՆՑ	Նամակ՝ Գրիշա Աղամեանին
Մ. ԻՇԵԱՆ	«Գանգրահեր սպան»
ԵՊ. ՊՕՅԱՃԵԱՆ	Եզիշէ Զարեմց
Ե. ԶԱՐԵՆՑ	Գիմում
Ն. ԶԱՐԵՆՑԵԱՆ	Եզիշէ Զարեմց
Կ. ՓՈԼԱՏԵԱՆ	Զարեմցի տրամը
Յ. ՊԵՐՊԵՐԵԱՆ	Զարեմց
Յ. ՄԱՆՈՒԿԵԱՆ	Կապուտաշեայ առասպել...
Յ. ԿՈՋՈՅԵԱՆ	«Գիրք ճանապարհի»ի նկարագրությունը
Վ. ԳԱԲՐԻԷԼԵԱՆ	«Պատգամ»ը...
Վ. ԿԻՐՊՈՏԻՆ	Հանդիպում Զարեմցի հետ
Վ. ՇՈՒՇԱՆԵԱՆ	Վերադարձին գաղտնիքը
Ա. ԶԱՐԵՆՑ	Հրատարակման առթիւ
Ա. ԶԱՐԵՆՑ	Զարեմցը ձեռագրերում
Լ. ՄԿՐՏՁԵԱՆ	Բանաստեղծի կեանքին վերջին տարիները
Ռ. ՂԱԶԱՐԵԱՆ	Եզիշէ Զարեմցի դիմանկարը
Փ. ՃԵՐԱՆԵԱՆ	Ձիւնէ երկիր, ձիւնէ երազ...
Պ. ՀԵՐԵԱՆ	Քի՛չ սյուռ, Զարեմց...
ՌԻ. ՍԱՐՈՅԵԱՆ	Եզիշէ Զարեմց
Յ. ԿԱՐԱՊԵՆՑ	Զարեմցի գերեզմանը
Պ. ՍՆԱՊԵԱՆ	Խմաստուրեանի անուարիին
Ա. ՍԱՐԳՍԵԱՆ	Զարեմցի կիսանդրին
Ռ. ՂԱԶԱՐԵԱՆ	Եզիշէ Զարեմցի դիմանկարը (Բ.)

«Բազին»ի 1977 տարեշրջանի բովանդակութեան
ցանկը

Բազմ

ԱՅՍԱԳԻՐ ԳՐԱԿԱՆՈՒՐԵԱՆ Ե ԱՐՈՒԵՍՏԻ

ԺՅ. — ԺԶ. ՑԱՐԻ, ԹԻՒ 12 ԴԵԿՏԵՄԲԵՐ 1977 ՊԵՐՈՒԹ

«ՈՍԿԻ ԵՐԱԿԸ ՀՆԱՄԵԱՅ ՑԵՂԻՍ»

Քանի մը էջ՝ իր բանաստեղծութիւններէն, քանի մը էջ՝ իր խոհերէն ու «խոհակալած» տառապանքներէն, կենսազրտկան հատուկաոր զիծեր, յուսանկարներ՝ իր կեանքի գանապան շրջաններէն ու սիրային ալպոմէն, վերլուծական շարք մը յօդուածներ, յուշերու պատասխիկներ, փորձեր՝ զինք ճիշդ հասկնալու, ու արդէն յեցուեցաւ թիւը, յորդեցանք մեր սահմաններէն, ու խղճախա՛յթը դարձեալ, որ մատուցուածը իր շատը չէ, ճաշակ մըն է միայն իրմէ, եւ իր մասին մեր ունեցած ծանօթութիւններուն ու վերլուծումներուն շատը չէ, մէկ պղտիկ տոկոսն է միայն:

Գասական առումով միայն յարգանքի ձեռնարկ մը չէ «Բագիւն»ի այս թիւը, այլ նաեւ Չարենցը ճիշդ հասկնալու փորձ մը, եւ ճիշդ այդ պատճառով, եւ ի հարկէ մեր կարողութեան եւ ծաւալային հնարաւոր սահմաններուն մէջ՝ նիւթ դարձած են եղբարբախտ բանաստեղծին կապուած կամ անոր առիթով արծարծուած հաճելի եւ ոչ հաճելի, հին ու նոր շարք մը հարցեր:

Պղտիկ յիշեցում մը նաեւ ա՛յն՝ որ տեղի անձկութեան պատճառով նախամեծար համարած ենք ընթերցողին ներկայացնել Չարենցի պատմութիւն ունեցող կարճ կտորները, եւ պատմութիւնը՝ երկարաչունչ կտորներուն:

Իեւ լրիւ չեն յայտնաբերուած Չարենցի գործերը, դեռ լրիւ չէ ուսումնասիրուած յայտնաբերուածը, դեռ լրիւ չէ գրուած իր կենսագրականը, ու ինչ որ գրուած է իր մասին խճմտութեամբ չէ հակալուծուած եւ այդ պատճառով ահագին թիւրիմացութիւններ կան իր անձին եւ գործին շուրջ, վարկածներ, առեղծուածներ: Հանդիպողը բան մը բտած է Չարենցի մասին՝ առանց անդրադառնալու, թէ իրմէ առաջ ի՞նչ ըսած են ուրիշներ եւ ո՞րն է մերձաւոր ճշմարտութիւնը: Իրենց կարգացածը համեմատական եղբերու քննութեամբ միայն ընդունող մարդոց համար ահաւոր բան է մա՛նաւանդ Չարենցի կենսագիրներուն ու յուշա-

գիրներուն մօտենալու խնդիրը, շիտթներով լի են անոնց բոլոր էջերը, որոնց մէկ մասը ամփոփուեցաւ «Յուշեր Եղիշէ Չարեցի մասին» անուն հատորին մէջ, յուշարձաններէն մէկը մտաւորական մեր անպատասխանատուութեան, անքննական մտքին, ընդհանուր անփութութեան:

Միակ վստահելի աղբիւրը իր տպագրուած ու մեզի հասած գործը կը մնայ առայժմ եւ այդ գործը պզտիկ չէ քանակով ու մեծ է որակով, ղեզուն՝ մեծ բանաստեղծի մը մեծութեան բոլոր ստորոգելիներով:

Ի ընտելանէ յախուան, Լուան, անհամբեր խառնուածքն է ան, մեծ ուզելու, մեծ տեսնելու, մեծ զգալու մեծածարու հութիւնը, անյազ՝ Երկրային սնունդներու դիմաց, ու անյազ՝ հագիով, ուղեղով անյազ: Այս մղումներուն տակ Չարեցի ժառանգական ու փորձառական հսկայ մշակոյթ մը ամբարեց, ազգային խոր արմատներուն վրայ պտտուաստեց արեւմտեան թէ արեւելեան անդաստաններէն ձեռք ձգած յորդ բեղմնափոշիներ, ներդրումի եւ յաւելումի մարդերուն մէջ գառնալով ամէնէն հետաքրքրական տիպարներէն մէկը հայ գրականութեան:

Մատի վրայ հաշուընդ մեր մեծանուն բանաստեղծներուն մէջ չկայ թերեւս երկրորդ գէմք մը, որ Չարեցի չափ բազմակողմանի, բազմերանգ ու «բազմազեղուն» աշխարհ մը լացած ըլլար ընթերցողին առջեւ, մեծահարուստ սնուն է ան, բոլոր կողմերով, եւ այս անգամ իր սիրած բառով՝ անեզրական, անեզրական՝ կեանքի իր վերիվայրումներով, անեզրական՝ գործերուն կենսագրականով, անեզրական՝ ընդգրկումներով, այլազանութեամբ, բարդութիւններով, հսկասութիւններով, տառապանքներով ու վախճանական անյայտներով:

Ծննդափայլ՝ անշուք քաղաք մը, գաւառական Կարս, թրուական՝ բռնակալութեանց շրջան, 1897, ուսում՝ գրեթէ ուսուսական, ու կիսկատար տակաւին, բայց նախախնամութիւնը այդ գծնդակ պայմաններուն մէջ ծնած, խարխափած ու ցաւազիտօքէն աճած տղուն շուրջած էր մեծ ընծաներ ու սահմանած մեծ դեր, իր մեծ նախորդներուն մեծազորութեանց ուղղակի շարունակողը ըլլալու կոչում, հրափտելով ջիղերը ճիշդ անոնց նահատակութեան տարին:

Իր ստաջին բանաստեղծութիւններուն մէջ քիչ մը աէրեանական մուտ է Չարեցի, քիչ մը՝ մեծարեցեան ոսկեման, քիչ մը՝ սեւակեան երթալ, ուրիշ քիչ մը՝ վարուժանեան լափիլզում, ճամբորդ՝ լուսնային հեռուներու, արամազրութեամբ՝ անբջալոյս տրամուքին: Առաջին անգամ գինք հողին վրայ կը տեսնենք «Տանթեական առասպել»ին հետ: Արեան մկրտութիւն: Նոր գըրգիւններ՝ նայիրեան մորմոքին մէջ: Նահանջ՝ հայրենական գիրքերէն: Մուսք՝ հեռուները պայթած յեղափոխական փոթորիկներէն ներս, «Սումա», «Ամբոխները իտլագարուած»: Վերագարծ, շարժումի նոր կարուս, «Ողջակիզուող կրակ», խաղաղութեան օրեր՝ «Էմալէ պրոֆիլը Չեր», քաղցրութեան պահեր՝ «Տաղարան» եւ ուրիշ շարքեր, նոր ցնցում՝ «Բոլորին, բոլորին, բոլորին»:

Մինչեւ հոս, այսինքն՝ «մինչեւ դիրքերում մարտը դադարեց», Չարեցի գտած չէ իր բերքէն, ոչ ոք գտած է, իր եւ ու-

քիչներու զժգոհութիւնը կը սկսի մտաւոր գաղարկէն ետք ձեռնարկած իր գործերուն: «Չարենց-նամէ» կմտաք է արդէն, «Ամենապոստիմ»ը՝ շոր ցուցադրութիւն, հետաքրքրական իրրեւ փորձ, գրականութեան պատմութեան մէջ, եւ ոչ՝ գրականութեան, կէս հրատարակագրութիւն, յաջորդները՝ սրբապղծութիւն, եւ այսպէս, գրեթէ եօթ-ութ տարի անդադար, աղմուկ է աւելի Չարենց, քան էութիւն, ամէն կանչի արձագանդող թմբկահար, ծածածութիւն, իր պնաստուսով՝ «անուժ ու անթով» երգ, մետաղաձայն պոեմ, իրերու բանա՝ մինչեւ 1929ը, իր գրականութեան ամէնէն բեղուն տարիներէն մէկը, մինչեւ 1930, «Էպիֆանիա յուսարաց», վաւերացումը իր սողանդին, իր պարզութեան, խորութեան, լայն ընդգրկումներուն, շունչին, հրկիզման, հրաշալի յուսարաց, որ ուղիղ զծով առաջնորդեց բանաստեղծը «Գիրք Բանապարհի»ին, հայ գրականութեան սակաւաթիւ փայտապուստներէն մէկը, պոստ-գործոց մը՝ իր առաջին տարբերակին մէջ իրարու յաջորդող եւ իրարու արձագանդող առաջին երկու բաժիններով մանասանդ, «Պատմութեան փառուղիներով» ու «Տառնիք եւ խորհուրդներ» չարքով: Շատ ծանօթ են առաջինները, քիչ խօսուած է երկրորդ բաժինին մասին, ուր քնարական իր հերոսներուն՝ սիրագեղ պարմանիին, անտեսելի բերքերով եկուորներուն, խիղախ ճանապարհորդին, գեղեցկութիւններու կարօտով տանջահար հիւանդին, կառուցանողներուն, սերմանողներուն ու երգասացիներուն առիթով իր սուսած սիրոյ, վերադարձի, որոնման, առողջութեան, սերմանելու, կառուցելու եւ երգելու խորհուրդներուն մէջ՝ Չարենց գերազանցած է ինքզինք, բանաստեղծական շնորհներու աննախընթաց հանդէս մը բանայով ընթերցողին առջեւ:

«Օ՛, Խանաբեղ ակնբարբ, դու ընթացք ես ու ոստում», — կը գրէ անդ մը Չարենց նոյն հասարին մէջ:

Հանձարեղ ակնթարթը անձանօթ չէր իրեն ատկէ առաջ, բայց «Տաղեր եւ խորհուրդներ» չարքին օրօք կը թուի, թէ «հանձարեղ ակնթարթը» յաճախ պատահեցաւ իրեն, բերելով հետը մէծ ընթացքներու եւ ոստումներու չափը ընձաներ, — իրարու հետ մրցումի ելած այդ տասներկու բանաստեղծութիւնները, որոնք Չարենցի ապրումներուն, խոհերուն ու խորհուրդներուն անխորտակելի ու մշտապայծառ պոսակը կազմելէ ետք, վստահարար հայ գրականութեան ամէնէն վստահելի ոսկիները կը հանդիսանան:

Գիրք Բանապարհի»էն ետք Չարենց նոր հատոր չհրատարակեց ու մամուլին յանձնեց շատ քիչ թիւով բանաստեղծութիւններ, բոլորն ալ թոյլ, պարագայական յօրինումներ, Հայաստանի եւ Ատրպեյջանի խորհրդայնացման 15ամեակներուն առիթներով սարքուած ձօներ ու ձօնային այլ հիւսուածքներ, ո՛վ գլուխ առաջողական ինչ ճնշումներու տակ:

Յետ «Գիրք Բանապարհի»ի չարենցեան բուն բխումները, ձէկէ աւելի հատորներ լեցնող, ինքը՝ բանաստեղծը պահ զբաւանդանելի խորհերու մէջ, աւելի ուշ, զգալով մահուան անխուսափելիութիւնը՝ բարեկամներու յանձնեց զանանք, որոնցմէ ամենք հայրենի մամուլին մէջ լոյս տեսան իր նահատակութենէն

քսան-երեսուն տարի ետք, — «Ռեվիֆիեմ Կումիտսսին», «Իմ մահ-
լան օրը», «Տխուր Կարուսել», «Մ...ի յիշատակին», «Գովֆ Ա-
բուսին», «Իմ լուսաստղը», «Ի խորոց սրտի խօսք բնդ Աստուծոյ»,
Եւայլն, շուրջ քսան կտոր:

Մամուլին մէջ յետմահու երեւցած այդ բանաստեղծու-
թիւնները ուղղակի կը շարունակեն «Գիրք քանապարհի»ի աւան-
դութիւնը ու կը պատմեն ի՛ր ճանապարհ խաչին, այս անգամ
պարտադիր ազգականէ բոլորովին զերծ մթնոլորտի մը մէջ, բո-
լորովին հրաժարած անցադրային նախկին միջոցներու կիրար-
կումէն:

Ուրիշ խօսքով՝

Հիսօխ ու Լենին, Հարաւ ու արիազաչ Այի, Արեւմուտք ու
Կոմունարների պատ, Արեւելք ու Չունկ-Ֆու չեն տողանցեր հիմա
իր աչքերուն առջեւէն, Նոյեմբեր, Հոկտեմբեր, կարմիր չի տես-
ներ, շողջողուն այգաբայներու ցնորքը իբրեւ իրականութիւն չի
սլոտար եւ արտաքին ուժերու հանդէպ ոչ մէկ պատրանք կը սնու-
ցանէ: Անցնող իւրաքանչիւր տարուան, օրուան, ժամուն, նոյն-
իսկ վայրկեանին, իր հայրենիքին ու սեփական անձին վրայ ծան-
րացող մղձաւանջին հետ կը յանձնէ թուղթին իր յուսարեկ սրտին
դառնութիւնները՝ աչքը միշտ յառած պատմութեան, զոր կը պե-
զէ շարունակ, այդ անցեալէն կայծեր, ջահեր, իմաստութիւն-
ներ, սիտփանք ու յոյս ճարելու իտեճապահար տենդով:

Ու անցեալի մեծ ջահերի հուրն եմ վառում ես իմ մէջ,
Որ չարհաւրեմ, եւ ներկայում տեսնեմ նշոյլ գէթ յուսոյ...

Անցեալի ջահերը, սրտնց հուրը կը վառէ իր հոգիին հիմա՝
տեղ մը մեր պատմիչներէն մէկն է, տեղ մը Արա Գեղեցիկն է,
այլ տեղ՝ հերոս մը, Կոմիտասը, ուրիշներ, սրտնք իրենց գիրով,
հունչով, արիւնով, անարատութեամբ պահեցին մեր երկիրը
պատմութեան քառուղիներուն մէջ եւ յոյս եղան բոլոր փորձու-
թիւններու աստն:

Քսանական թուականներէն մինչեւ 1937. ամբողջ տասնեօթ
տարի՝ Չարենց իր ձայներով լեցուց Հայաստանը:

1937էն մինչեւ 1954. ամբողջ տասնեօթ տարի՝ իր կորուս-
տին սուգով լեցուց Հայաստանը:

Ու 1954էն առիւն՝ իր յիշատակը պանծացնող երեւոյթնե-
րով լեցուց ամբողջ Հայաստանը:

Ի հարկէ, պանծացման այդ թափին մէջ ո՛չ մէկ դեր ունի
եւ ո՛չ մէկ կշիռ այն երեւոյթը, որ պարզուեցաւ Չարենցի յարու-
թեան վաղորդայնին ու կը շարունակէ դրսեւորուիլ դայօր: Ոսու-
քը կը վերարերի բանաստեղծին ամէնէն խոցելի կողմերը իբրեւ
զօրեղ ժառանգութիւն բնդգծելու բարձրագոյն փոյթին: Ար-
դարեւ, Չարենցը անչնչացնելէ եւ անոր անուան յիշատակութիւ-
նը ամբողջ տասնեօթ տարի մահացու մեղք համարելէ ետք, մեղ-
սակիցները ուղղակի իրե՛նք, եւ ուղղափառ համայնաւարներու
մթնոլորտէն ուրիշներ՝ սկստն առաջին հերթին ու աննախընթաց
եռանդով զովքը հիւսել բանաստեղծին լենինեան շարադրութիւն-

ներուն եւ առանձին ոգեւորութեամբ մը մեկնարանել Դաշնակցութեան դէմ գրած անոր մէկ-երկու պարսաւները:

Անշուշտ, ոչ սքի ուշադրութենէն վրիպեցան ու կը վրիպին հեռեւողական այդ անհեթեթութեանց տուն տուող պատճառները:

Համայնավար գրողները, իրենց վերադաս մարմիններուն պէս՝ կը տառապին Չարենցը մեռցուցած ըլլալու անբուժելի բարգոյթէն եւ կը կարծեն, թէ կը թեթեւնայ իրենց խղճմտանքին ծանրացող սճիրը, եթէ անոր լենինեան «սէրերը» ուտեցնող յաւելուածական շատախօսութեամբ հանդէս դան եւ Դաշնակցութեան դէմ խմբագրած կարգ մը հայհոյանքները փորձեն անցընել օրինաց գիրքին մէջ:

Մարգրիկ որքան ալ ճգնին կարմիր դիզել համայնավարութենէն անգարձօրէն պատրանաթափ, ու միայն իր ժողովուրդին կառչած, եւ այդ երկու պատճառներով նահատակուած Չարենցի հոգիին մէջ՝ իրականութենէն ոչինչ կը փոխուի, որովհետեւ կայ, կամայականութեան ենթակայ չէ ու անփոփոխելի է՝ «Պատգամ»ը, որուն ճառագայթներուն տակ միայն կարելի է մտնել բանաստեղծին «Ճանապարհի»ին մէջ ու հասնիլ անոր ճշմարտութեան: Այդ լոյսին դաւաճանողը ուղղակի դատաճանաճ կ'ըլլայ Չարենցի յիշատակին եւ հոն բխրեղացած Չարենցի ոգին խաթարել ջանացողները աւելի լաւ բախտի մը չեն արժանանար, քան Փիղիքական անոր անձին ոչնչացման համար միջոց չխնայած հին դժբախտները...

Չարենցի «Պատգամ»ը:


Մեկնակէտ՝ «Ճանապարհի»էն սկսեալ:

Ու յայտարար նշան՝ նախա-«Ճանապարհի»ի օտարոտի ու եկուոր խանդավառութեանց հեռեւանքներուն: Բոլորը մոխիր:

Սէր, հայրենիք, յեղափոխութիւն, պատմութիւն, — վարարող ապրում, անդուլ հրկիցում, աշխուժ թեւածում, բեղմնաւոր սուղում, դայիք, պատգամ, կտակ: Պատգամը գիտէք, կտակը ընդդէնք:

Ա՛յս, ծաղկի սերմն՝ հայրենի
Հող չի՛ յաճախ նանաչում, —
Բայց սերմն հոգու — միայն իր
Հայրենիքում է անում...

Այսպէս ապրեցաւ Չարենց: Անցաւ խուլ ճանապարհներէ, կիզուեցաւ ազգային երազներէ, ինկաւ տանթէական ճանապարհներու վրայ, նեռուեցաւ յեղափոխութեան հրդեհներուն մէջ, քայլեց մեծ պողոտաներէ, անցաւ ծիածաններու տակէն, բեկուեցաւ իր մեծ պատրանքներուն մէջ, սուղուեցաւ պատմութեան քառուղիներուն խորքը, հաւատաց ներսը սրտացող աստուածներու ձայնին, անցաւ դժոխքներէն եւ իրրեւ յինելութեան հաւատարոր ուխտաւոր՝ իր բարձունքին վրայ խաչուեցաւ մարտիրոսի մը պէս, կտակելով հայ գրականութեան բանաստեղծական անցած-մաքէլի երակ մը, ի՛նք՝ «ոսկի երակը հնամեայ ցեղիս»:



Մանկի ճննդվայր քաղաքին,
ապագրում առաջին բանաստեղծու-
թեան եւ մեզի հասած առաջին նկարին
կողի՛ն՝ մտադրած էինք հատում մը
ներկայացնել ընթերցողին անըս-
տիբարտ առաջին գրախօսականէն, բայց
ենարար չեղաւ մեզի ձեռք ձգել այդ
գրութիւնը:

Չարեհիսն հուրբարտ առաջին գրա-
խօսականը ստորագրած է Գարեգին Լե-
ւոնեան. «Մշակ» թերթի 25 Հոկտեմբեր
1916 թուակիր թիւին մէջ:

**

Ծաղիկները հեզ թեւում են ֆամու օրօրի տակին —
եւ լաւն նրա հեռուիցը բերող երգը տխրագին...
Քամին ծաղկունանց շարքերն է դողդող շոյում, գուրգուրում
նու լուռ մրմնջում, թէ հեռուներում ինչպէս են սիրում...

Եւ այս ամէնը կատարում է միշտ իրիկնաժամին.
Երբ որ տքտում են հեզ ծաղիկները ու մեղմ է ֆամին...

Ն. Ա. Բ Ա Լ Ե Ա Ն

ԵՂԻՇԷ ԶԱՐԵՆՑՆ ՈՒ ԵՍ

(ՆԻՒԹ ՀԱՅՈՑ ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ)

Մի-երկու անգամ հարցրի գործավարիս. թե ինչպէ՞ս է մեր նոր պաշտօնեան: Էսցի. որ գալիս է պաշտօնատուն, բայց ոչ միշտ. շարունակ ծխում է, մեքենագրուիների հետ խօսում ու յօանգարում նրանց աշխատանքը. իսկ իրացումը դեռ կազմած չէ եւ կազմելիք չունի. քանի որ անվարժ է գրասենյակային աշխատանքի: Ես արդէն յոյս չունիի. որ բանաստեղծից կարող է պաշտօնեայ դուրս գալ. իմ նպատակն էր նրան հնար տալ ասրելու եւ կոչումին հետեւելու:

Ն. Ա.

Ինչուստանի յեղափոխական շարժումը տապալեց միապետական վարչակարգը 1917 թուի աշնան: Այդ օրերին Բարուից ինձ հրաւիրած էին խօսելու էր մեծ հաւաքոյթի մէջ: «Արեւ» թերթի խմբագրատանը նստած սպասում էր այդ աշխատանքը վերջացնեն եւ ինձ տանեն հաւաքոյթի վայրը: Ամէնքն իջնէց գործին էին. անդործը ես էի: Զանձրանում էի: Գլխացու, պատուհանի շքանքն թափթփում էին ուսերէն ու հայերէն մանր գրքոյկներ եւ լրագիրներ: Զեռքս մեկնեցի, մի բուռ գրքոյկ վերցրի, որ նայեմ եւ ձանձրոյթս փառասէմ: Առաջին նայածս մի նիհար տետրակ էր. «Ե. Զարեհ. Երեւ երգութիւններու անթիւն աղջկան»: Միւսը մի փոքրիկ գրքոյկ էր նոյն հեղինակի. «Գանձախոյժ արասպի»: Երեւի ուղարկուած են գրախօսուելու համար, մտածեցի: Միւս գրքոյկները գրի ծունկիս՝ սկսայ կարդալ այդ երկուսը: Վերնա-աջնէքը ուշադրաւ էին: Տեսայ մի նոր մարդ, նոր նիւթ, նոր վերաբերում եւ մարտ տաղաչափութիւն: Մի տաղանդաւոր սկսնակ: Տարուեցայ ընթերցումով. մտազայ հաւաքոյթ եւ սպասում: Վ. Տէրեանի հետքով մի նոր բանաստեղծ էր ծագում գրականութեան հարկոնից: Որոշեցի առաջին իսկ աշխարհի գրեմ այս նոր հեղինակի մասին, ուստի խնդրեցի, որ այդ երկու գրքոյկներն ինձ տրամադրեն: Վերադարձայ Թիֆլիս: Ժամանակները, սակայն, նպաստաւոր չէին ո՛չ գրելու եւ ո՛չ խօսելու համար: Ա՛հ ու մահի տարիներ էլ է: Ես Ազգային Բիւրոյի անդամ: Գլուխս խռոն էր. հազար գործ ու հոգ առնէի: Մի Ժամանակ ունէր գրականութեան մասին խօսելու կամ լսելու:

Մի տարի յետոյ աղաչյին Բիւրոն դարձաւ Հայաստանի կառավարութեան: Անկախացած Վրաստանը անյարմար տեսաւ, որ Հայաստանի կառավարութիւնը մնայ Թիֆլիսում: Մեր մէկ մասը ստիպուած հեռացաւ Երեւան: Հետեւեալ տարին ե՛ս նոյնպէս անցայ Երեւան իբր Խորհրդարանի անդամ եւ Լեւոն-Ազուրեթեան եւ Արուեստից նախարար: Նոր ասպարէզ, նոր գործ: Գրեցաւ քանի որ ժամանակ չունէի: Բայց երբ մի փոքր չունի տոայ՝ մի դասախօսութիւն տուի Ե. Զարեհի մասին: «Մի նոր բանաստեղծ» վերնագրով Խորհրդարանի շէնքի մէջ եւ խոսն բաղմութեան ներկայութեան: Նոր բա-

նստատեղծի անունն ընկաւ ամէնքի բերանը: Լրագիրները հաշիւ տուին դասա-
խօսութեանս մասին եւ Յ. Չարենցը դարձաւ մի անուն(*):

Մի օր զրասենեակիս մէջ նստած վարժարանների մի նոր ծրագիր էի
ուրուաղծում, սպասեակս ինձ յայտնեց, թէ մէկն ուզում է ինձ տեսնել: «Ներս
թող», ասացի: Մտաւ աղքատիկ հաղուստով մի նիհար երկտասարդ, անխը-
նամ մազերով մի գլուխ վտիտ ուսերին, գէմքի մորթը տժւոյն ու քաշուած
եւ քիթը մեծ ու սուր: «Նստեցէք, — ասացի, — ս՞ով էք եւ ի՞նչ էք ուզում»,
— Ես Յ. Չարենցն եմ, — ասաց: Երեւոյ, որ ուսուցիչ է Ղարսի շրջանի մի
ինչ-որ գիւղում: Լրագրի մէջ կարգալով դասախօսութեանս մասին, թողած
է պաշտօնատեղին եւ եկած է Երեւան: Ասացի, որ նախարարութեան նա-
խահաշուի մէջ նշանակուած է մի պաշտօն. — «անձնական քարտուղար»: Այդ
պաշտօնի համար մարդ չեմ հրաւիրած. ես ինքս եմ իմ քարտուղարը, մար-
դու կարիք չունեմ: Բայց հիմա ես ձեզ նշանակում եմ այդ պաշտօնին: Ծէն-
քիս մէջ ունեմ մի ազատ սենեակ. կարող էք այնտեղ ապրել: Բայց ձեր
«պաշտօնն» արդարացնելու համար պէտք է մի բան անէք. կազմեցէք նախա-
բարութեան չնքի իրացանկը: Դուք ազատ էք. երբ ուզէք՝ եկէք պաշտօնի:
Կանչեցի գործավարիս, յայտնեցի որոշումներս, կարգադրեցի, որ պէտք ե-
ղածը անօրինէ եւ նրա փոխարէն մի նոր ուսուցիչ ուղարկէ լքուած պաշտօ-
նին եւ ասացի Չարենցին, որ հետեւէ գործավարիս: Գնաց: Մի երկու ան-
գամ հարցրի գործավարիս, թէ ինչպէ՞ս է մեր նոր պաշտօնեան: Լսեցի, որ
գալիս է պաշտօնատուն, բայց ոչ միշտ, շարունակ ծխում է, մեքենագրու-
հիների հետ խօսում ու խանգարում նրանց աշխատանքը. իսկ իրացանկը զեռ
կազմած չէ եւ կաղժեղիք չունի, քանի որ անվարժ է զրասենեակային աշխա-
տանքի: Ես արդէն յոյս չունէի, որ բանաստեղծից կարող է պաշտօնեայ գուրս
դալ. իմ նպատակն էր նրան հնար տալ ապրելու եւ իր կոշումին հետեւելու:
Հրահանգեցի հետը մեղմութեամբ վարուել եւ այնպէս անել, որ զրասենեա-
կի աշխատանքը չտուժէ:

Մի քանի ամիս յետոյ ծագեց Մայիսեան շարժումը: Կառավարութեան
կազմը փոխուեց: Ես թողի պաշտօնս եւ գնացի Կարս: Թէ ի՞նչ եղաւ Չարեն-
ցը կամ ս՞ուր պնաց — չիմացոյ: Վրայ հասաւ Նոյեմբերը. Փետրուարին մը-
տայ բանտ. ասդատամբութեան շնորհիւ բանտից դուրս եկայ եւ գնացի Շա-
րուր. հիւանդացայ եւ 1921 թ. Ապրիլ 1ի գիշերը հիւանդ վիճակով եւ անձ-
բերի սակ թողի Երեւանն ու ոտքով անցայ Պարսկաստան՝ Թուրքիզ:

Երկու տարի յետոյ, մի ձմեռան օր, Կովկասի իմ հեռուոր ծանօթներից

(*) Այդ ժամանակուսն իր սպրումի անդրադարձումն են «Չարենց նամէ»ի հետեւ-
եալ տողերը. («Երկերի ժողովածու», հատ. Բ., էջ 275):

Էլ ինչո՞ւ ծիծաղէր հոգիս,	
Երբ նիկու Ադրալեանը մի օր	Չարենցն ուրախ չէ, որ
Մարտիով քակիքն ու Ֆայէն —	իրան յայտնաբերողը
Աւետեց ամբողջ աշխարհին,	Ե՛ս եմ եղած եւ ոչ
Որ ծնունդ է — մեծ մի պոետ,...	Իրենցից մէկը...
Որ ծնունդ է երգիչ մի վառ	
Ու բերել է երգեր հրէ.	
Յնձա՛... Եղիշէ Չարենց:	
Յնձա՛... Եղիշէ Չարենց:	

մէջ մտաւ սենեակս: Նա եկած էր Թաւրիզ՝ մեծամասնական պատուիրա-
 ւորութեան հետ եւ բերած էր Ն. Չարենցի գործերը հեղինակից նուէր ինձ:
 Եւ ինչ հաստ հատոր էին եւ երեք գրքոյկ: Մի մասը հին գործերն էին, միւս
 մասը նոր բաներ: Աղաա օրինակներ չունենայով իր մօտ՝ խնդրած էր մէկին
 չափազէս նրան նուիրած օրինակները գիջել՝ որ ինձ ուղարկէ, ինչ որ կա-
 ռած էր սիրով: Առաջին հատորի երեսին հեղինակը գրած էր. «Սիրելի
 ինձ. Արքայեան, ընդունէ իմ գիրքերը որպէս յարգանքի եւ համակրանքի
 նշան. 28. 1. 923. Երեսան(*): Իսկ զիջողը կցած էր. «Ձիջում եմ ուրախու-
 քանք. Բեզ կալայ»: Երկրորդ հատորի երեսին գրած էր. «Սիրելի Նիկոյ
 Ազգայնաճիճ. Ն. Չարենց. Նիկոյ ջան. ես ոչ մի համար չունէի իմ այս հա-
 տորի մէջ. որովհետեւ առիթ հանդիսացաւ Մ. ր գիջեց իր համարները. ըն-
 դուցից իմ այս նուէրը որպէս նշան յարգանքի եւ համակրանքի. քո՝ Եղիշէ
 28. 1. 923. 1. 28. Երեսան»: Չիջողը նորից կցած էր՝ վերի բառերը: Միւս
 քրքոյկներից երկուսն է մօտս մնացած: «Ռումանս անէր». որտ երեսին մա-
 շագրած է. «Սիրելի Նիկոյ Ազգայնաճիճ, իմ առաջին ուսուցչին, որին ես եր-
 օշէ չեմ մտանայ եւ երբեք չեմ դապարի յարգել»: Իսկ երկրորդը, որ կոչ-
 ւում է «Պոեզոգուտնա» այս մականիրն ունէր. «Սիրելի Նիկոյ Ազգայնաճիճ,
 իմ սիրով եւ յարգանքով. Եղիշէ Չարենց»: Հարցրի բերողին, թէ կարճ
 է մի նամակ տանել Չարենցին. խոստացաւ եւ ժամադիր եղաւ:

Նա գնաց, եւ անմիջապէս սկսայ կարգայ: Հին ու մի քանի նոր հատ-
 օրները կարգացի մեծ հաճոյքով: Երբ ձեռք առայ «Ռումանս անէր»ը, որ
 անպատկառ բովանդակութիւն ունէր եւ սգու տնկում էր ցուցադրում՝ դայ-
 րոյթս պահել չկարողացայ: Իր իսկ անպատկառ սճով մի նամակ գրեցի եւ
 էր Երրօրինակ տաղաչափութեամբ մի «Պոեզոկարծիք» շարագրեցի: Իր «Պոե-
 օգուտնա»ի կափարիչի վրայ վերնագիրը տպագրուած էր՝ վերից վար, իսկ
 երրօրդ տետրակը, որ չգիտեմ ո՛ւր մնաց՝ երկար ու նեղ դիրք ունէր: Ես
 նոյն ձեւով կտրեցի ու կտրեցի թղթերս, վերնագիրը նոյնպէս վերից վար
 քառաշարեցի եւ կափարիչի վրայ գին նշանակեցի՝ «10 ծիրանի Ժպիտ կամ
 10 արծաթ ծիծաղ»: Երբ բարեկամս եկաւ՝ նամակս ու «Պոեզոկարծիք» կար-
 չափի եւ տուի, որ տանի: Գրութեանցս քնադիրները սակայն պահեցի, մտա-
 ջելով, որ եթէ ուղարկածս սեղ չհասնի, ուրիշ ճամբով հասցնեմ Չարենցին:
 Անշեալները հին թղթերս նայելիս աչքովս բնական գրածներս. մասձեցի տպ-
 քութեան տամ իրր նիւթ գրապատմութեան: Չեմ կարծում, որ Չարենցի
 թղթերը պահած լինեն. եթէ պահած իսկ լինեն՝ չեմ կարծում, որ գրածներս
 նշանց մէջ լինեն: Նամակիս եւ «Պոեմ»իս կցած եմ ծանօթութիւններ, որ
 չափազէս հասկացուին: Մի քանի բառ յապաւած եմ.

Ահաւտսիկ նամակս. 1923, Փետրուար 9
Թաւրիզ
 Բարեկամ,

Ստացայ գրքերդ: Կարգացի: Ծնորհակալութիւն քեզ ու զիջողին: Բա-
 րեւս տուր փոխարէն: Լոս՞ժ ես մեր զիւղացու խօսքը, որ ասում է. «Չտեսն
 քե՛զ տեսաւ... — իրա մօր...ը, որ շատերն էին տեսած իրանից առաջ: ...դ
 ...եւ ես՝ մտել ես մէկդան Մասիսից Վալդայ. 1) կարծում ես՝ դո՛ւ ես՝ որ

* Աւզգարութիւնը փոխած եմ. Ն. Ա.:

կաս. ուրիշները կուտած են: Մոսկով ուրիշ լա. բան չտեսա՞ր բացի փոխաթը անութի տակ ման եկող կանանցից 2): Չգիտեմ ո՞վ է Արփիկը 3), որի մազից կախուել էս հիմա. թող Աստուած բանն աջողի. բայց հանդուրժու՞մ է, որ կին չես տեսնում, այլ երկու սո ու մի ... Ո՞ւր ես իջել «Կապույտի» 4) երգիչ: Թճել ես դէն «Միածան» ու «Տաղեր» 5). լա՛ւ. դիցուք թէ չկայ «Ցնորք» 6), չկայ ո՛չ տուն, ո՛չ երգիկ. չկայ եւ մա՞րդ: Խորտակեցինք բնու-թիւն, տէր ու մեծ. իսկ նրանց կուլաը չէքի սնուցանում է հողիդ: Մանդազն ու մուրճը տղէտ, անկիրթ ու բիրտ են եղած. բայց կինը մի՞ս. սա հեռու է նրանցից: Էյ չէ կինը գիւղացուն, միայն էյ. այլ նաեւ մայր է որդուն, ամուսնուհին: Էյ չէ կինը բանուորին. զուգաւորումն ի՛ր կարգին, բայց մտերիմ է, ընկեր: Ազքատացումը հողու, սր դու հանդէս ես բերում անպատկառ եւ կարծում ես, թէ դրօշ պարզեցիր նոր ու վառ՝ շա՛տ է հին: Պարսպորդները վազուց ուրիշ հաճոյք չեն տեսած. մտել են չէք էյի՛ կարծելով հանք են դաել եւ հայկացքը կարճատես պորտիցը վար են նետել, բնա՛ւ վեր, ուր էզի մէջ «մարզն» է շողում աչքերում: Պարսպորդի երգի՞չ դարձար դու հիմա, թողած Իրանը, Նայիրին ու Մոսկուան: Մանձգ քաշի՛ր, բեզ քո բո՛ււր հաւաքիր: Մենք կարող ենք շատ տէր ու մեծ խորտակել, բայց կայ մէկը, որ հոր է ամէնքից, բնութիւնն, որ իր տուած քանքարի հարեւրապատիկն է սւրում: Ծնորճն իջել է վրայ առանց որ դու պահանջես. ազնուական ես ծնուել. — պն՛րտըդ ուրեմն իմացիր: Մարդու մէջ խոզ կայ անշուշտ, բայց խոզը չէ,

1) Վաղայ են կոչում այն աննշան բլուրները, որ գտնոււմ են Մոսկուայի մօտ: Տափասաններից սովոր ռուսները այդ բլուրներից անուանում են լեռներ: Չնայած իր աննշան բարձրութեամ՝ բլուրների այդ շարքը ջրաբաշխական մեծ դեր է խաղում, մեծ գետերի ընթացքն ուղղելով Արեւիկ, Հիւսիս ու Հարաւ:

2) Իմ առանդուքեան շրջանին փողոցային սօմնագին կիները շրջում էին փսիսքա մուսներին տակ եւ խուլ փողոցների մթին անկիւններում փոխլավ՝ տարփածուներից ազատում էին սեմնակ վարձելու ծախսից:

3) Իր երկերի ժողովածուն Ե. Չարեմց հուլիսած է Արփիկին: Ա. հատորի երկրորդ էջի վրայ տպուած է. «Երկերիս ժողովածուն — Արփիկին. եղիշէ Չարեմց, Մոսկուա, 1921, ժԻ»:

4) Ե. Չարեմց շատ է երգում կապույտը, յասկապէս «Միածան» վերնագրուած հերթը-ւածների մէջ:

5) Ակնարկում եմ «Ռոմանս անտէր»ի հետեւեալ տողերը.
Կարծում ես՝ Տերեա՞նն եմ քէն:

Ճիշդ է:
Շաղիլ եմ «Տաղեր»,
«Միածան»

Բայց — քէն եմ դրանք արդէն դէմ:

6) Ակնարկում եմ «Ռոմանս անտէր»ի այս տողերը.
Միքէ՞
Դեռ

Չէր կակուզ հոգում
Մշուշէ աշո՞ւն է լացկումած
Ու ցնո՞ւք է ուզում —
Հում

Մախու
Չէր հոգին՝ գծուծ հացկատակ:
Ի գուր:

Ձուր է ուզում:
Միապու՞մ է:

Յնօրիք չկայ:

որ մարդուն «մարդ» է անում: Խողովեան դաս եւ դասատու չի՛ պակտի: Հարկ չկայ, որ քո վերնատուր շնորհքն առնես ու քաշ տաս տիղմերի մէջ խողովեան և Տրդատի պէս խոկաս շամբուտներում մոլորութեան: Քեզ կարդում է պատանին, հարս ու քոյր, Ի՞նչ ես տայիս դու նրանց.— ժա՛նք ու թոյն: Երազում ես «Նախիբ», «Կարմիր Մծբին» 7), հեռունե՛ր.— պնչատաների արքայութի՛ւնն ես ուղում՝ հեշտադրգիտ, հեշտամոյ, թէ՞ մի գրաստ, աշխատաւոր ու վերասուրջ հայրենիք: Ո՞րն է քարը քո բերած այն տան համար, որ կառուցում են դանդաղ ու յամառ քո երգած Հայկն ու Մկոն 8) . փթո՛ւմը գորշ, հույեացքե՛րբ դեանաքարշ, զգացո՞ւմդ լրբենի, մոլի կըրքե՛րդ անասնձ . . . Այդ տեղ են հասել ամէնքը, որ կնոջ շէքի մէջ տեսել են կենսական իմաստութեան և փոյնյքի ույրն ու քէն: Մինչդեռ Աստուած քեզ տուել կը շնորհք թեւելու վեր, ամէն հնարաւորութիւն կերտելու անանց գեղեցկութիւններ — երեւակայութեան թուի՛չք, յարզահոսան լիզու, զգացումի հօր պսոթկումներ եւ մեղմի, երանգի, քնքա՛շի ըմբոնում: Նայելով վար ու դիմաց՝ Ազատ Վշտունիների և Տէրեանների՝ 9) դու կարծում ես արդէն մի բան եւ եւ բաւական բան: Ռուսաց տխմար յանգաթուխները քեզ թւում են ինչ—որ կազապարներ և Նայիրի բնակիչ՝ դու տեսնում ես հայրենի լեռ ու

7) Ակնարկում եմ «Պսակոզուհի»-ի վերջին տողերը.

Յերեկները գուռնաճ արեւի
 Գիշերները սրինգը լուսնի
 Եսպէս — հազար օր կ'արեւի
 Ու հազար սերունդ կը բուսնի.
 Կը քափուի Արաբը նրանց մէջ,
 Զանգուն չգիրք կը լցուի,
 Մի՞նչ մի օր բուրբ մէկ —
 Կը համենի կարմիր Մծբին...
 Զանդու կամ Զանդի
 Հրազդան գետի այ—
 սօրուայ անունն է:

8) Ակնարկում եմ «Պսակոզուհի»-ի այս տողերը.

Էսօր —
 Ե՛ս եմ կցել,
 Ինձ հետ
 Եռանդը մեր՝
 Հագօ
 Միօ
 Յարեք

9) Ի. Զարեկը ժխտում է վ. Տէրեանին եւ Ա. Վշտունուն:
 «Թո՛մանս անսէք»-ն այսպէս է սկսում.

Հանելի է չէ՞
 Եյի մեզ
 Տէրեանի երգը քեզ:

Զեմ կարծում, որ Զարեկն ակնարկած լինի վ. Տէրեանի հիւանդութիւնը, որ բարտաւէտ էր. բո՛ւխտ: «Թ՛ֆտ» ասելով՝ մտ հասկանում է շուտ կոկուած, խմամբով մշակուած. ինչպէս ասում են՝ «լիզած» եւ ուրեմն՝ «ք՛ֆտ»: Իսկ Ազատ Վշտունու համար գրում է հա՛նց Ռամանի մէջ.

Վշտահար, վշտոտ, վշտունեղ,
 Անտամ քառերի շարքով
 Թե՛զ Ազատն ազատ—վշտունե՛:

բլուր եւ հիւսիսի տափաստան — մինչդեռ աշխարհը լայն է, խոր. հեռուն ներկայի եւ հեռուն անցեալի — անսահման: Ստեղծագործ մեծ ոգիներ են եղած մեր դունտի վրայ, որոնց պէտք է ձգտես դու ընկեր դառնալ, իսկ դու մտել ես շէքի մէջ եւ սկսել ես բուրել գարշահատութիւն: Վա՛յ քեզ Չարենց, հազար վայ. ափսո՞ս հայ գրականութիւն. աւելի ափսոս իմ յոյսեր, որ առկայծում են սահայն...

Ողջոյն գրական Ն. ԱՂԲԱԼԵԱՆ

Լսեցի, որ նամակս ու կարծիքս տեղն են հասել: Ասում էին, որ դո՛ւ չէր մնացել եւ գրածներս համարել էր «անպատկառ»... Ինձ թւում է սակայն, թէ յանդիմանութիւնս ու կշամբանքս զուր չեն անցած: Ե. Չարենց շուկեց իր բարքն ու ստեղծագործութիւնը: Իր «Էպիֆանի լուսաբաց»ի մէջ տեղ գտած հատուածները ցոյց են տալիս մի ճիշտ մեծ ոգիներին ընկեր դառնալու: Երեւում է որ ինքն իր բուն է հաւաքած իրան, սթափած է, ցոփ կեանքից ու զգացումներից ձեռք է քաշած եւ բարձրանում է դէպի անանց գեղեցկութիւններ:

Թւում է ինձ, որ նա մինչեւ իսկ պատասխանած է իմ դրութեանց եւ հետքը կորցնելու համար իր բանաստեղծութեան տակ ուշ տարեթիւ է նշանակած: Չգիտեմ խորո՞ւմ է ինձ ներքին զգացումս, բայց ինձ թւում է, թէ «Էպիֆանի լուսաբաց»ի մէջ հետեւեալ բանաստեղծութիւնը ի՛նձ է ուղղած (էջ 126):

ՍԻՐԵԼԻ Ա. ԻՆ

Ես չեմ մոռացել քեզ, բարեկամ,
Եւ յիշում եմ քեզ կրկին կրկին,
Ինչպէս անցորդը թափառական
Յիշում է միշտ անցած ուղին: —
Սիրով է յիշում նա ուղին հիմ,
Գուցէ թախիծով, սակայն երբեք
Նա չի ցանկանայ կրկին կրկին
Թողնել հեռուներն ու դառնալ յետ: —
Երբ անցած ուղին յուշով անշէջ
Խոցում է ինչպէս կարօտի նետ, —
Խեղզում է նա այդ կարօտն իր մէջ,
Որ երբեք երբեք չդառնայ յետ...

1929, Երեւան

Ընթերցողը տեսաւ թէ ես նրան յետ չէի կանչում, այլ զրգում էի, որ առողջ ու մեր գնայ: Եթէ իր մերկէքի մէջ իմ առկայծող յոյսերն էին, որ արդարացան՝ ապա զուր չեն անցած ո՛չ դայրոյթը, ո՛չ ծաղրս: Յամենայն-դէպս, կարծում եմ այս գրական միջոցէպը արժէր, որ չմոռուէր եւ կարող է դաս լինել շատերին: Հիացումը պէտք չէ հասնի կուրացման: Կայ մի աւելի բարձր ու մեծարժէք բան, քան հիացումը. — գրականութեան եւ հանրային շահը:

**

Կցեմ մի յուշ եւս: Այն օրերին ինձ յուր բերին, թէ իմ բանասրկութեան շրջանին իբր թէ Չարենցն ասած լինի. «Մինչեւ Երեւանի բուլուարի գրասովայր ծառից չկախուի Ն. Աղբալեանը, հոյ կարգերը արմատ չեն բրնձն շայատառում»: Այլ յուրն ընկած էր եւ իր ականջը, ուստի՝ իր գրքերը բերողին յանձնարարած էր, որ ինձ վրտահեցնէ, թէ այդպիսի խօսք նա չի ասած: Եթէ ասած իսկ լինէր, չէի դարձնայ, քանի որ դա մի սարածուած համոզում էր այն ժամանակ, որ շարունակում է մնալ իբր կտրգախօս: Քաղաքացիական կռիւն է համարւում ապահով միջոցը նոր կարգերի հաստատման ու տեսցման: Ուրախ եմ սակայն իր հերքումի համար:

Ե. Չարենց իր վերնագոյն թռիչքն առաւ ռազմական համայնալարութեան շրջանին, անձամբ մասնակցելով հարուային Ռուսաստանի քաղաքացիական կռիւներին իբր պարզ պինուոր: Ծիչդ է իր խօսքը, որ ասում է «Ռեւոլյուսիոն անկէր»ում.

Ես տեսիլ եմ հրդեհ,
Պատերազմ,
Սպիտակ ու կարմիր գորգեր —

Նա մրրկահասն եղաւ աշխարհաստան յեղափոխութեան, որ թռած էր Հայաստան երկրից՝ մասնակցելու «խեղապարուած ամբողջների» գրոհին: Երբ «Երբ ի՞նչ» մրրկիկներին վարժուած իր թեւերը անփոթորիկ մնացին: Սոցալոգներն արձուին չհասան: Իր ճախրը հիմա խանդարում էր շատերին: Եւ Կրեմլը կլանեց իր ձագերին... Շատերի հետ, որ դեռ փոթորիկ ունէին իրենց հոգիների մէջ՝ Չարենցն եւս լռեց առյաւէտ: Մխիթարական է ինձ համար մտածել, որ բովանդակ ուսս գրականութիւնը չկարողացաւ աւելի բարձրագոյն երգիչ ունենալ, որ արձագանդէր յեղափոխութեան փոթորիկներին «Երբ ի՞նչ» մեծ թափով ու տաղանդով, որքան Ե. Չարենցը: Իր անունն անկողնում կը մնայ Հայոց դրականութեան պատմութեան մէջ իբր մի փուլը մեր բնութեզոծութեան հոլովոյթի, որի ծիրն սկսում է Գամառ-Քաթիպայից եւ անցնէ ով Յ. Յովհաննիսեանի, Յ. Թումանեանի, Ա. Իրահակեանի, Վ. Տէր-Կարապետի հասնում է Ե. Չարենցին եւ ընդհատւում: Այսօրուան երգիչներն ու մէկը այդ ծիրն առաջ չի վարում. նրանք որոճում են հին ժառանգութիւնը:



ԵՂԻՇԷ ԶԱՐԵՆՑ. 1917ԻՆ
ԿԱՐՍԻ ԱՅԳՈՒՆ ՄԷՋ

Տ Ա Ղ

Ա Ն Ձ Ն Ա Կ Ա Ն

Թողած կաշտում, գետի ափին, տուներս՝ շինուած անտաշ քարով,
կայսր րոզամ. կարսի այգին ու հայրենի երկիրնք մով
եւ կարինէ Քոքաննեանին անգամ չաամ մնաւ քարով —
անց եմ կենում հիմա օտար քաղաքների քանապարհով:

Անց եմ կենում. շուրջս — մարգիկ. շուրջս դէմքեր հագա՛ր-հագա՛ր.
շուրջս աշխարհն է աղմկում, մարդկային կեանքն անհաւասար.
եւ ո՞վ կ'ասի՝ ինչո՞ւ ես դա, եւ ո՞վ կ'ասի. քէ ո՞րք հաւար, —
դէմքերք. ախ. բուր եմ այնպէս՝ կարծես շինուած եմ տապարով:

Քորշ. տաղտկայի ու խելագար երգ է կարծես այս կեանքը մի.
ինչ-որ մէկի սրտում բացուած — վէրք է կարծես այս կեանքը մի.
եւ ո՞ւմ համար — էլ ո՞ւմ համար կարօտակէզ երգէ հիմի
սիրտըս՝ լցուած տարիների սեղմ արհիւնով ու կապարով:

Քայց շուրջս քող որբան կ'ուզէ աշխարհը այս խնդայ, ցնդի —
եւ — հաշմանդամ ու խելագար ու յաւիտեան վտարանդի՝
դէպի երկի՛նք պիտի գնամ, դէպի եզերքը Ամենտի —
իմ քա՛րճ, հին ու աստղային երազների քանապարհով...

Ու էլ ամէն մեղքի համար սիրտս հիմա ունի հերում.
պիտի անդարձ ես հեռանամ, պիտի գնամ՝ աչքս է հեռուն.
քէ կարինէ Քոքաննեանին տեսնէ՛ք կարսի փողոցներում —
ասէ՛ք նրան՝ Չարենցն ասաւ. — մնաւ քարո՛վ, մնաւ քարո՛վ...

Թ Ի Ա Ծ Ա Ն

ԿԱՐԻՆԷ՛ ՔՈԹԱՆՃԵԱՆԻՆ

Լուսամփոփի՛ պէս աղջիկ՝ Աստուածամօր աչքերով,
բռճախտաւոր, քափանցիկ, մարմինի՛ պէս երազի,
կապոյտ աղջիկ, ակաթի ու կաթի՛ պէս հոգեթով,
լուսամփոփի՛ պէս աղջիկ...

Եւ ի՞նչ անեմ, ի՞նչ անեմ, որ չմեռնի իմ հոգին,
որ չմարի իմ հոգին քո ակաթէ աչքերում.
Եւ ի՞նչ անեմ, որ մնայ ծիածանը երեւոյցի,
որ չցնդի, չմարի՛ իմ հոգու հեռուն...

Լուսամփոփի՛ պէս աղջիկ՝ Աստուածամօր աչքերով,
բռճախտաւոր, քափանցիկ, մարմինի՛ պէս երազի,
կապոյտ աղջիկ, ակաթի ու կաթի՛ պէս հոգեթով,
լուսամփոփի՛ պէս աղջիկ...

Քոյր, գանգերի տխրութեան մի դօզանց է քո հոգին:
Իրեանի մէջ մեռութեան — բախտի կանչ է քո հոգին:

Եւ մեռակ է, քոյր-աղջիկ, այնքան մեռակ ու տրտում.
Զբիկեացի կապոյտում մի նահանց է քո հոգին...

Ո՞րն ես կանչում եւ ինչո՞ւ. գանգերը ո՛ւր են կանչում.
Բայց շեւ գունի, քոյր-աղջիկ, բող չկանչէ քո հոգին:

Քոյր իմ հոգին լուս ու տարտամ — մի ստուեր է լոկ,
դղեանի մէջ քո մեռութեան — մի ստուեր է լոկ:

Եթէ հայիս կը նանաչես, կը տեսես յանկարծ,
որ ձեռերիդ այնքան նման — մի ստուեր է լոկ:

Քուցէ ժպտաս, գուցէ տրտմիս, երբ գգաս, որ նա —
ձգերակա՞ն երկուութեան մի ստուեր է լոկ...



ԱՆՏՂԻԿ ԳՈՆԻՄԱՆՉԵԱՆ

ՉԱՐԵՆՑ - ՆԱՄԷ

VI

Օ, երգե՛ր իմ —
Առաջի՛ն,
Առաջի՛ն...

«Երեք երգ»...

Աստղիկ Գոնդախչեան...

Քրքրեմ
Մոխիրն իմ խոնի —

Եւ երբե՛ք, երբե՛ք
Չգղջամ...



ԿԱՐԻՆԷ ՔՈՐԱՆՃԵԱՆ

IX

Արքնացաւ հրկիզող մի սէր... —

Կարինէ:

Կարինէ Քոբանեան...

XII

Իմ հոգում — արեւն իրանի
Լափլիզում էր հրդեհի մման:

Ու ծանր, որպէս գրանիտ,
Նայիրեան բախիճն հնամեայ:

Թէ ի գո՞ւր կրքերիդ բազէն
Հետեւեց ինձ երկա՛ր տարիներ...

Տխրութիւն էր հմայքդ մսէ —
Կարինէ...

Մշո՛ւշ — Կարինէ...

XIV

Արթնացաւ արե՛ւ-նայիրին
Իմ հոգու նո՛ր զճգոցում:

Հրդեհ էր:
Անհատում կրակ:
Արնաքամ վերքեր կարեւլէր:

Ու կարօտդ յանկարծ ավրլան. —
Ողջակէզ-հոգիս արեւեց:

Ողջակէզ: Խնդուքիւն: Ու մի
Անհատում վատնում միասին —
Եւ հոգիս սանձարձակ քաւ...

Այսպէս էր տասնըութ քուին: —

Յոմա՛...

Լէւսի Թառայեան...



ԼԵՒՍԻ ԹԱՌԱՅԵԱՆ

XXI

Ինչ
Ինչ
Ինչ գարձանք բանակից
Ինչպէս էր ինձ արդէն
Ինչպէս... երկրային մի կին:

Լիքս — ջահեր կրակի,
Շաքուլներ — Շիրազի՛ վարդեր:

Լիքս յետ անցան դէմքեր,
Լիքս ինչն քոզ քեզն՛վ հարթի.
— Լիքս ինչն՛ն ես սիրո՛ւմ եմ քեզ,
Լիքս ինչն յետո՛ր Արփիկ...



ԱՐՓԵՆԿ ՏԵՐ-ԱՍՏՈՒԱՅԵԱՆՏԵՆ

ԼԻԻՍԻ ԹԱՌԱՅԵԱՆԻՆ

ՈՂՋԱԿԻԶՈՒՈՂ ԿՐԱԿ

7

Կապոյտ կարօտը մեռաւ: Խառնուեց երին:
Արեւի շողքը ահա գարկել է սարին:

Որպէս հսկայ ադամանդ, տե՛ս, գագաթը ձիւն
բռնկուել է իրիկուայ կապոյտի միջում:

Բոց է դարձել ոսկեգոյն — չի՛ հալչում սակայն.
գագաթներում յուշ դարձող երազներ չկան:

Յուշ չի դառնայ ձիւնը՝ ջինջ գագաթի վրայ՝
սիրտս — սառոյց, սիրտս — ձիւն, կրակի ֆուրայ...

8

Այս աշխարհում իրիկնային, ուր ապրեցիր միայն մի ժամ,
Հրա՛ջք էր, սիրտ, հրափթիթ ծաղկումը քո հրաշուշան:

Բայց որք հոգիս, կարօտիս պէս աստեղահեւ ու խելագար՝
Մի՛ այլ կեանքի փայլ էր կարծես, փայլ էր կարծես. կարծես չկար:

Փայլ էր հոգիս՝ շատագունուած իրիկնային քո երազում
Ու կարօտով անմխիթար լոյսի մասին երգ էր ասում:

Ու որք հոգիս քո կարօտում յաւերժօրէն մխա՛ց, մխա՛ց.
Որպէս կարմիր մի ողջակէզ՝ արիւնտուած, հրէ մի խաչ:

Գու ծաղկեցիր, սիրտ իմ, որպէս հրափթիթ կարմիր գարուն —
Նա յո՛ւշ դարձած ցնդե՛ց, կորաւ իրիկնային այս աշխարհում...

**

Ինչպէս երկիրս անսփռփ, ինչպէս երկիրս բախտագուրկ.
Ինչպէս երկիրս աւերակ ու արնաներկ —
մխում է սիրտս հիմա որք, մխում է սիրտս բախտագուրկ.
մխում է սիրտս՝ աւերակ ու արնաներկ...

Եւ այս երգերը իմ կարմիր, ախ, այս երգերը իմ կարմիր.
որ երգում է անսփռփ սիրտս կրակուն —
ինչպէ՞ս պիտի արդեօք հնչեն ախ, այս երգերը իմ կարմիր —
իմ աւերակ, իմ ո՛րք երկրում...

Ինչպէս երկիրս անսփռփ, ինչպէս երկիրս աւերակ —
այնպէս էլ սիրտս — անսփռփ, այնպէս էլ սիրտս — անուրախ.
վերք է դառնում սրտիս խորքում օրերի փայլը այս հրակ —
ախ, սի՛րտ իմ՝ բո՛րք ու անսփռփ, — երկի՛ր իմ՝ որք ու անուրախ...

ԱՐՓԻԿԻՆ

Տ Ա Ղ Ա Ր Ա Ն

ԺԵ.

Երբ էս հին աշխարհը մտայ ես տաղով, սագով-ֆամանչով՝
ի՞նչ պիտի անէ աշխարհում էս անմիտ-անմարը, ասին:

Սակայն երբ խալխի ֆէֆերին ես անուշ տաղերս ասի՝
ամառուայ մրգերի նման անո՛ւշ է քո բառը, ասին:

Քայց խալխի անսիրտ ֆէֆերին ես տխուր, մեծակ մնացի,
ուզեցի քողկեմ-հեռանամ՝ հագարտ է ու չար է, ասին:

Եւ սրտի ցաւից յուսահատ ես մէ քառ օղի խմեցի —
Չարեցը ցնդած-գիճեմու, հարբեցող-յիմար է, ասին:

Ու ձմրան բուքերի միջին ես բուպիկ ու մերկ մնացի, —
դուրսը ցուրտ, ձմեռ է, սակայն հոգուդ մէջ ամառ է, ասին:

Ասի թէ՛ մա՛րդ էք ասար դուք. չէ՞ք տեսնում մարմինս ծուառ-
Չարեցի հոգին տաղերում աննկուն, յամառ է, ասին:

Խնդացին, քրջացին միայն, որ այդպէս մնացել եմ մերկ, —
դարերի հիացմունքը վսեմ տաղերիդ համար է, ասին:

(ՀԱՅԱՍՏԱՆԻՆ)

ԺԹ.

Հագար ու մէ վէրք ես տեսել — էլի՛ կը տեսնես,
հագար խալխի ձեռք ես տեսել — էլի՛ կը տեսնես:

Աշնան ֆաղած արտի նման՝ հագար գոհերի
չհաւաքուած բե՛րք ես տեսել — էլի՛ կը տեսնես:

Գլուխդ չոր ֆամուն տուած պանդուխտի նման
հագա՛ր տարուայ հերկ ես տեսել — էլի՛ կը տեսնես:

Նարեկացի. Շնորհալի, Նազաչ Յովնաբան —
ինչֆա՛ն հանար, խելք ես տեսել — էլի՛ կը տեսնես:

Քո Չարեցիին լեզու տուող երկի՛ր Հայաստան,
հագա՛ր ու մէ ե՛րգ ես տեսել — էլի՛ կը տեսնես:



ԱՐՄԵՆՈՒՇԻ ՏԻՓՐԱՆՆԱՆՆԵՆ

ԷՄԱԼԵ ՊՐՈՓԻԼԸ ՁԵՐ

Էմալէ պրոֆիլը Ձեր,
 Ձեր յակիրք աչքերը բիլ
 ես այսօր կ'ուզեմ երգել,
 որպէս մի անյայտ դը Լիլ:
 Արդեօք ո՞ր վարպետը մեծ
 յօրինել է դէմքը Ձեր.
 աչքեօք ո՞ր Ոգին տուեց
 Ձեր դէմքին յուսէ գծեր:
 Կ'ուզէի երգեր կապել
 եւ գովել երգով անձիք
 Էմալէ պրոֆիլը Ձեր,
 Ձեր յակիրք աչքերը բիլ:

**

Որպէս մի ցնդած պոետ'
 ես այսօր կ'ուզեմ երգել
 Էմալէ պրոֆիլը Ձեր —
 եւ երգով լինել Ձեզ հետ:

(«Էմալէ պրոֆիլը Ձեր» — 1920)

Կ'ուզէի յոյսով արեգ,
 աչքերում Ձեր բիլ ու խոր
 գուշակել երգերը, որ
 Դուք մի օր պիտի գրէք:
 Ձեր կապոյտ հրով վառուած'
 կ'ուզէի լսել ես յար
 Ձեր վնիտ երգերը վառ,
 սր այսօր դեռ չեմ գրուած:
 եւ որպէս ցնդած պոետ —
 կ'ուզէի անվերջ խմել
 լազուրէ երգերը Ձեր —
 եւ երգո՞վ լինել Ձեզ հետ:

ՏՐԻՈՒՆՏՆԵՐ

Իմ երգը միշտ Ձեզ է երգում'
 Դուք երգ ու հմայք էք, տիկին.
 լսէք, ախ. լսէ՛ք իմ երգին —
 իմ երգը միշտ Ձեզ է երգում:
 Օ. թող իմ ամէ՛ն մի երգում
 իր վայրը գգայ Ձեր հոգին —
 իմ երգը միշտ Ձեզ է երգում,
 Դուք երգ ու հմայք էք, տիկին:

**

Երէկ Ձեր պրոֆիլը այնքան,
 այնքան հմայիչ էր, գիտե՞ք,
 եւ Ձեր սանրուածքը թեք
 երէկ հմայիչ էր այնքան:
 Դիւթի՛չ էր Ձեր ծպիտը մանկան,
 Ձեր քաղցր ծպիտը՝ սրտաբեկ. —
 երէկ Ձեր պրոֆիլը այնքան,
 այնքա՛ն հմայիչ էր, գիտե՞ք...

**

Շրշում են շուրջը, շրշում
 շուրթ ու շուրթ կանացի.
 անցնում եմ մայրով փողոցի —
 շրշում են իմ շուրջը, շրշում:
 Լսում եմ զարման մի շրշիւն,
 կարծես թէ անտառ զնացի —
 իսկ շուրջս շրշում են, շրշում
 շուրթ ու շուրթ կանացի...

Ե. ԶԱՐԵՆՑ

Յ. ՕՇԱԿԱՆ

ԵՂԻՇԷ ԶԱՐԵՆՑ



Ե. ՕՇԱԿԱՆ. 1921ԻՆ

Ճիշդ այն օրերուն (1924 Նոյեմբեր), երբ Արշակունցի Միասնիկեանի կարգադրութեամբ եղիւ թիւ 2-էնց արտասահմանեան կարգ մը երկիրներէ մտնելու համար համարայ կ'ելլէր, Պոսթընի շրջանէն ին մէջ արդէն սկսած էր լոյս տեսնուիլ ստանամեայ բերքը մանրամասն տար-տարութեամբ գնահատող Օշականի ծաւալուն ու-նայնաբանութիւնը:

Հասնել չուրջ եօթուկէս ամիս Եւրոպա մը-տէն Վենիթադրուի, թէ տեսած էր իր վաստա-ղը բարեբախտական ճշմարիտ արժեքափոխ կշիռքի-տեսութիւնը Օշականի յօդուածաշարքը:

Պարզ բազմաբար մը տալու համար Օշականի-տեսութեան վերլուծումէն՝ ստորեւ երկու-տեսութիւններ մէկը՝ գնահատանքով լի, միւսը՝ գա-նահատութեամբ:

«Եղիւ պարփիլը Չեր», ամբողջ զիրք մը կը պատմէ մեզի գրեթէ կէս-սունկիւններ. կիսաղէմքի մը շուքին տակէն.

Ինչեւ այնպէս մե՛զով էք խօսում: Երբ դուք կարդում էք, տիկին,
Չերը քիթուկները գունատ նմանում են յաւմիկի:
Ինչ Չեր աչքերը, գիտե՞ք, առանց ներքին կրակի,
Երբեք են՝ Չեր կրծքի քարերի պէս քանկազին:

Ինչ երբ անցնէ եմ դնում ես Չեր թեթեւ քայլերին —
Երբեք է ինչ. թէ նոքա տրիտիտներ են երգում
Ինչ աչք երգով հնայնաձեւ՝ սիրտս տխրում է լռին:

Ինչ երբ գիտե՛ք, որ սիրուց հիւանդացած իմ հոգում
Ինչ երբ լռում եմ թեթեւ, թաւ քիթուկներ ջուրակի —
Ինչ երբ անցնում եմ ես Չեր քարակ մատներն ապակի:

Ինչ երբ թեթեւ, առանց ճիգի ըսուած տողեր: Բայց անոնք ընդու-
նայնայնաբար: Անոնց հոսումը այնքան ընակաւն է, որ առաջին իսկ
ընկալումով էք սեղադրուին քու մէջը՝ առանց որ ատեն ունենաս մտա-
մարտի մտայն: Բայց պզտիկ ուշադրութիւն մը բուսական է, զգալու հա-
մարտի մտայն: Գարգուլեան տակ նպաստող
ժողովուրդի շարժող. երկար ապրումին: Առէք ապակի մտաները ձեր

դողացող ասիին մէջ, բացէք ձեր շրթունքները անոնց չորութեանը վրայ ու հարցուցէք, անձոյն ու փակաչք, այլ սառոյցէ մատներուն, թէ կարելի՞ է իրենց վրայով ճամբորդել դէպի հողիներր, դէպի հողին այդ կնոջ, որ կը կենայ, ավեր տուած, հայուածքը ու գիտէ ուր, դուցէ բոլորովին անտարբեր, հակած դէպի խոնարհող հողին: Ու անկեղծ է բանաստեղծը, երբ այդ բարակ սակորներուն ներսը, ջուրակ, թաւ ու թրթռուն կը կարծէ թէ կ'երգեն: Այս դիտողութիւնները թանկապին են հոս ու զեղեցկութիւն ու ապրումի բիւրեղացում կը դառնան:

Երբ ես տեսնում եմ Ձեզ —
անգարն անցած մի սէր
սկսում է իր հեզ
հեփաթները հիւսել:
Յիշում եմ ես յանկարծ
կապոյտ լանպեր ցազի,
որոնք վաղուց հանգչած
սպասում են լոյսի:
Յիշում եմ ջինջ, մաքուր
ապակիներ կորած,
կապոյտ ծովի փրփուր՝
փխրուն գիպսից փորած:
Ինչ-որ մի տեղ գեռած
ֆոլիանտի թելքեր —
ու թիթեղից շինած
դիակառփի վարդեր:

Բոլորովին սովորական աարբերով այս տողերը նորութիւն են մեր քնարերգութեան մէջ: Այս կամուր պարզութիւնը, չփնտռուած ընտանութիւնը, ընթացիկ կեանքի մանր ծուկներով կամ ներքին կեանքի աննշան բեկորներով դիմադիծ ու հողի շինելու այս արուեստն է, որ համակրելի կ'ընէ Չարենցի դործը: Նիւթին նուիրապետութեան այս դործնական խորտակումը, մեր հողին իրերուն կապելու, անոնցմէ իրենց հողին, այսինքն՝ մեր կրկին ետ ուզելու այս միամիտ խաղը յանկուցիչ է հոս:

Երբ ես տեսնում եմ դէմքը Ձեր
եւ Ձեր մտոները ապակի,
եւ Ձեր դէմքին լուսէ գծեր
ինչ-որ հեռու արեգակի —
սիրտս զգում է ցար նորը
Ձեր ուտրին նիրհող շալի,
մետաքսի վիշտը անսփով,
աճաւ թախիծը ոռեպի.
ու բաժակում նիրհող թէյի
անմահ ձանձրոյթը յորսնջող —
ու ջահագարդ սենեակների
մարմանդ մորմոքը մեզ տանջող:

Առիկա մանր ու դատապարտելի իրապաշտութիւնը չէ, որ առարկաները կը համբէ ու դոյնը կ'անուանէ միայն: Բոյրը իրերը տեսնուած են հոգեկան լուստորման մը անկիւնէն ու բոյրըն վրայ ալ կարելի է հաստատել հոգեւորող վերադիրը, որ իրերը փոխանակ գամելու կամ դասակարգելու, կը գունուորէ ներքին կրակով: Ու առանց յաւակնութեան, ու առանց ոտման թիղմի այս տողերը թերեւս կ'արժեն այնքան, որքան կ'արժեն արեւելահայ մե՛ծ-մե՛ծ բանաստեղծներուն արտասուած հեղձ սիրերգները, եւրով, շահեակով, ալ ու ալվանով ընդելուզուած թեթեւ ու պարսպ երգերը, որոնք սրբիչները հռչակի բերին:

Կարգում էիք Դուք քաւ ձայնով
սարօրինակ ու կանացի
երգերը Ձեր մարմանդ ու մով:

Երբ բարձրացայ ու գմացի —
լսել էր ձայնը Ձեր երգուն,
բայց իմ սրտում, իմ ոյր հոգում
քաւչուքակներ էին երգում:

Այսպէս է, որ կը քայլէ ամբողջ դերքը: Ու կ'իտուածի վրայ փորաւորած կամ սպաղրուած կրեւորող այս կ'իտուածի բանաստեղծին հողին մէջ կ'ունենայ յաջորդական արտայայտութիւններ, միշտ մասնաւոր առարկայի մը կամ տեղի մը կ'նկարագրէ, որոնք համակրելի կը մնան իրենց զուսպ քե՛տերուն բարակ ու երգեցիկ շնորհներովը:

Ու պէտք է անմիջապէս աւելցնել, թէ բանաստեղծը խորապէս անկեղծ է էր պատկերին հետ: Ու զժուար չէ վերստեղծել այս գալաւտ երգերուն արտիկ լուսերովը ամբողջ ներքին աշխարհը, որուն երգերին կը կենան քնաւոր թէյին բաժակները, պատին՝ իրենց կապոյտ ծփանքը օրօրող քողերը (բանաստեղծը ոտեայ կը դրէ) ու իրարմէ քաշուած երկու սրտերուն անխոստման մեղեդին, որ սէրը չէ, բայց աւելի քաղցր յուզումներ կը թելադրէ: Պէ որ կնոջ մը հետ ունեցած է այդ պահերէն, ուր աչքերը արտօնուած են արտօն շրջելու անգիտակից սարսուռներ, ուր իրարու վազող երկու զգայունութեանց ջերմութիւնը կրակէ կաճար մը կը նետէ պահի պարսպին վրայ, որ վերջապէս, կնոջ մը երեսին չափ համ ու արժէք կը հաղնին անոր հոգեհարս. ձեռնոցը, սեղանին սպառող սրուակները, կամ կոնակին ինկած գործի մը նշան եղած էջը, պիտի սիրէ այս անհաստար, միամիտ, մեղմ բայց անկեղծ ու ապրուած երգերը: Չարենց քիչ անդամ պիտի յաջողի, այդ գիրքէն դուրս, այս փափկութեամբ, այս հարազատութեամբ էջեր ստեղծել: Գրուէն արափիլը Ձեր»ը Չարենցի սիրային երգերուն յաւագոյնները կը պատմակէ:

**

Չարենցի աշխարհին ամէնէն տկար մասը յեղափոխական աշխարհն է: Եւս են այս տկարութեան պատճառները: Հոս կը ծանրանամ դիտարկները:

Եղիշէ Չարենց երաժշտական գոգայնութեամբ սուղորուած բանաստեղծ մըն է: Այսինքն՝ մէկը, որ իր բառերը քով քովի պիտի շարէ, առաւելագէս անոնց ստեղծ հանած թեթեւ, աղմուկը, դաշնաւոր բզզիւնը վայելելու: Եթէ ոտանաւորին մայր յատկութիւններէն մէկը երգեցիկ ու հնչական ըլլալն է, մի մոռնար մանաւանդ, որ անիկա ամէն բան չէ: Անշուշտ, ամէնէն առաջ բառերը պէտք է թեւ սննեան ու տողը վազէ: Բայց բառերը պէտք է ծանր ըլլան նաեւ արիշ տարբերով ու տողը պէտք է իր վաղքին մէջ բան մը փոխադրէ:

Հոս է, որ կը սկսի փոսանգր: Անոնք, որ ոտանաւորին մէջ քիչ ու շատ աննկի հնչականութիւն մը կը յաջողին ղետեղել, բաւարարուած կը նկատեն իրենք զիրենք ու ա՛լ հոգի չունին մտածումիւն, որուն արտայայտութեանը համար զրիշ էին տրած: Կամ ուրիշ տեսակէտով՝ չեն կրնար ազատել զգոցումը իր gangue-երէն, որոն հոսանուտ մարմինը մեզի փոխադրելու համար ճամբայ ելած էին: Ու առաջ կու գայ անբնական երեւոյթը-քերթուածը, որ իր տարազովը միայն ինքզինք կ'արդարացնէ:

Բանաստեղծի մը մօտ երաժշտական տարրին այսպէս տիրապետող ըլլալը կ'անդրադառնայ ամբողջ ստեղծումին վրայ: Ու անիկա, փոխանակ հետապնդելու մտածումը, որ պէտք է քանդակ-քանդակ իրականանայ բառերուն ներքեւ, փոխանակ մտիկ ընելու գոգայնութեան, որ տող-տող պէտք է պոսկի թուղթին վրայ, սկսնջ կը բանայ միայն ու միայն բառերու թեյազրանքին: Ու պիտի հետեւի անոնց առաջ բերած մեղեդիին ու պիտի մոռնայ, թէ անդին շատ ընելիք ունի տակաւին: Մտածումը պարտապ տեղը պիտի աշխատի այդ բառերուն շահակալուած գնացքը չափաւորելու: Պարտապ տեղը գոգայնութիւնը փշուր-փշուր պիտի տարտղնուի, որպէսզի հասնի բառերու այդ բանակին:

Ինքզինք կառավարելու այդ անկարողութիւնը, ուրեմն, մնայուն գիծակ մըն է այդ խմորէն բանաստեղծի մը համար: Ու եղբրականը հոն է, որ այդ գիծակը հոմանիչն է նոյն ստեղծ մեր մէջ շատ որոշ անդործօնութեան մը (apartie):

Օրինակ մը.

Իրիկուն էր, հրակարմիր մի իրիկուն:

Արիւր բորբ մայր էր մտնում արեւմուտում:

Վերջալոյսի պատկեր մը: Առաջին տողը կու տայ պահ: Երկրորդը, աւելի ծանր, կրկնութիւն մըն է: Բոլոր անոնք, որ բնութեան պահերուն ընտանի են, պիտի գոհանան այս պատկերով, որ պարզ բայց տանելի գիծերով կը դրուի մեր առջին: Բայց բանաստեղծը այդպէս չի խորհիր: Ան կ'ուզէ այդ կրակին տակ գաշտանկար մը տարածել մեր աչքերուն դէմ:

Գաշտի վրայ փռուել էր մուտ արիւնաւում՝

ու կը պատրաստուինք հիմա տեսնելու նաք գիծերը այդ այնքան հինցած նկորին, որ փորձած է բոլոր զարերու արժանաւոր ու անարժան բանաստեղծները: Ու կը սպասենք, որ այդ արիւնոտ ու անասման պատանքին տակ իր ձեւերը միշտ կենդանի պահող մեծ մեռելը, ցերեկուան ղիակը երկնայ մեր առջին:

Բայց ուրիշ արդիւնքին համար աչք ու մատ, դիժն ու դոյնը պէտք է հաւասար
ուշադրութեամբ միջամտէին: Միեւնոյն հոս նկարչական տարրը միշտ ալ
ստատուած է բանաստեղծին կանչերուն: Ինչ ընել: Վերագոծնալ առաջին
տարրը, որն եղած պուտ մը դոյնը վերստին դործածել, բայց փրկելու համար
ուշադրութեամբ խորհրդապաշտ վրձինով:

Եւրոպէի կարծես՝ բոքք արեւի արտից քամած:

Չորս տող, որուն կեզրոնական գիծը իրիկուան մը նկարն է: Վերջին
տողը չէ պրկուած ու նոր պատկերով կը փրկէ ամբողջ տունը: Բայց պէտք
է բարձր: Գէտք է յաւ բանալ աչքերը՝ տեսնելու համար անտիպը, չըսուա-
նէ: Բարձր ինչ հարկ ստիպին այդ միջին: Չէ՞ որ ամբողջ դազափա-
նէ: Եւրոպէի մէջ տուած էր: Պատարտտ է արդէն այդ տողը՝ թէ՛ իբր բառ,
թէ՛ իբր պատկեր: Կ'ստաննը անիկա, ու պատիկ, գրեթէ աննշան փոփոխու-
թեամբ կը կրկնենք: Այդ տողը իր բնական intertieով իր ետեւէն պիտի
տար: Եւրոպէի ալ:

Անկող, թէժ, մայր էր մտնում արեւմուտքում.—

նւ արիւն էր դաշտի վրայ, թոյն էր թփնում:

Մի գառիթափին վրայ ենք: Ու բանաստեղծը տարուած է բառերէն:
Եւրոպէի, որ կը տիրապետեն ու կը մղեն դինք: Չի կրնար անդրադառնալ,
այլ ինչ տող արդէն կրակի հետ խաղացած է ու կրակ խաղցուցած: Չի խոր-
հոր թէ՛ որ է բառերը մեզ շատ կը յայննեցնեն ու մենք բնագլուխ կը փնտռենք
տեսնել, որոնց տակը միս ու սակոր կարելի է տեսնել: Իրեն համար կը բա-
նէ: Եւրոպէի ըլլան հանդուրժելի, ախորժուր, այլ չի հետաքրքրուիր,
թէ՛ որոնք թելիք մըն ալ ունին: (Սեմպոլիստ արուեստը բառերը դործածեց
եւրոպէականով, բայց հնչական հասկացողութեան տակ անիկա հետապնդ-
ւած հնչական դաշտանկարներու զարթնումը ու, մանաւանդ՝ արհամարհեց
տարրերը, հատածներով, միօրինակ չափով ձեռք բերուած մեղեդին):

Բայց շարունակենք.

Չբիգմում վառել էր մի կարմիր բուրայ —

նւ արնավառ փայլ էր փռում դաշտի վրայ:

Հարկ չկայ վերլուծելու: Ո՛ւր որ էինք՝ հոն ենք.

Ու արտերը պեծածան վառուել էին

Պէտքակի կարմիր փայլով իրիկնային:

Ահա միակ բոլոր՝ արտը, որ մեզ գետնին կը կապէ: Ու վերջացնելու
համար ուր պատիկ փարակրափը՝

Եւրոպէի, անմայր ու անսահման, լայնատարած

Հրահարմիր տարածուել էր նրանց ստաջ: —

Եւրոպէի կարծես, որ սկիզբ ու վերջ չունի —

Եւրոպէի կարծես՝ մշուշի մէջ իրիկունի:

Պոեմին առաջին հատուածը աւարտած է: Նիւթն է կարմիր, թունաւոր կարմիրով վերջալոյս մը արտերուն վրայ:

Տարրական ուշադրութիւնը պիտի բաւէր՝ դպալու համար նկարչական նալուածքին տարապայման աղքատութիւնը:

Ամէն նկար գիծերու չէնք մըն է ամէն բանէ առաջ, որոնք իրենց յարգարումովը իրերը ցցելու, կարկառելու պաշտօնը ունին: Փնտուեցէք դուք այդ 12 տաշին մէջ ու պիտի գտնէք միակ տող մը, որ հողի շերտ մը դնէր ձեր աչքին: Բայց տարտամ բառովը: Բայց անծափը: Ու իբր թէ չբաւէր ատիկա, առէք անասիւններ: Ա՞ս ալ քիչ կը կարծէք: Առէք լայնատարածը: Ատիկա թափթփածութիւն է, կարդացողը արհամարհելն է: Այս միակ տարտամ բառին վրայ պիտի շինէ իր քերթուածը: Գծագրելու այս անկարողութիւնը աւելի կը շեշտուի, երբ կարգը կու գայ զոյները գործածելու: Ու դրպրոցականի մը պէս ասիով կ'առնէ կարմիրը ու կը նետէ հողին վրայ ու հողէն վեր: Յոնութեան կը կանչէ բնագրական քանի մը բառ, Տէրեանին բարբն ու մշուշը ու քանի մը լայն հոմանիշներ: Կը կրկնէ ու կը կրկնէ: Ու կ'ունենանք վերջալոյսը:

Բանաստեղծութիւնը, այսպէս ըսելու համար, անկանոն, ապերասան, բայց սրբազան բխում մը նկատելու համար՝ ես կը կանխեմ բոլոր Չարենցները ու անուններ կը դնեմ հոս: Այս՝ Ամէն միջոց ներելի է, բացի աստիակէն: Պէտք է որ այդ բխումը, իր նսրութեամբը, իրացուցած դեղեցկութեան արժէքովը, իր խաղերուն այլազանութեամբը, վերջապէս իր արդիւնքին անսոսրկելի պնդութեամբը արդարացնէ մեր զիջումը: Այսպէս, մենք առանց նեղուելու, չենք տեսներ «Վէրբ Հայաստանի»ին մէջ չափի, կարգի, յորինւածքի պակասը, վասնզի իսկապէս տարերային բան մը՝ նոր ու անդամադրելի (իւր շրջանին մէջ), մեզ կ'առնէ ու կը տանի: Մեր մտքէն չ'անցնիր դատարեանի Գուրեանին ոտանաւորը, որ շատ տեղեր մեզանչած է օրէնքին, վասնզի այդ նոյն թափը, այդ անտիպ ու անդամադրելի գեղեցկութիւնը մեզ կ'առնէ ու կը տանի: Ու, վերջացնելու համար, Le bateau ivreին (Ա. Ռէմպո) մէջ, կանգունը ձեռքերնիս, չենք ճշդեր ու չափեր ամէն բառի տեղն ու յարմարութիւնները: Վասնզի քերթուածը նորէն կը տանի մեզ:

Հո՞ս: — Բայց պէտք է կրկնել, թէ բանաստեղծութիւնը երբեք ու երբեք բառերու հրթիռ մը չէ: Թէ՛ մասնաւանդ հո՞ն, քերթուածին մէջ բառը պարզ գահաւորական է յուզումին, մտածումին: Թէ՛ այդ երկու հոգեկան վիճակները արտայայտելու համար է, որ կրնայ նպատաւորուիլ երաժշտական յորինուածքին:

Կամաւոր այդ անփութութիւնը քերթուածներուն մէջ կը վերածուի անգիտակից անփութութեան: Տոյերը կատրտել, ելլել ու իջնել, յեղափոխելու համար խորտակել աւանդական կաղապարները, անակնկալի բերելու եւ աստիէ հաճոյք ճարելու համար փորձել բոլոր կարելի ու անկարելի յանդրդնութիւնները, բա՛ռ, բա՛ռ, բա՛ռ նետել, անհաշիւ, պուտ մը յուզում կամ դողող զիծ մը սեւեռելու համար, մէկ խօսքով՝ բնել ամէն բան, որպէսզի energieի նուազագոյն մը զոհուի՝ մտաւոր տողերու մեծագոյն թիւ մը երեւան բերելու համար: Ահա թէ ինչպէս մօտեցած է Եղիշէ Չարենց մեր օրերու ամէնէն շփեղ երեսըին, յեղափոխութեան:

Բառերով քայող այս բնագրին քով հարկ կը դրամ աւելցնել ուրիշ մեծ թերութիւն մը, այս անգամ բախտորոշ. — Խառնուածքին հարցը:

Անոնք, որ ուշադրութեամբ կը քննեն բանաստեղծին արտագրութիւնները մինչեւ 1920, կը գտնեն անոնց մէջ մէկը, որ հողին բոլոր կողմերովը

հակած է զէպի տարտամ երազանքը ու կլլուած անկէ: Որ իրերուն ու յոյ-
 չե-ուն աշխարհէն կը սիրէ առաւելագէս մշուշոտ, ծոյլ կամ անշարժ տե-
 շէներ: Ան հետաքրքրուած անդամ չէ մարդերու գծրախտութեամբ: Գոր-
 ծողութեան սարսափը ունի ու կը զղուշանայ մարդերէն: Մենք զայն տե-
 ւանք «Տանթէական»ին մէջ, որ ձգած ապրող խմորը՝ մուժ ու մշուշով կամ
 ներքին պայքարներովը զբաղած էր իր երեւակայութեան:

Մարդերէն վախճալու այդ պարագան կարեւորագոյն հաստատում մըն
 է անոր նկարագրին համար: Ան, ամէն երայանուէր հողիներուն նման, պի-
 տի փախչի պայքարի դաշտէն: Պիտի ապրի իր անկիւնին խողաղութիւնը
 համ անդարմանելի եղերականութիւնը: Բայց պիտի չըլլայ ուրիշներուն հա-
 ճար ինքզինք դոճող, մարդերու բարեքին համար ինքզինք մինչեւ խաչերը
 նետող տարօրինակ տիպարը: Ու յեղափոխութիւնը պործն է միայն ու միայն
 այս խառնուածքներուն: Ու յեղափոխութիւնը քիչ անդամ կը յարձակի չէն-
 շեղու կամ դաշտանկարներու վրայ: Անոր ծաւալման կեդրոնը մարդն է:

Մարդը իր բոլոր ձեւերուն մէջ: Կարգացէք այն պսեմները, ուր բա-
 ճաստեղծը մարդերը կը հանէ մարդերուն դէմ: Ու դիւրութեամբ պիտի հա-
 ժողուիք, որ բառերն են, որ կը կոռուին բառերուն դէմ: Ու բառ են այդ մար-
 շերը զրեթէ միշտ: Ահա անոնք կը յարգարտին «խելագարուած»՝ նոր օրե-
 տու մեծ գուպարումին համար, բայց կը զարգարուին մշուշով ու վերջալոյսով:
 Արժնուրդը՝ պղտիկ կանթեղի մը նման՝ հագիւ ամոյն լոյսով կը դժադրէ ա-
 նոնց հակատները, յայտնելով անոնց ծագումին զծրախտ պատմութիւնը: Ու
 անոնք չեն կրնար քայել առանձին ու կը մերսածուին վանդուածներու: Բայց
 բառերը կառավարելուն չի նմանիր դանդուածները շարժելը: Ու, փոխանակ
 անոնց բախումները, քայքայումները, ողբերգութիւնն ու խելագարումները
 պատմելու, բանաստեղծը պիտի նայի անոնց ետեւէն՝ իր իսկ հոնած փոչիին,
 չարիքներն վրայէն: Պիտի պատմէ թունտ արեւին տակ չէնքերուն նիստը,
 երկաթէ դիժերուն արիւնտ հանգոյցը: Բայց անոնց պայքա՞րը: Դո՛ւք զուր
 քնդը պիտի սպասէք տեսնելու պործողութիւն մը, որ պարուրէր այդ ամբողջ-
 ւորը, որ զօրանար, փրփրէր՝ խորտակելու համար պայմանադրական կեղ-
 ծքէն թումբերը, որ կոխկռակէր անիրաւութեան, դրկանքին, ցոփութեան ու
 քառքած հեշտանքին վրայ սուխններով բռնի կանոնուած արդի պարծուա-
 շի՛քն անամօթ կուռքը՝ փշուր-փշուր, ու տար հսփերուն անոր մոխիրները:
 Վառնգի բանաստեղծը անհաղորդ է այդ տառապանքին:

Եթէ ան զծրախտ է դանդուածները շարժելուն ու ատոր հետեւող զղը-
 քանք մեկի փոխադրելուն մէջ, բախտուոր չէ զարձեայ, երբ խողաղութեան
 քղեայներ կը հեռագրէ աշխարհի անիրաւուածներուն: Վասնզի հոս ալ չի
 զգայ ըսածները: Վասնզի խառնուածքով յեղափոխական չէ ան: Բառերով
 յեղափոխութիւն մը շատ-շատ սերունդ մը կրնայ խաբել: Արեւմտահայերը,
 յաւնչ բովանդակ գծովքովը նուազ ձախտութեամբ չըրին այդ գրականութիւ-
 ճք: Ու երբ դեռ թաց է դիւցաղներդու քերթողներու արիւնը, իրենց երգե-
 րուն վրայ, անոնց զորքը արդէն պատրանք չունի նոր հասնող սերունդին:

Այս երկու զօրաւոր աղգակները, բառերէն տարուելու իր թուլամոր-
 քութիւնը, մարդերուն հանդէպ իր խոր, թոյլ ու մեղաւոր անտարբերութիւ-
 ճք էր դատապարտեն Չարենցի յեղափոխական բանաստեղծութիւնը: Անիկա
 անօր է. պիտի շղիմանայ նոյնիսկ իր սերունդին:

8. ՕՇԱԿԱՆ

Ե. Զ Ա Ր Ե Ն Յ

ՓՈՂՈՑԱՅԻՆ ՊԶՐՈՒՀՈՒՆ

ՇԱՆ ԿԱՐՕՏՆԵՐ

Պատուհանիս տակ հիմա որք մղկտում է մի շուն.
Սիրտս լսում է նրան — եւ սիրտս ճեղ է յիշում:

Նա տխուր է ու մեռակ, ոչ-ոք չունի հիմա նա —
Ու գանգատը դժնդակ լուսինը չի՛ իմանայ:

Գուրբը ամպ է ու մշուշ, անասող երկինք ու գիշեր.
Մղկտում է այսօր ուշ. գանգատում է առանց սէր:

Հեռուն թարթում է տարտամ գագէ լապտերը բեկուն.
Ինչ շո՛ւտ մարեց այս անգամ արեւալստ երեկոն...

Ինչ շո՛ւտ մարեց ցերեկի գուարթ աղմուկը, ու մութ-
Գիշերն իջաւ՝ անհոգի, անմխիթար ու անգութ:

Ցերեկը լա՛ւ է այնքան, ցերեկը խի՛նդ է բերում —
Փողոցների խրախման, անմխիթար դեգերում:

Խոհանոցի դռան մօտ, կամ խանութի մօտ հացի —
Սպասումներ ու անօթ՝ խո՛ւլ տագնապներ փողոցի:

Բայց ցերեկները չունեն մղկտուքը գիշերուայ
Ու հոգու ցարը անհուն ցերեկը չի՛ երեւայ:

Մղկտում է հիմա նա, սիրտը գգուանք է ուզում,
Սիրտը ճչում է հիմա, մղկտում է անլեզու: —

Բայց սիրտ չունեմ էլ քո խեղճ մղկտանքը լսելու.
— Քնի՛ր, քնի՛ր, եղիք խե՛ղճ, անօգնական ու հլու:

Զի ուղարկի ո՛չ մի փայլ մեզ լուսինը հիմա էլ —
— Շո՛ւն, կարօտի իմ եղբայր, դառնաթախի՛ժ իմ ընկեր...

Շ Ա Մ Ի Ր Ա Մ

Նախ՛ք՝ անմար կարօտով գգուանմենքի ու հրի՛
 Եւ էկել ես տեսնելու քաղաքները Նայիրի:

Անբապոյր ու կանաչ քո աչքերը մեռելի
 Յանգուքիւնով հրահրած՝ անյագ վառուել եմ էլի:

Քու անցնում ես ու տեսնում քաղաքները հիմա այն,
 Անց տեղ խոտ էր բուսնում, երբ դեռ ապրում էր Արան:

Այլ է աշխարհը հիմա, ա՛յլ է հիմա Նայիրին.
 Այ՛ մի արքայ էլ չկայ, որ չարուի քո հրին:

Մտի ք ախումբը հիմա, մտի՛ր քատրոնն ու կափէն՝
 Ընթա՛ր արքայ ու Արա կը հանդիպեն ժպտադէմ:

Այ՛ վէճ է էլ հարկաւոր, ո՛չ պատերազմ մահառիթ.
 Արքաների համար նոր — բաւական է մի ժպիտ. —

Մէջն ակնարկ մի քեթեւ — եւ կը տրուեն նրանք քեզ,
 Բա՛ ճմայիչ ու անթեւ տարփանմենքին հրակէզ:

Եւ գան մէկ-մէկ ու սիրով — ու կը տանջես նրանց դու
 Անյագ կրքի ու սիրոյ նիգակներով քո հատու:

Եւ այնպիսի՛ տարփանմենք նրանք կը տան հիմա քեզ,
 Այ՛ կ'ամոհուի քո հոգին կարօտանմից սիրակէզ:

...Բայց կը լինի մի գիշեր — ու հմայքով նայիրեան
 Եւ բարձրանայ մշուշից մանկածպիտ քո Արան:

Նախ՛ք՝ հոգիդ անսփոփ կարօտանմով կը վառուի —
 Եւ արքայով մի անօգ՝ նորից կ'ելնես դու կուռի:

Եւ քաղաքի շարուի նա ախտածէտ քո հրին —
 Եւ քե՛ք կ'ելնէ նրա հետ հազարամեայ Նայիրին:

Եւ քաղտերում Նայիրի կը պարտուի նորից նա,
 Եւ մահանջէ գորքը յետ, երկիրը քեզ կը մնայ:

Եւ էլ մեռնի. որպէս գոհ — բայց չե՛ս յաղթի դու նրան.
 — Քե՛ռն է խորհուրդը սիրոյ, շամբշտաշու՛րք Շամիրամ:

Քաղկեդոնի հարցումներ և շարժումներ

«ԸՆԴՀԱՆՍԱԿՈՒՄ ...»

Ն. Աղբալյանի պատմածն է «Սովետական գրականության ֆիլմ» ամսագրին (1977) մէջ լոյս տեսած Ստ. Չորեանի յուշէն ետք, աւելորդ չէ հր խորհրդ մասնանշէլ Հանրապետական Հայաստանի օրօք Չարենցի մասին հիւսուած կարգ մը անհէթեթութիւններ, որոնց գլխաւորներէն մէկը արձանագրուած է 1961ին լոյս տեսած «Սովետական գրականութեան պատմաւարին» հատորին մէջ, հանդուցեալ «քննադատ» Յակոբ Սարգսեանի հանդուցեալ էջերուն.

«1919 թ. պարտիայի յանձնարարութեամբ Չարենցը գալիս է Հայաստան, արտեղ արդէն տիրապետու էին դաշնակները:

«Հայաստանի այդ ժամը օրերին Չարենցը նախ կարտում էր՝ ընդլատակում, ապա երեւանում՝ բոլշեւիկները միջավայրում»:

Շատ յայտնի չէ, թէ Սարգսեան ո՞ր փաստին վրայ յենելով գուրս տուած է այդ տողերը, բայց ծանօթ էն հետու որ հիւսիսէն՝ թիֆլիս, թիֆլիսէն՝ կարս, եւ կարսէն՝ Երեւան գալու Չարենցի պատմութիւնները, որոնց շարժառիթները երբեք ալ պարտական յանձնարարութիւններու եւ ընդլատակեալ դործեր վարելու առաջելութեանց մասին չեն վկայեր: Մինչեւ անգամ այդ օրերը պատկերացնող «բանաստեղծ» Արտիկ յուշերը չեն անդրադարձնար նման բանի մը գոյութեան: Եւ յետոյ՝ չենք գիտեր ի՞նչ կը հաստատեն մարդիկ «ընդլատակում» նեատերու Չարենցը, որ վարժութիւն ունէր իր քայլերը տանելու բաց հրապարակներու վրայ եւ տանիքներէն պոռայու իր մտածումները, մանաւանդ այն օրերուն, երբ Հայաստանը ստալինեան Հայաստան չէր ի վերջոյ եւ իր մտածումները ծածկագիր գրելու տեսարկու խոհեմութիւնը ծանօթ չէր տակաւին Չարենցին...

Չարենցը 1919ի տառջին շարժումներուն երեւանէն կարս փոխադրելով՝ «ընդլատակեալ» տնօր գործունէութեան մասին հեքիաթ մը հիւսած է նաեւ իր գասընկերը, Աշոտ Փոստանջեան: «Ընդլատակեալ պարտիական աշխատանք» կոտորոց մարդոց կը հանդիպին հին եւ անոնց «օգնութեամբ մի բանի օր յետոյ երկուսով ընդունուեցին պարսկաստան կոմիտէում... Եղիշէն քաղաքին տեսուչն էր»: Ու քանի մը տող վար. «Բոլշեւիկները ընդլատակեալ աշխատանքներին անուղղակիօրէն մասնակցում էին նաեւ մենք»:

Ինչպէս կ'երեւի, Սարգսեան դարպասուցած է Չարենցի դասընկերոջ «անուղղակիօրէն» ու հեշտացած է մտրոզմովին «ընդլատակ» ներգրաւելով բանաստեղծը:

Երեւի մարդիկ նոյնիսկ վախճանական թուականներուն պէտք ունէին նման հեքիաթներու սնունդին: Չարենցի մասին խօսող մարդերուն մէջ կա՞յ արդէն մէկը, որ հեքիաթասացի տպաստութիւն չձգէ...

Սարգսեան պարտք համարած է նաեւ Չարենցի երեւանեան օրերը տեղափոխելու «բոլշեւիկեան միջավայրում»:

Մենք չենք կարծեր, որ Հանրապետութեան օրօք կրթական նախարարութեան մէջ պաշտօնի կոչուած Չարենցը կը գտնուէր «բոլշեւիկեան միջավայրում», կամ մէքենագրուհիներուն աշխատանքը խանդութելով՝ ընդլատակեալ դործիչ պրովակացիան դործեր կը կատարէր:

Չարենցը հռչակող Աղբալյանի համարումը ծանօթ է մտնուին, Ստ. Չորեանի յուշէն կը պարզօրի, որ Լեւոն Շանթի նպատաստար կարծիքը եւս դեր ունեցած է երիտասարդ բանաստեղծին համբաւին տարածման մէջ եւ քիչ մը զարմանալի պիտի ըլլար մտածել, որ Աղբալյանի եւ Լեւոն Շանթի հետ Չարենցի յանախած միջավայրը «բոլշեւիկեան» միջավայր էր: Մնաց որ, ինչպէս այս բացատրիկին զանազան էջերուն պիտի նկատէ ընթերցողը, անւանի այդ ղեմարէն դատ Չարենց կ'արդէր մտերմութեանը մէջ «մերձկրական» Գառնիկ Քալաշեանի, Արմենուհի Տիգրանեանի, Արշալիր Սոնդկարեանի, Միքայէլ Մանուկեանի, Լէյլի եւ այլոց եւ անձանօթ չէր անոնց կուսակցական պատկանելիութեան եւ կարդացած էր հարկաւ «Դաշնակցական» Հայաստանի տարեկարծին անոնց ստորագրած սղջոյնը.

«Խոնարիտելով մեր ժողովրդի դարաւար տառապանքները առաջ, խորին ակնածանքով ողջունում ենք նրա ինքնուրոյնութեան անդրանիկ սօնը: Թող այսուհետեւ դարաւար մղձաւանջից ազատած՝ մեր հայրենիքի սահմաններում ռուսի փոխարէն հնչեն խնդրեալ, խաղաղ վատակի եւ նշմարութեան երգերը»:

Մյս անձերուն հետ էր Չարենց, եւ ո՛չ թէ միւսներուն, միւսներուն հետ եղաւ աւերի ուշ, իսկ աւելի-աւելի ուշ, գտնութիւն է յիշել, բայց փաստ է՝ միւսներուն հետ նուաւեցաւ... ընդլատակում...

«ԵՒ ՈՂ ՄԻ ԽՕՍԲ»

Ընդհանուր հարցումներ և շեղումներ

Թափոր Սայախեանին ու Աշոտ Փալանջեանին հոգ, Հանրապետական Հայաստանի Կարգի կարևոր կետերին էջեր նուիրած է նաև Գեորգ Արով:

«Մեկնեցիմ կարսի շրջանը: Կարս էր գալու եւ Չարենցը»:

Չարենց շատով կը միանայ Արովին, որ հոն, եւ գործի սկսելէ առաջ՝ կը ներկայացնէ շեղումներ:

«Եւ աւարտել էի ներսիսեան դպրացը, ունէի մանկավարժական կրթութիւն եւ ուրախ էի Մոսկուայի աշխատել թէկուզ ամենայնուամեայ գիւղում որպէս մասնագիտացի:

«Չարենցիմ դուր եկաւ այդ միտքը»:

Եւ այսպէս, Արով եւ Չարենց ճամբան կը գտնեն ռուս զինուորական ուսուցչական ստապանի մէջ:

«Եւ նշանակուած է Բաշեադիկլար գիւղի դպրոցի վարիչ, իսկ Չարենցը՝ նոյն դպրոցի ուսուցիչ»:

Արով կը նկարագրէ Բաշեադիկլարի վարժարանական ստորեան եւ կը ճշդէ իրենց շեղումները: «1919 թուականի վերջին ամիսներն էին արդէն եւ 1920 թուականի սկիզբը»:

Այդ օրերուն՝ ծայրեր մը կ'ստնեն հետունքին, «Որ կարմիր Բանակը մտնեալով էր Մարենցի մասին: Չարենց կը սկսի լանտասեպտիկները գրել: «Հնչում են օրերը, կանաչ է ինչ»:

«Այս բանատեղծութիւնները, — կը շարունակէ Արով, — գրուած էին Բաշեադիկլարում եւ ի հարկէ, չէին տպագրուած եւ ոչ մի տեղ: Եւ ո՞ւր էր յայտնի. թէ քաղցից հիւժժուած ու շեղուած ապուրով էր «Մոսկո» եւ «Մարտիները խելագարուած»ի հեղինակը:

«Մարտիները խելագարուած»ը նույնպէս դեռ երատարակուած չէր»:

Չարենց թէ ուժ էր յայտնի, թէ ուր կ'ապրէր Չարենց այդ օրերուն:

«Նշանակեալները յար շունէի՞ն ուրեմն, թէ «քնիցատակուած» գործեր վարելու համար: Չարենցի կողմէ հետունքին Հայաստան թերուած Չարենցը ուր կը գտնուէր, կամ՝ ինչու՞նչ ժամանակ է, որ Աշոտ Փալանջեանի պարեմաւորած պարենաստորման Կոմիտէն մտնուած «Մարտի սկիզբներին» այնքան խնամքով «ընդլայտուած» ներգրուուած Չարենցը:

«Չարենցին ոչ ոքի յայտնի էր Չարենցի տեղը, կ'ըսէ Արով, բայց յայտնի կ'ըլլայ, երբ Չարենցը շատ րան յայտնի չէր, ու յայտնի չէին մասնաւոր Չարենցի գործերը, գործերը ուսուցչականները»:

«Նշանակեցի» կը պատմէ Երեւանի մէջ Չարենցի մասին տրուած դասախօսութեան մասին: Չարենցի լանդափառութիւնը, ու կ'աւելցնէ:

«Նշանակեցիմ հասկանալի էր բանատեղծի սգեւորութիւնը: Արդէն վեց գիրք էր տպագրուած: Գրքերը կարդացուել էին ոգեւորութեամբ. բայց մամուլում կամ երատարակուած չէին չէր եղի նրա մասին եւ ո՛չ մի խօսք»:

— Եւ գտնու էի Երեւան. — առաջ նա վնասակարէն. — դու է՛լ արի»...

«Չարենցը ինչ րան չ'ըսէր Չարենցի Երեւան մեկնելուն մասին, Սայախեան «քնիցակի» մտնելու մասին գործելու տաքելութիւն մը կու տայ իրեն, իսկ ըստ Ստեփան Չարենցի ըստ իր շարժումներով մը Երեւան փութացած էր ան»:

«Եւ չէին թիփլիս գալով այցելեց իր գիրքը գրախօսող Լեւոնեանին, այնպէս էլ չէր տեսնուած չէր եղի նրա մասին եւ ո՛չ մի խօսք»:

«Չարենցը եւ մտայնակն առաջ գտնուածը, գործախորհրդ, շատ ծանօթ չէր Արովին: Ինչու՞նչ քնիցատակները ու կատարներ ուրիշ ճշդումներ»:

«Նշանակեցի խելագարուած»ը 1919ին տպուած չէր՝ կ'ըսէ Արով, մինչդեռ 1919ին էր տպուած»:

«Եւ չէին գտնու կ'երկարէ Չարենցի կարևոր կենսագրականը, մինչդեռ 1920 Չարենց արդէն Երեւան կը գտնուէր (Բ. հատր, էջ 346):

«Չարենցը մասին Երեւանի մէջ տրուած դասախօսութեանն առաջ՝ «Մամուլում կամ տպագրուած չէր եղի նրա մասին եւ ո՛չ մի խօսք», կը չէր տեսնուած Արով, մինչդեռ անոր մասին չէին տեսնուած: Եւ առաջ երեք տարի առաջ գրախօսական ստորագրած էր Գ. Լեւոնեան»:

«Եւ Չարենցը իր ուսուցիչ: պատմականիցին մասին չէր րան գիտէր, գիտցածը՝ սխալ էր: Եւ Չարենցը առանց սխալները սրբագրելու»:



Եղիշ Զարեց

**

1922 թուականի սկիզբներին Մուկուաշում Հայաստանի կուլտուրայի տան տպարանում տպագրում էր Զարեցի երկերի ժողովածուն: Զարեցը տպարանից չէր հեռանում. սրբագրում էր, հետևում էր շարումաձևին, տպագրութեանը: Գիրքը ամփոփելու էր բանաստեղծի տասնամեայ գործունեության արդիւնքները: Մինչ այդ, նա փոքրիկ գրքոյկներով ինքն էր տպագրել իր ստեղծագործութիւնները եւ իր հաշուին: Այժմ լոյս էին տեսնելու Պետական հրատարակչութեանը: Այս հանգամանքը նա շեշտում էր առանձնապէս եւ հպարտ էր զգում իրեն:

Գրքերն արդէն տպագրուած էին եր-

կու ստուար հատորներով, սակայն հեղինակի սիրահարը, որ գետեղուելու էր գրքի առաջին հատորում, դեռ պատրաստ չէր: Մուկուաշում ապրող նկարիչ Յովակիմ Միխանջեանը, որին պատվիրել էր Զարեցն իր սիրահարը, երկար ճգնաժամից յետոյ վերջապէս նկարել էր:

Միխանջեանը պարսկական մանրանկարների ոճով հեփարային պատկերներ էր նկարում հարթ, վառ գոյներով, պայմանական գծանկարով, եւ իրականից նկարելու սովորութիւն չուներ:

Զարեցը եկաւ ինձ մօտ. վշտացած էր եւ մեկնեց տնորի մեծուքեամբ մի բուրբ, վրան մատիտով նկարած մի երիտասարդի նկարով, որ հեռուոր նկատութիւն անգամ չուներ Եղիշին:

— Տե՛ս, ինչ *գնուսի* բան է դուրս բերել շանորդին: Ո՞նց դնեմ գրքիս մէջ: Կարելի՞ է այսպիսի նկար դնել գրքի մէջ, ո՞վ կ'իմանայ, թէ ես եմ:

Խնդրեց, որ շտապ նկարեմ իրեն, հենց այդ րոպէին: Ես թողել էի նկարչութիւնը, սակայն դրութիւնն այնպէս էր, որ առայ թուրք ու մատիտ եւ սկրսեցի նկարել:

Զարեցը հանգիստ նստել էր դիմացքս, առանց որեւէ դիրք ընդունելու, ինչպէս որ կար, գլուխը կախ նայում էր աչքերին: Մի քիչ ժպտաց՝ սեղմելով շրթունքներն ու ապա լրջացաւ:

Ես կարն կտրեցի եւ նկարը տուեցի իրեն:

Նայեց, էլ չիմացայ հաւանե՞ց, թէ չէ. ձեռքիցս առաւ մատիտը, որով նրկարում էի. ստորագրեց նկարի տակ իր անունն ու ազգանունը ու վագեց տպարան:

Հատորները լոյս տեսան: Զարեցը գոհ էր, շոյում էր գրքերը, ասեա երեխայի չերմ այտեր լինէին, ու ինքն իրեն ասում էր.

— Քիչ բան չեմ գրել այս տասը տարուայ ընթացքում:

ՄԻՔԱՏԷԼ ՄԱԶՄԱՆԵԱՆ



**

Չարենցի հետ առանձնապես ինձ կապում էր նրա խանդավառ հայրենասիրութիւնը եւ արուեստի ծայր աստիճանն ուրիշ ընկալումը: Նա մասնազէտի պէս գիտէր կերպարուեստի պատմութիւնը եւ, որ ամենակարեւորն է, զգում էր կերպարուեստը՝ արուեստի զգացումը նրա վեցերորդ զգայարանն էր:

Եւ զուցէ այդ էր պատճառը, որ դեռ 1923 թուականին, մեր ծանօթութեան երկրորդ տարում, ես նկարեցի նրա իզականկար պորտրէին: Փոքր ծառայող կապույտ քաշկինակից եւ կախեցի իմ ամենասիրած եգիպտական դիմապատկերից մէկը: Դժուար է ասել, թէ ի՞նչ էր իմ նպատակը, երբ ես նկարում էի Չարենցին եւ հազարամեակների խորքից եկող դիմակը՝ կողմնակից:

Յանախ է պատահում, որ արուեստագէտը, ենթարկուելով ինչ-որ մի ներքին թելադրանքի, մինչեւ վերջ չգիտակցուած բովանդակութիւն է մտքում ստեղծագործութեան մէջ. այդ բովանդակութիւնը բացայայտում են յայտնեքը. ժամանակը: Կարեւորն այն է, որ այդ եգիպտական դիմակը չափազանց սիրեց եւ Չարենցը, ըստ երեւոյթին հազարամեակների խորքում ստեղծուած արեւելեան արուեստի այդ գլուխ-գործոցները մեր երկուսին գեղարուեստական նաշակների կիզակետներից էին: Դիմակի յաւերժից եկող, բայց ոչ չափերը կոնորաստի մէջ մտնելով Չարենցի կենդանի եւ խորիմաստ ուժերի հետ, ընդգծում էին բանաստեղծի աչքերի անհուն խորութիւնը: Այդ պարզեցման մէկ տարի յետոյ կայացած Վենետիկի Համաշխարհային ցուցանակումն առաջադրուեց. եւ այնուհետեւ Չարենցը նույն այդ պորտրէին օգտագործում է 1932 թ. հրատարակուած «Երկեր»ի համար որպէս մակատանկար:

ՄԱՐՏԻՐՈՍ ՍԱՐԵԱՆ



Վերջին քսանամեակին Հայաստանի մէջ մշակու-
ւեցաւ Չարենցի գործերուն նուիրուած ընդար-
ձակ դրականութիւն մը, որմէ կ'անջատենք սօ-
արած արձակադիր եւ մեր արժէքներուն հան-
դէպ իր ցուցարեբած բժանդորութեամբ ծանօթ
Բաղիշ Յովսէփեանի նշմարը:

«Սերմնացանները չվերադարձան» գործին հե-
ղինակին անկեղծութիւնն ու համարձակութիւնը
հո'ս եւս ուշադրու է, հետեւաբար եւ խօսքը՝
համայիշ:

Մտեցումի մանրակրկիտ այս ձեւը, ինչպէս
նաեւ սուսգրուած գեղեցիկին հետ անսկիզբ ու
անվերջ կուսակումներուն անկեղծանութիւնը
մասնանշելու ողին յաճախադէպ չէ թէեւ հոն,
բայց փաստ է նաեւ անոր գոյութիւնը, եւ վա-
րակիշ՝ բնօրթը...

ԳՐԱԿԱՆ ԼԵԶՈՒԻ ՈՒՂԻՆ ԳՌԵՅԿՈՒԹԻՒՆԸ ՉԷ

...Լեզուի կենդանութիւնն ու ճկունութիւնը ոչ թէ կախուած է այն
բանից թէ հեղինակը ինչ առատութեամբ է օգտագործում բարբառն ու ժողո-
վրդական դարձուածքները, այլ այն բանից, թէ ինչպէ՞ս է օգտագործում
իւրաքանչիւր բառը, ինչպէ՞ս է երանդուորում ու շունչ տալիս նրան: Գլխա-
ւորը ժողովրդական կամ գրական բառերի ընտրութիւնը չէ, գլխաւորը այդ
բառերի ընտիր գարծածութիւնն է: Մէկը կարող է ընտրել ժողովրդական, խօ-
սակցական, կենդանի բառեր ու արտայայտութիւններ եւ ստեղծել անկենդան
խօսք, մէկ ուրիշը կարող է վերցնել մաքուր դրական եւ նոյնիսկ խօսակցա-
կան լեզում չօգտագործուող բառեր եւ ստեղծել կենդանի, թրթռուն խօսք:
Վերցնենք մեր մեծ բանաստեղծ Եղիշէ Չարենցին, բացկնք նրա «Ընտիր եր-
կեր»ի 1954 թ. հրատարակութեան 48րդ էջն ու կարգանք.

Ես իմ անուշ Հայաստանի արեւահամ բառն եմ սիրում,
Մեր հին սագի ողբաուագ, լացակումած լարն եմ սիրում,
Արնաման ծաղիկների ու վարդերի բո'յրը վարման
Ու հայիրեան աղջիկների հեզակուն պա'րն եմ սիրում:

Սիրում եմ մեր երկինքը մուգ, ջրերը ջիմջ, լիճը լուսէ,
Արեւն ամրան ու ձմեռուայ վիշապաձայն բուճը վսեմ,
Մթում կարած խրնիթների անհիրընկալ պատերը սեւ
Ու հնամեայ ֆաղափների հազարամեայ ֆա'րն եմ սիրում:

Երբ էլ լինեմ, չեմ մոռանայ ես ողբաձայն երգերը մեր,
 Զեմ մոռանայ ազօրք դարձած երկաքաղիք գրեքերը մեր,
 Ենչեմ էլ սուր սիրտս խոցեմ արիւնաբամ վերքերը մեր
 Ենչեմ ես որք ու արնավառ իմ Հայաստան եա՛րն եմ սիրում:

Եմ կարօտած սրտի համար ոչ մի ուրիշ հեֆիաթ չկայ,
 Կարեկացու. Քուչակի պէս լուսապսակ հակատ չկայ,
 Այլու լինն անցիր Արարատի նման հերմակ գագաթ չկայ,
 Ենչպէս անհաս փառքի ճամբայ՝ ես իմ Մատիս սա՛րն եմ սիրում:

*Ինչպէս տեսնում ենք, Չարենցը այս բանաստեղծութեան մէջ, բացի
 իր բառից չի օգտագործել որեւէ այլ բարբառային բառ: Մինչդեռ բա-
 նաստեղծութիւնը լի է մաքուր գրական ու դրարարեան բազմաթիւ բառերով
 ու բառակապակցութիւններով. արեւահամ, ողբանուագ, լացակումամ, ար-
 քաւան, քոյրը վառման, հեգանկուն, երկինքը մուգ, ջրերը ջինջ, լինը լու-
 ւի. ինչպե՞տայն. վսեմ, անհիւրընկալ, հնամեայ, հագարամեայ, ողբա-
 յայ, ազօրք դարձած, երկաքաղիք, արիւնաբամ, արնավառ, լուսապսակ,
 փառքի ճամբայ, եւ այլն:*

Այսպիսի «զրբային» բառամթերքով Չարենցը ստեղծել է անսահման
 լուրջ. վճիռ ու կենդանի մի բանաստեղծութիւն, որից առաւել ժողովրդա-
 կան բանաստեղծութիւն մեր բազմադարեան զրականութեան մէջ դժուար է
 քոյր ուլ: Սա մի բանաստեղծութիւն է, որն հուսաարարէս յուզող ու հաս-
 կան է է ամէն մի հայի համար, ինչ կրթութեան, ինչ դիտելիքներէ եւ դրադ-
 ժանջի ոչը էլ որ լինի, ինչ բարբառով էլ որ խօսի նա: Ամէն բան իր տեղն
 է իր տեղից. խոր ու յստակ: Փորձիր որեւէ բառ, որեւէ բան փոխել եւ
 քո կը կանգնես աւերակի եւ փլուածքի տուջե: Վերցնենք, օրինակ, սիրում
 ու մէք երկինքը մուգ, ջրերը ջինջ, լինը լուստ տողը եւ վերջադաս որոշիչնե-
 ու քոյր ենք նախադաս, եւ այդ աւերածութիւնը պատրաստ է: Խնդրեմ՝

Սիրում եմ մեր մուգ երկինքը, ջինջ ջրերը, լուստ լինը... կենդանի,
 Բարբառ. շնչող խօսքի փոխարէն շնչին փոփոխութիւնից ստացուեց իրօք
 քոյրն խօսք:

Վերցնենք յաջորդ տողը եւ կատարենք միայն մի որոշիչի տեղափոխու-
 թիւն. եւ դարձեալ կը ստանանք նոյն փլուածքը:

Աւելն ամբան ու ձմեռուայ վիշապտձայն վսեմ բուքը: Եթէ Չարենցեան
 վիշապտձայն բուքը վսեմ արտայայտութիւնը իրօք վսեմ է, ապա այստեղ մի
 բառէ տեղափոխութեամբ ստացուեց հպիտեմների տհաճ կուտակում, եւ տո-
 ք աւերուեց. լեզուն դադարեց շնչելուց, բանաստեղծութիւնը մեռաւ:

Հիմա բացենք Չարենցի երկերի նոյն հրատարակութեան յաջորդ 49րդ
 էջը եւ կարդանք.

Ամերիկան որ կայ —
 Ոնց որ լսել էք,
 Ոնց որ գիտէք —
 Գտնում է աշխարհի տակին:
 Ամէն ինչ մեծ է հնտեղ,
 Ամէն ինչ, ահագին,
 Եւ են էլ — էնքան ահագին,
 Ոչ ասեմ — վախեմաք ցնդէք,

Մէկ էլ —

(Խնդրում եմ չվախէք)

Ամէն ինչ — երեւակայո՛ւմ էք — քարս է հնտեղ :

Եթէ առաջին բանաստեղծութիւնը լիքն էր այսպէս կոչուած «պրքային» բառերով, ապա այստեղ ճիշդ հակառակն է: Ամբողջ հատուածը կառուցուած է բացառապէս բարբառային ու խօսակցական բառերով ու բառակապակցութիւններով: Եւ եթէ առաջին բանաստեղծութեան մէջ կար ընդամէնը մի ժողովրդական «եար» բառը, ապա այստեղ մենք շենք գտնի զրաբարեան ոչ մի բառ կամ բառակապակցութիւն: Չտարին ժողովրդական ու բարբառային արտայայտութիւններ են ու ձևեր. Ամերիկացի ար կայ, ոնց որ լսել էք, ոնց որ գիտէք, տակիմ. Էնտեղ. Եւ էն էլ. Էնքան ահագին, որ ասեմ, վախենաք ցնդէք, մէկ էլ չվախէք. քարս է հնտեղ:

Ժողովրդական արտայայտութիւնների ու բառերի առաւել ստատ գործածութիւնը դժուար է պատկերացնել: Բայց խօսքն իր կենդանութեամբ, իր յուզականութեամբ ու թրթիռով անսահմանօրէն զիջում է առաջին բանաստեղծութեան կենսալից շնչին: Եթէ առաջին ղէպըում մենք դործ ունենք խօսկական ժողովրդական լիաշունչ խօսքի հետ, ապա այստեղ առկայ է սորքովի ժողովրդականը՝ տարտամ ու անկենդան: Այստեղ ուղածղ ձեւով դասաւորիք տողերն ու բառերը եւ կը տեսնես, որ ոչինչ չի ւաւրուի եւ ոչինչ չի շինուի: Խնդրեմ՝

Ոնց որ լսել էք

Ոնց որ գիտէք —

Ամերիկացի ար կայ,

Գտնում է աշխարհի տակիմ:

Կամ՝

Ոնց որ գիտէք,

Ոնց որ լսել էք —

Ամերիկացի ար կայ —

Գտնում է աշխարհի տակիմ:

Եթէ առաջին բանաստեղծութեան մէջ գէթ մի որոշիչի տեղափոխութիւնը աւերում էր ամբողջ տողը, ապա այստեղ տողերի տեղափոխութիւնից նոյնիսկ ոչինչ չի տուժում:

Կրկին անգամ ասենք, որ ժողովրդական խօսքը, խօսքի կենդանութիւնը ոչ թէ «էս» ու «էն»ի, «ոնց» ու «ինչի»ի մէջ է, այլ բառերի (նոյնիսկ «մեռած» բառերի) վարպետ գործածութեան, նրանց շնչաւորելու մէջ:

Սխալում են բոլոր այն թարգմանիչներն ու զրոգները, նաեւ նրանց ակտիւ պաշտպանները, կարծելով, թէ «այս»ի փոխարէն «էս», «ինչպէս»ի փոխարէն «ոնց» գործածելով «պլաստիկ» «ինտոնացիա» են հաղորդում խօսքին: Գեղարուեստական խօսքը, ինչպէս տեսանք, կարող է անսահման ժողովրդական ու կենդանի լինել առանց որեւէ բարբառային բառի գործածութեան: Եւ ընդհակառակը, շատ հնարաւոր է, որ «կենդանի» յոյժ խօսակցական լեզուի բառերով ստանալ բաւականին անկենդան ու անշունչ խօսք:

ԲԱՂԻՇ ՅՈՎՍԷՓԵԱՆ

Քաղին Բարոյուններն նշխուններն

ԵՍ ԻՍ ԱՆՈՒԾ...

Բազիշ Յովսէփեանի գրութեան մէջ ամբողջութեամբ արտադրուած «ես իմ անուշ Հայաստանի» բանաստեղծութեան ընթերցողը «Բազին»ի ներկայ համարի միւս էջերուն պիտի չհանդիպի, եւ ճիշդ այդ պատճառով կ'ուզէինք անոր սպրած ուղեակիսնին զոնէ մէկ-երկու դրուագը թարմացնել յիշողութեանց մէջ:

Երկար ասեն Հայաստանի գրողներու վարչութիւնը վարած եւ սորված նախագուստութիւններով մինչեւ ի մահ քննադատի ցնցոտի մը կրած մարդ մը, հզուարդ թօփշեան, եղերարտիւս բանաստեղծին ՅՕամեակին նուիրուած պաշտօնական հանդիսութեան կը յայտարարէր:

«Իարեր շարունակ իր պատուութեան համար կռուող ժողովրդի կեանքի վրայ կապարէ ծանրութեամբ իջել էր իմպերիալիստական բռնութիւնը գաղնակցութեան դաժան կերպարանով: Բանաստեղծն իր ժողովրդին ասում էր. օրերը եկել են, օրերը կասել են, քարձրացի՛ր ժողովուրդ, եկել է քո լուսէ գալիքը:

«Հայ ժողովրդի պատմութեան այդ մտայլ օրերին Չարեկը գրում է իր լուսագոյն բանաստեղծութիւններից մէկը՝ «ես իմ անուշ Հայաստանի արեւահամ բուն եմ սիրում», եւ ինչպէս Արտվեանն իր համնարեղ «էկէրք Հայաստանի» վեպով. Չարեկն այդ բանաստեղծութեամբ բորբոքում էր հայրենասիրութեան անմար կրակը:

Ճիշդ է, որ Դանակցութեան օրօք գրուեցաւ «ես իմ անուշ Հայաստանի», բայց չենք կարծեր, որ գտնուի աշխարհի վրայ մէկը, որ անոր ծննդացին վերադրուած շարժառիթը լուրջ մարզու գործ համարէ: Ժողովուրդին վրայ կապարէ ծանրութեամբ իջած բռնաճնտարիներու ասկ պատմութիւնը չէ արձանագրած տակաւին խնդասիրտ արամազրութիւններով յազեցած անուս երգերու սրելէ՛ յայնուրեւ: Անգամ համայնավար տիպիկտիկան (մո'նաւանդ համայնավար տիպիկտիկան) պիտի մերժէր թշնամիներու ստեղծած «մտայլ օրերին» հրապարակի զալ իրախճանքի արամազրութեամբ, ինչպէս է պարագան «ես իմ անուշ Հայաստանի» բանաստեղծութեան առինքնող մթնոլորտին:

Ի հարկէ, ոչ ոքի ուշադրութեան կը վրիպի այդ անհեթեթութեան շարժառիթը:

«ես իմ անուշ Հայաստանի»ն անհեթեթի զօրծ է, Չարեկի ամէնէն լայնատարած բխումը, եւ որպէսզի այդ փառքին ետին արդիւրեւ Դանակցութեան օրօք երախապիտոտիան բազում պատճառներ ունեցած Չարեկի դեղումնեւէն մէկը տեսնելու ամէն համանակներէն՝ մարդը շտապած է քաղաքական դոյն մը սալ անոր, նպատակ մը՝ լի «անխոհու-թեամբ ոտին»:

«Հայրենասիրութեան անմար կրակը»ը կը թուի, թէ դնահատուած ուժ մըն է թրփշեանի գրչին տակ, եւ հետեւարար հետաբերական է դիտնալ, թէ իր պաշտօնական ճառէն սուշ լի'նքը՝ պաշտօնական պաշտօնեան քանի՞ անգամ փորձած է տաքնալ այդ «անմար կրակով» եւ քանի՞ անգամ տաքնալու հրաւիրած է իր վարած գրողներու միութեան անդամները կամ անոնց սնկնդիրները:

Կամ՝ փորձած է երբեւիցէ տաքնալ «հայրենասիրութեան անմար կրակով»:

Եթէ փորձած է՝ կրցած է հասնել կրակին կամ կրակը մօտեցնել իրեն:

Հարցումներուն պատասխանը սպասիչ ձեւով մը արձանագրուած է Ս. Աղաբաբեանի «եզիշէ Չարեկ» անուն տշխատասիրութեան մէջ (էջ 293):

«Անհատաւայի է, բայց փաստ է, որ «ես իմ անուշ Հայաստանի»ն առաջին տպագրութիւնից՝ 1922ից յետոյ, եթէ յիշուենք ճոյն թուականին Յ. Սուրիսաքեանի կազմած «Գրական զահարներ»ի արտատպութիւնը, Չարեկի կենդանութեան օրօք այլեւ չի ունեցել սրելէ երատարտիւրիւն: Նրա շուրջը եիւտուել են բազում «գրականագիտական» (քաղաքական) լեզբեղներ, որոնք բանը հասցրել են նոյնիսկ... բանաստեղծի ինքնախարազանմանը:

Մէկը ձգենք, միւսը ըսենք, հարցնելով՝ — հապա՞ Չարեկի մահէն ետք, Չարեկի մահէն ետք եւ անոր յիշատակը մահացնելու մոլեկնող տասնըեօթը տարիներօ'ն:

Ինչ կը վերաբերի նոյն բանաստեղծութեան առիթով «բանաստեղծի ինքնախարազանմանը», առիկա երկար պատմութիւն է, որուն մէկ փուլին մատնանշումը պիտի բաւէր՝ ամբողջին ողբերգութիւնը զգալու համար:

1932ին, Չարեկը հրատարակեց իր գործերէն մէկտեղուած «երկեր» անուն ստուար

Հատոր մը, որմէ ի միջի ալրոյ դուրս ձեռք նսեւ «Ես իմ անուշ Հայաստանի» բանաստեղծութիւնը:

— Այդ կապակցութեամբ, — կը գրէ Վաղարշակ Նորենց, — մեր վրդավմունքին նա հանգիստ պատասխանեց.

— Այ տղերք, չուզեցի առիթ տալ, որ նարից խօսեմ իմ «նացիսնալիզմի» մասին, գահրես գնացել է»:

«Ես իմ անուշ Հայաստանի» բանաստեղծութեան հանդէպ մեր հայրենիքին մէջ որդեգրուած պաշտօնական այդ դժմանութիւնը տեւեց ամբողջ քառասունամեակ մը, իսկ այսօր անոր մասին նոր «լեզունդներ» հիւսելով մարդիկ կը կարծեն, թէ կը շքանայ իրենց երկարամեայ մեղքը եւ տեսնելի կը դառնայ ուրիշներուն վերադրուածը:

Ինչե՛ր պիտի տային համայնավարները, եթէ միայն կարենային համոզուիլ եւ համոզել ուրիշները, որ «գաշնակցութեան դժման կերպարանքով» մեր ժողովուրդին վրայ ինչ-չա՞ծ բռնութեան «այդ մոայլ օրերին» գէ՛մ գրուած բանաստեղծութիւնն է «Ես իմ անուշ Հայաստանի»ն, եւ ինչե՛ր պիտի չտար հայ դրակահաւթիւնը, եթէ թոփշեանական տիպիկափակայով նուազ ծանրաբեռնուած ըլլար ի՛նք՛: Հայ գրականութիւնը...

Այս բոլորը պատմութիւն են անշուշտ, իսկ Տճարտութիւնը ա՛յն է, որ ուրիշները բորբոքելու կանխորոշուած ձգտումի մը արդիւնք չէ «Ես իմ անուշ Հայաստանի»ն, այլ ինքն իր մէջ բորբոքած բնտիւր խառնուածքի մը պտտիւնը:

Վերը տեսնք «Ես իմ անուշ Հայաստանի»էն Չարենցի պաշտօնական հրատարակմը եւ յիշեցինք նսեւ այդ բանաստեղծութեան հանդէպ մեր հայրենիքին որդեգրած պաշտօնական դժմանութեան տեսչութիւնը, բայց առիկա պատճառ մը չէր, չհզաւ, որ ոչ-պաշտօնական խաւը, ժողովուրդը, նոյն վերաբերումը ցուցաբերէր «Ես իմ անուշ Հայաստանի»ի մասին, ու անոր բռնաբար ազդակամ առէն արցունք շրթեր ոչ-պաշտօնական պահերու ապրող ս՛նկամ պաշտօնական մարդոց աչքերէն:

Այդ առնչութեամբ սրտասուշ մտնրամտանութիւն մը երևցաւ «Հայրենիք» ամսագրին (Հոկտեմբեր 1955) մէջ, Սուրէն Մահարուի գրչով:

«1935 Սեպտեմբերին, ես ու րնկերս ուսումնասիրում էինք Դաղկաձորի մեր հինուարից վանքը: Երբ մենք այնտեղ լուս աշխատում էինք, յանկարծ վանքի դռնից ներս մտան Ազատի Խանգամը, Եղիշէ Զարեանը, Ակսել Բակունցը եւ Ալյաս Գաստալեանը եւ հիացումով շքապատեցին մեզ:

«Ընկերս, որ շատ լաւ էր արտասանում Զարեանի «Հայաստան»ը, յանկարծ ոտքի ելաւ եւ մեծ ոգեւորութեամբ մինչեւ վերջ արտասանեց «Ես իմ անուշ Հայաստանի»ն:

«Պատկերացնում էք հին վանքի կամարների տակ անմահ Զարեանի ներկայութեամբ արտասանուած «Ես իմ անուշ Հայաստանի»ն...: Կարծեք թէ հին վանքի կամարների տակ սուրբ պատարագի իւրաքանչիւր արարողութիւն էր տեղի ունենում:

«Երբ արտասանութիւնը վերջացաւ, Ալյասի ոչեքից արտասանեցրը գլուխում էին: Ակսելը, շկարդանալով իրեն գայելի, հեկեկում էր: Խանգեանը իր գրպանում քաշկիմակ էր սրնում, իսկ Զարեանը իր «Հայաստանի» շոգիքի մէջ քաշածու ժպտում էր»:

Նկարագրուած այդ շքապատյոյնի երեք տարի առաջ, իր բովանդակած «նացիսնալիստական» վտանգին համար Չարենց իր «Երկեր»էն դուրս ձգած էր «Ես իմ անուշ Հայաստանի»ն, երեք տարի առաջ՝ Խանգեան յարժակած էր Զարեանի եւ Բակունցի նացիսնալիզմին դէմ, բայց հակառակ այդ դառն իրողութեան՝ պտոյտի ելում էին ահաւանիկ եւ նացիսնալիստական ապրումներով կը բարախէին ու կ'արտասուէին իրենց իսկ ստեղծած նացիսնալիստական միջոցառումն մէջ:

Կը նշանակէ, թէ տարբեր բան կ'ըսէին ու կ'ապրէին հողեկան բոլորովին տարբեր կոտորածներով, մինչեւ որ իրենք այլեւս չկրցան կրել ստիպողական սուտին ծանր բեռը, կամ քնարակուած բռնաբռնեալն ուրիշներ կրահեցին իրենց բուն անձը ու խօսքը սուրին մուրճ ու մանգաղին...:

Մ Ա Ն ՈՒ Ա Ն Տ Ե Ս Ի Լ

Որպէս լուսած քաղցութակի ձգուած մի լար՝
 'Իռզում է սիրտս կարօտով մի սհարկու.
 Կարօտներիս գագաթն է այն՝ վերջի՛ն քնար. —
 Մի պիբկ պարան ու երկնուդէջ փայտեր երկու:
 Որպէս բախտիս մուք քամահրակէք, կամ որպէս
 Մի հին խոստում, որ անկատար, դրժած թողի —
 Կախադանի փայտերն սհա քաղաքի մէջ
 Կանգնել են, սէգ, ու սպասում են կախուողի:
 Կանգնել են, լուռ, իրար կհամ. փայտեր երկու,
 Ու մէջտեղում դողում է. մեղկ ու երեքուն,
 Մի գորշ պարան, ինչպէս տխուր այս օրերում
 Անբոց մորմոքը նայիրեան իմ ո՛րք հոգու:
 Իջել է շուրջը մի անհուր իրիկնածամ
 Ու լուսքիս մի անստուեր, անդուռ, անդող,
 Ինչպէս մորմոքը օրերի, ինչպէս դածան
 Մահուան քախիծը՝ իմ ակուր սիրտը բանտող:
 Ու խանութները, գորշ կհամ, ու այն մարդիկ,
 Որ հաւաքուել են փայտերի շուրջը հիմա,
 Մահուան բեկուն այդ քնարին այդքան մօտիկ —
 Ի՛նչ են ուզում՝ այդքան տխուր ու ակամայ:
 Եւ արդեօք ո՞վ է երագել այդքան դածան —
 Ու լուսաւոր առաստուները իմ հոգու
 Ո՞վ դարձրեց — մի անկրակ իրիկնածամ,
 Ու գորշ պարան, ու երկնուդէջ փայտե՛ր երկու:
 Գուցէ այդ ե՛ս եմ, որ սրտով իմ լուսնահար
 Ո՛չ մի կրակ հեռուներից ձեզ չբերի,
 Ու ցամկացայ, որ չօրհնեքդէ ո՛չ մի քնար
 Լուսապսակ, պայծառ գալիքը նայիրի...

Երբամ հիմա: Ու կարօտով անմխիբար,
 Իմ երգիչի երագներով ու հրերով,
 Անհրապոյր իմ օրերի երգով մթար
 Ու նայիրեան իմ երագի վերջին սիրով, —
 Երբամ մարդ ու մարմնող իրիկուայ մէջ,
 Որպէս ուրու հալածական, որպէս տեսիլ —
 Տա՛մ սլարանոցս կարօտին այն երկնուդէջ
 Ու օրօրուեմ՝ եղերական ու անբասիր...
 Թող ո՛չ մի գոհ չպահանջուի ինձնից բացի,
 Ուրիշ ոտներ կախադանին թող մօտ չգան.
 Եւ թող տեսնեն ի՛մ աչքերի մէջ կախուածի,
 Իմ քո՛րք երկիր, լուսապսակ քո ասպզան:
 Թող դուրս ընկած իմ աչքերի մէջ կախուածի
 Նա՛հ տեսնեն պայծառ օրերդ ասպզայ, —
 Թող ո՛չ մի գոհ չպահանջուի ինձնից բացի,
 Ոչ մի ստուեր կախադանին թող մօտ չգայ...



Մոսկուայէն Գրիշա (Գեղամ) Ազաճեանի հասցեագրած Զարեանցի նամակներէն մէկուն առաջին մասն է հետագայ գրութիւնը, որ հակառակ բանաստեղծին զրսեւորած այն օրերու ցուցական ծայրայեղութիւններուն եւ այսօր զինք իրբեւ ուղղութիւն եւ այլամերժ համայնավար մը ներկայացնելու ալլոց դժբաղդած բռնի ճիգերուն, ճշմարտապէս կը ցոյցանէ իր բուն ոգին, հայ մարդուն մէջ առաջին հերթին հայր տեսնելու խորունկ ապրումը:

Այնուամենայնիւ, կը կարծենք, որ տեղ մը կը սխալի Զարեանց, հոն՝ ուր հակառակորդ ճակատի բանաստեղծ մը գնահատելու հարցին մէջ համայնավարներուն հաւասարող պիկամութիւն մը կը վերագրէ նոեւ Գաշնակցութեան:

Վահան Տէրեանի մտնունտն առթիւ դաշնակցականներու լռութեան պատճառը պէտք է փընտ-

Գրածդ վերջին նամակի համար շատ շնորհակալութիւն: Խորապէս գգացուած եմ եւ գոհ: Գ. Քալաշեանը, այսպէս թէ այնպէս, ախտոս: Մարդ էր, էլի՛. ապրում էր աշխարհի տակ եւ արեւ տեսնում: Եւ յետոյ՝ դրոց էր: Լաւ թէ վատ — մի կողմ թողնենք, բայց որ նա ամբողջ հողով դրում էր գրականութիւնը, ապրում էր գրականութեամբ, շնչում էր գրականութեան համար — կասկածից դուրս է:

Յիշում եմ ինչպիսի՛ մեծ խնամքով ու զուրկութեամբով խմբադրում էր իր երկերը եւ թերթ-թերթ դարսում իրար վրայ, որ մի օր հրատարակի... Բայց... նա մեռաւ, եւ թղթերը մնացին որը՝ աւելի որը, քան դաւակները, որովհետեւ դաւակները վաղը միւս օր կը մեծանան, եւ սեփական ինիցիատիւով կ'ապրին, իսկ թղթերը դեռ երկա՛ր պիտի սարսեն ուրիշ ինիցիատիւին...

Գիտես, Գրիշա, ինչ-որ եղբրական բան կայ այն բախտի մէջ, որ վիճակուել է մեր սերնդին, մա՛նաւանդ մեր արդի գրական սերնդին: Այնպիսի մեծ գրական մարդը, ինչպիսին էր Տէրեանը, որը, այսպէս թէ այնպէս, միակ սիւնն էր մեր յետ-թումանեան ստեղծագործութեան —

մեռու, եւ կարծես ոչ ոք չնկատեց այդ մահը, ոք ոք չզղաց նրա եղբրականութիւնը եւ այն բացը, որ մնաց մեր գրականութեան մէջ Վ. Տէրեանից յետոյ: Այդպէս եղաւ Վ. Տէրեանի մահուն ժամանակ, պարզ է, որ Գ. Քալաշեանի մահը աւելի պիտի տնկատեի անցնէր, քան Տէրեանինը: Այնպիսի կորուստներ, ինչ-պիսիքն են Վ. Տէրեանը եւ Գ. Քալաշեանը, կարող են միմիայն անձնական բարեկամներն զղալ եւ մէկ էլ մի-երկու ինտելիգենտներ, որոնք հողեկան նոյն խառնուածքն ունեն եւ նոյն բախտը, — ուրիշ ոչինչ: Այնպիսի արհաւիրակ օրերին, ինչպիսին ապրում ենք մենք հիմա — երկու պոետների մահը աւելի չէր կարող նկատելի լինէր, քան այն, ինչ որ եղաւ. այսինքն՝ Վ. Տէրեանը մեռաւ այն ժամանակ, երբ Հայրենիքում դաշնակցականներն էին, որոնք եւ ուշադրութեան չառան պոետի մահը, որովհետեւ նա բոլորէիկ էր, — իսկ Գ. Քալաշեանի ժամանակ Հայրենիքում բոլորէիկներն էին, որոնք նոյնպէս աւելորդ համարեցին նկատել պոետը՝ որովհետեւ նա դաշնակցական էր: Եթէ մենք, պոետներս, մի քիչ նամուս ունենայինք — վաղուց պիտի հրաժարուէինք պոետ լինե-

... աշտարին ազգակներու ճնշումին մէջ, քաշազան անցուղարձերու հանդուցակէտերուն եւ...
 ... Էլ կուտակցական մտայնութեան մէջ, որով-
 ... ւաւեւ այն դաշնակցականները, որոնք նոյնիսկ ի-
 ... ւանք շահիչներուն մէջ չվարտանգան մեծարար-
 ... ւաւ հռչակել Հոկտեմբերեան յեղափոխութիւնը
 ... ւաւ հաշի բառերով կրգած համայնափար բանաս-
 ... ւաւք սը (Չարենց), տրամարանական չէ, որ
 ... ւաւ աշին իրենց յորդանորք մեռածին հանդէպ,
 ... ւաւ շաղարական մթնոլորտը ձեւնտու բլլար...

Բայց բոլոր պարագաներուն զեղեցիկ է այս
 ... ւաւ հր եւ աւելի զեղեցիկը ս'յն է, որ ամբողջ
 ... ւաւ շար տեւած աւելիչ նեղմասութիւններէն կարճ
 ... ւաւ սղի սղիով յագեցած նման թուղթեր կարգա-
 ... ւաւ հարատուութիւններ կ'ընծայուի հայրենի
 ... ւաւ շար ընթերցողին...



... Երբ այն, որի համար ամէն ինչ
 ... ւաւ հարող եւ զոհել, որը նպատակն է կեանք-
 ... ւաւ ք' ամենայն հեշտութեամբ ծածկուած
 ... ւաւ կորստեան է մատնուած, որովհետեւ
 ... ւաւ բացի պոետ լինելուց եղել եւ եւ...

... Բազմապիսի: Աստուծոյ սիրոյն, սպանէք
 ... ւաւ քաջացուն, բայց մի մոռանաք պոե-
 ... ւաւ ք: Քաղաքացին այսօր է, պոետը —
 ... ւաւ ք: Քաղաքացուն կարող էք սպանել,
 ... ւաւ ք: Գոտեին — ո՛չ երբեք: Քաղաքացուն
 ... ւաւ ք: Եւ ք է սպանել, եթէ նա վնասակար է
 ... ւաւ ք: Եւ ք հեղական պոետ է եւ ոչ «յանդաշար
 ... ւաւ ք: Բազմապիսի», որքան էլ վնասակար թուայ
 ... ւաւ ք: Եւ ք տեսակէտից՝ օգտակար է «յա-
 ... ւաւ ք: Եւ ք հեղական նշանարանով»... Այսպէս
 ... ւաւ ք: Բայց օրերը աւելի են «այսպէս» —
 ... ւաւ ք: Եւ ք զգատարկ բան է ամէն ինչ եւ մե-
 ... ւաւ ք: Եւ ք հեղիկ գառանցանք»...

... Եւ ք մեզ, որ պիտի գաք՝
 ... ւաւ ք: Եւ ք մեզ պայծառ մեզնից ժպտո՛ւն...
 ... ւաւ ք: Եւ ք մեզ տան մէջ օտար եղանակ,
 ... ւաւ ք: Եւ ք մեզ քնքարա՛ր կը գաք մեր տան...

... Այսպէս էր ասում Գ. Քալաշեանը՝
 ... ւաւ ք: Եւ ք պիտի գան: Իսկ եթէ ընդհան-
 ... ւաւ ք: Եւ ք չլսեմ... Եւ «տուն» էլ չլինի...
 ... ւաւ ք: Եւ ք կայ որ մի անգամ էլ եթէ թուր-

... քեր Արիաշայր անցնեն — ո՛չ տուն կը
 ... ւաւ ք: Եւ ոչ էլ «ապագայ», որ «դայ»...
 ... Երանի նրան, ով հայրենական տուն ունի
 ... Կիմա

Այսպէս էր ասել Վ. Տէրեանը — Օ-
 ... րենբուրգում, —

Ով խաղաղ սրտով մտնում է շիրիմ
 ... Հագա՛յր, բի՛ւր անգամ երանի նրան...

Վ. Տէրեան եւ Գ. Քալաշեան: Երկու
 ... պոետ: Երկու քաղաքացի: Մէկը զաշ-
 ... նակցական, միւսը բուլշևիկ: Ֆրոնտում
 ... կը սպանէին իրար կամ Չեկա կը նստե-
 ... ցընէին: Բայց իրենց սրտում, իրենց էութեան
 ... ամենամեծ խորքերում ինչքա՛ն են նման իրար:
 ... Եւ ես գիտեմ, որ եթէ «Այն-
 ... տեղ» իրար հանդիպէին — եղբայրարար
 ... կը համբուրէին իրար: Ու տխու՛ր աչքե-
 ... րով, սրտամուխ ու սրտատրոփ կը նա-
 ... յէին ներքեւ՝ ընդհանուր «Տան» հեռու
 ... տառապանքներին: Եւ միտին կը լային
 ... ու կ'ուրախանային «Տան» դիմին եկած
 ... ուրախութիւններին եւ տիրութեան հա-
 ... մար...

Փա՛ռք նրանց եւ յաւէտ օրհնութիւն
 ... նրանց յիշատակին:

ԳՆ՝ ՉԱՐԵՆՑ

Մ. Ի Շ Խ Ա Ն

«ԳԱՆՈՂՐԱՍԻՏԻՍ ՄՈՂԱՆ»

Ե. Չարենց իր սաղանդով և և խառնուածքով բացառիկ դէմք է մեր դրականութեան մէջ, սակայն անհաւասար գրող: Իր քերթողական վաստակը խառն է իրական և կեղծ գոհարներով, որոնք գտումի կը կարօտին: Ինչ որ տուած է իր հոգիէն, արեան եռացող խռովքէն, յուզական ալեկոծումներէն՝ նման է անուշտ այն մարդարիտներուն, որոնք կը գոյանան ծովերու մթին խորհուրդին մէջ: Իսկ ինչ որ գրած է իբրև հարկ ու տուրք կամ իբրև ծափ ու ծնծղայ՝ դատապարտուած է մտացութեան:

Ժամանակը կը կատարէ անշուշտ այդ զտումը:

Մտոգած քիչն ալ շատ է՝ բանաստեղծը անմահացնելու համար: Հարուստ է Չարենցի անհատականութիւնը բազմակողմանի ապրումներով: Որքան յեղափոխութեան բուցաշունչ երգիչ, նոյնքան և նրբին յոյզերու քնարահարն է ան: Չարենցի հոգին բնգունակ է յաճախ ռատիօկայան դառնալու և ալիքներ արձակելու ամբողջ աշխարհին, երբեմն ալ քնքուչ մեղեդի և սիրոյ մրմունջներ ազօթասփռելու չորս գին:

Տեսիլքով, մեղմ թախիծով, համայնական սիրով լի քնարական ղեղեցիկ պոեմ մըն է Չարենցի «Գանգրահեր տղան»: Կառուցուածքով պարզ ու պայծառ, բովանդակութեամբ խորուպէս մարդկային և իմաստութեամբ յագեցած պոեմ մը, որուն ընթերցումը իսկոյն իր մթնոլորտին մէջ կ'առնէ մեզ և կը վարակէ հեղինակին ապրումներով:

Բանաստեղծութիւնը կը սկսի տեսիլքով մը: Հեղինակը աչքերը կը փակէ և կը փոխադրուի հեռաւոր դալիքին մէջ: Գարուն է, պայծառ կապոյտ երկինք, արեւոտ օր: «Թափոււմ է կարծես երգ ու խնդուքիւն»: Լայն պողոտայ մը Երեւանէն դէպի Արարատ կ'երկարի ոլորապտոյտ. ճամբուն երկու կողմերուն վրայ կը տարածուին տուններ, փողոցներ և դործարաններ, որոնք շրջապատուած են պարտէզներով և ծաղիկներով: «Ո՛չ ծուխ, ո՛չ փոշի. — Եւ լոյս տներու միւ մարդիկ սեա՛ դէմքերին ծիծաղ»:

Չարենց այսպէս կ'երեւակայէ Հայաստանի ապագան. Երեւանէն մինչև Արարատ խաղաղ ու երջանիկ կեանք...

Եւ հա կարմիր դրօշ պարգած կ'անցնի «վաշտը պիտներական» (սկառուտական): Հայոց նորահաս տղաքն են, առողջ, կայտառ, երջանիկ. թմբուկը կը թնդայ. պիտներները կը քային կորովի ոխթմով, ինքնախտահ: Քիչ ետք կը հասնին հին ցանկապատի մը առջև, ուր կանանչութեան մէջ ինկած քա-

քեզ կը նշմարուին. «Վարդուց մոռացուած հի՛ն քարեր, անանուն, անգիր քա-
լի» : Պատանիներու աչքերուն խորք յորդուն կեանք կայ ու ծիծաղ : Գարնան
հետ հայոց նորափթիթ զարունն է, որ կ'անցնի...

Յանկարծ կապուտաշեայ եւ դանդրահեր տղայ մը կը բաժնուի խումբէն
եւ կը մօտենայ գերեզմանի քարերուն, կը հակի աննոցմէ մէկուն վրայ եւ
կ'արագած փռչին կը քերէ : Այդ հին քարին վրայ գրուած է. «Եղիշէ Չա-
լի» : քանաստեղծ ծնուած Մակու քաղաքում» :

Տղան կը կարդայ, «Յիշում է կարծես ինչ-որ բան», (հաւանօրէն դպրո-
ցական գրասեղաններու վրայ կարդացուած կտոր մը Չարենդէն), ապա կանաչ
բազմազան մը կը քաղէ եւ կը շարունակէ իր ճամբան՝ միանայով պիտներներու
շարքին : «Եւ յուշի նման յաւիտեան անցած, մնում է հանդում մի կորած
շնչին» :

Պատկերը տարտած է : Վերջարանին մէջ Չարենց խօսքը կ'ուղղէ զանդ-
րահեր տղուն եւ կ'ըսէ .

Լսում ես, այստեղ իմ սիրտն է բաղուած, ---
Կոխոտիք նրան քայլերով քո լոյս,
Օ, դո՛ւ գալիքի գանգրահե՛ր տղայ,
Մեր լա՛ւ գալիքի ոսկեհե՛ր մանուկ...

Քերթուածը գրուած է 1928-1929 թուականներուն : Չարենց երիտա-
ւոր է. հոգիւ 31 տարեկան : Սովետական երկարամեայ կեանքի մը փորձով հա-
րաւորացած այնտեղ իմաստունի խաղաղութիւնը իջած է վրան : Գերեզմանի
փռչեղատ քարին տակ եւ գերեզմանէն անցին, յուրե՛րութեան մէջ, Չարենցի
տեսք սրբուած, մաքրագոտուած է կարծես աշխարհային փոթորկայոյց կեր-
պէն : Ափսոսանքի ու դառնութեան շեշտն իսկ չկայ կեանքէն յաւատ բաժ-
նում մարդու իր տեսիլքին մէջ : Այսուհանդերձ, քերթուածի տողերուն խո-
րէն ճեղգմածայ մեղեգիլի մը պէս կը հոսի կեանքին կարօտը : Լոյս, կապոյտ
եղիք, ծաղիկ ու կանաչ, եռանդուն ու կորովի պատանիներ... իսկ իր սիր-
տը թողուած հոն, մոռցուած գերեզմանատան մը մոռցուած քարին տակ :
Այս պատկերը ինքնին կը խորհրդանշէ անուսման սէրը կեանքին, ուրկէ հե-
տոցած է բանաստեղծը ո՛վ դիտէ քանի՛ տարիներ առաջ : Կը խորհրդանշէ՞
մե՛նք : չի բացատրեր, չի մանրամասնէր, կարօտի աղաղակներ չ'արձակէր :
Եւ ինչ է որ այդպէս է, որովհետեւ քերթուածը մեղ աւելի կը գրուէ իր
մտքի-լուրթեամբ, բերեղացումով, խոտութեամբ, պիտի ըսէի՝ իր լու-
րթեամբ :

Ի՞նչ հոգիին խաղաղութիւնը արդիւնք է մասամբ այն համոզումին, որ
հայ ապագան լոյս ու ծիծաղ պիտի ըլլայ : Երեւանէն մինչեւ Արարատ պի-
տի երկաթաճգնի լայն պողոտայ մը, շուրջը պարտէզներ, դործարաններ եւ
ճակատ մէջ կորսուած տնակներ : Տանթէական դժոխք ապրած բանաստեղ-
ծը գերեզմանի խորերէն կ'ապրի երանութիւնը այն սերունդին, որ պիտի քա-
ղէ երջան քայլերով մայրենի հողին վրայ եւ պիտի խայտայ առողջ ծիծա-
ղով :

Չարենցի տեսիլքը կը շողայ լուսատեսութեամբ : Նկարած պատկերը,
իբր թէ զոյներով, պայծառ է, արեւատ եւ կենսալից : Բայց երբ քերթուա-
ծին ընթերցումը կ'աւարտէք, անկարելի է, որ մեզմ թախիծ մը չ'արակէ ձեզ :
Ի գերջէն հոն տրոփող սիրտը մեռած մարդու մը սիրտն է : Եւ այդ սիրտը
կարգուած քարն իսկ շունեցաւ իր վրայ...

Քաղիչ Բարցունքեր ճղբունքեր

ՀՐԱՇԱԼԻ ԼՈՒՍԱԲԱՑ

Մ. Իշխանի մեկնարանած «Գանգրահեր տղամ» ստաջին տնգամ լոյս տեսաւ Չարենցի «Էլպիճակամ լուսաբաց» հատորին մէջ, սր ճշմարտ անկիւնադարձ մը եղաւ իր զրական կեանքին մէջ:

Մ. Իշխանի տոանձնագրոցած «Գանգրահեր տղամ» եւ զիմացը արտադրուած «Ես այն չեմ այլեւս» բանաստեղծութիւնը Չարենցի լուսաբացին մասին զրեթէ՛ ամբողջական գողափար մը սաւոյ երկու եւ իրարու լրացուցիչ ճառագայթներ են:

Մէկ կողմէ՛՝ յաջորդարար «Մուսայիս», «Երգ մաճառումի», «Ես այն չեմ այլեւս», «Քուզք բանաստեղծ բայեկամիս», «Թուզք Ալիսի Բակունցիին», «Խոն», «Ներքող առ Բննադատ Ն. Ն.» եւ այլ բանաստեղծութիւններով պարզ, առկուն, վեհ, բարբ, խոր, կիզիչ ու «սերունդներին սրտում» զիմացող երգի մը կարօտը, եւ միւս կողմէ՛՝ իրագործուած կարօտայի երգին՝ «Homo Sapiens», «Անակնկալ հանդիպում Պետրոպալովիեան ամբոցում», «Մեծ աւօրեայ», «Գանգրահեր տղամ», «Մամկուլիւն» բանաստեղծութիւններուն մէջ:

«Էլպիճակամ լուսաբաց»ը ուղղակի ճերբումն է Չարենցի «Երեքի»ի, «Մտանադար»ի եւ այլ ստիճներով նախորդ տարիներուն ձեւակերպած իր այն տեսութիւններուն, ուր աղէտայի թիւրիմացութեամբ մը կը յայտարարէր, թէ զրականութիւնը պէտք է հետաքրքրուի՝

«Ո՛չ թէ նրանով, թէ ինչ է կատարւում տուեալ անհատի այսպէս կոչուած հոգում, այլ նրանով, թէ ինչ դեր է խաղում նա արտագրական յարաբերութիւնների մէջ» («Երկեր», Զ. հատոր, էջ 108):

«Էլպիճակամ լուսաբաց»ը իր կոչումին դուաճանած («Գաւառանցի մի գիշեր ես քեզ») գղջմահար բանաստեղծի մը խոտտովանական ցնցող ճիչն է, ու իրերու անկիրք աշխարհէն զէպի մարդ կտկին ներքին աշխարհը ճամբորդելու կիզիչ որոշումի մը վարակիչ բարախումբ:

Չարենց կը մերժէ այլեւս մեքենայի կցորդ գառնալ ու, շնչող մարդը սառն պտուտակի մը վերածող ծանրաշուք մտայնութեան ընդլէ՛մ՝ կ'աղապակէ կեանքը լիաթուք շնչատութեամբ ապրելու ի վերուստ սահմանուած իր անբանարարելի իրաւունքը:

Բայց չե՛մ մտանայ ես երբե՛ք, երբե՛ք,
Որ տրուած է ինձ մարդկային մի սիրտ,
Տրուած են սէրեր, կարօտներ, կրէր,
Եւ կայ աշխարհում մի... «յիմար լուսին»:
Վարդե՛ր կան կեանքում, կրէր կան անաց,
Կան գրէր, գրէր հագարաչճանի,
Մըգե՛ր կան նաւուն, մարգե՛ր կան կանայ —
Եւ ես աշխարհում ապրում եմ քանի, —
Ձե՛մ կարող սիրով, սրտով իմ անյագ,
Զգացումներինս յորձանքով բեղուն
Չսիրել կեանքի լիութիւնն անհաս,
Ամբողջութիւնը այս բազմագեղուն...

Այս հատորին մէջ Չարենց յաճախ խօսք կը բանայ ինքն իրեն հետ, ինքն իր մասին, իր երեւակայութեան մէջ կը բերէ ուրիշներ, ընթերցողներ, բանաստեղծներ, խօսք կը զնէ անոնց բերնին, կարծիքներ, կասկածներ, հարցումներ՝ իր մասին դարձեալ, իր առած հերոսական նոր զայլին, «Իրերու բանտէն» զինք ձերբազատած պայծառտեսութեան մասին, կը նկարագրէ իր «Լուսաբաց»ը կարգացողին անխուսափելի դարձանքը, հեղանքը, ժպիտը, հարցումը:

Թէ պոետը մեր՝ այս ո՞ր է կասել
ու պատասխանը
Բայց հասել է նա մի ջիւղ պարգուութեան,
Որ ձեռք է բերում «դժուար վարժութեամբ»:

Այսպէ՛ս ստացուած է Չարենցի անկիւնադարձային «Լուսաբաց»ին մեծ մասը, «դժուար վարժութեամբ» նուաճուած պարզ ու խոր ապրումով, լուսափրկութեամբ, հուրքով:

ԵՍ ԱՅՆ ՉԵՄ ԱՅԼԵՒՍ

(Ներքուղ լիբեռալան)

Պ Ա Տ Ա Ս Խ Ա Ն Թ Շ Ն Ա Մ Ի Ն Ե Ր Ի Ս

Եւ զիտեմ ես հիմա, որ յամառ է,
 Ատորեայ աշխատանք է անգուլ —
 Այն ամէնը, որ վարար, հողմովար էր,
 Որ գալու էր երգով ու խանգով...
 Ե. Չ.

Եւ ինչքան պիտի հիմա աշխատեմ,
 Որ գտնեմ ես այն, ինչ գուր կորցրի...
 Ես շատ'յլ եզայ իբրեւ սերմնացան,
 ժլատ կը յինեմ՝ ելնելով հեճի, —
 Եւ աշխատանքի բոցը սրբազան
 Թագ միկնի գիշեր քակաստ խանձի: —

Եւ գուցէ, ասպետներ չնչի'ն դաւերի,
 Եւ չէ՛ք քչփչում քանկերդ սրած: —
 Եւ ոչով հիմա պի'նզ եմ աւելի,
 Եւ չէ՛ք սակուն, քան էի առաջ:
 Եւ էթէ երգով ես ստում եմ թէ
 Եւ ա՛յլ եմ հիմա, այլեւս այն չեմ —
 Եւ չեմ գում է՛ մար հո'ւն եմ մտել՝
 Եւ չէ՛ք խորունկ, աւելի՛ անշեղ:

Որքան աշխատանք ու խոհ կայ այստեղ,
 Երկարատարուզ իմ հայրենիքում,
 Որի վրայով հողմեր են անցել
 Եւ մեզ յաւացել կրէ մրրիկում:
 Որի դարերից գոսացած դէմքին
 Փշել է այսօր շունչը լեռնին, —
 Կիզուել է կրով երկիրը հիմքից
 Ու շանդալով շինում է կիմի:
 Առաջին անգամ իմ հայրենիքում,
 Ուր հոսում էին արնանուն գետեր —
 Այս այգաբացի երգը գրեզուն
 Իմ բարձրաշատչ կ'ըզմ է աւետի:
 Հիմա՛ վաստակած ու ձեռքս վնար՝
 Ելնում եմ ահա կրկի'ն ծպտադէմ,
 Որ սերունդների գործին անկորար
 Ետեով ծանրացած իմ երգը խանձի:

Եւ յախտն էի, ինչպէս պզտոր զեռ,
 Եւ սրտով քեքեռ, ու երգով շտալի, —
 Եւ ոգով այսօր չեմ փոխուել քեպէտ,
 Եւ չեմ եմ, սակայն, ծանր ու ժլատ:
 Եւ հոգին այսօր էլ չի՛ մանքանում,
 Եւ մտխում իրեն քովառն խօսով —
 Եւ չեմ ցօղունն է հանդում ծանրանում,
 Եւ չեմ լցում է առլ, իմաստուն հասկով:

Ես չեմ երգելու այժմ շատաչուն
 Գալիքի մասին, որ գալու է դեռ —
 Իմ ներսում հիմա յուզում են, անում
 Ու շարժում ուրիշ խոհերի գեղեր: —
 Դեռկա'ն է հիմա իմ դէմ ազմուում,
 Ինչպէս կրէրի ամենի մի ծով, —
 Եւ անցնում եմ ես, քնարս բեկուն,
 Այս հագարագոյն ովկիանի միջով:
 Անցնում եմ՝ իմ նո'ր խոհերին գերի —
 Եւ շուրջս ահա, մտորկն ու հեռուն,
 Անուն կրէրի, գագսուանքների
 Լա'յն, անծայրածի'ր ովկիանն է եռում:

Եւ այն չեմ հիմա... Յոյզերիս քառին,
 Եւ չեմ էր ինձ անկումից-անկում —
 Եւ անցսացել ու նստել է հիմի
 Եւ անէն կանչի չի՛ արձագանգում: —
 Եւ չի՛ հոնքում սիրտ վայրենի,
 Եւ չեմ գաշտերում նժոյգ սանձարձակ —
 Եւ չեմ ինձ սիրով մի ձեռք հայրենի,
 Եւ ես մի գիշեր իմաստուն դարձայ:
 Եւ չեմ անցսաց հոգով, որ կեանքի հանդում,
 Եւ չեմ կային ծփուն ծովում հողմածեծ
 Եւ չեմ ինձ երգերով ու անձե խանդով
 Եւ ո՛չ մի ցօղուն դեռ չի՛ բարձրացել:
 Եւ չեմ ձեռք քաշեցի կլեքից վարար,
 Եւ չեմ անցսուանքների յորձանքից անձե —
 Եւ աշխատանքի բոցը փրկարար
 Եւ անձրեածեծ երեսը խանձից:

Ճամբայ եմ ելնում ես ահա մեծակ,
 Քնա'րս է միայն ինձ հետ միասին, —
 Եւ երգում եմ ես, երգում եմ անան
 Իմ պայծառացած խոհերի մասին:
 Գժուար կը լինի իմ երթը հիմա,
 Գժուար ու գժնի, քան երբեքիցէ,
 Եւ քամիս գուցէ օձերի նման
 Ինձ արիւնտեմ ժանիքները ձեր, —
 Բայց պի'նզ է ոգիս... Ու ո՛չ մի ժանիք
 Ինձ չի՛ բաժանի իմ անդուլ դարից,
 Ինչպէս ո՛չ մի ուժ ինձ չի՛ բաժանի
 Իմ շունդալից, պայծա'ր քնարից...

Եւ դա՛շտ եմ ելնում ես կրկին ահա,
 Ինչպէս հնձուրը ելնում է հեճի,
 Եւ չի՛ք փոխարէն ձեռքերիս պստած
 Եւ ետով ծանրացած քնար պղնձի:
 Եւ չի՛ք գլխի վերեւ կեո'ր է արդէն,
 Եւ չեմ արեւն է կանգնել գեղիքում,
 Եւ չի՛ք դէմ — խոհերի չհնձած արսեր, —
 Եւ չեմ հոգսն է ահա յոնքերը կիտում: —
 Եւ չեմ ինչքան եմ վատնել ես անգին ժամեր,
 Եւ չեմ ինչքան հաւնդեր ցրել եմ ձրի, —

Ե. ՉԱՐՆԵՑ

ԼԵՆԻՆՆ ՈՒ ԱԼԻՆ

Աշխարհի կենսաբանը — Մասկովն է:
 Մասկովը Մեկկայից էլ հի՛ն է:
 Մասկովից մեծ էազաֆ — չի՛ֆ:
 — Քանի որ Մոսկովի միջին
 Ապրում է ինքը — Լենինը:
 Տրայիզուրը Մոսկովից հետո՛ւ է:
 Տրայիզուրից Մասկով —
 Չես հասնի առե՞զ դու իսկի:
 Թե ունես ոսկի՝
 Կը նստես նախ նաև դու
 Ու նուով կ'երթաս նախ թարում-
 Յետոյ զմացֆ նստած
 Կը հասնես Թիֆլիս.
 Յետոյ Բաֆու,
 Բուստով.
 Յետոյ կ'երթա՛ս-կ'երթա՛ս
 Ու նոր
 Կը հասնես Մոսկով:
 Ա՛յ. Մոսկովում հենց այդ
 Ապրում է արխազաչ Լենինը:
 Դա, որ մեծ է, ինչպէս ամենամեծ խալիֆ:
 Բայց այնպիսի՛ խալիֆ,
 Որ հասկանում է միշտ ֆուխարայի հալից:
 Այս է պատճառը հենց,
 Որ սիրում է նրան տրայիզուրից Ալին:
 Թիպվար է Ալին մի նառակի վրայ:
 Ստանում է ամբար —
 Երեք ու կէս լիքա:
 Աշխատում է սակայն առաւօտից-գիշեր:
 Ու սիրում է նրան
 Տէրը. ինչպէս գրաստ —
 Քշի,
 Քշի,
 Քշի:

Սիրում է Ալին Լենինին:
 Դրա մասին նրան
 Պատմել է նաւաստի մի ռուս:
 Յայց է տուել նրան
 Պատկերքը Լենինի.
 Առել է.
 «— Լենին — կատար:
 Ալին ասել է.
 — Չո՛ֆ:
 Ռուսն ասել է.
 — Դա՞.
 Լենին վար —
 Բուրժույ հո՛ւ՛ն:
 Բուրժույ — այսինքն զանգի,
 Այսինքն էֆենտի, ազա
 Այն, որ նստում հանգիստ
 Ուսում են ուրիշի քրտինֆ
 Ու սիրում են
 Լիշտ
 Մովսիֆին
 Դասել նարդի խազալ:

Ե. ՉԱՐԵՆՅ

*Ամբողջ Սովետական Միութեան,
 ամբողջ սոցիալիստական աշխարհի բա-
 նաստեղծութեան զարդն են եղելէ Չա-
 րենցի պեմաներն ու բայաղները նախը-
 րած յեղափոխութեան մեծ հանճարին՝
 Վլատիմիր Իլիչ Լենինին, — «Լենին»,
 «Լենինն ու Ալին», «Լենին քեռի», «Ես
 եւ Իլիչը», «Քալիպո վլադիմիր Իլիչ-
 չի. Մուսիկի եւ մի զոյգ կոշիկի մա-
 սին» և այլ գործեր...*

ՎԱՂԱՐՇԱԿ ՆՈՐԵՆՅ

*Այս, տճա ալգրան համեստ, օր-
 դանայէս համեստ մարդ էր Չարենցը:
 Նա ինքը Փենոմէն չէր, սչ: Եւ նրա
 սքանչելի «Լենինն ու Ալին» Փենոմէն
 չէր:*

ՄԿՐՏԻՉ ԱՐՄԷՆ

*Պոլսի խորհրդային հիւպատոս-
 րանում լսած տրայիզուրի Ալիի պատ-
 մութիւնը նա դարձնում է հոյակապ մի
 պոեմ՝ «Լենինն ու Ալին» իր հանճարեղ
 կողալով:*

ՄԻՔԱՅԷԼ ՄԱՉՄԱՆԵԱՆ

Լենինը զբուսակուր. ձգտումով շարադրուած
 Չարենցի ծրարային բանաստեղծութիւններուն
 մասին հիասքանչ «Խորժիքները» հարիւրներու կը
 հասնին, բայց մենք ընտրեցինք ծանօթ դէմքերու
 զեղումները, որոնց հետ պիտի ուղէինք, որ ըն-
 թեցողը կարգաբ փոստարանում «Լենինն ու Ա-
 լին» պոեմին պո՛նէ տառջին մասը, և ապա՝ ը-
 սէր ինքն իրեն կամ ուրիշներու, թէ իրապէս ո՞ր
 է այդ սողերուն ետին թարնուած բանաստեղծա-
 կան արժէքը, որ կը վրիպի մեզմէ:

Թրքորէն բուլթ ու բթամիտ արխազաչ Ալիի
 մը հազի՛ւ արուելիք այս աշխարհագրութիւնը իր
 շարունակութեան մէջ աւելի բախտաւոր չէ, ա-
 նարիւն է նորէն, ու անգարմանելի՛ իր ընդար-
 ձակ ճապաղութեամբ:

Մայակովսկիին փորձը կրկնելու մեղաւոր
 հեռուակութեան մը եւ արտասահման կատարած
 ուղեւորութեան ընթացքին «Երեսը պիտով» շա-
 լու գրական երկրորդ մեղքի մը մղումներով
 սարքուած անկենդան շարադրութիւններ են Չա-
 րենցի լենինեան պոեմները, և ճիշդ չեն ընեթ
 հայրենի մեր մտաւորականները, ամէնէն տառջ
 կասկածելի կը գործեն իրենց հասկացողութիւնն
 ու ճաշակը, երբ ճշմին անոնց մէջ բանաստեղ-
 ծութիւն տեսնել:

ԵՐ Ա Ն Ի ...

Քաղիչ հարցումներ նշումներ

Դժուար է, թէ կուզ նեղ էջի մը սահմանին մէջ, շանդրագունայ սը Չարենց Դաշնակցութեան դէմ գրած է շարք մը պարտաներ, որոնք ոչեւ որութեան մնայուն ազդեցնէր եղան ու կը մնան Հայաստանի շարք մը գրիչներու համար: Անոնցմէ մէկը, Լ. Ասմարեան ստորագրող անորոշ անձ մը, Չարենցի յարութենէն զրեթէ անմիջապէս հարց նստիսիս ուսանձին նիւթ գարձուց պարտաներու այդ շարքը եւ «Չարենցը Դաշնակցութեան դէմ» խորագրի մը տակ զտրու սուսա առ այդ կուտակամ իր անմտութեան ստար էջնոց պահեստը:

«Այս քննարկին նախընթաց ստեղծագործութիւններին լուսագոյնները ո՛չ միայն հեղինակին, այլեւ սովետահայ գրականութեան լուսագոյն գործերն են»:

«Այս թեմա՞ն», ուսինքն՝ հակադաշնակցական տրամադրութիւնը, որուն շտապարով կատուցուած կտորները... եւ այլն:

Ի՞նչ խոր հակացողութիւն, Լ. Է. ինչ լա՛րճը ճաշակ, եւ ի՞նչ վեճ ժառանգութիւն՝ Չարենցին հայ գրականութեան:

Չարենցի հակադաշնակցական պարտաներով ոչեւ որութիւն սնուցանող տրամագրութեան մէջ Ասմարեան ուսանձին չէ, իրեն պէս անորոշ ուրիշներ եւս յաճախ նիւթ գարձուցին նոյն հարցը, ընդհանրապէս ծանրանալով «Էպիխակամ լուսարաց» գործին մէջ կրկնյամ «Դաշնակցականներին» անունը կրող քաղաքական ներբողին վրայ, դատելով զայն Չարենցի սղջ գրականութեան ստիւտութիւնը գլուխ-գործոցներու կարգին:

Որքան յայտնի է մեզի, որին ո՛չ այս բանաստեղծութիւնը եւ ո՛չ ալ Դաշնակցութեան հասցէին այլ տոմարներու մէջ Չարենցի կտտարած ակնարկութիւնները մեծ յարգ մը չվայելեցին Հայաստանի մէջ, ինչպէս Չարենց պիտի ուզէր որ վայելէին անոնք, ծառայէին իրենց յղացման ու դրատման նպատակներուն, թեթեւցնէին դաշնակցականութեամբ ամբաստանուած ըլլալու իր մեղքը...

Ինչպէս Չարենցի մէջ հակադաշնակցական մը կը տեսնեն այսօր, այն օրերուն միայն Դաշնակցական մը կը տեսնէին իր հոգիին: Այդ կապակցութեամբ ահարկուած իր վիճակին մասին պզտիկ պզտիկ պզտիկ մը տալու համար՝ տանք պզտիկ օրինակ մը՝ «Նոր ուղի» ամսագրին ուղղած բանաստեղծին 2 Դեկտեմբեր 1929 թուակիր նամակին հետեւեալ մասը.

«Վերջին ժամանակներս յուրեր են պարտուում այն մասին, թէ քս 1920 թուին մի բանաստեղծութիւն եմ տպել... Մայիսեան ապստամբութեան դէմ !! Մարդկանց աչքին թոզ փշելու համար տալիս են նոյնիսկ բանաստեղծութեան անունը: Դա «Հայաստանի կուրացիա» ժուռնալի 1920 թուի Յունիսի համարում տպուած իմ «Լիւսի թատախանի գրքից» բանաստեղծութիւնն է, որն իրիւր թէ գրուած է Մայիսեան ապստամբութեան դէմ»:

«... Այս հանգամանքին անմանօր մարդու աչքին երեւի թոզ են փշելում (որքան էլ սա դէմ է առողջ բանակցութեան), դիտարարեալ կերպով համոզելով, որ ես «Բրոնզէ քոյր», «Մոմա», «Կրակէ զուտար» եւ այլ էպիտետներով, որ կարմիր թելի նման անցնում են տըրեալ շարքի բոլոր բանաստեղծութիւններում, ի նկատի ունեմ... Դաշնակցութիւնը»:

Ուրեմն Դաշնակցականութեամբ ամբաստանուելու փաստ մը կայ եւ կայ ամբաստանութիւնը հրապարակով հերքելու ստիպում մը:

Ու թուականը կարեւոր է հոս՝ 1929:

Ու բնաւ զարմանալի չէ այլեւս, որ նայն թուականին բանաստեղծը ստիպուէր Դաշնակցականներին դէմ խօսիլ, սարքել «Դաշնակցականներին»ը, ջանար համարել Դաշնակցական որսացողները, թէ ինք ատելութիւն ունի միայն Դաշնակցութեան դէմ եւ եղածը յերիւրանք է, «որ հնարաւոր է միմիայն մուրք անկիւններում»:

Մութ անկիւններու այդ ջտուններուն ջտութիւնները չէզոքացնելու համար գրուեցաւ «Դաշնակցականներին»ը:

Հոս հարց կը ծագի այն մասին, որ այս պայմաններուն մէջ գրուած «Դաշնակցականներին» բանաստեղծութեան պարտաի մասը Դաշնակցականներուն կը վերաբերի այլեւս, թէ կը սեւագրէ նոյն պայմանները ստեղծած արարածներուն սեւասեւ ողին...

Իայց երանի թէ ճիշդ ըլլար Չարենցը՝ իր օրին, երանի թէ հուստային իր հակադաշնակցականութեան, նիւթ գարձուցին հակադաշնակցական իր արտայայտութիւնները, այդ հանդամանքը ապահովութիւն ըրէր իրեն, համայնավարները չիջեցնէին զինք զնտան, չհանէին հոգին, ապրէր բանաստեղծը, քանի մը բանաստեղծութիւն աւելի ունենայինք, երանի՛ր...

Ե Դ . Պ Օ Յ Ա Ճ Ե Ա Ն

Ե Ղ Ի Շ Է

Չ Ա Ր Ե Ն Ց



ՉԱՐԵՆՑ, 1924ԻՆ

Իրմէ աւելի՛ բաղձութեան ձայնն է Չարենց: Ու աւելի՛ բաղձութեան կրակը: Բաղձութեան վէրքը: Ո՛չ կրնայ ուրախանալ եւ ոչ ալ մանաւանդ տիրիլ՝ քիչով: Կը ձանձրանայ խկոյն: Չի կրնար մտածել աւանց խուժանի, խուժանային բաներու: Մտածելու համար, սղեղի տեղ, Չարենց ունի տմբոխն ու նկարագրութիւնը: Այդ երկու կամ խորքին մէջ մէկ բանը վերցուցէք, եւ ան բանաստեղծ չէ այլեւս, Չարենց չէ գոնէ: Եւ արդէն ինք կը հրաժարի գրելէ: Տէրեանի հեռ երկուորեա՞կ պիտի ըլլայ ատկէ ետք, Սայաթ-Նովայի հասարակ աշկե՞րտ, պայծառ Թումանեանի մը բանաստեղծական մտուրէն կերակրուող մտքի ազարդիւն տաւա՞ր մը: Մնաց որ, Թումանեան ինքն ալ չի կրնար գրել՝ առանց հաղարուոր ուրիշներու. միայն թէ՛ սուր ուրիշները խողաղ են եւ կը կոչուին ժողովուրդ, վտիանակ ըլլալու շարենցեան ամբոխ: Չարենց երբեք ժողովուրդ չէ, կամ գրեթէ: Ամբոխ է միշտ, առնուազն ամբոխային: Երբ ամբոխ չէ, ժողովուրդ չէ նորէն, աղբ է այս անդամ, մարդկային հաւաքականութեան աւելի բարձր որակ մը:

Այսպէս —

Անկարգութիւնն ու խուժանն են, իրմէ դուրս եղող աղձուկներն ու աղձկարարները, որ ճամբայ կը հանեն Չարենցին միտքը: Չափազանցած ըլլալէ եթէ չվախնանք, պիտի բանք խկոյն, որ հասարակական իրարանցումին մէկ արդիւնքն են Չարենցի միտքն ու անկէ անդին եղող սիրտը, իրաբանցումէն ծնած ու բանաստեղծութիւն բնող:

**

Մունետիկ մը նստած էր մէջը, կարմիր բառեր պոռացող, կարմիր դայրոյթի մը շեփորը հնչեցնող: Յեղափոխական զարհուրելի տակնուվրայու-

թիւններու բողէն իր հոյիին բոլոր խանդերը վառած, գինով եւ մազնիսա-
հար ջահադնաց մըն էր ան, որ նոր ուխտատեղիի մը համար կը նետէ իր
մեծ քայլերը հիմա :

Ինծի կը թուի սակայն, որ Չարենցին սիրածը համայնավարութիւնը
չէր, դէթ ինչպէս կ'ըմբռնէին զայն այդ վարդապետութեան քաղաքական
վարիչները: Արտառոց պատերազմներուն աւելի եւս արտառոց խաղաղու-
թիւնն էր, որ կ'ատէր Չարենց եւ պէտք էր ստէր իր խմորն ու տարիքը
ունեցող մէկը, երբ անոր երիտասարդականութեան վրայ գումարես թուեղ
խառնուածք մը եւ տեսարար դաւաճանուած ազդի մը պատկանելուն պարա-
դան :

Համայնավար դրսիականութեան ամէնէն ազդու մէկ ճայնը պոռացող եւ
ինքզինք ուղղափառ կոմունիստ դաւանող Չարենցը՝ համայնավար չէր եւ
չկրցու ըլլալ: Ուշ անգրագարձաւ ասոր: Իր ամբողջ տրամը հաւանաբար, նախ
քան ղինք ամբաստանութեան տակ դնող խոտորումները՝ համոզուած չըլ-
լալն էր համայնավարութեան: զարթնում մը հիքնոսացիայի միճակէն, որ
հաւատքի եւ գաղափարական հարցերու սփարագային կը կոչուի հաշեկան բե-
կում :

Առաջին քանի մը տարիներէն ու քեթիւսածներէն ետք, ան այլեւս մե-
ղի համար չէ, որ կը պոռայ իր կարմիր սերճախօսութիւնները, քանի որ ու-
րիչ սեւէ հակառակորդէ աւելի՝ ինք պէտք կը զգայ համոզուելու իր հաւատա-
քին: Կասկածներէ ազատելու եւ ներքին հաւատքը վերականուցանելու եղե-
րականօրէն ճարտարապետուած ազազակներ են ու ազազակներու գրքեր՝ իր
խանդախտութիւններուն մէջ այս խաբուած ու խորտակուած քերթողին բա-
նաստեղծութիւնները: Կոմունիստականօրէն ամէնէն ուժգին ասութիւններն
անդամ՝ ասութիւն են այլեւս լոկ, հաւատքի նախկին ջերմութենէն պարպը-
ւած: Բառային է անոնց որակը աւելի, քան զգացական ու մտային: Պակտող,
յաճախ բոլորովին բացակայ ապրումին տեղ, կը դետեղէր քերթողը այլեւս
Երևոյթները փրկելու կոչուած խոշոր բառը: Բառերուն խտութիւն տալու
փոխարէն՝ կը բարձրացնէ անոնց թոնը: Համոզելու համար բոլորը, այլ մա-
նաւանդ ինքզինք՝ երկար ատեն, պոռալը շփոթեց անկեղծութեան ու խոս-
տովանանքին հետ, մերթ եւս՝ արուեստի ուժին հետ: Պատահեցաւ որ շփո-
թէ զայն տրամարանութեան հետ եւս:

Սեղծ մըն էր խորքին մէջ, սկիզբէն իսկ, եւ սակայն մեծ մը: Իր շփո-
թութիւններէն, շուարումներէն, ու յանուն այս կամ այն բանին յափշտա-
կութիւններէն իր աճումին կաթը ծծած պոեան է ան: Բայց իր շուարումնե-
րը տաք եղած են ու սնուցիչ: Եղած են, իր անորոշութիւններուն պէս՝ խան-
դափառ, տեղ-տեղ իմաստուն, փայլուն ու երաժշտական: Այո, շողշողուն
անորոշութիւն մըն է շատ անդամ Չարենց, ինչպէս Սիամանթոն, տարբեր
գետնի վրայ եւ արտայայտութիւններու տարբեր մրրիկով մը: Պէտք չէ առ-
նել անորոշութիւն բառ իր ընթացիկ իմաստով, որ բաւական նեղ է եւ խեղճ:

Ինքզինք ամէնէն յստակ ու մերկ բառերով պոռացող Չարենցը, մեր
կարծիքով, ինքզինք ամէնէն քիչ յստակ, ամէնէն անորոշ եւ տարրամ ձեւե-
րով տեսնողն է: Պէտք չէ խաբուել իր շեշտերէն, իր սրութենէն, մերկութե-
նէն: Ամէնէն աւելի ոլորապտոյտ ուղի ունեցողներէն է անոր հոգին եւ ամէ-
նէն աւելի հոգեբանական լաթ հագումներէն:

Քաղին հարցուՆԵՐ ն ՎԴՄՆԵՐ

ՄԱՅԿՈՊԸՆ ԲԱՆԿՈՊ

Եղիշէ Չարենցի «Երեւանի ուղղիչ տնից» *ակնարկը իր մտաբեր կ'ընէ հետեւեալ պարբերութեամբ.*

«1926 Սեպտեմբերի 5ի զիշերը, ժամը 12ին, քրէական բաւականին ծանր մի յունցանքի համար եւ ձերբակալուեցի եւ տարուեցի Երեւանի միլիցիատան բաժնիը: Ուղիղ մի շաբաթ այդտեղ մնալուց յետոյ, մի քանի ու փոշի երեկոյ, Երեւանի միլիցիայետի ուղիկցութեամբ եւ տեղափոխուեցի Ուղղիչ Տունը, որը գտնոււմ է այսպէս կոչուած «նոր կայան»-ի ղիմացը, գորանոցների կողքին»:

Պատմուածը *գրականութիւն չէ այս անգամ, այլ ուղղակի Չարենցի կենսագրութեան մաս կազմող իրողութիւն:*

Չարենցի ձերբակալման «պատմական» պատճառը տրուած է իր երկերու զիտական հրատարակութեան հինգերորդ հատորին (614) մէջ.

«Աբովեան փողոցում Զ.ը 1926 թ. Սեպտեմբերի 5ին սիրահետել եւ վերք է հասցըրել Այվազեան ազգամուտով մի աղջկայ, որի համար ձերբակալուել, ապա ՀՍԽՀ Գլխաւոր դատարանի նոյն քուականի Նայեմբերի 9ի դատական նիստի վճիռով դատապարտուել է ութ տարուայ ազատազրկման՝ խիստ մեկուսացուումով: Սակայն, ինչպէս ասուած է դատավճիռում՝ «աչքի սուաջ ունենալով այն, որ հասցրած վէրքն աննշան է ու անվտանգ կեանքի եւ սուղջութեան համար, որ Չարենցի նկատմամբ երկարատեւ ազատազրկումը կարող է կործանիչ ազդեցութիւն ունենալ նրա գրական ընդունակութիւնների վրայ» — դատարանը մեղմացնում է վճիռը, դատապարտելով երեք տարուայ ազատազրկման՝ առանց խիստ մեկուսացման եւ իրաւունքների սահմանափակման (տե՛ս նշ, 1926, № 260):

Հետագային երեք տարուան վճիռը եւս բարեփոխութեան կ'ենթարկուի:

Դեկտեմբեր 29ին, կնոջ հիւանդութեան պատճառով եւ համաձայն մեղմացուցիչ օրէնքի մը՝ 7 օր արձակուրդ կը արուի Չարենցին: Այդ միջոցին, Յունուար 1-2ի դիւերը կը մեանի կինը եւ արդէն խանգարուած անոր հոգեկան դրութիւնը բոլորովին կը վատթարանայ: Բժշկական յանձնաժողովին առ այդ կազմած տեղեկագրութեան հիմամբ՝ Փետրուարի սկիզբները ազատ կը կացուցուի Չարենց, որ անմիջապէս կը մեկնի Հիւսիսային Կովկաս, Մոսկուոյ, մօր ու եղբայրներուն մօտ:

Մայիսի մէջ անցուցած իր այդ օրերուն Չարենց կը գրէ «Երեւանի ուղղիչ տնից» *ակնարկը եւ դիմացի էջին արտագրուած «Ձիւռ մոռութեան» բանաստեղծութիւնը, որ լի է թէ՛ «Քրէական» իր յանցանքին պատճառ դարձած Այվազեան ազգամուտով աղջկան եղած ակնարկութիւններով եւ թէ՛ նոյն օրերուն մեռած իր կինը ողբերգու դառնաթախիծ ապրումներով:*

Ի դէպ, Չարենցի հետ այդ պատմութեամբ կապուած Այվազեան աղջանունով աղջիկը, ի դէմս բանաստեղծ Աւետիս Չարչարեանի տիպարի վերածուած Չարենցի հետ՝ նիւթ դարձած է նաեւ Կոստան Չարեանի, այս վերջինին «Բանկոօպը եւ մամուլի ոսկորները» տնուն էստէին մէջ, 1933ին, «Հայրենիք» ամսուորի Օգոստոսի, Նոյեմբերի եւ Դեկտեմբերի էջերուն: Արովեան փողոցի Չարենց-Այվազեան դէպքը դասակարգային ու հողբանական դեր դապատճառներու յոյսին տակ նկարագրելէ ետք, Այվազեանը Մոշա Այդինեան կնքած՝ Չարեան յաջորդող էջերուն կը պեղէ անոր հոգին, քանի մը իրապէս զեղեցիկ էջեր հաղորդելով ընթերցողին:

Դժբախտորար, Չարեան ճիշդ այդ կէտին վրայ ընդհատեց իր գործը եւ ընթերցողը ոչինչ գիտէ Մաշա Այդինեան տիպարը ամբողջացնելու իր ծրագրերին մասին:

«Երեւանի ուղղիչ տնից» *ակնարկին, «Ձիւռ մոռութեան» բանաստեղծութեան եւ Կ. Չարեանի «Բանկոօպ»ի ընդարձակ էջերուն առիթ տուած Արովեան փողոցի գրականօրէն բեղուն դէպքը մութ չմնայ ընթերցողին: «Սիրահետելը»՝ սիրային արամադրութիւններով կատարուած հետապնդումն է, իսկ վէրքը հասցրուած է ատրճանակով: Պարզ խօսքով՝ Չարենց, Արովեան փողոցին վրայ, ատրճանակով վիրաւորած է սիրային իր առաջարկը մերժած Այվազեան աղջանունով աղջիկը...*

Չ Ի Ո Ի Մ Ռ Ո Ի Թ

Գու, որ այնքան անհամբեր
Թռչում ես հեռուն. —
Ինչպե՞ս, ինչպե՞ս քեզ խաբեց
Մի ձիու մուրք:

Ինչն՞վ նա քեզ գրաւեց
Ու դարձրեց չար,
Ու քոնիչքը քո այն վեհ
Այդպէս քաշեց վար:

Թէ՞ քախիծն էր քեզ խեղդում
Այնքան՞ն յուսարեկ,
Որ կ'ուզէիր անգամ դու
Ձիու հետ կապուել:

Կամ քէ ստուե՞րն էր նա սեւ
Անցեալի այն չար,
Որ մեր ուղին այս լուսէ
Ստուերում է յար:

Այն ոխերիմ, այն նեխած
Անցեալի հեռուն,
Որ օրերում մեր այս պարզ
Հագեղ էր դէմք շպարուած
Ու դարձել մուրք:

Հիմա անցել է արդէն
Այն մշուշը սեւ,
Սրտումդ լոյս ու վարդեր,
Շուրաններ լուսէ:

Ու քո հոգում անհանգիստ
Հիմա վառուած յար՝
Հուրհուրում է այն կեանքից
Յիշատակ մի վառ:

Այնպէս հաշտ ես դու քեզ հետ,
Այնպէ՞ս մտերիմ:
Լուսաւորում է ուղիդ
Մի լուսէ շիրիմ:

Ու քո հոգին անհանգիստ
Այդ լոյսով վառուած՝
Ահա կրկի՛ն այս կեանքին
Լուսաւոր կապուած:

Եւ քո դիմաց, ահա տե՛ս,
Կրկին դրօշներ,
Ու պայքարներ ահա մեծ
Եւ ուղիներ վեհ...

Ու գառանցանք է քուում
Այն մ'թին հեռուն,
Երբ երեքսց օրերում
Մի ձիու մուրք:

Ու քո հոգում հիմա հաշտ
Այդ մուրքը սեւ
Դառնում է սեւ մի երազ,
Ջառանցանք նսեմ:

Եւ ցաւում եմ հիմա ես,
Որ ապագայ գրքերում
Քեզ հետ յիշուի պիտի սեւ
Մի ձիու մուրք:

Բայց մոռացի՛ր, եղիր հա՛շտ,
Քեզ հետ մտերիմ՝
Լուսաւորում է ուղիդ
Մի լուսէ շիրիմ...

Ու քո հոգին անհանգիստ
Այդ լոյսով վառուած՝
Ահա կրկի՛ն այս կեանքին
Լուսաւոր կապուած:

Եւ քո դիմաց ահա տե՛ս՝
Կրկի՛ն դրօշներ
Եւ պայքարներ ահա մեծ,
Եւ ուղիներ ահա մեծ...

Հ. Կ. Կ. ԿԵՆՏԿՈՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐՈՒԹԵԱՆԸ

Պատնէն՝ Խ. Գ. Մ. ԿԱԶՄԿՈՄԻՏԵՒՆ

Խորհրդային գրող ԵՂԻՇԷ ԶԱՐԵՆՑԻԿ

Գ Ի Մ Ո Ի Մ

Խ. Գ. Մ. Կենտկոմի պրեզիդիումի վերջին նիստին, ուր դրուած էր զիւզ գործուողուած գրողների հաշուետուութիւնը եւ ուր ղեկուցում էր ընկ. Սիրասը, ես այն միտքը յայտնեցի, որ զիւզ գործուողուող գրողներից պէտք է մենք պահանջենք հաշուետուութիւն այն մասին, թէ ի՞նչ են արել նրանք իբրեւ գրողներ. ի՞նչ են գրել, ի՞նչ են ստեղծագործել, ինչպէ՞ս են արտացոլել իրենց ստեղծագործութեան մէջ զիւզի դասակարգային պայքարը, եւ այլն, եւ ոչ թէ, ինչպէս ղեկուցում էր Սիրասը, քանի՞ գոմ են մաքրել, քանի՞ կուլակ են ձերբակալել, եւ այլն. այսինքն՝ զիւզ զնացող գրողներից մենք պէտք է պահանջենք ոչ թէ քաղաքական-ազմինխտրատիւ ղեկուցում, այլ գրական-ստեղծագործական: Ես այն միտքը յայտնեցի, որ մենք, իբրեւ խորհրդային գրողներ ժողովեան Կազմ. Կոմիտէ, մեզանից չենք ներկայացրնում քաղաքական-ազմինխտրատիւ ինստանցիա, որպէսզի մարդիկ գործուղենք զիւզ՝ քաղաքական-ազմինխտրատիւ աշխատանք կատարելու համար, որ դրա համար կան այլ ինստանցիաներ, որոնք կարող են գրողներին այլ կարգով գործուղել զիւզ եւ նրանցից պահանջել համապատասխան հաշուետուութիւն, որ մեր Փունկցիաների մէջ չի մտնում այդ ամէնը, որ եթէ մենք զիւզ մեկնող ընկերներից իրաւասու ենք պահանջելու հաշուետուութիւն, ապա այդ հաշուետուութիւնը պէտք է կրի լուկ եւ միմիայն ստեղծագործական հաշուետուութեան բնոյթ: Որքան ես կարող եմ եւ ընդունակ եմ հասկանալու՝ այսպէս է դրուում հարցը նաեւ կենտրոնում, Մոսկուայում, եւ այս կարեւոր հարցում որեւէ շփոթութիւն մտցնելը կարող է ունենալ շատ բացասական հետեւանքներ: Ի պատասխան իմ այս միանգամայն պարզ, համարեա՛ւ այբենական հարցադրման՝ ես բախտ ունեցայ ընկ. Վլադոնուց սկրսած մինչեւ Կազմ. Կոմիտէի նախագահ ընկ. Զուբարից լսել միմիայն զեմազոգիկ մեղադրանք այն մասին, որ իբր ես անարխիզմ եմ քարոզում, որ իբր ես դրսզին բաժանում եմ հասարակական գործչից եւ այլ նման անհիմն բաներ: Բացի այս՝ ես լսեցի հետազայում, որ զանազան տեղերում, ուր ես իբրեւ անկուսակցական չեմ կարող մուտք ունենալ, այդ ելոյթի առթիւ Սիրասի եւ այլ ընկերների կողմից եղել են չափազանց յռուի ելոյթներ, որոնցում իմ ելոյթը որակուել է համարեա՛ւ հակայեղափոխական ելոյթ: Դժբախ-

...Բացի այս՝ ես լսեցի հետագայում, որ զանազան տեղերում, ուր ես իբրև անկուսակցական չեմ կարող մուտք ունենալ, այդ էլոյքի առթիւ Միրասի եւ այլ բնիկների կողմից եղել են չտիրապանց յոռի ելոյքներ, որոնցում իմ էլոյքը որակուել է համարեա՝ հակայեղափոխական էլոյք։ Գծրախուսաբար, ես իբրև անկուսակցական չեմ կարող ներկայ լինել այդ տեղերում, որպէսզի ես իմ բացատրութիւնը տամ եւ ես կասեցնեմ միտումնաւոր պրովոկացիոն էլոյքները։

Ե. Զ.

տաբար, ես իբրև անկուսակցական չեմ կարող ներկայ լինել այդ տեղերում, որպէսզի ես իմ բացատրութիւնը տամ եւ ես կասեցնեմ միտումնաւոր պրովոկացիոն էլոյքները։ Իմ հարցադրումը ես դռնում եմ միանգամայն ճիշդ եւ ոչ մի առարկութիւն չլինեցնող, որի մասին ես ահաւաստիկ յայտնում եմ պաշտօնապէս եւ զրաւոր կերպով։ Աւելին։ Ես դռնում եմ, որ ժամանակն է արդէն ցրելու մեր խորհրդային դրոյներին կողմակերպութեան միջից այն զղուելի միջնորդը, որ մեզ ժառանգութիւն է մնացել նախկին Ասոցիացիայից, երբ զրոյի իւրաքանչիւր էլոյքին կպցւում էր քաղաքական յատիկ, երբ իւրաքանչիւր աչքարաց սկսնակ, կամ անորակ դրոյ, յենուելով իր «հասարակական» քաջադործութիւնների վրայ՝ կարող էր ոչնչացնել իսկական խորհրդային դրոյի, հողին հաստատրեցնել նրան, վարկարեկել քաղաքականապէս, այսինքն՝ մի գէնքով, որով չի կարող օգտուել նրանցից շատ աւելի ընդունակ, ոչ թէ ահից դրդուած, այլ խղճի մտօք յեղափոխական, խորհրդային դրոյը միմիայն այն պատճառով, որ մուտք չունի բոլոր այն տեղերը, ուր այդ «քաղաքական» գէնքի հերոսը կարող է նետուել իւրաքանչիւր վայրկեան, եւ, ի բացակայութիւն իր «քաղաքական» թշնամու, անել նրա հասցէին ամէն տեսակի յերիւրանքներ։

Ելնելով այս ամէնից եւ դռնելով, որ նման միջնորդութեամբ աւելորդ է առհասարակ ինձ նման անպաշտպան դրոյի համար յոյս ունենալ խղճի մտօք մասնակցելու մեր դրական-հասարակական կեանքին՝ մեր դրական կողմակերպութեան վերին օրդաններին ակտիւ կերպով անդամակցելու իմաստով, խնդրում եմ այս օրուանից ինձ ազատ արձակել ինչպէս Խ. Գ. Մ. Կազմ. Կոմիտէի պրեզիդիումի անդամութիւնից, այնպէս էլ «Նոյեմբեր» ամսագրի կոլեգիայի անդամի պարտականութիւններից եւ թողնել սոսկ Խ. Գ. Մ. շարքային անդամ։

Ե. ԶԱՐԵՆՑ

Ինքնապաշտպանություն և շինարարություն

ԱՆԻՇԵԱԼ ԱՆՑԵԱԼՈՎ...

Սիրաբար, սրբանունները կանխող էջին վրայ գրուած Չարենցի բողոք-նամակին մէջ երբեք անգամ սեւագիրով ընդգծուած է, Հայաստանի դրակահուլիան այն օրերու սողանդուտը գրողներու հոյլին դէմ տեսարար քառթիւններ սարքած գրակահուլիան այն չարքայիններէն է, որ հետագայ տարիներուն աստիճանաբար ու թեզուցուց կամակատարի իր հոսանքը, ծառայածութեան իր թափին մէջ չերկնչելով անգամ ամբոստանութեան թաղթեր ստորագրելու մթին յանձնառութիւններէ:

Չարենցին մահադոյժ սարսափներ պատճառած այս անձին մոթ կողմերը չափով մը ծանօթ է հայ մարդուն եւ երբեք կարելի չէ մոռնալ զինք լատաղէս բնութագրող հետեւեալ փաստութեանը.

«Վրական թերթ»ի 1936 թիւ 21ին մէջ, կիմնուելով թիւ 15ի մէջ գետնդուած Բեքիայի «Փոշկացեալ, հոգմայրիւ անէլ սոցիալիզմի թշնամիներին» յօդուածի վրայ, Սիրաս կրկին ու կրկին անգամ մերկացնում է բանտարկուած գրողներին ու մասնաւորաբար Բաւկունցիին:

Աւելի զարմանալին ա՛յն է, որ այդ տաղանդաւոր գրողներուն սխերիմ թշնամի այս նոյն անձը, Չարենցի յարութենէն ետք գրեթէ ի՛նք եղաւ առաջինը, որ 1937ին նստու ու համակրուիլոյ յա՛ւեր գրեց Չարենցի մասին:

«Սովետական գրականութիւն» ամսագրի 1957ի թիւերուն մէջ տպուած այդ յա՛ւերուն մէջ ի միջի այլոց կը գրէ ան.

«Աշնանը, Հայաստանի խորհրդայնացման 15րդ տարեդարձի առթիւ ցա գրեց իր «Տասնհինգ տարի» նշանաւոր դիֆերումը: Ուրախ էինք, որ ցրա բեղմնաւոր գրիչը ցոր ու ցոր երկերով կարստացնում է մեր ցոր գրականութիւնը»:

Այնքան գծնդակ կոցութիւններ ստեղծելէ ետք Չարենցին՝ անոր բեղմնաւոր գրելով ուրբախնայալ այս յայտարարութիւնը սիրաբան է նորէն, ու սարսափելի է դարձեալ:

Սիրասի նման եւ անոր պէս տղոյն եւ նոյնքան տիրահոհակ կայ նաեւ ուրիշ մէկը, Արապէս Ռսկերչեան, որ 1937 Ապրիլի կիտուն դումարուած Հայաստանի գրողներու ընդհանուր ժողովին մէջ եւ Հայաստանի գրողներու մոսկովեան դահլիճներէն Կիրպոտինի ներկայութեան, կը յայտարարէր.

«Չարենցը մեծ յանցանքներ է գործել ժողովրդի նկատմամբ. ցա մասնակից է եղել հակայնդիպոսական ցանցաւորութիւններ գործունէութեանը»:

Չարենցի վրայ նման ահարկու յանցանքներ կուտակած այս մարդը, իր կարգին եւ անշուշտ կամակատարութեան իր սկզբունքը շխարտելու բնապիւն հաւատարիմ՝ բանաստեղծին վերավարկութեան իր սկզբունքը շխարտելու բնապիւն հաւատարիմ՝ բանաստեղծին մէջ «Եղիշէ Չարենցի լեմինապատումը», ուր այս անգամ, եւ միշտ ըստ իրեն՝

«Չարենցը միեւն վերջ հաւատարիմ մնաց Լեմինին ու ցրա կուսակցութեանը, համազում լինելով, որ Լեմինի կեանքն ու գործը պատկանում են դարերին ու սերունդներին եւ ցրա անմահ ուսմունքը, իբրեւ դրօշ, յաւերժօրէն կը ծածանուի աշխարհի վրայ՝ տառապան ու պայտարող մարդկութեանը ցոյց տալով ազատագրութեան ուղին եւ կոմունիզմի յունաշող գագաթները»:

Երէկ այնպէս, այսօր՝ այնպէս, միշտ պարագայապաշտ ու յախտենապէս ծառայածի այս մարդերը եւ անոնց պատճէնով ուրիշները նկատի ունէր հաւանաբար Թաշիկ Գաշտենց, երբ կը գրէր Չարենցի յիշատակին նուիրուած բանաստեղծութեան մէջ.

Որքա՛ն մարդիկ պիտի փութան ամպիւններ՝
Առաջինը յագուելով,
Եւ անիծեալ իրենց անցեալը օծեն
Յիշատակիդ լոյսերով:

Վալերի Կիրպոտին, Հմայեակ Սիրաս, Արտաշէս Ռսկերչեան...
Չարենցի յետ յարութեան տարիներուն «առաջինը յուզուելով» ամպին վաթապուները միայն ասոնք չէրան հարկու, «անիծեալ իրենց անցեալը» օժողներուն համարանքը շատ է, ու բնօրէն՝ միշտ նոյնը, Չարենցի բանաստեղծական բուն էութենէն հետու կանդնած եւ անոր մեռեալ գործերով ցնծացող անսրբագրելի դիակապուտներ...

«ԱՆՄԱՀՈՒԹԵԱՆ
ՀԻՄՔԸ»...

Քաղիչ հարցումներ
նշումներ

Ծանօթ է այն իրողությունը, որ Չարենց 1918ին մտա համայնավար կուսակցության շարքերը, զաղաքացիական կռիւներու մասնակցեցաւ կարծիք գրողակին տակ եւ 9 Դեկտեմբեր 1921ին իրրեւ պատղամուտուր ներկայ եղաւ սովետական համառուտական Զրդ համազու- մարին:

Կուսակցական իր պատկանելիութեան յաճախ անդրադարձած է Չարենց, բարձր- ձայն, բանաստեղծութեամբ թէ արձակով:

Բանաստեղծութեամբ՝

Եւ,
Պոետս,
Լեճիճեան բայլշաւիկս...

Արձակով՝

«Կումունիստ — գիտե՞ք ինչ հպարտ զգացումն է առաջանում իմ մէջ այն մտքից, որ ես կոմունիստ եմ, բուլշեւիկ, Լենինական կազմակերպութեան անդամ»:

Ասիկա գիտէինք եւ մեր այս գիտցածը դիտցնելու միտող յօլուածներ յաճախ կը հրամցնեն մէկի հայրենի մեր գրողները, որոնք սակայն «խնամքով կը թաքցնեն» եւ ըն- թերցողին բնաւ չեն յիշեցներ 23 Մարտ 1933ին միտածանակ Հայաստանի Կոմունիստ կու- սակցութեան քարտուղարութեան եւ Պորհրդահայ Գրողներու Միութեան Կոմիտէին յղած Չարենցի դիմումը, ուր «լեճիճեան բայլշաւիկ»ի գոտ ձայնին տեղ անկուսակցական մեկուսիի մը պատնէթիւնը կը ծաւալի:

«Բոցի այս՝ ես լսեցի հետագայում, որ գամագամ տեղերում, ուր ես իբրեւ անկու- սակցական չեմ կարող մուտք ունենալ, այդ ելոյթի առթիւ Սիրասի եւ այլ ընկերների կող- մից եղել են չափազանց յուրի ելոյթներ, որոնցում իմ ելոյթը որակուել է համարեա՛ր հա- կայեղափոխական ելոյթ»:

«Իմբալտուարս, ես իբրեւ անկուսակցական չեմ կարող ներկայ լինել այդ տեղե- բում, որպէսզի ես իմ բացատրութիւնը տամ եւ ետ կասեցնեմ միտումնաւոր պրովոկացիոն ելոյթները»:

Մեղի յայտնի չէ, թէ 1933ին իր անկուսակցական ըլլալը յաջորդաբար յիշեցնող Եղիշէ Չարենց ե՞րբ հետոցած է կամ հետոցուած համայնավար կուսակցութեան շարքերէն, սակայն կրնանք հաստատութեն պնդել, որ՝

Նոյն տարուան վերջին ամիսներուն, «Գիրք Անապարհի»ի լոյս ընծայման դէմ պայ- թած փոփոքիկը,

Տարի մը ետք կայացած Հայաստանի գրողներու առաջին համադումարին նոյն հա- տորին պողափարական ուղղութեան համար բանաստեղծին եղած կշտամբանքները,

Յաջորդ տարի (1935) գրողներու միութենէն իր վտարումը,

Աւելի ուշ գրական ժողովածուներէ եւ պատուիրակութիւններէ դուրս ձգուելու հան- դամանքները,

Ապա իր ընկերներուն ձերբակալութիւնը,

Յետոյ՝ Լեայլն, Լեայլն:

Այս բոլորը համայնավարութեան շարքերը վերագաւառուու ձեռնուու պայմաններ չէին կրնար ստեղծել իրեն համար ու չստեղծեցին եւ, հետեւաբար՝

— Չարենց բանտ նետուեցաւ ու նահատակուեցաւ «Իբրեւ անկուսակցական»:

Իրականութիւնը այս ըլլալով հանդերձ, կարգ մը գրիչ շարժողներ, անուշա իրենց գրածները արժանադատուութեամբ հակակշտելու արժանապատուութենէն զո՛ւրկ պաշտօնեա- ներ, չվարանհասն գարձեալ շրջանցել իրականութիւնը, եւ յիշելով լենինեան օրերու «Լե- Պիճեան բայլշաւիկ»ին բայլշաւիկութիւնը, գրեցին նորէն:

«Այդ է նրա վեհութեան եւ անմահութեան հիմքը»:

Այսինքն՝ ա՛յդ, բայլշաւիկութիւնը:

Հարկ չկայ վէճի մէջ մտնել հետտրական նման անհասկացողութիւններ դուրս տը- ւող մարդոց հետ, միայն թէ՛ մենք չենք կարծեր, որ այդքան խախուտ է Չարենցի վե- հութեան եւ անմահութեան հիմքը...



Ն. ԶԱՐԵՆՅԱՆ

Ե Ղ Ի Շ Է

Զ Ա Ր Ե Ն Ց

Ե. ԶԱՐԵՆՅ. ՓԱՐԻՁ 1921ԻՆ

Իրաւ բանաստեղծը սն է, որ չզոհանալով իրերու, էակներու եւ աշխարհներու արտաքին երեւոյթէն, կ'ուզէ անցնիլ միւս կողմը եւ Տանթէի հետքերով պեղել ներաշխարհները եւ ապրիլ դժոխքներու եւ դրախտներու կեանքը: Որովհետեւ այդ արտաքին երեւոյթներէն անդին կը քողարկեն աստուր խորհուրդներ եւ աներեւակայելի իրողութիւններ:

Հարկաւ դէպի անձանօթը այս ուղեւորութիւնը յաջողութեամբ գլուխ հանելու համար պէտք է ըլլայ անելի քան հասարակ մահկանացու մը, տեսանալ՝ ինչպէս կը հրահանուի Ռեմպօ, որ ապրեցաւ եղանակ մը դժոխքին մէջ: Պէտք է օժտուած ըլլալ արտակարգ ձիրքերով, ներթափանցելու կարողութեամբ, եւ այնպիսի՝ զգայարաններով, որոնք կարենան հաղորդակցութիւն հաստատել անդենականներու այդ զարհուրելի գեղեցկութիւններուն հետ:

Ընդհանուր առմամբ այդ ուղեւորութիւնը կը սկսի դժոխքով, որ կը նկատուի տիեզերքի ստորերկրեայ, այսինքն՝ մարդկային տարողութեան հասողութեան սահմաններուն մէջ գտնուող կարեւորագոյն վայրը: Հին դրականութեան եւ առասպելներու մէջ, միշտ չի խօսուիր Ողիմպոսի կողերն ի վեր մաղլցող զերմարդերու մասին, բացի Պրոմէթէոսէն, որուն նպատակը այցելել չէր աստուածներու բնակարանը, այլ՝ դողնալ Արամաղդի հուրը:

Երբատարզ Չարենց իր գործին մասնակցութիւնը բերաւ իր ժամանակը յուզող դէպքերուն: Իր աշխարհը եղաւ Նայիրեան Երկիրը, որուն հանձնարեղ գաւակներէն մէկը պիտի դառնար: Տէրեանի եղանակով երգեց

անկարելի եւ մշուշաշային սէրեր, բայց չմոռցաւ իր անուշ Հայաստանը: Եղաւ ոսպմիկ, ուսուցիչ, մասնակցեցաւ քաղաքացիական կռիւներու, դարձաւ կուսակցական գործիչ, եղաւ կարմիր պոետ: Օր մը եղաւ ազգայնական, յաջորդ օրը՝ միջազգայնական:

Այսպէսով ան ծանօթացաւ աշխարհի տրտաքին երեւոյթներուն, չափեց տեսանելիին տպեղութիւնները եւ գեղեցկութիւնները:

Բայց այս աշխարհը նեղ կու գար իր թուրքներուն եւ երեւակայութեան համար, որովհետեւ դեղեցկութիւն բառը նոյն իմաստը չունի մահկանացուներուն եւ անմահներուն համար:

Գեղեցկութիւնը ինքնուրոյն յատկութիւն մըն է, որ կապ չունի Չարին կամ Բարին հետ: Չարենցի խառնուածքը զինք կը մղէր վայելելու Չարի ծաղիկները. եւ որովհետեւ ան չէր կրնար սահմել իր բնազդները, իջաւ Չարին սահմաններէն ալ վար: Գործեց դատապարտելի արարքներ, առօրեայ սնունդի վերածեց գոհակութիւնը, եղաւ իշխանութիւններու հետ, խնկարկեց անցաւոր մարդոց...

Երբ ցմբուր բմպեց Չարին պղտոր հեղուկը, իր իջած անդունդին խորերէն նմարեց երկինքի մութ թաւիշին վրայ գոհարներու պէս շարուած ստղերը, այն առեւն անդրադարձաւ, որ գոյութիւն ունէր ուրիշ աշխարհ մը, գոր ինք ոտիպուած էր նուաճել՝ քաւելու համար այն բոլոր արարքները, որ սեւ դրօշներու պէս կը ծածանէին իր շուրջը: Ու մագլցելով անդունդին կողմ ի վեր՝ հասաւ բնդարձակ տարածութեան մը վրայ, ուրկէ կը քալէին շղթայակիր ու արիւնջուայ ամբոխներ:

«Էպիֆանիան լուսաբաց»ները կորսուած էին անցեալին մէջ, եւ կարմիր պոետը հասկցաւ, որ խելագարուած բուն ամբոխները իր տարաբախտ եւ հզոր ժողովուրդին դաւակներն էին...

Հարկաւ այս տեսարանը դրախտին պայծառութիւնը չունէր, թէ՛ այս կարաւանը հրեշտակներու լեզուններէ չէր բաղկացած, այլ իր առջեւը ունէր մահուան ճանապարհէն դէպի յաւիտենականութիւն քալող հերոսներու եւ մարտիրոսներու բանակ մը:

Բանաստեղծը այնքան ազդուեցաւ, այնքան հիացաւ, այնքան զարհուրեցաւ, որ նոյն խիղախութեամբ եւ աւելի մեծ հանճարով երգեց Կոմիտասը, Միամանթոն, Միքայէլեանը եւ Չաւարեանը:

Եղիշէ Չարենց իր վրայէն թօթափած էր անցեալին տիղմը եւ հագած էր ծիրանի պատմուճանը, որպէսզի արժանի ըլլայ իր եղբայրներու ճակատագրին, որոնք մեռած էին իրենց խոչաններուն համար:

Երբ զգաց, որ կատարած էր բանաստեղծի իր առաքելութիւնը, Եղիշէ Չարենց իջաւ հրապարակ. աչքերուն մէջ կար երկնային արտաստօր հուր մը, որ կը փայլէր կրկէսներու մէջ դաղաններուն յանձնուած մարտիրոսներու աչքերուն մէջ...

Եղիշէ Չարենց ունէ մէկէն աւելի զիտէր, թէ ինչ էր դահիճներ ապտակելու հետեւանքը... զնդան, մահ ու մարտիրոսութիւն...

ՆՈՒՊԱՐ ՉԱՐԵՆՑԻ

Կ. Փ Օ Լ Ա Տ Ե Ա Ն

Չ Ա Ր Ե Ն Ց Ի Տ Ր Ա Մ Ը

Ի՞նչն էր հողեկան այն խորունկ տագնապը, դոր ան ապրեցաւ։
 Մեծ յուսախաբուքիւն մը։
 Տարիներով ամենամառ երազներ հիւսելէ յետոյ, հաւատալէ, դովելէ, իր ամբողջ հողիով փառաբանելէ յետոյ, ահա՛ այդ «կարմիր ապաղան» սեւ կը ներկուէր։ Մեծ Լենինին սեղ եկած էին Ստալինը, Բերլան։
 Ամենավատ բանակալական կարգերը վերադարձած էին, ճնշելով ժողովուրդը, ամէն ազատութիւն խլելով անկէ, խորտակելով ամէն յոյս եւ հողեկան ամէն թռիչք։
 Ահաւոր է յուսախաբութիւնը՝ բուռն, անկաշկանդ եւ մոլեռանգ հաւատացեալներուն։
 Ահաւոր է մանաւանդ անոնց հակադրեցութիւնը։
 Ահա՛ Չարենցի ամբողջ տրամը։
 Մնացածը երկրորդական է։ Պղտիկ հակառակութիւնները, սոյթաքուժները անկարեւոր են եւ հետեւոնք թերեւս այդ յուսախաբութեան։
 Չարենց երգեց հայ յեղափոխութիւնը, որովհետեւ ընդվզեցաւ ստալինեան արիւն-ռուշտ բռնակալութեան դէմ։ Ըսել ուղեց, թէ դարձած էր համայնավար ա՛յն յոյսով, որ անիկա բարեք պիտի բերէր իր ժողովուրդին, պիտի բարելաւէր անոր Ֆիզիքական եւ հոգեկան վիճակը։ Այդ յոյսով նոյնիսկ ինք յանձն առած էր ուրանալ անցեալը, հայ յեղափոխութիւնը։ Եւ ահա կը վերադառնային ուրիշ, աւելի վատ բռնակալութեան մը։ Հա՛յը, որ կար իր մէջ, ըմբոստացաւ, կոտորեցաւ՝ համայնավորին դէմ, որ դարձեալ կար իր մէջ։ Չարենց գիտակցեցաւ յանկարծ, թէ հայութիւնը իր միակ գեղեցկութիւնն էր, միակ մեծ, միակ մաքուր սէրը։ Ինք նախ եւ առաջ հայ էր, հայ բանաստեղծ։ Ինք ա՛ն էր, որ դրսծ էր իր ամբողջ հողին զննելով այս սողին մէջ։

Իմ կարօտած սրտի հաւար ո՛չ մի ուրիշ եեքիաթ չկայ...

Ուտո՛ր ան դրեց, պատգամեց, ինչպէս ըրած էին իր նախորդները, բանաստեղծ ու հայդուկ, ինչպէս ըրած էին բոլոր հայ հերոսները, կոխադաններու վրայէն պոսալով — «Հայ ժողովուրդ, քո միակ փրկութիւնը քո հաւաքական ուժի մէջ է»։

Թէ՛ չկայ երկու հայութիւն, հինը եւ նորը, նախահամայնավարը եւ համայնավարը, այլ կայ մէկ հայութիւն։ Քրիստոսափորը նոյնքան եւ աւելի մաս կը կազմէ հայոց պատմութեան, որքան սեւէ ուրիշ հայ։

Ա՛յս էր Չարենցի պատգամը։
 Կը կրկնենք, ամենամեծ յանդգնութիւնն էր այս, որ երբեւիցէ ազադակուած ըլլալ Ստալինի օրով։

Իայց ո՛չ առաջինն է եւ ոչ ալ վերջինը՝ հայ հողիէն փրթած։
 Չարենց չուզեց միայն մեծ բանաստեղծ մնալ։ Ուզեց հայ բանաստեղծ դառնալ։
 Վարուժանի մը պէս, Սիւսանթոյի մը, Սայաթ-Նովայի մը պէս ուզեց նահատակելի, բայց չզուաճանել իր ժողովուրդի սրբազան ուխտին — անոր ազատասենչ, անզուաճան հողիին։

Ուզեց, փափաքեցաւ, փնտռեց կարծէք ա՛յդ մտէր։ Ուզեց իր հայ բանաստեղծի պայծառ ճակտին կրել նաեւ մարտիրոսի լուսապսակը։
 Խորհեցաւ, թէ ա՛յդ է ճակատադիրը հայ բանաստեղծին։
 Ա՛յդ՝ անոր դերազոյն Երջանկութիւնը, անոր դերազոյն կամքը։
 Մեզի կը մնայ այսօր ընդունիլ մեծ թերթողին կամքը։
 Խոնարհիլ իր գործին սուջեւ, նաեւ իր կամքին։
 Խոնարհիլ երկիրդաճութեամբ, հաւատքով։
 Խոնարհիլ միայն։

Յ. Պ Է Ր Պ Է Ր Ե Ա Ն

Չ Ա Ր Ե Ն Ց

Դժուար է դրել տաղանդաւորներու մասին: Մա՛նաւանդ դժուար է արտայայտուիլ Հայ տաղանդաւորներու մասին, որովհետեւ անոնց կեանքի ու, մա՛նաւանդ՝ մահուան պարապանքը, ցանկալի կամ ոչ, տարբեր իմաստ մը տուած են իրենց գործին: Այս իրողութիւնը զարմանալիօրէն դրեթէ երեւոյթ վարձած է Հայ բանաստեղծութեան մէջ՝ Դուրեանէն մինչեւ Մեծարենց, Վարուժանէն մինչեւ Սիրամանթօ, Չարենցէն մինչեւ Սեւակ եւ ուրիշներ: Իրենց մահուան պարապանքը կարճէք նուիրապորժած են ընտրեալներու այս խումբին գործերը եւ, յաճախ, սրբապղծութիւն մը գործողի նման վարանումի մէջ կը զգանք, երբ կը փորձենք իրենց գրականութիւնը քննել առանձին, անջատելով դայն ստեղծուած միջոցէն, հեղինակին կեանքէն եւ այլ մասնաւոր պարագաներէ:

Հարցը առաւել եւս կը դժուարանայ, երբ բանաստեղծական ստեղծագործութիւն մը կը քննարկուի տարբեր տեսանկիւնէ, ամբողջ փորձ մը կամ յղացքներ կը հարցադրուին, որովհետեւ որոշ ժամանակաշրջանի մը քննադատութիւնը, այլ մեկնակէտերէ դիտած, իր խօսքը ըսած է արդէն, հեղինակաւոր անձնաւորութիւններ բեմերէ ու հանդէսներէ խօսած են այդ մասին, քանի մը յստակ նախազաստութիւններու վերածելով գործին ամբողջութիւնը: Բարեբախտաբար, միշտ այս կէտէն անդին է, որ մեծերը իրենց խօսքը կ'ըսեն, որովհետեւ իրենց աւանդը կարելի չէ սահմանափակել գրական որեւէ տեսութեան մէջ, որովհետեւ այդ բոլորէն դուրս կ'իյնան Իրարու յաջորդ սերունդներ տարբեր ձեւով կ'ընկալեն զիրենք, իւրաքանչիւրը իր յատուկ ձեւով արժեւորելէ ետք, ոչ թէ անսպասան իր խօսքը ըսած ըլլալու համար գրականութեան պատմութեան համար, այլ դայն նկատելով իր ազգային գրական ժառանգութիւնը, որ ուսանելի է եւ ստեղծուելիք գրականութեան ողնաշարը կը կազմէ:

Չարենց հայ քերթողութեան մէջ առանձին երեւոյթ է ո՛չ միայն իր բանաստեղծութեան տարողութեամբ, այլեւ իր հետեւած ուղիին սուր հակասութիւններով, այլազանութեամբ, փորձառական ու կշռութային փնտրատուքներով, եւայլն: Տէրեանի խորհրդապաշտութեամբ սկսած Չարենցը, իր նախորդին աւանդութիւններով արտադրելէ ետք, յեղափոխութեան յատուկ երգը փնտռելու ատեն, կը կորսնցնէ իրականութեան ու գրական մակարդակներու միջեւ տարածուող եզրերը, քաղաքական ու քարոզչական աշխատանքը կը խոռոնուի պատկերապաշտներու ու ապագայապաշտներու փնտրուելին (երբեմն մինչեւ իսկ սխալ կերպով ընկալուած), ուր յաճախ կը մթազնի պոեմներուն դիւցազներգական երեւակայութիւնը ու ողին, աւելի ուշ ամբողջութիւնը բերեղանալու համար զուսպ ու խոհական «Էպիֆանիա լուսաբաց»ին ու «Գիրք Գանապարհի»ին մէջ:

ԲԱՆԱՍՏԵՂԾԻՆ ԸՆԿԵՐԱՅԻՆ ԴԵՐԸ

Հաւանաբար պէտք է սկսիլ Չարենցի ամէնէն խոցելի բանաստեղծութիւններու շրջանէն՝ «Պոեզոգրաւուս»-ի մինչեւ «Կապիպազ» ու «Կումալուսնախ» (1922–1924), վեր առնելու համար իր ամէնէն հիմնական հարցերէն մէկը՝ բանաստեղծին խաղալիք դերը ընկերութեան մէջ:

Ստեղծագործութեան առաջին շրջանին՝ տարիքին ու նախասիրութիւններուն բերումով նման հարց չէր կրնար ըլլալ: Կար Տէրեանի ու խորհրդապաշտներու զօրակոչ արդեցութիւնը, երբեմն բարեխառնուած մեծարեցեան զգայնութեամբ եւ վարուժանեան արդային–հեթանոսական շունչով: Եթէ նրկատի ունենանք, թէ այս ժամանակաշրջանը կը զուգարդիպէր մեր պատմութեան ամենատխուր ու ողբերգական անգրոգարձներուն հետ՝ կը հասկնանք այդ շրջանի հողեփիծակը, որմէ դժուար թէ կարենար դուրս դալ Չարենց («Վերջին պահտն եմ ես»...), ինչ որ այս իմաստով մղիչ չէ: Աւելի ուշ կը ստանձնէ բանաստեղծ–տեսանողի կամ մարդարէի կերպարը (որ վիպապաշտներէն սկսեալ մինչեւ Ռէմպո ու Պօլլէո մասնաւոր հմայք մը ունեցած է) ուր՝ խելառար ամբոխներուն ընդմէջէն կը տեսնէր «Բրաձգէ քելերը կարմիր գալիքի», որ իր կարգին մասնաւոր խորհուրդի, ճշտումի ու խաչալի կը վերածուէր, շուտով վերածուելու համար իրականութեան՝ տարբեր կացութեան մը զիմաց դնելով զինք... Խորքին մէջ, այս բոլոր զգայնութիւնները բաւական խոն ձեւով կը ներկայանան այս շրջանի գործերուն մէջ: Հետաքրքրականօրէն, եթէ մէկ կողմ դնենք վայրկեանի մը համար պոետները, առանձին ուսումներ չարձանաղբելով հանդերձ, մինչեւ 1922 ստորագրուած ստեղծագործութիւնները, կազմաւորման եւ նոյն շրջադիւրին մէջ արտագրուած երանգներու հարուստ ալրաղանութիւն մը կը կազմեն:

Յեղափոխական կարգերուն հաստատման հետ Չարենցին եւ իր երիտասարդ սերնդակիցներուն համար հարց մը կը դրուի, որ նախապէս չկար: Նոր իրաւակարգին հաստատման հետ՝ իրենց զեր կը արուի ամբողջովին նոր մշակոյթ մը ստեղծելու, միաժամանակ, ամբապնդելու, քարոզելու ու տարածելու բանուորական իշխանութեան սկզբունքները: Հոսկէ է որ ծնունդ կ'առնէ ձախողած, սակայն հետաքրքրական փորձը...

Բանաստեղծութիւնը կապ ունի այն բոլորին հետ, որ առանձնապատու է, որսացուած չէ, դիւտ է, կը տարբերի ուրիշներէն եւ կու դայ անձնական փորձէն, մինչ քաղաքական ու քարոզչական «բանաստեղծութիւն»ը, իր տարած աշխատանքին իսկ բերումով, կը մեկնի ընդհանրականէն, տպաւորելու համար կը կրկնէ ու կը չափազանցէ շարունակ, գործածելով լեզու մը ու ոճ մը, որ մատչելի ըլլայ բոլորին: Այսպէս, եթէ նկատի ունենանք նաեւ, որ գործածուած պատկերները, ակնարկութիւնները եւ բանաստեղծութեան գործած տարբեր պէտք է ծանօթ ըլլան ընթերցողին, կը հասկնանք, թէ ինչ նեղ շրջադիւրի մը մէջ կը շարժի այսպիսի աշխատանք մը:

Չարենց, հակառակ որ չէ անդրադարձած այն վտանգին, որուն մէջ միորձուած է, հաւանաբար ուսական ժամանակակից բանաստեղծութեան հետ պուղահետ դժով մը, զեղարդիտական մտահոգութիւն մը կը միացնէ հարցին, այսպէս՝ խորհրդապաշտ զրականութիւնը կը նկատուի քաղքեան տապալած ընկերութեան բանաստեղծութիւնը, որուն զիմաց խոնդափառութիւն մը կը ծաւալի տպադաշտապաշտ ու պատկերապաշտ շարժումներուն հանդէպ: Բնականաբար, ճշգրտօրէն չենք դիտեր, թէ ինչ ձեւով սահմանուած են կամ կը սահմանուին ուսական տպադաշտապաշտութիւնը եւ պատկերապաշտու-



ՉԱՐԵՆՑ ԻՐ ԱՆՆԱՏԱՅՆՆԵԱԳՈՆ ՄԷՋ

Թիւնը: Չարենց, մասնաւոր դասախօսութիւն մը տուած է վերոյիշեալ երեք շարժումներուն մասին. այլուք՝ ճշգրտմի մը առթիւ կը յիշէ — «Լուսաշարակի միանգամայն տարբեր հասարակական բովանդակութիւն ունեցող գրական հոսանք է»(1): Չենք գիտեր եթէ ատրքերութիւնները միայն հասարակական գեղանկի վրայ են եւ եթէ նոյնը կարելի է ըսել ուսական պատկերասրահութեան մասին, սակայն «Երեք»ի յայտարարութեան մէջ, երբ թեքները առաջադրութիւնները կը կարգանք. կերտրկելու՝

- 1.— Ռիթմը որպէս շարժում.
- 2.— Պատկերը որպէս կենցաղի բնորոշում.

3.— Ո՞րք եւ լեզուն որպէս տուեալ նիւթի եւ խառնուածքի արտայայտութիւն(2). *Կենցաղային հարցերէն դուրս, կը տեսնենք, թէ Չարենցի ու ընկերներուն առաջարկները շատ այ հեռու չեն Փառնաի ու Յլինթի առաջադրութիւններէն, սակայն այս վերջինները կը պնդէին առանձնաշարակութեան եւ բարի տնտեսութիւն շարժ, ինչ որ անտեսուած է եւ նուազագոյնը ըտելու համար՝ խոցելի կը դարձնէ «Երեք»ի քերթուածները: Օրինակ մը տալու համար՝*

Արեւի նարնջէ փոնիկ
Տեսնում էք
Դուք
Թեք —
Երկաքէ պրոֆիլը իմ...

Ի՞նչ է՝
Սովոր էիք
Կուպեկնոց գրամի վրայ
Արքայի դեմք տեսնել...

Հոս, հազիւ պատկեր մը դանուած է, ընկերային մտահոգութիւնը անմիջապէս կու գոյ խաթարելու գեղարուեստական հաճոյքը, իսկ կրկնութիւնը՝ թելադրականութիւնը: Ներկայացուածը դեռ կարելի է այս շրջանի լաւագոյն գործերէն համարել:

Չարենց անմիջապէս կը զգայ մեկնակէտերուն թուլութիւնը: Առաջին շրջանին դոյն կը նկատէ արդիւնքը ստեղծուած կացութեան, այսինքն՝ յեղափոխութիւնը նոր իրականացած ըլլալով կարելի չէր համապատասխան մշակութային ասանդը կամ ենթահողը անմիջապէս պատրաստել(3):

Աւելի ուշ, հորցը շատ պայծառ էր իրեն համար. դրականութիւնները սունկերու նման ոչինչէն չեն բուսնիր, այլ մշակուած ենթահող մը ունին իրենց ետին: Հարկաւ կարելի է, իր կարծիքն իսկ մէջբերել այստեղ՝

Դաւաճանեցի մի գիշեր ես քեզ,
Ուզեցի ընտրել սիրուի մը սառ,
Որ ինձ երկաթէ երազներ երգէր
Եւ առանց սիրոյ ու առանց կրքի
Տանէր ինձ մի նոր, երկաթէ աշխարհ: (Մուսայիս)

Սակայն պէտք չկայ ծանրանալ այստեղ:

ՄԵԿՆԱԿԵՏԵՐ

Նման փորձի մը այսքան ժխտական անդրադարձր կարելի է բացատրել հաւանաբար իր մշակութային ենթահողին միջոցաւ: Այս շրջանէն անմիջապէս առաջ ինկող ստեղծագործութիւնները եթէ քննենք՝ «Տաղարան», Ուքնեակներ արեւիմ» կամ աւելի կանուխ «Ողջակիզուող կրակ»ը կամ «Գազէլներ»ը, կը տեսնենք, թէ Չարենց կը փորձէ դրսեւորուիլ բանաստեղծական շատ ծանօթ յղացքներով, նորոգելով դանոնք, անձնական կնիքը դնելով այստեղ: Միամտութիւն պիտի բլրար կարծել, թէ Չարենց կը կրկնէր Սայաթ-Նոյայի յղացքը, փաստօրէն «Ես իմ անուշ Հայաստանի»ն աւելին կ'ըսէ: Արդէն դիտենք, թէ միաժամանակ կ'ուշխտաի Տէրեանի շեշտային բանաստեղծական փնտառումներուն վրայ(4), արեւելեան ընկալումով իմացական քերթրաւծներ կը գրէ, եւ այլն: Չարենց քաջածանօթ էր թէ՛ ազգային եւ թէ՛ ժամանակակից բոլոր ուղղութիւններուն եւ, խոտնուածքին իսկ բերումով՝ կը նետուէր ամէնուր:

(1) Եղիշէ Չարենց «Երկերի ժողովածու» (Երեւան, 1967). էջ 96:

(2) Նոյն տեղը, էջ 554. «Գեղարարի երեք»:

(3) Օրինակ, կ'առաջարկէ որդեգրել Ստանտարտի գրական ծրագիրը (նոյն տեղը, էջ 97):

(4) Հետաքրքրական է այս մասին էդ. Ջրբաշեանի «Եռամսկի չափերը XX դարի հայ պոեզիայում» յոդուածը: «Քաներ երեւանի համալսարանի», 1975, քիւ 1, էջ 121-139:

Այս բոլորը «Էլիփսական լուսարաց»ին ու «Գիրք ֆանապարի»ին մէջ հասան ամբողջովին բաց ձեւի մը: Ատկէ առաջ, հետաքրքրական է նշել, թէ իր տաղանդն է, որ առանձին փայլատակումներով, ստեղծագործական ամէնէն գէշ շրջանին իսկ, — եթէ 1922էն 24ր համաձայնինք այսպէս համարել, — իր տաղանդը դինք այլուր կ'առաջնորդէ: Այսինքն՝ սխալ ընթացքի մը մէջ գտնուած իսկ միջոցին, տաղանդը կը յաջողի դրական բան մը ըսել տալ հեղինակին մասին: Օրինակ, 1922ին գրուած «Չարենց-ֆամէ»ն աննախընթաց է իր ժամանակաշրջանին համար. արեւմտահայ կամ արեւելահայ բանաստեղծութեան մէջ ոչ ոք ինքզինք այս ձեւով գրած է իր դրութեան մէջ կամ այսքան ուժգին պայթեցուցած է իր ներքին կենսադրութիւնը: Բանաստեղծը, ինքն իր աչքին, հերոսն իսկ է: Միաժամանակ կը դրսեւորէ տարածուած եւ տարբեր տարողութիւն ստացած ես մը, որ հարազատ է գործին դիւցազնական միջոցառման: «Չարենց-ֆամէ»ն իր յղացքով ամբողջովին կը տարբերի հեղինակին նոյն ժամանակաշրջանի ստեղծագործութիւններէն: Նման անուկընկալներու նախընթաց տուած է Չարենց: «Տանթէական առասպել»ը, գրուած 18 տարեկան տղու մը կողմէ, այնպիսի ժամանակաշրջանի մը, երբ դորեկ աղբեցութիւնը կը կրէր Տէրեանի, ոստում մըն է, ազատադրելու շրջապատի քննադատական արժէքներէն եւ ընթացիկ ճաշակէն: Գուցէ իր ստեղծագործական բեղունութեան, իր յարատեւ փնտռումներն եւ խառնուածքին իսկ պատճառաւ, Չարենց՝ մինչեւ իր ակամայ առանձնացումը, առիթ չունենար դանդաղելու եւ իսկապէս վերաքննութեան ենթարկելու իր փորձերը: Իր փոթորկալի կենցաղը, բնկերային նպատակակէտերը, գրական ու հասարակական հետաքրքրութիւնները, կը թուի, թէ հարկ եղած ժամանակը չէին ձգեր ներամփոփուելու:

Յաջորդ բաժնին շոնցած՝ կ'արժէ խորհրդածութիւն մը կատարել այստեղ: Մինչեւ իսկ Չարենցի նման տաղանդաւոր բանաստեղծ մը շատ աւելի հանդիստ կը ստեղծագործէ ծանօթ յղացքներով, — հակառակ որ անոնց մըրայ իր ուժեղ անհատական կնիքը կը դնէ եւ կարեւոր նուաճումներ կ'արձանագրէ, — քան փորձառական փնտռումներու մէջ, որոնք միշտ ալ ենթակայ են ձախողութեան: Սակայն երկար աշխատանքէ ետք տարբեր մակարդակ մը կը նուաճէ՝ իր անձնական փորձին շնորհիւ... Ինչ որ կը նշանակէ, թէ շատ աւելի դիւրին է դասական կամ ծանօթ յղացքներով ստեղծագործել, եւ կամ՝ նորարական փորձը կարելի չէ նկատել իրրեւ դժուարէն փախուստ մը անպայման:

ԷՊԻՔԱԿԱՆ ԼՈՒՍԱՐԱՅ

«Տանթէական առասպել»էն մինչեւ «Մահուան տեսիլ» դիւցազնական-ողբերգական դիժ մը եղած է Չարենցի բանաստեղծութեան մէջ, ներքին ճամբորդութեան մը նմանող, ուր մահուան լոյսին տակ, կեանքի ամենախորանդարձները ու ճամարութիւնները գիտակցութեան կու գան: «Մահուան տեսիլ»ը ամբողջ հաւաքականութեան մը իրականութիւնը կը քննարկէ, նոյն խարխախէն մեկնած:

Հոն՝ ուր Չարենցի բոլոր ընկերային-դեղագիտական առաջադրութիւնները ձախողած են, այս մեռեալ կէտէն կը սկսի նոր ճամբորդութիւն մը, որ աւելի ճիշդ պիտի բլար կոչել դիւցազնական ֆախերգանք: Իր վերջին

երկու պլերբերը եւ ասոնցմէ մ'անուանդ «Էպիլեմական լուսարաց»ը պէտք է կորզուի իբրեւ մէկ ամբողջութիւն:

Արեւելեան իմաստով փիլիսոփայական, մտախոհական երանգ մը յըստակ արտայայտութիւն պատճ է իր բանաստեղծութեան մէջ: Ստեղծագործութիւնը զրոյց մը դարձած է, ուր անձնական ու ընդհանրական մտահոգութիւններ, գեղարտական հարցեր, անդրադարձներ կեանքի սրոշ երեւոյթներուն վրայ, իրարու կը յաջորդեն, կը միաձուլուին: Հոս եւ աւելի ուշ, Չարենց յաճախ կը վերադառնայ մանկութեան կամ իր անցած կեանքին, սակայն տարբեր, կարելի է ըսել խոստովանական շեշտով մը... Իր երկար տողերը համապատասխան կշռոյթ մը կը ստեղծեն արդէն: Հաւանաբար իր դըլ-խաւոր արժանիքը այս շրջանին իր առարկայական վերլուծումն է այս բոլորին, զուսպ բռտերու ու տողերու ստեղծած զոյախութիւնը, որ եզակի է ու զյլաւոր տարբերութիւնը ցոյց կու տայ իր նախորդ շրջաններու քերթողութենէն:

«Դիրք քանապարհի»ն կը խորացնէ ահօսը: Անանձնական կամ առարկայական գիծ մը, որ կը քննարկէ իր հաւաքականութեան պատմութիւնը («Մահուան տեսիլ», «Պատմութեան քառուղիներով»), առասպելը («Սասունցի Դաւիթ»), ներկան («Ա.Բիլլէ^oս քէ Պիերո») եւ անհատին ու արուեստագէտին յարաբերութիւնները («Դէպի լեւոտ Մասիս»): Տակուին, իմացական շեշտը առանձին տեղ պատճ է ռուպայիներով ու բէյթերով եւ ոչ թէ պատահական ձեւով, որովհետեւ արեւելեան իմաստով արեւելուած իմացական-փիլիսոփայական դիմը ամբողջովին կը դրսեւորուի իր տաղերուն ու խորհուրդներուն մէջ: Անոնք կեանքի լիցրատրումէն ու փորձառութենէն եկած իմաստութեան ձեւ մըն են, որոնք հոսթիւնը կը կազմեն այս բանաստեղծութիւններուն: Հոս, Չարենց, շատ իւրայատուկ ձեւով միաձուլած է իր սզգային, արեւելեան ու արեւմտեան մշակոյթները, իւրացուցած է: Պարզ է, որ երկար բիւրեղացումէ մը կու պան այս բոլորը եւ ամբողջովին սիւսլ պիտի ըլլայ արեւմտեան որեւէ քննադատական կամ գրական տեսութեան արժեզանքով քննարկել զանոնք: Անոնք պարզապէս կը պարտադրեն իրենց առանձին ձեւը:

Չարենցի նախորդ շրջաններու փորձերը կարելի էր կրկնել եւ կրկնուեցան: Այս շրջանը կարելի չէր եւ մնաց առանձին, որովհետեւ հասած էր այնպիսի իւրայատուկ ամբողջութեան մը, որուն վրայ կարելի չէր ո՛չ բան մը աւելցնել եւ ոչ ալ պակսեցնել:

Ինչպէս սկիզբը անշատեցինք գործը անձին եւ մահուան պարագաներէն, հիմա կը վերադարձնենք զայն իր ամբողջութեան՝ մարդուն: Յեղափոխական՝ իր խոտնուածքով ու բանաստեղծութեամբ Չարենցին, որ իր կեանքի, դործի ու մահուան եռանկիւնին մէջ արդի ժամանակաշրջանի մեր ապրող առասպելը ստեղծած է:

ՅԱՐՈՒԹԻՒՆ ՊԵՐՊԵՐԵԱՆ

Հոկտեմբեր, 1977

ԿԱՊՈՒՏԱԶԵԱՅ ԱՌԱՍՊԵԼ...

Յարդագողի գանապարհորդ ,
 Կորգեցիք ոլորտներէն անմահութեան
 Երագներ կապոյտ , երգեր արեւշող ,
 Կորգեցիք հեռատառմներէ անմատոյց
 Թոյրը անբջական ձգտումներուդ եռախորհուրդ՝
մեր սրտերուն բեւեռուած

Դուն՝ արեւային սիրոյ երգիչ ,
 Արեւապաշտ գգայարանք ,
 Արեւային յասկանիշներով բնդելուգուած
արիւնի գիտակցութիւն :

Դուն հեռացար , գուցէ երբեք չգգալով
 Թէ կրնայիր անցնիլ
 Քարերու քառածայն յիշողութենէն ,
 Ահաբեկուած սէրերուդ ,
 Եւ զլիտադիր իզձերուդ
ննչող վայելչութենէն ալ հեռու :

Հիմա վերյուշ ես արդէն
 Ու կը յառնես շուրքերէն ժամանակի
 Մտաբերուած երգի պէս ,
 Պահելով վարքագիծը քնարական
 Ապրումներուդ բնդհատուած վանկերուն :

Մտաբերուած երգի պէս
կը բօքափես
 Եղերայուշ խոհերուդ հոլովոյքէն ,
 Ուր երագուած պահը խոռովք մըն է ընդերկրեայ՝
 Անյայտ մանրամասնութեամբ հունաւորուող :

Երագուած պահը կը փոխակերպուի
 Պակադիր պահերու վայելչութեան ,
 Կ'ըլլաս՝
 Մարմնատեսիլ գմայլանք ,
 Երագայինը իրականին բարեխառնող դաշնութիւն ,
 Կապուտաչեայ առասպել...

ՅԱԿՈՒ ՄԱՆՈՒԿԵԱՆ

Բազմա հարյուրներ նշխարներ

ԿԱՍԱԻՈՐԱԿԱՆ
ԿԵՆՍԱԳՐՈՒԹԻՒՆ...

Իր կենսագրութեան մէջ Եղիշ Զարենց անի նաեւ կամաւորական բաժին մը, որ տարբեր գրիչներու տակ բաւական չարչարուեցաւ, այլ երբեք չզարգարանուեցաւ: Զարենցի կենսագրիչները կարծես կը վախճան խորանալ այդ նիւթին մէջ, իսկ ոմանք, ի հարկէ անպատասխանատուները, իսկ անպատասխանատուներու սովէն երբեք չէ տառապած հայրենի մեր մասուլը, անպատասխանատուները կամաւորական զինքերէն Զարենցի շուտափոխ նահանջը կը վերագրեն «Վամաւորական շարժումին հակաժողովրդական Էոքսիմը» հասկցած ըլլալու պատանի բանաստեղծին կանխահաճ իմաստութեան:

Իր «Երիտասարդ Զարենցը» գործին մէջ Հրոնտ Քամարզեան ինք ևս էջ բացած է Զարենցի կամաւորական կենսագրութեան, բաւական լոյն ծաւալի մը վրայ:

Քամարզեան 1915ին Քանաքեռի մէջ կազմուած կամաւորական Դրդ պունդին հետ մինչեւ Վան կը տանի բանաստեղծը, կը բանայ աշխարհ «հայրենի ոգու առեղծուածները եւ հազարաւեայ գեղեցկութիւնները» և նոյն ատեն կը դնէ զայն տղաներու դէմ, որոնցմէ մեծագոյնը, ըստ պատմիչին, նահանջներու եւ առջիկապատմաներու միջոցով Հայաստանը առանց հայու մղելու ցարական բանակի դիւանադիտութիւնն էր, բայ որում՝ «Ռուսական բանակի հրամանատարութիւնը կամաւորական ջակատներին դուրս է անում Արեւմտեան Հայաստանի սահմաններէ, նրանք ստիպուած անցնում են Պարսկաստանի սահմանը: Երկիրն ամբողջովին մնում է անտէր»:

Կրնայ ըլլալ, որ կամաւորական որոշ ջոկաններ ապրած ըլլան դիւանապիտական այդ դաւին հետեւանքները և անցած ըլլան Պարսկաստանի սահմանը, անոնց հետ եւ Զարենց, բայց բաւական մեծ համարձակութիւն կ'ուզէ մասնակի գկարեւու տարիքով ընդհանրացումներ ընել եւ ըսել, որ «Երկիրն ամբողջովին մնում է անտէր», որովհետեւ ցարական բանակներուն ատեն նման ամբողջական դժբախտութեան մը չենթարկուեցաւ մեր Երկիրը:

Քամարզեան հետեւեալ պարբերութեամբ կ'աւարտէ Զարենցի կամաւորական կենսագրութեան բաժինը.

«Զարենցի աչքի առաջ ընկնում էին հինաւորք քաղաքները՝ վանք, Սարիզամիշը, Էրզրումը, Կարսը, հրկիզում են գիւղերը: Սարսափահար նախնիների պէս աշխատաւոր ժողովուրդը իր այրուող արտերի միջով փախչում էր դէպի Ռուսաստան: Ետ էր փախչում նաեւ ամօքահար զինուորը, անգորացած քաղաքական անկումների առաջ: Խոր հիասթափութեամբ Զարենցը 1916 թուի ձմրանը վերադառնում է Թիֆլիս, ապա՝ Կարս»:

Իսոյց այս ի՞նչ պատմութիւն է, հետադարձ ինչ յորդում: Փոսֆեստօրը դիրք պրած ատեն ալ որդեօք ինքզինք այնքան ազատ կը զգայ, որքան կը զգայ կարգ փոխելու համար բերան չբանալու խոհմութեամբ իրեն նայող ուսանողներուն առջեւ:

Պատմական պատասխանատուութենէ հիմնովին գուրկ պէտք է ըլլայ մէկը, կարենալ ըսելու համար, որ 1916ին ինկան Վանը, Սարիզամիշը, Էրզրումն ու Կարսը, ու ինկան Զարենցի աչքին առջեւ, երբ Զարենց, ինչպէս կ'ըսուի վերը, «1916 թուի ձմրանը» արդէն Թիֆլիս կը գտնուէր, ապա՝ Կարս:

Այդ աղէտները պատահական Զարենցի Թիֆլիս հասնելէն ուղիղ մէկուկէս տարի ետք, 1917ին, Հոկտեմբերեան յեղափոխութենէն յետոյ, Լենինի «Գէպի տուն» կոչին հետեւանքով քայքայուած ուսական բանակներուն գէպի տուն նահանջած օրերուն, Երբ Զարենց նոյնիսկ Կարսի տունէն հեռացած էր և Տօր ու եղբայրներուն հետ նոր տուն կը շինէր Մոյկոպի մէջ...

Զարենցի կամաւորական օրերը, նահանջը, կամաւորական գունդերու նուերական յանձնատուութիւններէն հետոյ կատարած թափառումները, այդ թափառումներուն հետեւանքով սարգարապատեան բախտորոշ խոյանքներէն անմասն մնացած ըլլալու հանգամանքը, ինչպէս նաեւ Կարմիր Բանակին հետ նոյն օրերուն հետոյ հետունքը քաղաքացիական կռիւներու մտանակցած ըլլալու «պարճանքը» իր կենսագրութեան միւս մուկ կէտերուն յար եւ նման մթութիւններ կը բովանդակեն եւ քաղաքական դիտաւորեալ իմաստութիւններով չեն լուսարանւելիր...

Եթէ սարգարապատեան սիրապարծութիւնները բան մը կը նշանակեն մեզի համար, ապա ուրեմն պէտք է լրջութեամբ քննուի կամաւորական շարժումէն, հայոց հայրենիքի ու ժողովուրդի այն օրերու այդ միակ յոյսէն Զարենցի ձեռնթափութիւնը, եւ այդ լոյսին տակ՝ ըսուի հայ մարդուն, թէ ի՞նչ կ'արժէ ցարիցիներան ամբողջային իր կենսագրութիւնը...

ՄՈՍԿՈՒԱՅԻ ՄԷՁ...

Քաղաքի հարցումներ
և շրջաններ

Ինչպես յայտնի է գրականության պատմության, 1935 Ապրիլին, Հայաստանի գրողներու վարչութեան մէկ նիստին կը բննարկուի Չարենցի մէկ յայտարարութիւնը (Վեգի անծամօք) եւ կ'որոշուի հետապնել զինք գրողներու վարչութեան կողմէն եւ միութենէն:

(Փակագիծի մէջ ըսենք, որ գրողներու միութենէն իր վտարումը նոյն օրն իսկ Չարենց նիւթ զարձուց բանաստեղծութեան մը՝ «ՆԵՐՔՈՂ ԵՐԳՈՂՆԵՐԻՆ, ինձ խորհրդային գրողների միութիւնից վտարելու առթիւ», ՏՏ ասօցերէ բաղկացած աստապալեց վաւերացուցած մը, որուն ՅՏ տողը միայն հաղորդուեցու ընթերցողին եւ մնացեալը դժուար թէ մօտիկ ապագային լոյս տեսնելու բախտ ունենայ...)

Յաջորդ ամսոյն, Մոսկուայի մէջ, կը կազմակերպուի հայ բանաստեղծութեան նըւերում տանօրեակ, ու Մոսկուա կը մեկնին բոլոր հայ բանաստեղծները, բացի, անշուշտ, Եզիշէ Չարենցէն:

Այդ առիթով, Մոսկուայէն վերադարձող բանաստեղծներու ջոկատէն Վազարձակ Նորենցի եւ «տունեմայ» Չարենցի միջեւ տեղի կ'ունենայ սա խօսակցութիւնը.

— « Այ տղայ, գնացիք Մոսկուա, հայ պոետիան առանց Չարենցի ցոյց տուիք եւ եկա՞ք, — հեղանարով հարցրեց նա:

— « Այո, գնացիմք Մոսկուա, ցոյց տուցիմք Չարենցի պոետիան եւ եկամք, — ասացի ես »:

Գեղեցիկ է անշուշտ Չարենցի հարցումին տրուած պատասխանը, բայց նաև ճշմարիտ է արդեօք, թէ անիկա եւս մաս կը կազմէ չարենցեան զարդեր ունենալու համար այն օրերուն ըսուած եւ հետագային դրի անուած հաճախասութիւններուն...

Օղին մէջ կազմուած կասկած մը չէ ասիկա, հիմք ունինք նոյն առիթով Խորհրդային Գրողներու կրկնօրէին՝ Հայաստանի գրողներու միութեան նախագահ Գրառտամատ Տէր-Սիմոնեանի կարգացած զեկոյցին վերջին մասը, հետեւեալը, որ լոյս տեսաւ նաև «Պրաւդա» թերթին մէջ.

«Եզիշէ Չարենցը իր ստեղծագործութեան առաջին իսկ օրից եւ, դժբախտաբար, մինչև անհետանալու օրերը. գտնուում է ինձ հայկական նացիոնալիստական գրականութեան ազդեցութեան տակ: Եթէ Եզիշէ Չարենցը լրջօրէն չմտածի, թէ ո՛ր է տանում նրան իր ստեղծագործական գիծը եւ ինչպիսի տեղեկանք ունեն նրա ստեղծագործութիւնները, եթէ նա առաջումն նման չլսի, թէ ի՛նչ է ասում նրան խորհրդային ֆինադատութիւնը, ապա նա կարող է դառնալ դասակարգային թշնամու գաղափարական դիրքերի արտայայտիչը»:

Մոսկուայի մէջ Չարենցի հանդէպ ցուցաբերուած վերաբերումը ա՛յս էր, դրաստամատեան էր եւ ոչ թէ նորենցեան:

Արդէն չոր տրամաբանութիւնը կ'ըսէ, որ եթէ Նորենցի գրածին տուն տուող ճշմարիտ պատճառներ ըլլային, ապա ուրեմն տուն չէին «մտնար» Չարենցը, կը տանէին իրենց հետ:

Նորենցի պէս, Չարենցի մասին յուշեր զրկց նաև իր ընկերը, Ալալում, որ Նորենցի պէս իրականութեան անյարիր բաղձաթիւ հոտուածներ սահեցուց էջերուն մէջ: Տխուր է գրողի այլ բոլորով:

Չենք զիտեր ինչու այս բանաստեղծները, նոյնպէս տառապած, իրենց մասին անհաճոյ մատնանշումներ ընելու հարկադրանքին տակ զրին ընթերցողը, չենք զիտեր ինչու:

Կը մնայ հօս եւս ընդդէմ, որ Գրառտամատ Տէր-Սիմոնեան եւ Չարենցը գրողներու միութենէն վտարող եւ գրական պատուիրակութիւններէ դուրս ձլող միւսները անճիշդ չէին իրենց կրասումներուն մէջ, ճիշդ էր Չարենցի գրականութեան տուած իրենց բնորոշումը, ա՛յդ էր Չարենցի ճշմարտութիւնը, այն ուրիշ ինքիր, թէ ինչ կշիւ կու տային նման ճշմարտութիւններու եւ ինչպէս կը վարուէին ճշմարտներու հետ...

Երբեք պէտք չէ մտքէ հանել այս պարպան:

Ստալինեան մաքրագործումներուն տեսն Չարենց ընա՛ւ չզրպարտուեցու, այլ ամբաստանուեցու միայն, համայնավարներուն կողմէ աններելի համարուած շօշափելի տըւեալներու վրայ, ազգային իր շեշտուած դիմապծին անհերքելի պատճառներով:

Տիրող մասնութեան անարկու մթնոլորտին մէջ «Գիրք ֆանապարիս» կեանքի ոչ մէկ ճանապարհ կը ձգէր իրեն...

ԾԱՆՕԹՈՒԹԻՒՆՆԵՐ «ԳԻՐՔ ԶԱՆԱՊԱՐՅԻ»Ի Մ Ա Ս Ի Ն



Ե. ԶԱՐԵՆՑ, 1933ին

Եղիշէ Զարենցի գրականութեան եւ տնօրէն պատմութեան մօտէն հետեւած անձերը գիտեն, որ 13 նոյեմբեր 1933ին գումարուած Հայաստանի համայնալար կուսակցութեան մէկ նիստին սրտաւանդ արգիշել տալարուած եւ արդէն կազմուած «Գիրք Բանապարհի»ի հրատարակումը, ահագին սակնուվրայութիւն ստեղծելով գրական թէ կուսակցական շրջանակներէ ներս:

Չորս-հինգ ամիսներու վրայ երկարող չարաշարիչ կեանք մը պատճառելէ ետք Զարենցին, «Բերիայի հայաստանեան զործակալները» 1934ին արտօնեցին «Գիրք»ին հրատարակումը, խաչելութեան նոր ճանապարհներու դատարարելով հեղինակը, կարգ մը կտորներ դուրս ձղելու եւ տնոնց տեղ ուրիշներ տեղափոխելու ծանր պայմաններով:

«Բերիայի հայաստանեան զործակալներ»ու սարքած այս դուրս հետեւանքով «Գիրք Բանապարհի»ն ունեցաւ երկու տարրերակ, 1933 թուակիրը, որմէ սակաւաթիւ օրինակներ միայն փրկուեցան, եւ 1934 թուակիրը, որ ըստ տեսաւ. 5 հազար տպագրանակով:

Երկրորդ տարրերակէն դուրս բերուած բանաստեղծութիւնները թիւով երեք են, Ալեքսանդր

Միանիկեանի նուիրուած քառաեկը, «Եօրը խորնարդ քաղաք կառուցողներին» եւ «Աֆիլէ»ս, քէ Պիեթրօ խորալուծ 46 էջոնց սրտմտ-վիպերգը: Անտէրնը՝ Բերիայի ղեմ գրուած ըլլալու. ենթադրութեամբ մը կը մեղադրուէր, երկրորդին մեղքը՝ աղգային բուսն խորքն էր, իսկ երրորդին պատճառը, ստալինականութիւնը պատկերացրնոց սահարեկչական իր բնոյթով՝ աւելի բարդ էր եւ որուն պիտի անգրողանանք աւելի ուշ եւ աւելի լայն բացատրութիւններով:

Ինչորոյ տուրկայ բանաստեղծութիւնները տանամուկներ չարունակ մնացին ծանր փականքի տակ եւ Հայաստանի մէջ լայն հանուկան բանաստեղծին նահատակութենէն երեսունմէկ տարի ետք միայն, 1968ին, երկերու չորրորդ հատարի էջերուն:

Երկար է «Գիրք Բանապարհի»ին ողիսականը եւ զուէ մեղի, որ տեղի տնձկութեան պատճառով հոս-հոն ցրուած հատուկտոր լուրերէն աւելի լայն տեղեկութիւններ չկրցանք հաղորդել այդ մասին:

Ստորեւ՝ Զարենցի գլուխ-գործոցին Երկրորդ տարրերակէն դուրս մնացած անիծեալ բանաստեղծութիւններէն երկուքը

Ա. Մ.

Ե՛լ, բարձրացի՛ր դագաղից եւ կրկի՛ն երեւայ աշխարհին:
Աներեք, բրոնզեայ քո ձեռքով կրկի՛ն մեր ընթացքը վարիր:
Դու կաշուած էիր լինելու ղեկավար երկրի ու դարի. —
Կեց տրուած էր ոսկեա՛յ մի բեկոր լեցնիմեան վսե՛մ հանճարից: —

Ե. ԶԱՐԵՆՑ

1933 IV 15

ԵՕԹԸ ԽՈՐՀՈՒՐԴ ՔԱՂՍՔ ԿՈՒՌՈՒՑՈՂՆԵՐԻՆ

Ո՛վ դուք, որ գալու էք վաղը կառուցելու այստեղ,
Այս ամապատում ամայի բազմաժխոր քաղաք. —
Ահաւասիկ գրում է ձեզ համար մի անյայտ բանաստեղծ
Եօրը խորնարդ, որ շինէ՛ք ձեր կառուցման շաղախ:

Առաջինը — ո՛ւր էլ որ կամենա՜մ, թէկուզ անապատում,
Շինել ձեր նոր ֆաղափը — չմոռանա՛մ երբեք,
Որ այդտեղ, այդ անապատում անգամ, աւագներում նրա անհատնում
Երբեմն կանգնել եմ ու խորտակուել բազմաթիւ ֆաղափներ ու բերդեր:

Քանզի, — եւ չմոռանա՜մ դուք այս, ո՛վ ապագայի որմնադիրներ՛ր, —
Աշխարհի մէկ ծայրից մինչեւ միւսը, արեգակի ներքոյ՝
Զկայ եւ ո՛չ մի թիզ հող, որ բազմիցս անգամ մեր նախնիները
Զլինեն հերկած ու կործանած իրենց ստեղծարար ձեռքով:

Ուրեմն, ո՛վ առաջնորդներ՛ր, սկսեցէ՛ք վարել
Զեր ցանկացած վայրում երեք թիզ հող —
Մինչեւ հանդիպի ձեր բլունգը մի դագաղի ֆարէ
Եւ դուք հանէ՛ք այն յաւարից՝ ձեր ձեռքերով կերտող:

Քայց հողի խորշերից այն հանելուց առաջ
Քարձրացրէ՛ք նախ դուք ֆարէ կափարիչը
Եւ տկնեցէ՛ք գտնել, թէ հանգչելուց առաջ
Ի՛նչ ուղղութեամբ եմ նրա կոպերն իջել:

Եւ ապա այդ նո՛յն ուղղութեամբ չափէ՛ք հարիւր կանգուն
Եւ հիմնեցէ՛ք այդտեղ ֆաղափի աշտարակը,
Եւ գամեցէ՛ք ապա աշտարակի գլխին
Զեր ժամացոյցը կարմիր,
Որ նրա գարկերին ունկնդիր՝
Սերունդները նշեն գալիքում
Իրենց աշխատանքի եւ խոնջէնքի ժամը: —

Եւ բարձրացէ՛ք ապա աշտարակի կատարը
Եւ նայեցէ՛ք դուք նախ դէպի հարստ,
Ապա դէպի հիւսիս, ե՛ւ արեւմուտք, ե՛ւ արեւելք,
Որ որոշէ՛ք սահմանը ֆաղափի ու նրա
Պարիսպների խոյանքը դէպի վերեւ:

Եւ եօթերորդ խորհուրդը, որ տալիս եմ ես ձեզ —
Կառուցելուց առաջ ձեր ֆաղափը՝
Այրեցէ՛ք մագաղաթեայ մարմինը ննջեցեալի
Եւ մոխիրը նրա հագարամեայ
Խառնեցէ՛ք ձեր ապագայ պարիսպների ֆարին: —
Եւ դագաղը նրա մարմնարիռնեայ,
Որպէսզի տարածուի համբաւն ամէնուրեք —
Ապագայի բոլո՛ր եկուսներին ի տես՝
Քաղաքի ոկեֆանդակ դռների մօտ դրէ՛ք: —

Քանզի մեռեալների մոխիրն է ամենապինդ կիրը,
Ամենապինդ շագախը եւ առհաւատչեան, —
Եւ նրանով է դառնում երկիրը — երկիր,
Եւ ժողովուրդը — ժողովուրդ, եւ գալիքը — գալիք՝ անյողողող ու անմատ...



ՊԼԱՍՏՈՒՆԻ ԳՆԱՆՈՒԹՅԱՆ
 ԳԵՐԱՆՈՒԹՅԱՆ ԳԵՐԱՆՈՒԹՅԱՆ
 ԳԵՐԱՆՈՒԹՅԱՆ ԳԵՐԱՆՈՒԹՅԱՆ
 ԳԵՐԱՆՈՒԹՅԱՆ ԳԵՐԱՆՈՒԹՅԱՆ
 ԳԵՐԱՆՈՒԹՅԱՆ ԳԵՐԱՆՈՒԹՅԱՆ
 ԳԵՐԱՆՈՒԹՅԱՆ ԳԵՐԱՆՈՒԹՅԱՆ

**

Մի անգամ նա մի թեթեւ ակնարկով
 Հասկացրեց, որ ես իր «Գիրք Գանապարհի»
 ձեռագրերի իմ համաձայնութիւնը եւ
 երկարատեւ զրոյցից յետոյ ձեռնարկեցի
 այդ գործը:

Շատ սիրով, երկար եւ անքուն դի-
 շերներ աշխատեցի այդ գրքի իւրաքան-
 չիւր էջի վրայ: «Գիրք Գանապարհի»
 գրքի ձեռագրման եւ պատկերազարդման
 ընթացքում Չարենցը վերցնում էր մա-
 տիւր եւ իր մտքերը արտայայտում նը-
 կարչտիւր մտաւոր գծերով: Այդպիսի
 դէպքերում ինձ թւում էր, որ իմ դէմ
 նկարիչ Չարենցն է նստած: Պէտք է խոս-
 տոյանեմ, որ միայն Չարենցի օգնու-
 թեամբ եւ խորհուրդով «Գիրք Գանա-
 պարհի»-ի ձեռագրումն ու պատկերազար-
 դումը նրա կողմից հաւանութեան արժա-
 նացաւ, և ստացուեց օրիգինալ, ուշա-
 դրա աշխատանք: Չարենցը աչքերը կը-
 կոցելով դիտում էր իր ժողովածուի ձե-
 ւտորումը, պատկերազարդումները եւ
 դժուարակութեամբ կրկնում. «Իսկ եւ իսկ
 իմ ուզածն է ստացուել, շնորհակալու-
 քիւն, վարպետ»:

Դա ինձ համար մեծագոյն շոյանքն
 էր, որ այդպիսի մի բժախնդիր հրատա-
 րակիչ-զրոյց զո՛հ էր մնում իմ աշխա-
 տանքից: Ահա թէ ինչու Չարենցի Պե-
 հրատում ունեցած դարձունէութեան օ-
 րօք իրար յետեւից լոյս տեսան օրինա-
 կելիօրէն ձեռագրուած եւ նկարազարդ-
 ւած բազմաթիւ գրքեր:

Չարենցը մեծագոյն ուշադրութիւն
 էր դարձնում գրքի իւրաքանչիւր գլխի
 պատշաճ ձեռագրման վրայ: Նրա համա-
 ձայնութեամբ այդ բոլորը արուեց էր-
 զացեգաւմնայով: Իմ կեանքում ոչ մի
 դիրք ինձ այնպէս չի համակել, ինչպէս
 Չարենցի «Գիրք Գանապարհի»ն: Դա իմ



ՊԼԱՍՏՈՒՆԻ ԳՆԱՆՈՒԹՅԱՆ
 ԳԵՐԱՆՈՒԹՅԱՆ ԳԵՐԱՆՈՒԹՅԱՆ
 ԳԵՐԱՆՈՒԹՅԱՆ ԳԵՐԱՆՈՒԹՅԱՆ
 ԳԵՐԱՆՈՒԹՅԱՆ ԳԵՐԱՆՈՒԹՅԱՆ
 ԳԵՐԱՆՈՒԹՅԱՆ ԳԵՐԱՆՈՒԹՅԱՆ
 ԳԵՐԱՆՈՒԹՅԱՆ ԳԵՐԱՆՈՒԹՅԱՆ

ստեղծագործական կեանքի մեծագոյն համոյրներից մէկն էր :

Երբ Չարենցը դրքի ձեւաւորումը տեսաւ աւարտած , զարմացական բացագանջութիւններ արաւ եւ այնպէս ուրախացաւ , որ չգիտէր ինչպէս արաւայայտէր իր հիացմունքը : Նա յայտարարեց .

— Իմ յանգերին , իմ սողերին հաւորգել էք նոր երանդ ու թռիչք...

Ես շատ-շատ էի համարում այդ խօսքերը եւ չէի ուզում , որ նա շարունակի :
ՅԱԿՈՒ ԿՈՋՈՒՆ

Չարենցը Յ. Կոջոնեանի վրձինին միայն վստահեց իր երկերի նկարազարդումը եւ չսխալուեց : Իսկ Յ. Կոջոնեանը դատու Չարենցի բանաստեղծութիւնների սղուն համապատասխան , իր ազդային բնօթով ուրոյն , կերպաւոր , արաւայայտիչ ձեւեր : Չարենցը յաճախ գրքի ձեւաւորման կուլտուրային մասին խօսելիս , օրինակ էր բերում Յ. Կոջոնեանին որպէս այդ արուեստի վարպետի եւ այդ կուլտուրան մեղանում զարգացնողի եւ բարձրացնողի :

ԱՐԱ. ՍԱՐԳՍԵԱՆ

Ես ասացի , որ «Գիրք Բանապարհի»ն էլ շատ լաւ է ձեւաւորել :

— Սա՞ : Սա ուրիշ բան է :

Վերցրեց «Գիրք Բանապարհի»ն :

— Ոսկերչական արուեստի նրբութեամբ է արուած : Ի՞նչ զարմանալու բան կայ , հայրն ու պապը տոհմիկ սուկերիչներ էին : Ինքն էլ վարպետ է , իսկական արտիստ : Խօսում ես հետը , թրւում է , չի հասկանում , դնում է տուն , բերում ձեւաւորումը՝ մնում ես սպա՞ծ : Գործը բկից բռնել գիտէ : Հայ է իր արուեստով , գայիս է հին , շատ հին ժամանակներից :

ՌՌԻԲԷՆ ՉԱՐԵԱՆ

ԴԵՐ ԼՅԱՆԸ ՄԱՍԻՍ



Ա դուրս եկաւ սնից առաւօտայ ձեգին ,
Իր էտից կամաց դուր փակեց ,
Վերջին անգամ նայեց իր սնակին —
Եւ Լայլեր սեղից դիպի բաղեր : —
Տուր եր : — Արեւը դեռ նորից
Նոր էր փայլ աղջամուլը վաղընօպա

ՄԱՆՎԱՆ ՏԵՍԻԼ



ՄՈՒՏԵ
ՊԵՐՈՒՅԵԱՆ սյուրապոյս ճանապարհներով
Անճանգորուան անցած քաղինեք երկարածից ,
Սիբս կիզած բազում աւելների հրով ,
Խուսափելով բնօթիս երգերից դիւրածին ,

Բազին հարցումներ և շարժումներ

«Գիրք ՃԱՆԱՊԱՐԻՒՆ ԵՒ Ա. ԽԱՆՁԵԱՆ

Իր «Երկեր»-ու չորրորդ հատորին մէջ, «Մարգիկ, որ կային» խորագրին սակ՝ Մկրտիչ Արմէն կը զրկէ.

«Ազատի խանջեանի բնակարանի փանապարհն անցնում էր մեր փողոցով: Չարեհն ու Ալիսէր յանալս էին միասին գնում նրա մօտ, իսկ վերադառնալիս շատ անգամ բարձրանում էին իմ սենեակը եւ մենք, երկար ժամեր, գրուցում էինք գրակամութեան մասին...»:

Այն օրերու Հայաստանի թիւ մէկ քաղաքացիին, թիւ մէկ բանաստեղծին եւ թիւ մէկ արձակագրին բարեկամութիւնը ծանօթ է ամէնուն եւ Մկրտիչ Արմէնի արձանագրած տեղեկութեան վրայ բնաւ հարկ չկայ ոտ ալդ նոր փաստեր աւելցնելու:

Յայտնի է նաեւ դրականութեան հանգէլ Ազատի Խանջեանի ասածը՝ «Երբ եւ Չարեհն ու յանալս «Գիրք փանապարհի»-ի մէջ փայտակամ անոր տաղանդին մասին ունեցած հիացումը: Հետաքրքրական մանրամասնութիւն մը: «Գիրք»ը գեւ յոյս աշխարհ չեկած՝ Խանջեան կը զրկէր Արշակ Չօպանեանի հասցեագրած իր մէկ նամակին մէջ.

«Ձեր ուշադրութիւնն եմ հրաւիրում Չարեհի վերջին կատարի վրայ («Գիրք հանապարհի»): Մեր գրականութիւնն այդ գրքով բարձրանում է մի նոր, բարձր գագաթ: Հաստատում եմ, որ գիրքը կ'ոգեւորի ձեզ» («Հայրենիք» մասազգրք, 1934 Փետրուար):

Այս յայտնի իրողութիւններէն կար՝ ընթերցողին մօտին անխուսափելիօրէն հարց կը ծագի, թէ ինչպէ՞ս Հայաստանի համայնավար կուսակցութեան առաջին քարտուղարը չկրցաւ վերցնել Չարեհի «Գիրք փանապարհի»-ի հրատարակութեան դէմ դրուած արդելքները, որոնք այնքան ծանր անգրագրած ունեցան բանաստեղծին սպրտմեներուն վրայ:

Հարցումին պատասխանը կը գտնուի գարձեալ «Հայրենիք» մասազգրքի էջերուն (1933, Փետրուար), Խանջեանի մասկոպեան արձակուրդի օրերուն Հայաստանի մէջ կայացած մէկ ժողովին նկարագրութեան մէջ.

«Եւլիսիանի կէտերին, օգտուելով Կովիտսի աւագ քարտուղար Ա. Խանջեանի բացառաբար ինքնի, կենտրոնի նրա մերձաւոր աշխատակիցները (կենտրոնի քարտուղար եւ «Խորհրդային Հայաստան»ի խմբագիր Զ. Աշրաֆեանը, կազմակերպիչ բաժնի վարիչ Գ. Մահալեանը եւ Երեւանի բազաֆ. Կովիտսի ղեկավարները) ծրագրում են մի դաւադրութիւն Հայաստանի «դիկտատոր»ի դէմ:

«Եւլիսիանի 14ին նրանք գումարում են կենտ. Կովիտսի նիստ եւ բնակում ի միջի այլոց գեղարուեստական գրակամութեան եւ Պետերատի վերջին հրատարակութիւնները հարցը, գտնում են «Իրեւոյկական անկախութիւն» գրանցից մի բանիսի մէջ: Օրինաւոր նիստի այդ որոշումով գործառնութիւնից հանում է Մկրտիչ Արմէնի «Երեւան» գիրքը եւ արգիւտում է Եղիշէ Չարեհի «Գիրք հանապարհի»-ի հրատարակութիւնը, որովս մի գործ, որ «պարտանկում է իր մէջ հակաշրջափոխական-տրոցիստական գրողութիւն կուսակցութեան դէմ»:

Այդ մասին յաւելեալ տեղեկութիւն մը անենալու համար հետաքրքրական է նաեւ կարգալ ներքեցի կատարած մէկ ուսումնասնումը.

«Բերիայի Հայաստանեան գործակալները ոգի ի բռին ջանացին օլտագործել այդ փաստը եւ Հայաստանի կողմ. կուսակցութեան կենտրոնի ղեկավարութեանը, յատկապէս Ազատի Խանջեանին եւ Սահակ Տեր-Գարրիէլեանին մեղադրել նացիանալիստներին կողմանութիւնը մէջ»:

«Բերիայի հայաստանեան գործակալներ»-ուն արարքը, ինչ իօսք, վատութիւն էր, բայց ոչ գրողաբանութեան հիմամբ, անոնք պարզապէս կը շարաւահէին իրականութիւն մը, նոյնինքն Խանջեանի հովանաւորութիւնը, որ անպակաս եղաւ այդպիսի բարեք թրթուանող ստղանդաւորներու հոյիս վրայէն, ի՞ մասնաւորի Չարեհի եւ Բակուցի:

Միայն թէ՛ «Գիրք փանապարհի»-ի օրերուն իրական ուժը Խանջեանի ձեռքը չէր, կը գտնուէր «Բերիայի հայաստանեան գործակալներ»-ուն մօտ, որոնց բուսթիւնները մեղմելու համար գործներու առաջին համադրամարին Խանջեան պարբ. համարէլ յարձակիլ Չարեհի եւ Բակուցի վրայ, վերջինները՝ «խուսափանեցան» իրենց զխանները: Դանտիկիցներու խող էր: Այդ ալ անթափանց յմոաց գահիճներուն: «Ազատի Խանջեանը ուղղակի կողմանութիւն էր»... եւ այլն: Վէ՛րք Հայաստանի...

Մ Ա Հ Ո Ւ Ա Ն Տ Ե Ս Ի Լ

Վառուժ էր բլուրի գլխին բարձրաբերձ բոցով մի կրակ — Այս
ես յաջորդ տողերով (Ինչպէս եւ պսակի յաջորդ էջերի նման նկա-
րապարտութիւններով) 2-ը նկատի ունի Դաշնակցութեան Հիմնադիր
Քր. Միքայէլեանին (1859 - 1905):

(«Երկեր», Դ. Տասար, էջ 586)

Մենք նայում էինք բլուրին՝ աչքերս սարսափից չուած,
Այնտեղից ոագմի մի շեփոք կանչում էր խրոխտ եւ առոյգ.
Վառուժ էր բլուրի գլխին բարձրաբերձ բոցով մի կրակ,
Թւում էր, թէ վառել են այնտեղ մի հսկայ տօնական խարոյկ: —

« — Ո՛վ դուք, որ մտել էք ահա այս մուշի անտառ Ահի, —
«Նայեցէ՛ք հատեալ կմախփիս եւ գլխիս՝ պօկուած իր տեղից. —
«Աշխարհում որոնում էի ես խոհեք կոռի ու մահի,
«Եւ գլխի փոխարէն ունէի մեքենայ՝ շինուած թիթեղից: —

«Ես սրտի փոխարէն ունէի իմ կրծքում պողպատ զսպանակ,
«Անձանօթ էր կեանքում ինձ համար ամենայն վարանում եւ ահ.
«Մեր երկրի արի այրերից կազմեցի ես մե՛ծ մի բանակ,
«Եւ մեր սեւ դրօշի վրայ գրեցի «Հայրենիք կամ Մահ»:

«Գնացին նոքա, այդ արի զինուորները, երկիրն Աւետեաց,
«Տիրում էր այնտեղ բռնութիւն, ե՛ւ ոնիր, ե՛ւ կեանք անազատ.
«Գնացին նոքա՝ սրբելու մեր դէմքից նախատինք ու լաց,
«Բայց երկիրն արեամբ ողորկեց տագնապած Արքան այն գազան:

«Հանելով բարբարոս հորդաներ — նա փանդեց մեր շէները բոլոր,
«Մեր մանկանց արեա՛մբ արբեցաւ՝ թաքնուած որջում արքունի. —
«Եւ ահա, վրէժով լցուած, դժոխքի հանճարին դիմելով,
«Ուխտեցի բնակել մի բաժակ բռնակալ Արքայի արիւնից:

«Ես գլուխս դարձրի այնժամ դժոխքի մի գոռ մեքենայ,
«Բայց, դժբախտ փորձի ժամանակ, Արքայից հեռու նա պայթեց. —
«Եւ խփեց-խորտակեց նա ինձ... Իսկ Արքան կենդանի մնաց,
«Եւ իբրեւ դեռի տրիտուր, նախնիրներ նիւթեց ու ջարդեր...

«Եւ մնա՛ց նա կենդանի... Կենդանի՛ նա մնաց... Վա՛յ ինձ...
«Աշխարհից հեռացայ ես այսպէս՝ իմ ուխտը թողած անկատար...
«Եւ ո՛չ մի կաթիլ չխմած արիւնից այն Հրէշ-Արքայի՛
«Ես կեանքից բնդմիշտ հեռացայ... Եւ չունե՛մ հանգիստ
ու դադար»...

Ե. ՉԱՐԵՆՑ

Բագին հարցումներ և շարժումներ

«ՎԱՐՇԻՔՆԵՐ» ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ

1935

Եղիշէ Չարենցի «Գիրք մանապարհի» բանաստեղծութիւնների ժողովածուի մէջ մի շարք ստեմներ իրենց դադարաբախտութեամբ հենց հայկական նացիոնալիզմի կոնկրետ արտայայտութիւններն էին ստեղծարարի մէջ:

(«Գրական քերթ», 24 Ապրիլ 1935)

1935

Եղիշէ Չարենցը, չնայած կուսակցութեան կողմից իրեն ցոյց տրուած անսահման հոգատար վերաբերմունքին, չնայած իր ժամանակին մեր քննադատութեան կողմից տրուած բազմաթիւ նախազուշացումներին, անկեղծօրէն շքեղութեամբ, շքեղութեամբ եւ չյողթահարեց իր սխալները, այլ խորացրեց այդ սխալները, հասնելով տրուող հետեւանքների:

(«Խորհրդային Հայաստան», 11 Մայիս 1935)

1937

... Հետագայում Չարենցն ընկնում է հակայնդափոխական նացիոնալիստների ազդեցութեան տակ: Մենք անձնապէս գիտենք նրա «բարեկամներին», որոնք ողորմ էին նրա վրայ: Դրանք էին Բակունցը, Խանջեանը եւ Ուրիշներ: Նա ստեղծում է մի զիջք՝ «Գիրք մանապարհի», որ ամբողջուպէս գրուած է որպէս հայ դրականութեան «աղղային յատկանշներին խտացման» թէորհայի իլլուստրացիա:

ՎԱԼԵՐԻ ԿԻՊՊՏԻՆ

(«Գրական քերթ», 23 Ապրիլ 1937)

1946

Ճաշիզմի այդ նողկալի գործակալների քստմենլի գործերի մասին այսօր ստիպուած ենք խօսել այն պատճառով, որ նրանք մեծ վնաս հասցրին գրականութեանը: Մասնաւորապէս այդ բուրժուա-նացիոնալիստական կոնցեպցիաներին սուրբ սուրբ եղիշէ Չարենցը: Ի ընէ, խտնուածքով տատանուող լինելով՝ նա շկարողացաւ գէտ գնալ նացիոնալիստական թոյնի մթնոլորտին եւ իր մի քստնի երկերում՝ «Գիրք մանապարհի»-ում կրկնեց նացիոնալիստների կեղծ, ոչ գիտական կոնցեպցիաները:

ՀՐԱԶԵԱՅ ԳՐԻԳՈՐԵԱՆ

(«Սովետական գրականութիւն եւ արուեստ», 1946, թիւ 9-10)

1957

«Գիրք մանապարհի» վերջին ժողովածուում Չարենցը շեղուեց «Եպիֆանիա լուսաբաց»ի պայծառ ճանապարհից եւ զնաց գաղափարական եւ գեղարուեստական մոլոր արահետներով:

Է. ԹՈՓՉԵԱՆ

(«Սովետական գրականութիւն», 1957, թիւ 10)

1961

«Գիրք մանապարհի»ի բոլոր գործերը չեն, որ հաստատարժէք են... Ժողովածուում զետեղուել են գործեր, որոնց գաղափարական կոնցեպցիան տեղիք է տալիս լուրջ առարկութիւնների («Սասունցի Դաւիթ», «Պատմութեան քառուղիներով», «Մահուան սեսիլ»):

Յ. ՍԱԼԱՅԵԱՆ

(«Սովետական գրականութեան պատմութիւն», էջ 392)

ՔՆՆԱԴԴՏԱԿԱՆ ԲԱՐԵՇՐՁՈՒՄ

Քաղին Բարբառներ նշխուճներ

Ստալինեան մտայլէն ետք հանդէս եկած քննադատներէն Հրոնտ Թամրազեան 1958ին մամուլին մէջ հրատարակութեան տուաւ եւ ապա 1962ին լոյս ընծայած «Գրական ուղիներու» անուն հատորին մէջ զետեղեց Չարենցի դրականութեան նուիրուած իր գրութիւններէն մէկը, «Եղիշէ Չարենցը եւ սովետահայ պոեզիան», ուր ի միջի այլոց կայ նաեւ սա հաստատումը.

«Երեսնական քուակամների սկզբին Չարենցը կորցրեց կենդանի կեանքի երակը, եւ դա խորապէս ազդեց նրա մի շարք ծաւալուն երկերի («Մահուան տեսիլ», «Պատմութեան քառուղիներով», «Մտաւնայի Դատիք») գեղարուեստական ուժին, անգամ լեզուին, սնին, բառապաշարին»:

Կարգ մը երևոյթներու եւ գործերու առիթով հասկացողութեան, ճշտակի եւ յանդուրանութեան փաստեր տուած քննադատի մը գրչին տակ այս թեթեւութիւնը աղջութիւն կը պատճառէ թէև, բայց այլ չէ բուն խնդիրը, այլ միւսն է, թեթեւութեան թեթեւցող ազդերը, շարունակութիւնը:

Գիմացի չլին վրայ աչք պտըտցուցած մտրոյը անդրադարձաւ հարկաւ, որ նոյն սերունդին չդատականելով հանդերձ՝ Սարխեան եւ Թամրազեան ստուացիօրէն դիւրար կը կրկնեն, կարծես նոյն պատարանէն կու գան, կամ ժողովէ մը դուրս եկած կ'արձագանդեն նոյն ժողովին առնուած մէկ որոշումին, ինչպէս կ'ընէին Հայաստանի Թերթերը քսան տարի առաջ, նոյն Չարենցին նահատակութիւնը պատրաստելու իրենց նոյնամասն ետանդներով:

Թամրազեանի նոյն յօդուածին մէջ կարծիքներու նոյնութիւն մը կայ նաեւ Սարխեանի տարեկից-պաղատարակից-հեղինակակից Էդուարդ Թոփչեանի մտքերուն հետ, դարձեալ Չարենցի մասին գրուած, բայց Մայակովսկիի առիթով կատարուած դիտարկումներէն մէկը: Թոփչեան «Սովետական գրականութիւն» ամսօրին (1957 թիւ 10) մէջ կը գրէ.

«Վրաստի մի Իլիշ Լենին» հիմնադիր պոետում՝ սոցիալիստական ռեւոլյուցիայի հանձնարեղ զինավարին Մայակովսկին պատկերել է ամենամարդկային մարդը՝ աշխարհով անցած բոլոր մարդկանց մէջ»:

Իսկ Թամրազեան, իր յիշեալ յօդուածին մէջ, Լենինի նուիրուած Չարենցի մէկ բանաստեղծութեան առիթով կ'ըսէ.

«Լենինը բնագմբում է որպէս ամենամարդկայինը մարդկանց մէջ»:

Պատահականութեան հետեւանք փոխասացութիւններ չեն ասոնք, դեռ երէկ այս էր քննադատական հասկացողութիւնը մեր հայրենիքին մէջ, պատրաստի կործիքները սորվուած նախադասութիւններով վերախմբադրելու արհեստ:

Սարխեաններն ու Թոփչեանները այս Թիւրիմացութեամբ զոյեցին իրենց աչքերը, անհասկացողութեան հետքեր միայն ձգելով իրենց կտին:

Թամրազեանի սերունդը աստիճան մը աւելի բոխտաւոր եղաւ, ժամանակ ունեցաւ ստալինեան օրերուն կողմուած մարդոց ժառանգը քննութեան ենթարկելու եւ չափով մը սըրբորբելու ստացական իրենց թիւը հայեացքները:

Կրկին միաք բերէք «Գիւրք մանպարիի»ի ամէնէն հանգամանաւոր կտորներուն մասին վերը յիշուած Թամրազեանի «կարծիքը» ու անկէ ետք կարգացէք նոյն «Մահուան տեսիլ»ին մասին նոյն Թամրազեանին այս անգամ տասնըհինգ տարի ետք թուղթին յոնձնած գնահատանքը.

«Թէեւ մտաուցման ձեւը փոխառութիւն է Տանթից, բայց պատկերների բովանդակութիւնը, տառապանքը եւ փիլիսոփայութիւնը ամբողջովին հայկական են: Այս մեր աշխարհն է, հայոց նոր ուղին, մեր ազատագրական խոսքի վերելքի եւ անկման անոգո՞ւ պատմութիւնը: Իրարու ետեւում են հայոց մեծերը, ոգու առաջնորդները, մտածողները, քաղաքական գործիչները»:

Եւ այն:

Ընթերցողը կրնայ սրբախանալ միայն նման բարեջրումներու ի տես:

**

Աշխարհով մէկ ցրուած հայութեան կեանքին մօտիկից ծանօթանալով՝ մեծ բանաստեղծը կրկին քննեց մեր ժողովրդի մօտիկ անցեալի ողբերգութեան պատճառները: Չարենցը չէր կարող չնկատել սփիւռքահայութեան ուժացման սկիզբը առնող այն վտանգը, որ սպառնում էր տարազրուութեան ճամբաների վրայ դեզերող հայութեան բեկորներին, հայութեան սպիտակ ջարդը, նահանջը, որ մի-երկու տարի յետոյ բանաձեւելու էր Շահնուբը իր յայտնի վէպում: Այս ամէնը պէտք է որ կրկին խորհել տային բանաստեղծին, կրկին պէտք է նրա սրտի խորքում ծառանային՝ «ի՞նչ եմք մեմ եւ ո՞ւր եմք գնում, ի՞նչ եմք եղել երէկ եւ ի՞նչ պիտի լինենք վաղը» (Վ. 5, էջ 13) հարցերը: Կրկին պէտք է անդրադառնար նայիրեան վիշտին, որը, ինչպէս պրոֆ. Թամրազեանն է գրում՝ «մինչեւ վերջ էլ մնաց Չարենցի ստեղծագործութեան մէջ որպէս բեմա կամ արամադրութիւն, որպէս նիւթ կամ բանաստեղծական քաղաքացիական մարմն»:

Տարագիր զանգուածների ձուլման տաղնապն էր, որ մորմոքաց նրա սրտում: Չանցած երկու տարի նա կրկին անդրադարձաւ մեր մեծ ողբերգութեան ժամանակներին, այս անգամ բաւականաչափ յստակ պատկերելով մեր ազգային շարժումների կուրծիւնը, ստեղծուած պատմական իրավիճակը, մեր ողբերգութեան գլխաւոր պատճառները՝ Եւրոպայի, Թուրքիայի, Ռուսաստանի ներքին ու արտաքին հակասութիւնները, որի «անխուսափելի դոճը դարձաւ Հայաստանը»: Ու ծնուեց խոր դրամատիկով յաղեցած «Խմբապետ Շաւարշը» պոեմը:

Սփիւռքահայութեան մեծ հոգսի՝ ուժացման վտանգի եւ նրա հետագայ ճակատագրի հարցերը արդեօք չծնուեցի՞ն հենց արտասահմանեան ուղեւորութեան օրերին, եւ արդեօք այն նոյն հարցերը չէի՞ն, որ պատասխան էին փնտռում բանաստեղծի մտքում ու սրտում, օրեր ու տարիներ, մինչեւ որ ծնուեցին «Պատմութեան քառուղիներով» ամբողջ շարքը եւ նաեւ «Պատգամ»ը: «Ով հայ ժողովուրդ, քո միակ փրկութիւնը քո հաւաքական ուժի մէջ է» պատգամեց Չարենցը համայն հայութեան, դռնելով, որ օտար եղերքներում սփռուած հայութեան ձուլումի կորստից փրկելու միակ ելքը համահաւաքն է խորհրդային հայրենիքում, որի հաւատաւոր ու մեծագոյն երգիչն ու ակտիւ քաղաքացին էր ինքը: Խորհրդային երկրին, սոցիալիզմի նըւաճումներին, «իւր օրերին ու դարին» բոլոր նեարդներով կապուած մեծ բանաստեղծը տուն էր կանչում տարագիրներին՝ միատեղ եւ միասին կառուցելու իրենց ապագան. դա էր իր միակ փրկութիւնը:

(«Չարենցեան ընթերցումներ», Ա. հատոր, 1973, էջ 208)

■

Չարենցն անձամբ եղել էր սփիւռքահայ գաղթօճախներում, տեսել ուժացման ահաւոր վտանգը, եւ տարագիր հոկայական զանգուածների ճակատագիրը չէր կարող չյուզել ժողովրդի մեծ մտածողին: Եւ Չարենցը պատգամեց նրանց՝ վերադառնալ տուն՝ Խորհրդային Հայաստան, ուր ազատագրուած հայր արդատաւորում է նոր կեանք: Եւ դիմելով տարագիր հայութեանը՝ Չարենցը բանաձեւեց Սիւմանթոյի մտորումները՝ «Ով հայ ժողովուրդ, քո միակ փրկութիւնը քո հաւաքական ուժի մէջ է»:

Վ. Ա. ԳԱՐՐԻԿԻԱՆ

(«Չարենցեան ընթերցումներ», Բ. հատոր, 1974, էջ 107)



Պ Ա Տ Գ Ա Մ

«Չարենցեան ընթերցումներ» շարքի առաջին հատորին մէջ Երեւոյցած Վազգէն Գաբրիէլեանի «Չարենցի արտասահմանի ուղեւորութիւնը» առնուելու գրութիւնէն առնուած էջ մըն է գիմացի հաստածը, որ խեղաթիւրեալ մեկնարանութեան շնորհ զօրինակ մը կը հանդիսանայ:

«Չարենցեան ընթերցումներ» շարքի երկրորդ հատորին մէջ Վազգէն Գաբրիէլեան ստորագրած է ուրիշ գրութիւն մը՝ «Արեւմտահայ պոեզիան Չարենցի գնահատութեամբ» խորագրով, որ գարձեալ փորձած է ունկնդիրներուն ուշադրութիւնը չեղել «Պատգամ»ին ճշմարիտ խորհուրդէն:

Մենք յաւ կ'ըմբռնենք Չարենցի դիմաց Հայաստանի մեր դրողներուն գծաւորութիւնները, Չարենցէն չկարենալ հրատարելու, բայց նաեւ ճշմարիտ Չարենցը ճշմարտողէս չկարենալ գնահատելու իրենց խուճապահար կացութիւնը յաւ կ'ըմբռնենք, բայց նաեւ չենք հասկնար, թէ ո՞վ կը ստիպէ դիրենք աշխարհ խոր մխրճուիլ «անխոհութեան» դերբուկ բաւիղներուն մէջ:

Մտացած «Պատգամ»ին յղացման պատմական ու բովանդատները՝ Վազգէն Գաբրիէլեան ինչեր ու ինչէ՞ր կը պատմէ իր խեղճ ունկնդիրներուն, կարծեցով անուշտ, որ նուիրական զգացումներու մտան խօսելով ու «սոցիալիստական նուաճումներ» չողջողացնելով կրնայ յաջողութեամբ պատկերել «Պատգամ»ը այլասերելու իր բնածիրը:

Ճիշդ է, որ Չարենց անտարբեր չէր սփիւռքահայութեան ճակատագրին նկատմամբ եւ համահաւաքի համար քիչ անգամ ձեռք առած չէր գրելը: «Պատգամ»ը բովանդակող նոյն «Գիրք մանապարիս»ին մէջ հայրենադարձը նիւթ եղած է իրեն, ի դէմս «Լիւրսնիւնի», յընթեակամբ եւ խնդութեամբ, եւ միայն մէկ անգամ չէ, այլ՝ երկու, մէկ էջին վրայ՝ «Տաղ՝ եկուորներին ողջունելու համար», ու յաջորդ էջին՝ «Երկրորդ տաղ եկուորներին»:

Սփիւռքահայ դրողներուն պիտք նուիրած եւ սփիւռքահայ հարցերուն ծանօթ՝ Վազգէն Գաբրիէլեան ձգած սփիւռքահայութեան հասցեագրուած Չարենցի այս բողոքայտ աղաղակները, սփիւռքահայութեան բախտով տարելու եղերաբախտ բանաստեղծին ամբողջ տենդը կը ճղնի տեսնել անոր ծածկագիր «Պատգամ»ին մէջ:

Չուր են սակայն Չարենցի ճշմարտութիւնը չարչարելու այս ճշնողական դաւարումները:

«Պատգամ»ը՝ իր գրառման օրերուն համար նախապատեւելէն արմատապէս յուսարեկ եւ հարազատ ժողովուրդին միայն հաւատացող տառապած մարդու մը խուլ աղաղակն է, բանաստեղծական դատան հնարքով մը տարագրուած հեռահայեաց կոչ, որ, նովին բանիւ՝ կը ստիպէ մեղ սրբութեամբ վերաբերիլ հետը, սրբութեամբ...

ՆՈՐ լույս ծագեց աշխարհին.
Ո՞վ այդ ալեւր բերեց: —

ԱՀա սակայ մի արեւ՝
ՃԱսագուճով իր հրե՝
ԱՅգարացի պուլպուրե

ՆԺուլցներ զրայ հէց՝
ՆՈՐ աշխարհին ու մարդուն
ՀՂում է լույս զվարթուն:
ՆՈՐ աշխարհին ու մարդուն
Ո՞վ բերեց յույն այս արթուն,
Օ՞ր, Ո՞վմ ձեռքով վառվեց ո՞ւմ
ՀՂակարմիր, հրավարս,
Արամանդյա լույսը այս: —

Կրթած կյանքի բուռի տակ,
ՈՐ դերութեան ընդերքում,

ԻՄաստութեան մի գետակ
Հիմարութեան համերգում. —
ՔԱնի՛ տարի, քանի՛ դար
Վկայեցիր սնհերքում...

ԱՓերին այն խավարտչին,
Ուր հայրենիքն էր մեր հին, —
Զկա՞ր արդյոք դեռ մի հորդ,
ԼՈՒՐԹ՝ հասելով զարեց-դար
ՄԹութեան մէջ այն համառ
ԱՅս այգարացն էր կրում,
ՀՈՒՐ այգարացն այս հեռու
ՀՆոց պահած իր ջրում
Օ՞ր, Ըղձակա՛ն այս հեռուն...

Կրթած կյանքի բուռի տակ՝
ՎՈ՞՞ր անկոր, հո՞ւր գետակ...

ԱՀա վառվում է մեր նոր
ՀԱրթնակի լույսը բորբ,
ԼՂանում է նա հիմա
ՎԱճող սղին մեր անմահ,
ԶՔնող արեւն այդ արի,
ՎԱճում հրով աշխարհի...
Զկա՞ ուրիշ արեւ է՛լ.
ՆԱ՛ է միայն, որ դարեր
ԱՆժոր՝ պիտի արեւէ՛...

ԼՈՒՐՍով վառված սակայն այդ՝
ՆԺարենցից հիմա մենք
Հիմարութեամբ չթափենք

ԻՄաստութեանն այն արար. —
ՄԵր անցյալի խորամիտ
ԷՁն այն սրգար ու սամիկ՝

ՄԵճահանճար ու վարար...

ՀԱՆԳԻՊՈՒՄ ԵՂԻՇԷ ՉԱՐԵՆՑԻ ՀԵՏ

...Չարենցին մեղադրում էին անցեալի իդէալականացման մէջ, ասենք նա, ինչպէս հաղորդում էին, չէր էլ ժխտում մի քանի թեզերի սխալ լինելը, բայց երկիրը շողիւսպող «ամենապինդ շաղախը» նա համարում էր անցեալի սերունդների աշխատանքը:

Չարենցին մեղադրում էին պետիմիզմի մէջ, բայց նա դեմոքրիլիզացիայի չէր ենթարկւում, ընդհակառակը, կոչ էր անում զգօնութեան, ուժերի հաւաքման եւ լարման, այն բանին, որ հասնեն սովետական ժողովուրդների ընտանիքում Հայաստանի սոցիալիստական պետականութեան արդէն վերջնական հաստատմանը: Հինաւուրց եւ նոր ժամանակների դոհերի մասին յիշեցնելը պէտք է ցոյց տար փոանդի ուզողութիւնը եւ լարէր ժողովրդի եւ միտքը, եւ մկանները: Նա ընդդէմում էր հետեւեալ բանատողերը.

Եւ ապա այդ նոյն ուղղութեամբ չափէք հարիւր կանգուն
Եւ հիմնեցէք այդտեղ քաղաքի աշտարակը,
Եւ գաւեցէք ապա աշտարակի գլխին
Ձեր ժամացոյցը կարմիր,
Որ նրա գարկերին ունկնդիր՝
Սերունդները նշեն գալիքում
Իրենց աշխատանքի եւ խոնգէնքի ժամը, —
Եւ բարձրացէք ապա այդ աշտարակի կատարը,
Եւ նայեցէք դուք նախ դէպի հարաւ,
Ապա դէպի հիւսիս, եւ արեւմուտք, եւ արեւելք,
Որ որոշէք սահմանը քաղաքի ու նրա
Պարիսպների խոյանքը դէպի վերեւ:

Չարենցը ինձ համար սող առ սող թարգմանում էր տարարանից հենց նոր դուրս եկած «Գիրք քանապարհի» ժողովածուից իր «Աֆիլլէս եւ Պիեքո» դրամատիկ պոեմը: Պիեքոյի, Աւրեկենի կերպարը նրա համար մասսաների երկաթէ երթով պարտութեան մտանուող սնապործ, ինքնաբաւ ինդիվիդուալիստի կերպարն էր: Գրամա-պոեմի հանգուցալուծման մէջ մասսաները միաձուլ կոհորտներով, անզսպելի առաջընթաց երթով անցնում են սնանկացած միայնակի գետին փոռած դիակի վրայով:

Չարենցի պոետական մտայղացման մէջ դեր է խաղացել այն ժամանակ արդէն կառուցուող օպերային թատրոնի շէնքի նախագիծը: Թամանեանի սկզբնական նախագծի համաձայն, ինչպէս պատմում էին, բեմը այնպէս պէտք է կառուցուած լինէր, որ յատուկ մուտքերով երկու կողմից հանդիսատեսի առջևով կարողանային շարանցել ցուցարարները, զօրական մասերը, նոյնիսկ այրուձին: «Աֆիլլէս եւ Պիեքո»ի եղրափակիչ տեսարանը հնարաւորութիւն էր տալիս այդպիսի երթ ցուցադրել:

Եթէ կ'ուզէք խօսել պատմական տնալողիտների մասին, սարգաբանում էր Չարենցը իր ստեղծագործութեան իդէան, ապա Պիեքոյի կերպարը դուրսգրւում է Տրոյկու կերպարի հետ, իսկ կոհորտների երթը՝ պրոլետարական ռեւոլյուցիայի մասսայականութեան սկզբունքի անպարտութիւնն է: Այդպէս էին նրա խօսքերը, ես դա լաւ եմ յիշում:

ՎԱԼԵՐԻ ԿԻՐՊՈՏԻՆ

ՌՈՒԿԱ ԿՈԿՈՐԳԻՆՈՍԸ...

Քաղաքի հարցումները և շրջանում

Հայաստանի զրոզներու ստայինեան դահիճը, Վալերի Կիրպոտին, մաքրագործու- ներու բուն շրջանին իր արիւնոտ մասնակցութիւնը բերելէ ևաք հայաստանեան արիւնոտ հոնձձքին, եւ ուղղակի պատրաստելէ յետոյ Չարենցի «Գողգոթան» յետն այն անօգ խաչե- լուքեան», հաղիւ ջոանմեակ մը անց, յաւաց իր ձեռքերը եւ, ինչպէս ցոյց կու տայ դի- մացի էջին արտադրուած հատուածը, յուշարական տողերով գրուատեց մեծ բանաստեղծը, նոր շփոթներու արհալին քամիներ արձակելով տողերուն մէջ:

Ահա՛, առաջին հերթին, այս մութ անձին «վիշտը»:

«Չարենցը համամխտը-եմակամ անրիոն էր սուսնում, որտեղից տշխարհով մէկ՝ հե- սու տարածում էին նրա հիմները ուելուիցիային, ապստամբած մասսաներին, սոցիալիս- տական շինարարներին, Լեոնինին: Բայց ի մեծ վիշտ, նա Բերիայի եւ նրա կամակարարնե- րին գոհը դարձաւ»:

Ուղղակի ապշեցուցիչ է ժողովութիւնը Բերիայի կամակարարներուն դէմ խօսող Վա- լերի Կիրպոտին կոչուած գեոնաուիւծին, որ նոյն կամակարարներուն ամէնէ՛ն եռանդունն էր, մասնաւորաբար Չարենցի նկատմամբ, 1937ի մահատարուո մթնոլորտին մէջ արտասանած իր մահազոյժ խօսքերով:

Չարենցի դէմ կատարուած 1937ի յարձակումներուն չափ նողկալի է այս անգամ այս մտրդուն զեղուն անդրադարձը «Հենց տպարանից նոր դուրս եկած «Գիրք քանապարհի»ի մտ- սին, այն ալ 1933ի՛ն, եւ յատկապէս ի մասին այն երկու կտորներուն, զորս 1933ին արդէն տարտորտած «Գիրք քանապարհի»էն դուրս չպրտեցին Բերիայի կամակարարները եւ ապա միայն արտօնեցին «Գիրք»ին հրատարակումը, չորս-հինգ ամիս տեւած քաշչուքներէ ևաք, 1934ին:

Կը թուի, թէ 1933ին ս՛չ թէ «Գիրք քանապարհի»ն նոր դուրս եկած էր տպարա- նէն, այլ աչք օրերուն Հայաստան տյցելած Բերիայի այս հաւատարիմը ի՛նք ներս մտած էր տպաբանէն... Ո՛վ գիտէ:

Չարենցի «Աֆիլէ՛ս, քէ Պիերօ» տրամա-վիպերդին մասին Վալերի Կիրպոտինի «կարծիքին» ամբողջութիւնն է զիմացի հատուածը, որուն ճշմարտութեան եթէ հաւատք ընծայենք, պիտի եղբակացենք իսկոյն, որ Չարենց պարզապէս զուարճացած է իր զրու- ցակիցին ընդարձակ բնամտութեան զիմաց, իսկ եթէ հիմքէ զուրկ է պատմուածը, այն ա- տեն սկսածալ պիտի եղբակացենք, թէ դահիճը ՅՈՎԱԿԻՍ ԹԱԿԱԿԱՆՆԵՐՈՆ ևս մեր աշխարհին ներկայացած է 37ի սանձարձակութեամբ, մարդոց յիշողութիւնն ու տրամարանութիւնը սր- համարճող յիմարութիւններ խմբազրելով Չարենցի յիշատակին...

«Աֆիլէ՛ս, քէ Պիերօ» տրամա-վիպերդին մէջ «անանկացած միայնակի գետին փըռ- ւած դիակ»ը Պիերոյի դիակն է, իսկ իրք թէ Չարենցի պարզաբանումով «Պիերոյի կերպա- րը գուգորդուում է Տրոցկու կերպարի հետ»: Այդպէս կը զրէ Վալերի Կիրպոտին, Չարենցի բերնով: «Այդպէս էին նրա խօսքերը, ես դա լաւ եմ յիշում»:

Ճիշդ է, որ «Պիերոյի կերպարը գուգորդուում է Տրոցկու կերպարի հետ», անհաս- կընալի է միայն, թէ «գետին փռուած դիակ»ի մը տպաւորութիւնը ձգող Պիերօ-Տրոցկին ինչո՞ւ այնքան պիտի զայրացնէր թիֆլիսը եւ այդ գործը զուրս ձգելու պայմանով միայն պիտի արտօնէր «Գիրք քանապարհի»ի հրատարակութիւնը:

Եթէ Պիերօ-Տրոցկին իրապէս դիակի մը տպաւորութիւնը ձգէր այդ տրամա-վիպեր- դին մէջ եւ զուրկ ըլլար անիրաւուած հերոսի մը համարումը ստեղծելու ուժէն, ամէնուրեք Տրոցկի փնտոող ու ճզմող թիֆլիսը, կասկած չկայ, ստալինեան պակաւոր կը հուշակէր Չարենցը, փաստապակ կը զնէր զլիւտն եւ ս՛չ թէ փշպպակ, ինչպէս պատահեցաւ այնքան դաժան խտութեամբ, Վալերի Կիրպոտիններու մասնակցութեամբ:

Բայց այս ինդիրը հոս չի վերլուծար:

«Բագին»ի յաջորդ թիւերէն մէկուն մէջ մենք աւելի երկար պիտի խօսինք այս մասին: Պիտի ներկայացնենք նաեւ հատուած մը «Աֆիլէ՛ս, քէ Պիերօ» տրամա- վիպերդէն: Եւ յաւելուածական փաստաթուղթեր՝ անոր ծննդոցին եւ «իդէալին» մասին...

ՍԱՍՈՒՆՅԻ ԴԱՐԹԵՐ



սրբաբաններն եղով մեզնե Եսայ
 Սարամելիքի՛ն, քաղաւորի՛ն:
 Դաւանք — բարբառներն եղով ապա
 Չէնով-Օհանին, իշխանին են՛նց:
 Դաւանք — բարբառներն եղով ապա
 Այլ իշխաններին բոլոր այն մեր,
 Որ բերին մեզ մահ, ու մուծ, ու նեռ:

ԻԷ

Ընկար մեր Դաւիթն անուանողի մէջ.
 Շուրջը — մըռնիքն, ու մուծ, ու մէջ
 Իսկ վերից Մելիքը արևանեց,
 Սարսելով անից իր իշխազար,
 Քաշեց մի հսկայ, վիթխարի էար: —
 Դաւիթը մնաց փոսում խաւար,
 Անպաշտպան, մենակ. իսկ դուրսը չար
 Մարամելիք, արքան դաժան.
 Քրքում էր անեղ ու ժաւաժանու: —
 Եւ Սասունը վրայ իջաւ այնժամ
 Խորշակ դառնադէտ, մահ տարածամ: —
 Եւ Դաւիթն, ՚րնկած խաւարում էար,
 Օգնութիւն կանչեց երկար, երկար,
 Եւ գուռ է ասում գրոյցը յար,
 Թէ պահուի այդ սեր, այդ ժամին չար,
 Օգնութեան եկաւ խորհուրդով վառ
 Չէնով-Օհանը, իշխանն այն մառ: —
 Եւ չեկար, Չէնով իշխանն հայոց.
 Սեր սրտում՝ սարսա՛ւի ու ա՛հ մահու՛
 Եւ Մելիքին էր նուստ հայում
 Եւ ժողովրդին հրամայում —
 Հաւաքեն, տանեն հրա համար
 Քառասուն կադ կին՝ կորեկ աղան,

Քառասուն այլ կին, որ ուզտ բառան,
 Քառասուն աղջիկ՝ նման գարնան՝
 Գնան՝ Մելիքին վարձակ դառնան: —
 Հաւաքեց ապա սհով անասնձ
 Օհանը անբաւ ոսկի ու գանձ,
 Մարամելիքի մօտը գնաց,
 Թախանձեց, խնդրեց վիզը ծռած,
 Որ գերի գրի յաւիտեան — յար
 Երկիրը Սասունայ եւ դարեդար
 Թէ՛ իր եւ քէ՛ ո՛ղջ Մարայ համար
 Գայ, ոսկի տանի, անաստնում հարկ: —
 Մելիքը լսեց, չարկամ խնդաց,
 Մարնջաց — ձայնից հողը քնդաց,
 Արձակեց ապա հրաման գոռ.
 Որ ժողովուրդը Սասունայ ամբողջ,
 Հաւաքի, բառայ հարկը փրկիչ
 Եւ գերի մնայ Մարայ երկիր: —
 Չէնով-Օհանը լսեց, գնաց
 Եւ ժողովրդին՝ անից կորած՝
 Յայտնեց Մելիքի հրամանն այս: —
 Եւ սուգ բարձրացաւ, տրտունջ ու լաց
 Աշխարհում հայոց — եւ որբացած
 Սասունայ աշխարհի ձայնը գնաց,
 Հասաւ ականջին Դաւթի դիցազն,
 Որ խաւար ու խուլ հորում կորած
 Ժայթքում էր աչքից կրակ ու կայծ: —
 Սքափուեց, յիշեց Դաւիթն այնժամ
 Առիծ-Մեծի փառքը պայծառ,
 Յիշեց կայծակէ սուրբ հրցայտ,
 Հաւաքեց ամբողջ իր ուժն անձայր,
 Խփեց-շողշողաց սուրբ կայծակ —
 Եւ քարը կտրեց — միջով անցաւ...

ԼԳ

Եւ մենկ աշխարհում յաւիտեան-յար,
 Որքան վերյիշեմ գրոյցն այս վառ,
 Սասունցի Դաւթի գրոյցն արդար, —
 Սեռուեղէ-սերունդ ու դարեդար —
 Դաւանք-բարբառներն եղով մենկ նախ
 Մարամելիքի՛ն, քաղաւորի՛ն. —
 Դաւանք-բարբառներն եղով ապա
 Չէնով-Օհանի՛ն, իշխանին նե՛նց, —
 Դաւանք-բարբառներն եղով ապա
 Այլ իշխաններին բոլոր այն մեր,
 Որ բերին մեզ մահ, ու մուծ, ու նեռ: —
 Ե. ՉԱՐԵՆՑ

«ԳԻՐԲ ՃԱՆԱՊԱՐԻՅԻ»
ՁԷՆՈՎ - ՕՅԱՆԸ

Քաղկեդոն
Կարպուսներ
ՁԷՆՈՎՆԵՐ

Եղիշէ Զարենցի «Գիրք Բանապարհի»ն կը բացուի երեսուներեք հատուածներէ բաղ-
կացող երեսուն էջնոց «Սասունցի Դաւիթ» վիպերգով, որ հատորին անիծեալ միւս կտորնու-
րուն պէս ուղիղ երեսուն ասորի մնաց փակունքի աակ:

Այս վիպերգի ծանօթ ախարներէն Ձէնով-ՕՅան Զարենցի գործին մէջ կը պարզէ
ստորեր նկարագիր մը, եղած է նովովքի արժանի նենդ իշխան մը, որ Սասունի անկախու-
թիւնն ու բարգաւաճումը հաստատ հիմնրու վրայ դրած Մճերի մահէն ետք, սարսափէն
ստրած՝ կ'անճարարէ ոչնչացնել սղատախոհ իշխանին յիշատակը, «գորութիւնը նրա անձայր»,
կ'անհետացնէ հրեղէն գէնքերը, սուրբը, նժույզները, ու նսու կը ախրէ անոր «անբաւ ոսկուն,
սրտում ա'հ հագար, հագար ստվում», իսկ Մճերի դիւցապուն ժողանգորդը հովիւ կը կար-
գէ, որպէսզի չգիշէ հայրը, անոր գէնքերը, անկախութեան աւանդը:

Մճերի մահուան լուրին յաջորդող այս նոր կայսրիւնը ձեռնտու համարելով՝ Մարայ
Մելիք կը պաշարէ Սասունը: Ձէնով-ՕՅան կ'երթայ անոր մօտ և մեր «Ինքնութիւնն ու հուր
զանգը մեր» հողին մէջ լլորձած, և անարևկամ էութեամբ ու սարկահատճորէն, և ծառա-
յամսարար՝

«Բոնն է» — ազերսեց — «Երկիր ու հող» —
Ընծայեց նրան ոսկի շոգշոյ.
Գերութեան յանձնեց Սասունը ողջ: —

Բայց Մարայ Մելիքի բանակներուն ներխուժման ատեն պառաւ մը կ'արթնցնէ հօ-
րենական փառքը, պա'րաքը մանուկ Դաւիթին մէջ, որ հրապարակ կու դայ ու հայրենիքին
ու ժողովուրդին համար բաշ կը թօթուէ ահեղ ուժին դէմ: Սակայն ընդհարումէն առաջ,
Դաւիթ «անպէս կամիւ» կը հաւատայ ներխուժած բանակաւի շողջախօսութեան և կ'ի-
նայ անոր փոքրած անդունդին մէջ: Սասնայ վրայ իջած խորշակը հետացնելու համար՝ իր
խաւարէն կը սկսի երկար, երկար օդնութիւն կանչել Դաւիթ:

Եւ ով դիտէ փորձառական ի'նչ նոր յոյսերու տակ, Զարենց՝ թակարդուած Դաւիթի
ստիթով, գրեթէ կ'աւարտէ զողոճար Ձէնով-ՕՅանի բնութագիրը.

Եւ գուր է ասում գրոյցը յար,
Թէ պահուն այդ սել, այդ ժամին չար,
Օգնութեան եկաւ խորհուրդով վառ
Ձէնով-Օհանը, իշխանն այն մառ: —
Նա չեկաւ, Ձէնով իշխանն հայոց.
Սել սրտում՝ սարսափ ու ա'հ մահու՝
Նա Մելիքին էր նուաստ մայում
Եւ ժողովրդին հրամայում:

Զարուսակներ սակէ անդին, արդէն այս գործը ներկայացնելու և գնահատելու հա-
մար չելանք ճամբայ. կատարուած ամփոփումին դիմաց կ'ուզէինք պարզապէս յայտնել մեր
զարմանքը այն մասին, որ նման տիպարները խորապէս ճանչնալէ ետք, «Գիրք Բանապարհի»ի
թիւնուկին լուծման համար՝ Զարենց ինչպէ՞ս ունեցաւ Անաստաս Միկոյեանին յոյսեր կա-
պելու միամտութիւնը, որ կը պատկերանայ սա պարբերութեան մէջ:

«Գիրք Բանապարհի»ի 1933 թ. հրատարակութիւնից պահպանել է մի քանի օրի-
նակ, որոնցից մէկն էլ պարզում է Ձ.ը ուղարկել է Կ. Միքայէլեանին և խնդրում է յանձ-
նել Անաստաս Միկոյեանին»:

«Գիրք Բանապարհի»ի ճակատագիրին մէջ շատ ու շա'տ փոփոխութիւններ տեղի ու-
նեցան անկէ ետք, բայց «Գիրք Բանապարհի»ի Ձէնով-ՕՅանը երբեք ու երբեք չզաւաճանեց
իր բնութիւն.

Նա չեկաւ, Ձէնով իշխանն հայոց.
Սել սրտում՝ սարսափ ու ա'հ մահու:

Վ. Շ Ո Ի Շ Ա Ն Ե Ա Ն

Վ Ե Ի Ը Դ Ա Բ Զ Ի Ն Գ Ա Ղ Տ Ն Ն Ի Ք Ը ...

Ոչինչ դիւրին է կեանքի մէջ ու ամէն ինչ անստուգութիւն է լոկ ու մնայուն նիգ, բոլոր անոնց համար, որ ընդունակ են գէթ իրենց ներքին անդունդին եզերքը կենալու, առանց գլխու պտոյտի: Կրնայ ըլլալ, որ միւսներուն նման անոնք սկսին անխորտակելի թուող վստահութեամբ մը, յենած սովորական նշմարտութեանց, որ կոյրերու գաւազաններու չափ իսկ չեն կրնար լուսաւորել կեանքի նամբան, — բայց ուշ կամ կանուխ պիտի յանգին միւս կեանքին, որուն հետ խարդախել կարելի չէ: Այդպէս էր մեր երկրին վերջին քառորդ դարու լուսագոյն բանաստեղծը՝ Եղիշէ Չարենց: Տարերային ու սանձաբեկ երիտասարդութեամբ մը, յեղափոխութեան նորահրաշ ալիքներուն խորէն նետուեցաւ կեանքին հրապարակը, — սկիզբը վստահ ըլլալով, թէ ո՛չ միայն կեանքը, այլեւ բանաստեղծութիւնը դիւրին էին: Այդ որոտուն, այդ ազմրկարար ու սրտապնդիչ խուժումը, որով կ'ուզէր խորտակել բոլոր ամբարտակները: Որքան արագութեամբ մոռցաւ իր սկզբնական ու պզտիկ մեղքերը: Այն բոլոր հարւածները, որ գուարթ, աշխուժ ու յեղափոխական կշռոյթով մը կը շոյալէր բոլոր միւսներուն, քիչ մը նաեւ իրեն չէի՞ն վերաբերեր միթէ: Քիչ մը անկապաշտ ու քիչ մը քաղցրօրէն յուսահատ չէի՞ն միթէ իր առաջին երգերը եւ: Ու յեղափոխութեան այս երիտասարդ իշխանը, սկիզբը, չէ՞ր ջանացած միթէ Սիամանթոյի կշռոյթն ու որոտը իւրացնել՝ ընդօրինակելով անոր երգերուն արտաքին մեքենականութիւնը, — ինչպէս որ աւելի յետոյ ըրաւ Սայաթ-Նովայի տողերուն հետ: Կ'արշաւէր, ամէն ընդդիմութենէ ու ամէն խոչընդոտներէ ազատ մեր գրականութեան նամբաներուն վրայ, — մանուկի մը պէս, որուն բարդ ու գեղեցիկ մեքենաներ կը վստահի կեանքը, յեղակարծօրէն: Այդ մանուկին պէս ան կը խաղար սկիզբը հայոց լեզուին հետ, մինչեւ որ այդ լեզուն իսկ իր վրէժը լուծեց, նուրբ վրէժխնդրութիւն մը սակայն, — որուն ձգած սպիները անջնջելի են: Ոչ, կեանքը դիւրին չէր, բանաստեղծութիւնը դիւրին չէր ու հայոց լեզուն դիւրին չէր:

Հէ՛ք, սիրելի Չարենց, որ վերջին տարիները ամէն օր կը մեծնար իր տառապանքին հետ: Ուրիշներուն համար գուցէ դժուար է նշմարել իր գծած շառաւիղը, — այլ մեքէ յստակօրէն կը տեսնենք գայն ու է՛ն չնչին մանրամասնութիւններուն մէջ: Սկիզբը արեւելահայ միւս բանաստեղծ-

ներուն պէս սար կ'ըսէր, մեր կրկրի բոլոր լանջներուն: Կը բաւէր, որ երկիրը ուռէր տեղ մը, կնոջ մը կուրծքին մեզմբ աւալումովը, որեւէ գիւղի վերեւ: Կող, բլուր, բլրակ՝ սար էին իրեն համար, ինչպէս սար էր Մասիսը: Այլ քանի ներքին փոթորիկը կ'ուռէր ու քանի կը գորանար արւեստագէտը իր մէջ ու քանի այդ արուեստագէտը կը պահանջէր իր ուրոյն լեզուն, — այնքան խորունկ գորովով մը կը սկսէր սիրել իր ապստամբ գործիքը, հայոց լեզուն: Այդպէս է, որ սորվեցաւ *կատարն* ու *դադաթը*: Անշուշտ առաջ եւս գիտէր զանոնք, ինչպէս ամէն աշակերտ բազմաթիւ ուրիշ բաներ գիտէ: Այլ այդ բաները ներուժ կեանք չունէին իրեն համար: Ու տարիները կ'անցնէին ու դիւրին ստեղծագործութեանց համբաներէն ամէն անգամ վիրաւոր ետ կը դառնար, կարծելով թէ լեզուն է միայն, իր անկատար լինելութեան ու իր ներքին հրկիզումին պատճառ: Մինչեւ որ սկսաւ *լեռ* ըսել մեր երկրի սարերուն: Մինչեւ որ քիչ մը յանցապարտ ու քիչ մը զոջահար խանդաղատանքով մը լեռն իսկ անբաւական համարեց ու սկսաւ զանոնք *լեռն* անուանել:

Ո՞ւր էր գաղտնիքը այս վերադարձին: Այդ գաղտնիքը գաղտնիքն է բոլոր արուեստագէտներուն, որ կը տառապին՝ չկարենալով իրենց ներքին ալեկոծութեան տարերային կերպարանքը տալ այս դաւանան գործիքով, որ մարդոց լեզուն է: Չարեանց, քիչ մը ուշ թէն, բայց յաջողած էր այրել կեանքի հանգրուանները ու մօտեցած էր անդունդին: Այդ անդունդին եզերքն էր այլեւս, մարդու եւ արուեստագէտի իր ամբողջ տառապանքովը, յուզիչ ու անձկալի: Ու չէ՞ր ըսեր միթէ իր երիտասարդ ընկերներուն, որ ոչ մէկ Մարքս ու ոչ մէկ Լենին կրնային փրկել զիրենք: Փրկել զանոնք որմէ՞, փրկել զանոնք ի՞նչ բանէ: Անտարակոյս այն բոլորէն, որ գուցէ լուծում չունին բընաւ, — այն անդունդէն, որ կրնայ բնագանցութիւն կոչուիլ կամ պատմութեան նիւթապաշտական ըմբռնում, որ կրնայ մեր քայլերուն առջեւ առաջին որոգայթը ըլլալ կամ վերջին գերեզմանը, — Նիցչէի փիլիսոփայութիւն կոչուի ստիկա, թէ Տոսթոյեւսկիի գրականութիւն:

Ու եթէ յեղափոխութիւնը վախճան մը ըլլար, — նոյն անձնուիրութեամբ պիտի ընդունէի՞նք գայն արդեօք: Ինչ որ կ'առիճեմէ մեզ, անոր մնայուն դիմայեղութիւնն ու յարաշարժ լինելութիւնը չէ՞ միթէ: Ու ինչ որ լրիւ եւ յուզիչ իմաստ մը կու տայ կեանքին, — անոր անդունդը չէ՞ միթէ, որուն եզերքը պիտի կեանք, օր մը, յիշելով ամբողջ համբան, որ կտրեցիմք ու չըմբռնելով այդ ծածուկ ու սարսափելի գորութիւնը, որ մեզի նախահամը կը պարզելէ անկութեան:

ՎԱԶԳԻՆ ՇՈՒՇԱՆԵԱՆ

Բազին Բարբուռներ և շքուշներ

Ի ԳԻՏՈՒԹԻՒՆ...

Տարբեր էջերու վրայ ընթերցողը հանդիպեցաւ քննադատութեան անունով պարտախորհուն իրենց առած գասերը վերախմբողը Յ. Սալախեան եւ էդ. Քոփչեան ստորագրող մարդոց:

Յիշկոյններ, որ Չարենցի առիթով նոյն բաները եւ անհեթեթութիւնները առանձին առանձին կրկնելով հանդերձ, պարտախորհուն այդ երկուտորակները ստորագրած են նաեւ միացեայ անընթացի մը, դա՛րձաւ Չարենցին առիթով, յարուցեալ բանաստեղծէն (1954) լոյս ընծայուած առաջին հատորին մէջ՝ իրբեր յառաջարան:

Ամբողջութիւնը հետաքրքրական չէ, յանձնարարելի է միայն համայնալար բառարանի գեղարունին անձանօթ ընթերցողին եւ նաեւ անոնց, որոնք ատկաւրին չեն գիտեր, որ «Չարենցը իր ստեղծագործական մեծ աշխատանքը չէր պատկերացնում կոմունիստական պարտիայի եւ մեր կատարաւարեանց շահերից դուրս»:

Յղճմտանքէ զուրկ եւ ճահատակ բանաստեղծին յիշատակին հանդէպ անյարգալիք այս նոյն մարդերը, 22 էջնոց ծաւալի մը վրայ՝ 32 տող միայն յատկացուցած են «Գիրք հանապարհի»ին. իսկ այդ թիւէն երեք տող աւելի կը հաշուէ նախորդ հատուածը, որ կը շօշափէ միայն մէկ բանաստեղծութիւն, «Ճպլիքական լուսարաց»ի էջերուն երեւցած «Դաշնակցականներին» անուն պարսաւը:

Պարսաւադիրի մը՝ 35 տող:
Ամբողջ գիրքի մը՝ 32 տող:

Այս ցուցադրութենէն ետք, կը կարծենք, ընաւ հարկ չկայ իօսելու պտրղուած մեկնորանական մոլորութիւններուն մասին: Կը ցուենք միայն, որ հին աւագանիին այս հիւանդակին մտքերով անանեցուն այն օրերուն նոր կազմաւորուող Հրանտ թամբադեանները եւ յայտնեցին մտքեր, որոնց հեղինակը ո՛չ ոք պիտի ուզէր ըլլալ...

Դահլիճներու սուրով կամ «ինքնաշարժային վթարով» իրենց կեանքը սուարած բանաստեղծներ շատ ունեցած է հայ գրականութիւնը, Սայաթ-Նովայէն մինչեւ Սիւրանթօ եւ Վարուժանէն մինչեւ. Պարսլը Սևակ, բայց ոչ մէկուն առիթով կրկնուած է Չարենցի ճակատակիրը: Չարենցի բախտը հոս եւս սարբեր եղաւ, միւսներուն ունեցած դահլիճին պէս ունեցաւ դահլիճ մը, առաւել՝ յիշատակը հարուածող հալածիչներ, առաւել՝ բանաստեղծական հուրիւնը եղծող մոլեռանդ սրբապիղծներ, սրբան՝ ու որքա՞ն Վալերի կիրպտոններ, Հրաչեայ Գրիգորեաններ, էդ. Քոփչեաններ ու Յ. Սալախեաններ...

Երեւանի «Գրական թերթ»ի 1972 թիւ 12ին մէջ լոյս տեսաւ Արփիկ Աւետիսեանի ստորագրութեամբ յոգուած մը, ուր Չապէլ Ենոյիանէն մէջընտրուած է հետեւեալ միտքը.

«Մեզանից շատերի անունները կը կորչեն, բայց գալիք սերունդները չեն մոռնայ Չարենցին: Թերեւս մեզանից ունեց անունները անցնեն գալիք սերունդներին միայն այն պատճառով, որ Չարենցի արժէքով մէկու մը մասին եղել ենք արդար կամ անարդար»:

Չարենցի հանդէպ անարդար եղածներուն հետ, իրապէ՛ս, մարդոց յիշողութեան մէջ դաժուած պիտի մնան նաեւ անարդարները, որոնց շարքը, ցաւօք, չաւարտեցաւ Չարենցի Ֆիլիքս շարժարած ու ոչնչացուցած անբաւելիներով: Առաջինները շքանակող սեւ վիճէն շատ հեռու պիտի չգատուին նաեւ անոնք, որոնք կը շարունակեն դաւը, այս անգամ անոր յիշատակին ու ոգիին դէմ, բանաստեղծին պատանեկան ոգեւորութեան ծիրէն ներս պատկերացընելով նաեւ անոր «խոհակարած» տարիներուն բերքը, անտեսելով վերջին ու պատգամային պոթկումները, որոնց ճշմարտութեան համար իր կեանքը տուաւ...

Ու դառն է թէ եւ ըսել, իրականութիւնն է սակայն, որ Չարենցի դահլիճները աւելի՛ ճիշդ հպակցած էին պատրանաթափ, ցնցուած, օտարտի զարդերէն մերկացած ու բուրբուրիկ հայրենացած Չարենցը, քան անոր զործերուն շարժարացած ու շարժարացող մասերը ցայտեցնելու ճշող պարտախորհուն վերջին ճորտերը:

Չարենցի՛ ազգային եւ բանաստեղծական ճշմարտութիւնը իր հայրենացումն է, որուն հանդէպ կարելի է կա՛մ դահլիճ ըլլալ կամ սրբապրուելով ու սրբուելով խունկ ծիւղի: Չարենցի միւս ճշմարտութիւններուն մաս կը կազմեն, սէրը, բնութիւնը, մարդկային տրամը, եւ երբե՛ք այն միւս ձայները, որոնք սարքուեցան պարագայարար, «Երկաշաղկան մի խանդալատներով», կամ ցուցական մեղքով, կամ ինքնապաշտպանութեան ընազդով...

«ԽՆԱՄՔՈՎ Ի
ԹԱՔՑՆՈՒՄՆԵՐՆ»...

Բազին Բարբոսյանի
ճշգրտումներ

Դիմացի էջին վրայ հարեանցիօրէն յիշեցուած կուսակառուցական ստատաբանութեան, հակադաշնակցական շտաբախօսութեան եւ «Գիրքի քանադարի»ական սակաւխօսութեան առիթով հարկ է կրկին յիշեցնել թերեւս, որ այդ նիւթերը սկսան յարգ ստանալ 1954-ին ասպիւն միայն, երբ Չարենց, զահիճներուն զէմ մարդկօրէն սկիւրացած օրերուն՝ այնքան ճիշդբաւ, որ անոնք ծառային իրեն իբրեւ փրկազին:

Պերճախօս է հետեւեալ փաստը:

«1921 թ. Փետրուարի 21-ից մինչեւ Ապրիլ 4ը Ղամարլուի ֆրոնտի փառաբանական կոնիւնքի ընթացքում գոմուել եմ Եանիշեակու կոմանդայում իբրեւ մարտիկ» — զրկ է Չարենցը հետազոտում, 1937 թուականի բազմաթիւ դրանք «բացատրութիւններեց» մէկում»:

1937-ին դրուած այդ բազմաթիւ ու չափերուած բացատրութիւններեցից մէկը կը զանընդհատ Սուրէն Աղաբաբեանի «Նոյնի Չարենց» անուն զարծին (246) մէջ, ուր տրուած է նաեւ սա յաւելալ բացատրութիւնը.

«ԳԱ գրականութեան եւ արուեստի թանգարան, Չարենցի ֆոնտ: Եանիշեակու կարմիր գործաւատու ծառայելու փաստը, որ 1937-ին խնամքով քաղցնում էին Չարենցի ամբաստանողները, հաստատում են նաեւ մերօրեայ մեմուարիստներն ու արխիւային յայտնաբերումները»:

1937-ի զօտիային օրերուն, իր կեանքին սպառնացող պայմաններուն մէջ Չարենց կը ստիպուէր բազմաթիւ դրանք «բացատրութիւններ» տալ, մինչ զինք ամբաստանողները «խրնամքով թաքցնում էին» մահուան մանդատը հետապնդ ամէն մանրամասնութիւն, իսկ այսօր նոյնքան ժաշկան խնամքով լսելին կը հանեն անդամ չեղեալ փաստեր (ու անողջութեան փաստի կարօտ տրամաբանելու եղանակներ), որպէսզի կրկին կրկին հին երգը, ցուցադրեն իրենց զէմքը

«Եւ ոգո՛ւ, ոգո՛ւ ներսուրբիւնն ստոր...»:

Խուճապահար իր հոգիին դրուածով «միամտացած» ու զրուար բացատրութիւններ զրոյ Չարենցի պարզապէս ուրիշ խնդիր է, բայց նոյնքան միամիտ բլլալու պէտք չկայ, կարծելու համար, որ ամբաստանողներուն «խնամքով թաքցրած» փաստերը զեր ունեցան բանաստեղծին մահը պատրաստող դասին մէջ: Չարենցի յիշեցուցածը եւ ամբաստանողներուն «թաքցրած» անձանիքի չէին զահիճներուն, կոյր չէին զահիճները, բայց զիբբերու մէջ էին բուրբ, — Հոկտեմբերեան յեղափոխութեան նուիրուած հոկտրութիւնները, քաղաքացիական կռիւներուն մասնակցած բլլալու. ճշայտը տարկրութիւնը, լինինան անկիւր ցուցադրութիւնները, բուրբը: Ու զահիճները կը ճանչնային բուրբը, բայց զարձեալ չխնայեցին իրեն: Ինչո՛ւ:

Պարզ է պատճառը: Եւ այդ պատճառն է, որ իրենց յատուկ պատճառներով կը ճզնին անդատճառ «թաքցնել» Չարենցի գրականութեան նոր գաւազիբները:

Չարենցի զահիճներուն զահիճային բուն պատճառը բանաստեղծին մէջ իրենց ստուգած պայծառապանութեան նոր աստիճանն էր, նոյն հասունութեամբ դրուած հայրենասիրական կրկերը, որոնց որութեան առջեւ կ'անշքանային «մետաղաճայն սլոմները» եւ միւսնեբը, նախկին Չարենցը հրապոյր մը չէր ներկայացներ այլեւս, առիւթողը հայրենասիրական նոր լսբեր հնչեցուցած հոժիւու քնարահարն էր, տեսիլներու տեսլահարը, պատգամներու ասնջահարը, նորը, անդիմադբելի՛ն: Ուրեմն վաանգ կար, հետեւարար՝ վերջ...:

Զինք ամբաստանողները «թաքցնում էին», զինք մեծարողները թաքցնում են: Ըստ երեւոյթին այս խողը վերջ պիտի չունենայ, թաքցնողներ միշտ զոյութիւն պիտի ունենան, պիտի փոխուին միայն թաքցուելիք նիւթերը:

Գրականութեան մասին աննախապաշար ոգիով խօսք ըսելու հնարաւորութեանն զուրկ մարդոց համար Չարենցը վտանգուար նիւթ է, փորձութեան քար...:

Ոմանք կրեցին այդ դառն փորձաութեան հետեւանքները, մողթելի է, որ ուրիշներ չէին հանդիպին քարին եւ զուշաւոր մօտեցումներու ճամբով նուազ բեռնաւորեն չարենցեան իրենց էջերը...:

« Ս Ո Մ Ա » ԳՈՆԵՄԻՆ ԱՌԱՋԻՆ ԷՋԻՆ ԶԵՌԱԳԻՐԸ

Սո՛մա դու վերջին ազատու-
թիւն... ՌԻԳ՝ ՎԵՏԱ

ՍՕՄԱ,

1.

Սո՛մա, զու վերջի վերջում
Թե՛ն... ՌԻԳ-ՎԵՏԱ.
Սո՛մա.

1
Որտե՛ս քայլի՞ց քայլի՞ց
խնայեմք քայլի՞ց սարտի —
Արդե՛ս քայլի՞ց քայլի՞ց
ու օրում քայլի՞ց:

Քե՛զ ե՛ս օրում քայլի՞ց
այնքանով հիմա,
քե՛զ ե՛ս օրում, քայլի՞ց քայլի՞ց,
խնայեմք Սո՛մա...

2.

Որտե՛ր քայլի՞ց քայլի՞ց, առկայ, առկայ,
ու սրտի — քայլի՞ց,
Յուսե՛մք քայլի՞ց քայլի՞ց
այն քայլի՞ց քայլի՞ց:

Առ ի՞նչ քայլի՞ց, Սո՛մա, ո՛ր ի՞նչ քայլի՞ց
քայլի՞ց քայլի՞ց, ո՛ր քայլի՞ց քայլի՞ց,
ու ի՞նչ քայլի՞ց քայլի՞ց...

Առ սրտի՞ց քայլի՞ց քայլի՞ց, առկայ
քայլի՞ց քայլի՞ց, ո՛ր քայլի՞ց քայլի՞ց
քայլի՞ց քայլի՞ց, ո՛ր քայլի՞ց քայլի՞ց
այն քայլի՞ց քայլի՞ց...

Առ ի՞նչ քայլի՞ց, ո՛ր քայլի՞ց քայլի՞ց
քայլի՞ց քայլի՞ց, ո՛ր քայլի՞ց քայլի՞ց,
քայլի՞ց քայլի՞ց, ո՛ր քայլի՞ց քայլի՞ց
այն քայլի՞ց քայլի՞ց...

Սո՛մա... որտե՛ր ինքնուրույն առկայ էր

Որպէս քայլի՞ց քայլի՞ց, Գանգեթի,
խնայեմք քայլի՞ց քայլի՞ց —
սիրտս առկայ եմ քայլի՞ց,
ու երգում եմ քայլի՞ց:

Քե՛զ եմ երգում այն կարմիր
աշխարհում հիմա,
քե՛զ եմ երգում, քայլի՞ց քայլի՞ց,
խնայեմք Սո՛մա:

2.

Գարե՛ր շարունակ, անվերջ, անդադրում,
ու սիրտս գարուն,
Կեանքս երգ շինած քե՛զ էի փնտրում
այն շար աշխարհում:

Ու չէի գտնում, Սո՛մա, ո՛ր մի տեղ
քայլի՞ց քայլի՞ց էր, —
Բայց ես գիտէի, որ մտնում է նա,
ով որ քայլի՞ց սիրէ:

Ու սիրտս տուած մտի անուրջին՝
մա՛հ էի տեղում,
Բայց տեսայ յանկարծ քայլի՞ց քայլի՞ց
այն աղբաւուղում...

Քո քայլի՞ց տեսայ, որպէս սրբազան
մի գահաբերում, —
Քո քայլի՞ց տեսայ աշխարհաստան
այն կրդեհներում...

ԻՄ ՄԱՀՈՒԱՆ ՕՐԸ...

Կնոջն եւ բարեկամին՝ Իդարեկային

Իմ մահուան օրը կ'իջնի լուսօրին,
Ծանրը կը նստի ֆաղափի վրայ,
Ինչպէս ամպ մ'ընկն կամ հին տրամուփին
Կամ լուր աղէտի՝ թերթերում գրած:

Ծանօթ կնոջ պէս այրի կամ դժբախտ,
Բարեկամուհու նման տխրաստեփ,
Լուրը կը շրջի փողոցները նախ,
Սպա կը մտնի դուռ-դարպասից ներս...

Իբրեւ ծերունի մի թերթավաճառ՝
Յուշիկ էայլերով եւ համարեա՝ կոյր,
Յը շրջի բոլոր տներն անպատճառ
Ու կը յայտնուի ամէն մի բալուստ:

Ստուերի նման, սահած տնից-տուն,
Կը կանգնի անտես հիւրի պէս մտայլ,
Կը կանգնի ինչպէս դժնի լուսօրին՝
Տարածուած ամբողջ ֆաղափի վրայ:

Եւ համր մի պահ՝ գիշերուայ կէտին,
Բոլորի սրտում կը կանգնի յանկարծ,
Անհաղադ, ինչպէս հեռուոր լուսին,
Իր դէմքը՝ արդէն յաւիտեան հանգած:

Եւ մարդիկ՝ երէկ կեանքիս սնծանօթ,
Եւ երբեք, երբեք դէմքը չտեսած,
Եւ մարդիկ, միայն երբեմն ինձամոլ
Իրենց ֆանտաստիկ առասպելն հիւսած,

Եւ մարդիկ՝ անգամ երգերիս անգէտ,
Մարդիկ, որ թէեւ կեանքիս արձագանգ,
Բայց եղել են լոկ վկայ անուարբեր
Եւ կարծել են, թէ ես վաղուց չկամ, —

Այդ բոլոր մարդիկ իմ մահուան բօքից,
Որպէս ընդհանուր աղէտից սարսած՝
Զարմացած կը գան ինձ այնքան մօտիկ
Եւ յանկարծ այնքան բանկ ու հարագատ:

Եւ երկրում, ինչպէս բարձրանայ փռշի,
Եւ հագիներում, ինչպէս յուշ յառնի, —
Ելներով անցած օրերիս նաշից,
Իմ ուրուականը պիտի սաւառնի:

Եւ ֆաղափներում, եւ գիւղերում խուլ,
Անցորդներն՝ իրար անծանօթ անգամ,
Աչքերում իրար եւ հայեացքներում
Պիտի միեւնոյն բախիծը կարդան...

Եւ դէմքով տխուր եւ լուռ աչքերով
Պիտի միեւնոյն սուգը հաղորդեն,
Երգերիս հանդէպ անսահման ներգոյ,
Մտացած բոլոր յանցանքներս արդէն...

Կը բանան ուսնք իմ գիրքը գուցէ,
Կը թերթեն դանդաղ, կը կարդան տողեր,



ԻԶԱՅԵԼԱ ԶԱՐԵՆՅ

*Իդարեկա Նիսպեանի Հեռ Զ.ն ամուսնու
նայել է 1931 թ., Ներկայումս նա բնակ-
ւում է Կիրիկոսկան ՍՍՀ Կալինինի շրջ-
նանի Սրեւինկո գիւղում: (Զ.ի մահից
յետոյ ամուսնացել է արտորմ):*
(Հատոր 6, էջ 749)

Տարտած շարժումով գիրքը կը գոցեն,
Եւ բախիծը խոր յուշըս կ'ողողէ:

Եւ գուցէ միայն սենեակում մի խուլ,
Գուլթը թեքած պատկերիս վրայ՝
Կը նայի մի կին աչքերիս տխուր,
Եւ կ'արցունքառուեն աչքերը նրա: —

Եւ ինչպէս կեանքում տարինն'ր առաջ,
Յուշերում յանկարծ անցեսալը բուրի,
Երազանքներում գուցէ իմ անցած,
Եւ արդ իմ յառնած գրկում յուշերի:

Այն, որ ե'ս էի, որ ի'մն էր առաջ,
Արդէն չի յառնի եւ ոչ մի գրքում,
Եւ ո'չ մի գրքում՝ աշխարհում գրած,
Եւ ո'չ մի գրքում, եւ ո'չ մի գրքում...

Ա Ր Փ Ե Ն Ի Կ Չ Ա Ր Ե Ն Ց

Հ Ր Ա Պ Ա Ր Ա Կ Մ Ա Ն Ա Ռ Թ Ի Ի

Եղիշէ Չարենցի ինձ մօտ գտնուող անտիպ արխիւը, հինգ հազար տող, նըւիրել է ինձ կարսեցի ուսուցիչ Մարուքէ Դուրդարեանը, որը մի առանձին թախանձանքով խնդրում էր իրեն չչփոթել Չարենցի «Երկիր Նայիրի» վէպի հերոսներից մէկը՝ Մարուքէ Դրաստամատեանի հետ: Օգտուելով առիթից, երախտագիտութիւնս եմ յայտնում այդ պայծառ կարսեցուն:

Եւ ահա մեր առջեւ է Չարենցի կեանքի վերջին տարիների անտիպ ստեղծագործութեան մի մասը. երեսուն բանաստեղծութիւն, չորս պոեմ՝ «Իսլամիա», «Ներքող Նուարդիմ», «Ռեֆլիեմ հայրենական», «Սափօ» եւ «Հերոսի հարսանիք» (գրաման 1936-1937 թթ.):

Այս շրջանի Չարենցի անհանդիստ հոդեվիճակի արգասիք է «Աշնան երգեր» շարքը, ուր եւ արտայայտուած են բանաստեղծի տաղնապը, տրտունջը, բողոքը: Յուսուլքման տրամադրութիւնը խորթ էր Չարենցին: Հաւատը, չարենցեան հաւատը, երբեք չլքեց իրեն, եւ մինչեւ իր կեանքի վերջը ստեղծագործեց, ճշմարիտ յողթանակի հաւատը իր մէջ, ճշմարիտ յողթանակի նժարին ղնելով «ժամանակն ու ժողովուրդը»:

Մնում է ինձ ասել,
Որ աշխարհում հատուն,
Մի բան կայ լոկ լուսէ.
Այդ ժողովուրդն է սուրբ...

Բնականաբար, Չարենցի ստեղծագործական թեման բովանդակ աշխարհն է: Չարենցը դարի, ժամանակի եւ, հետեւաբար, մարդկութեան ճակատադրով ապրող, տառապող բանաստեղծ է: Այս հոդեվիճակի արդիւնք են «Նրանք գալիս են...» եւ «Օ՛, մարմարեայ քայրեր» բանաստեղծութիւնները: «Նրանք գալիս են...» բանաստեղծութիւնը կարծես

գրուած է այս վերջին տանամետակում, տիեզերքի գրոհման, կիրեռնետիկայի, միջուկային դէնքի, մարդ-մեքենայի, իր խօսքով ասած՝ «ռուսրակիր ցիցի» ստեղծման ժամանակաշրջանում: Բանաստեղծութեան մէջ արտայայտուած է թէ՛ Չարենցի մտքի թռիչքը, եւ թէ թրոնիչքը մարդկային ուղեղի: Եթէ այսօր մարդկութիւնը հասել է ստեղծագործ մտքի այնպիսի բարձունքների, ինչպիսին որ է դիտութիւնը այսօրուայ վիճակով, Չարենցը վախ եւ ախտասնք է ապրում «Օ՛, մարմարեայ քայրեր» բանաստեղծութեան մէջ, որովհետեւ մարդկային մտքի յայտնագործութիւնները երբեմն սպառնալիք են դառնում մարդկութեան համար: «Օ՛, մարմարեայ քայրեր» բանաստեղծութիւնը ջերմեռանդ քմին յատուկ երկրպագութիւնն է արուեստին:

Չարենցի ընդհանրացումները չափածոյ խօսքով ասուած լսկ մերկ դաղափարներ չեն, այլ նախ եւ առաջ բարձր արուեստ են:

Այսպէս, «Օ՛, մեզ կեանքն է դառնում դաստու» բանաստեղծութեան առաջին քառատողի մէջ կեանքի յարուցիչն է այն ընդհանրացումը, որով եւ ստեղծուել է բանաստեղծութեան ողջ կառուցուածքը: Խոհական ընդհանրացումը ողու հասունացման հետ է դալիս: Հեղինակի յարգանքը դէպի կինը, կնոջ աստուածացումը իւրատեսակ հաստատումն է կնոջ պաշտամունքի եւ բխում է Չարենցի անսահման մարդ լինելուց, կընոջ մէջ կին-մայր, տառապեալ կին տեսնելուց: Մտոնաւորապէս տառապեալ կընոջը Չարենցը պատրաստ է իր ողջ կեանքը տալ: Կին եւ կեանք. կնոջ մէջ լինելութեան խորհուրդը տեսնելու առնչութեամբ յատկանշական է Կէօթէի Փառուսոր. Փառուսորի վերջին խօսքը.

Մեզ վեր է հանում
Յաւերթ կանացին...

Չարենցեան մեկնաբանութիւնը միանգամայն իւրովի է :

«Եօթ կախուածներ» բանաստեղծութեան մէջ հակադրուած է դրքային մասը կեանքի մահուանը : Գրքայինը սենախիմենտալ է :

Յտխուռն զեղումը բանականութեամբ է կարգաւորուում, այստեղից էլ՝ կեանքի մէջ մահ, իսկ մահուան մէջ՝ անմահութեան զաղափարը : Չարենցը քաջ գիտէ, որ իր քունը լինելու է երկար եւ հանդիսատ, որովհետեւ անմահութեամբ մահանալը մահ չէ : Դեռ 1934 թուականին Չարենցը դրում էր .

Յիշատակը... Յիշատակը սերում է մարդու գործերից, Յիշատակը մշուշ է, որ բարձրանում է եփուող ջրերից — Բայց մնում է ինքը անմեռ...

Մտնացութիւն ուրեմն բոլոր մեռեալներից, Եւ փառք նրանց ընդմիշտ ու յախտեան, Որ թողել են կեանքում ՅԻՇԱՏԱԿԻ ԿՐԱԿ :

«Ուեփլիեմ հայրենական»ի առնչութիւնը «Կումիտաս» պոեմին կը ճշդեն մասնապէսները, իսկ այժմ մի բան պարզ է . հրապարակուող տեքստը ինքնուրոյն արժէք է ներկայացնում . դա մի գործ է՝ նուիրուած հայ ժողովրդին, ժողովրդի մղձաւանջային անցեալին, իբրեւ հիմնեղանակ իր մէջ կրելով Կումիտասի կերպարը, քանզի Չարենցի համար Կումիտաս եւ հայ ժողովուրդ մի ամբողջութիւն են, հաստատման եւ դոյստեւման գաղափարներ :

Չարենցը միջնադարին անդրադարձել է բազմիցս, եւ միջնադարեան պոեզիան սրբազործուած իմաստ ունի Չարենցի համար՝ ի դէմս Նարեկացու : Դեռ 20ական թուականներին ի լուր աշխարհի Չարենցը յայտարարեց .

Նարեկացու, Քուչակի պէս լուսապսակ ճակատ չկայ...

Եթէ Չարենցը հայ մեծերից թուամանեանին դնում էր Դանթէի եւ Գէթթէի կողքին, տպա Նարեկացին կար եւ մնաց, նրա կարծիքով, անհամեմատելի հանճար, առանձին, բոլորովին ինքնուրոյն իրողութիւն : Չարենցը Նարեկացու մասին խօսելիս անց է կացնում սկզբում միայն Քուչակ զուգահեռը, տարիներ անց՝ Ծնորհալի, Բիսեցնելով հայրեններից, զսղթան երգերից, ժողովրդային, ժողովրդական... եւ ապա նաեւ Չարենց զուգահեռը, որ ինքնահաստատման ու ինքնադիտակցութեան խնդրի է վերածուում :

«Մայակովսկուն» բանաստեղծութեան բնագիրը պատած է խոնաւութեան շերտով, որը դժուարացնում է ինչպէս բնութեցելը, այնպէս եւ վերծանելը . թուղթը փշրուում է : Այս բանաստեղծութիւնը կարծես օրդանական շարունակութիւնը լինի 1934 թուականին «Գիրք մանապարհի» ժողովածուի մէջ տպագրուած «Մայակովսկուն» բանաստեղծութեան .

Դա սիրում էր մեռնող քաղաքների տեղը — Եւ պատկերներ գարեւոր եւ հոնդուն երգեր...

Չարենցի զնահատմամբ Մայակովսկին կար եւ մնաց վերուստ սահմանւած իսկական մեծ պոետ : Սա բանաստեղծի զնահատական է բանաստեղծի մասին .

Դա պայքարող մարտիկ — դա լեզուից է...

Եթէ Չարենցի ըմբռնմամբ Հայերիս Հային «Թմկահար է» («Մարտիկ ու պոետ», «Խիզախ թւկահար, մարտիկ ու պոետ»), ապա Մայակովսկին Չարենցի ըմբռնմամբ մեծ պոետ է («Սրիկզը քո մէջ սիրոյ, ցնորքի») . թուում է, թէ Չարենցը Մայակովսկուն հակադրում է իրեն՝ զուգահեռ անցկացնելով իր եւ Հայնէի միջեւ :

Լ. Մ Կ Բ Տ Ջ Ե Ա Ն

ԲԱՆԱՍՏԵՂԾԻ ԿԵԱՆՔԻՆ ՎԵՐՋԻՆ ՏԱՐԻՆԵՐԸ

Ութսուն տարի առաջ՝ 1897 թ. Մարտի 28ին, «Մակու քաղաքից» Կարս տեղափոխուած Սողոմոնեան ընտանիքում ծնուեց Հետադայում հանրաճանաչ Եղիշէ Չարենցը: Նա 15 տարեկան էր, երբ, — իր վկայութեամբ 1912 թ. Մարտին, իսկ այլոց ասելով՝ Յուլիսին, — Թիֆլիսի «Պատանի» արմանախում լոյս տեսաւ նորածիլ բանաստեղծի առաջին ոտանաւորը: Նա 20 տարեկան էր, երբ Ռուսաստանում տեղի ունեցաւ մարդկային պատմութեան մեծագոյն ջնջումներից մէկը, որը սակայն շատերի, այդ թւում եւ թերեւ Չարենցի աչքում մի արտասուլոր երթի լայնարաց ու փրկարար դարպաս էր թւում եւ որի Հեռեւանքները այնքան ճակատագրական եղան բանաստեղծի կեանքի ու ստեղծագործութեան մէջ:

Չարենցը 40 տարեկան էր, երբ համարեա՛ տնյոյտ պայմաններում կտրուեց նրա կեանքը թեյը Երեւանի բանտում: Ըստ տարիներ առաջ արուած գրեթէ պաշտօնական մի յայտարարութեան՝ 1937 թ. Նոյեմբերի վերջին: Թէեւ եղել ու կան նաեւ այլ հակասական վարկածներ, բայց վկայութիւն տուողների յիշողութեան զօրութեան ու մակարդակի: Այդ տարօրինակ անորոշութիւնը վերաբերում է եւ նոյն ժամանակի միւս նահատակների մահուան հանդամանքներին: Այսպէս, օրինակ, Ակսել Բակունցի մահուան թուականը տարիներից ի վեր տատանում է 1936ի, 37ի եւ 38ի միջեւ: Այդ անբնական իրողութիւնը, անշուշտ, այլեւայլ ծանր մտքեր է յարուցում:

Դա նշանակում է՝ կա՛մ ստիկանական «գաղտնապահութիւնը» այնքան բացարձակ, իսկ «ժառանգութիւնը» այնքան անձեռնմխելի է, որ ժամանակի բանտային արձանագրութիւնները այսօր մտաչելի չեն նոյնիսկ, տասնամեակներ անցնելուց յետոյ, երկրի այսօրուայ դեկավարներին ու պատասխանատու անձանց,

կամ էլ՝ դահիճների լիազօրութիւններն այնքան անսահման են եղել ժամանակին, որ նրանք սառնասրտօրէն սրբեր ու հանճարներ են զլխատել՝ առանց նոյնիսկ համապատասխան գրանցման ու տարրական «հաշուապահութեան» կարիք զգալու: Այլապէս, ի՞նչ է նշանակում այն պաշտօնական «անգիտութիւնը», որը զրսեւորում է ստալինեան ջարդերի գոնէ տաղանկարգ զոհերի մահուան թուականների ճշգրտան հարցում:

Չարենցի անունն ու գործը Հայաստանում պաշտօնական նգովքի տակ մընացին մինչեւ մօտաւորապէս 1954 թուականը, երբ, կրեմլեան աշխարհահռչակ սճրապետի մեռնելուց յետոյ մէկ տարի անց, սկսեցին նոր հովեր փչել երկրի հասարակական կեանքում: «Ձեհալից» յետոյ հանրային ու մշակութային աշխուժացման քիչ թէ շատ տանելի մթնոլորտ, աւելի ճիշդ՝ երբեւէ նման մթնոլորտի հասնելու յոյս ստեղծուեց, որը, անշուշտ, նոյնութեամբ երկար չտեւեց: Այդուհանդերձ, այլեւս հնի լրիւ վերադարձ չեղաւ եւ հասարակութեան մէջ մէկ անգամ տեղի ունեցած մտքերի բեկումը նոր ուղղութեամբ հունաւորեց իրերի ընթացքը: Այդ նոր իրազրութեան նշանակալի արդատիքներից էին եւ հաստատանեան հայրենական յորելեանները, իրենց փայլով ու պատմական առաքելութեամբ:

Յորելեաններից բաժին հասաւ եւ Չարենցին, ճիշդ է՝ ոչ միշտ իրեն վայել մակարդակով: Բայց եւ այնպէս՝ ըստ էութեան օգտակար արդիւնքներով եւ մշակութային դործուն ուժերի աստիճանական լիցքաւորման ուղղութեամբ: 1957ին նշուեց բանաստեղծի ծննդեան 60, իսկ 67ին էլ՝ 70ամեակը: Հասարակութեան մէջ ու դրական միջավայրում Չարենցի նկատմամբ հետաքրքրութիւնը վերընթաց կարգով աճեց, իսկ գրականա-



ԶԱՐԵՆՑ ԻՐ ԵՐԿՐԻ ԱՂՋՆԱԳՆԵՐՈՒՄՆ՝ ԱՆԱՀԻՏԻ ՆԵ ԱՐՓԵՆԻԿԻ ՀԵՏ. 1935ԻՆ

Զարենցը կեանքի վերջին շրջանի բանաստեղծութիւնների մէջ հասաւ մտքի խոր րնդհանրացման ու բանաստեղծական ձեւի հանճարեղ պարզութեան: Զարմանալիօրէն զուգորդուած են հանճարեղ մարդն ու հանճարեղ բանաստեղծը Զարենցի մէջ...

Ի՞նչը աւելի մեծ գնահատական կարող է լինել եւ հնչել ի փառս Զարենցի՝ մարդու, որն այդքան ինչպէս իր ժողովուրդի, այնպէս եւ ողջ մարդկութեան ճակատադրով, աւելի ամփոփ ասած՝ «այդքան իմաստուն՝ մեռաւ մարդարէ»:

ԱՐՓԵՆԻԿ ԶԱՐԵՆՑ

ԶԱՐԵՆՑԸ ՉԵՌԱԳՐԵՐՈՒՄ

ԱՆԱՀԻՏ ԶԱՐԵՆՑ

Եղիչէ Զարենցի ձեռագրերը ճակատագրի բերումով ցրուեցին, եւ մենք յաճախ չգիտենք, թէ նրանք որտեղ են ծրարած: Տարիներ անց այդ ձեռագրերի մի մասը մեզ հասաւ խաթարուած ու բղկտուած: Մերթ լախնածաւալ, կարծես հնամենի աւետարանից պոկուած մազաղաթեայ դեղնաւուն թերթեր ու մերթ

փոքրիկ, խունացած, ծայրերն ու անկիւններն տակ շերամներից խածուտած, քայքայուած ու մղրած բաղձաթիւ թերթիկներ — ահա այսպիսին են այն թղթերը, որոնց շնորհիւ կորստից փրկուել ու մեղ են հասել չարենցեան ինքնագիր գործերը: Յաճախ այնքան փխրուն են այդ թերթիկները, որ փչուում են, երբ անդուշ ձեռք ես տայիս: Խաւարի մէջ մնալով, կարծես, երկչոտ են դարձել, խուսափում են լոյսից, ձեռքերից, նոյնիսկ նայուածքից:

Իսկ այդ թերթիկների վրայ Չարենցի մանիշակագոյն թանաքով մերթ տառ առ տառ յտակ, խոշոր, մերթ ջղային, խճճուած, ջնջումներով ու սրբադրութիւններով լեցուն, երբեմն գրեթէ անթեթեանի ձեռագիրը խունացել է, հագիւ է կարգացում կամ էլ բոլորովին չի կարգացում: Չարենցի ձեռագրերում պատահում են թերթիկներ, որոնք ամբողջական, անտիպ գործից մեղ հասած պատուհիկներ են: Շատ ստեղծագործութիւններից պակասում են էջեր, ութնակներ ու քառեակներ, յաճախ էլ մեղ է հասել գործի վերնագիրը միայն:

Սակայն սա չարիքի փոքրագոյնն է: Ողբերգականն այն է, որ չարենցեան անտիպ գործերի ինքնագրերի մի զգալի մասը այնպէս է փտել, որ անհնար է փրկել զրանք: Թերթիկների մի մեծ կոյտ պարզապէս մոխիր է դարձել, մի քանի փո մոխիր եւ անվերադարձ թաղել է իր մէջ, ո՛վ գիտէ, ինչ ստեղծագործութիւններ: Այս մոխրացած թերթիկները եւ ա՛յն, ինչ պիտի գրէր, բայց չհասցրեց գրել Չարենցը, եղաւ թերեւս ժամանակի ամենամեծ կորուստը հայ գրականութեան մէջ:

Նախապէս տեսնք, որ ձեռագրերի մեծ մասը վերաբերում է Չարենցի կեանքի վերջին տարիներին, զրուած «Գիրք Բանապարհի»ից յետոյ եւ բանաստեղծի կենդանութեան օրօք չի ապարուել:

Չարենցը ստեղծագործական յախուռն բնաւորութեան տէր բանաստեղծ էր, զրբից գիրք իր բուն էութեանը հասնող հեղինակ. «Միաժամ» ու «Տաղա-

րան», «Էպիփանի յուսարաց» ու «Գիրք Բանապարհի» — սրանցից իւրաքանչիւրը ատարուն մի աշխարհ է: Բանաստեղծի վերջին գիրքը մեղ գնում էր մի հետաքրքրական հարցի առաջ. Խ՞նչ պէտք է լինէր նրա հետագայ հատորի նուաճելիք աշխարհը:

Չարենցի կեանքն ընդհատուեց «Աբարչական գործի ճանապարհի կէսին»: Նա չհասցրեց իրականացնել իր անհուն մտածումները եւ մեղ տալ իր նոր գիրքը: Բանաստեղծի ձեռագրերում մնացին նրա նոր գրքի տեղ-տեղ բուական յըստակ, իսկ աւելի յաճախ ազօտ ուրուագծերը միայն: Բայց այն, ինչ հասաւ մեզ, նրա ստեղծագործութեան վերջին աւարիները բնորոշում է որպէս նոր ու բարձրարուեստ իրագործումների եւ ստեղծագործական որոնումների մի յախուռն ու խստամնայից շրջան:

Ահա այդ գործերի որոշ խմբի մասին է, որ ես այսօր ուզում եմ խօսել: Ի հարկէ, երբ մենք փորձում ենք դատումներ անել ձեռագիր վիճակում պահպանուած չարենցեան ստեղծագործութիւնների մասին, զգում ենք, որ այդ բոլոր դատումները յաճախ այնքան թերի են, ինչքան անուարար են քննարկուող գործերը, որովհետեւ ո՛վ գիտէ, թէ բանաստեղծը տակաւին ինչպիսի նոր ու թարմ երանգներով պիտի ամբողջացնէր իր պատումների հիւսուածքը: Շատ յաճախ հագիւ հետագայում արուելիքին որպէս ակնարկութիւն պէտք է ընդունել այս ստեղծագործութիւնների խոշոր առաւելութիւնները: Ակնարկութիւն եւ ոչ ամբողջ ձայնով ասուած խօսք: Սակայն այս տարիների շատ գործերի թէկուզ ակնարկութիւն լինելու հանդամանքն էլ ցոյց է տալիս, թէ Չարենցը գեղարուեստական եւ թեմատիկ որոնումների ինչպիսի անմարելի ծարաւով էր բարձրանում իր արուեստի կատարելութեան «չարչարանաց լեռ»:

Չարենց-բանաստեղծը, որ ամբողջ հայոց պատմութեան ծնունդն է՝ «ոսկի երակը եկամեայ ցեղիս», «Գիրք Բանապարհի»ի մէջ էր, որ առաջին անգամ ոտք

էր գնում մեր պատմութեան հեռաւոր քառուղիներէ վրայ: Նրա վերջին գրքի, մեր պատմութիւնը պեղող ստեղծագործութիւններն այն հարուստ թեմատիկ աւանդն էին, որին կրկին ու կրկին անդրադարձաւ բանաստեղծն իր կեանքի վերջին տարիներին եւ մեզ տուեց մերթ աւարտուն դործեր, բայց աւելի յաճախ միայն խոստումներ: Չեռագրերի քննութիւնը ցոյց է տալիս, որ նա մինչեւ կեանքի վերջը աշխատում էր պատմական թեման աւելի խոր ու ճիշդ լուսարանելու ուղղութեամբ:

Չեռագրերում պահպանուած պատմական թեմայով Չարենցի տմենահետաքրքրական դործը այն անվերնազիր ու բնագործակ ստեղծագործութիւնն է, որի երեսունութ փոքրիկ թերթիկներն են հասել մեզ: Անվերնազիր, որովհետեւ պահպանուած է նաեւ տառջին թերթիկը, ուր, ըստ իր սովորութեան, բանաստեղծը գեղազրում է դործի խորագիրը, թուակաւոր եւ երբեմն նոյնիսկ նշում տները, տողերի քանակը: Պոեմն սկսում է քանակեցրորդ էջից (մինչեւ 26րդ էջի թերթիկները չկան) եւ շարունակուած մինչեւ 55 էջը: Պոեմի պատահական հատուածները ընթերցումն իսկ ցոյց է տալիս, որ նրա հերոսը պատմագիր է: Մի պարթեւ ծերունի է նա, թաթարական կամ մոնղոլական արշաւանքների ականատես մի հայ պատմիչ, որ իբրեւ կենդանի վկայ՝ իր մազազրթեայ մատեանում եղեգնեայ գրչով շարագրում է իր ժողովրդի «աղէտներն անցեալ»:

- Գէմֆը խաղաղ է ու լուրջ:
- Կապոյտ կոպերին
- Հանգչում է նինջն, ինչպէս լուռ
- Երանութիւն վերին:
- Մագաղաբեայ ֆակատին՝
- Սրբի, վկայի, —
- Չկայ ո՛չ խոս մի պատիր,
- Ո՛չ յոյզ մարդկային:
- Որպէս ովկիան՝ խաղաղուած
- Մրբիկներին յետոյ մեծ, —
- Ձինց է ֆակատը նրա:

Տիրոջ անուամբ
Մահը գրել է վրան
Իմաստութիւն մի նար...

Այս թերթիկը, որ համարակալուած չէ, երեւի վերաբերում է ստեղծագործութեան վերջին հատուածներին: Եթէ Չարենցը հնարաւորութիւն ունենար թէկուզ շտապ, կիսաձայն ակնարկութիւններից բխող սրամարանական վախճանին հասցնելու այս պոեմը, ապա անտարակոյս այն կոչուած էր դառնալու նրա նոր գրքի տիրական դործերից մէկը: Միայն կարելի է խորապէս ափսոսալ նրա կորուստը, որովհետեւ հայոց պատմութեան ընդերքից վերցրած միակ սիւժետային գործն էր լինելու այս պոեմը, ուստի նոր տեսակի հետ նաեւ նոր որակ նրա ամբողջ ստեղծագործութեան մէջ:

Հայոց բազմադարեան պատմութեան ոչ մի դրուազը, թերեւս, այնքան չի յուզել ու չի գրուել Չարենցին, ինչքան Արա Գեղեցիկի եւ Շամիրամի աւանդակէպը: 1920 թուականին գրած բալլադից («Շամիրամ») աւելի քան տասնըհինգ խոտփայտյ տարիներ են անցնում: Տարիներ պայքարի, ոգեւորութեան, նորանոր նուաճումների ու որոնման: Խալիքական, Վիլցազնական թեմաներն են այժմ յուզում բանաստեղծին, եւ արդէն ո՛չ Շամիրամն իր սիրով, ոչ էլ Արա Գեղեցիկի սեփական մահով սրբագործուած հուատարմութիւնը կարող են բաւարարել նրան: Եւ ահա նոր ձեւով, իբրեւ էպիքական կերպարներ, նորից վեր են յառնում Չարենցի ստեղծագործութեան մէջ «մանկածպիտ Արան» եւ «չամբռտաշուրթ Շամիրամը»: Բարձրանում են նըրանք Չարենցի ձեռագրի միջից, սակայն աւա՛ղ, գրեթէ անունով միայն: «Հին պարտութեան լեզուներ» եւ «Արա Գեղեցիկ» խորագրերի տակ բանաստեղծի թղթերում պահպանուել են մօտ երկու տասնեակ քառեակներ ու եռատողեր, որոնք հիմնականում սեւագրութիւններ են, տարբերակներ եւ վերաբերում են նրա կեանքի վերջին ամիսներին: Եթէ պատմագրի մասին եղած պոեմի հատուածնե-

րից դեռ կարելի էր դատել նրա սիւժետային դժի եւ այլ մանրամասների մասին, ապա այստեղ գրեթէ անհնար է դուշակել բանաստեղծի մտայղացման ուրուագծերը: Սխալ չի լինի եզրակացնել, որ կա՛մ աւարտուած ու կորած, կամ էլ ծրագրային վիճակում մնացած, բայց ամէն դէպքում, մի ընդարձակ ստեղծագործութեան նախնական փորձերն են այս սեւագրութիւնները:

Սակայն ինչ էլ լինէր այս գործի բովանդակութիւնը, ինչ անուն էլ նա ունեցած լինէր, մէկ փաստ անհերքելի է. մինչեւ կեանքի վերջին ամիսները հայոց պատմութիւնը յուզել, ներշնչել է բանաստեղծին: Ինչպէս պատահականութիւն չէր Չարենցի համար պատմիչի մասին պոեմը, այնպէս էլ թւում է, թէ դիպուածի արդիւնք չէ նրա վերադարձը դէպի «Հիմ պարտութեան լեզուներ»: Արա Գեղեցիկի աւանդավէպում ի յայտ են գալիս հայ ժողովրդի եւ նրա պատմութեան բնորոշ յատկանիշները՝ հերոսութիւն, անընկճելիութիւն, հայրենիքի եւ ընտանեկան սրբութեան սէր, հոգու դեղեկութիւն, սրայծառատեսութիւն — բարեմասնութիւններ, որոնք այնքան պէտք էին Չարենցին, յատկապէս իր կեանքի այդ մտայլ տարիներին: Բանաստեղծը մի անտիպ քառեկում ինքն է հիանալիօրէն բնորոշում այդ տարիների իր հոգեվիճակը եւ հայ ժողովրդի պատմութիւնից դանաղան դրուադներ ու քաջարի անձնաւորութիւններ ոգեկոչելու սխրանքը.

Ու անցեալի մեծ ջախերի հուրն եմ վառում ես իմ մէջ,

Որ չարիարեմ, եւ ներկայում տեսնեմ նշոյլ գէթ յուսոյ...

Չարենցի կենդանութեան օրօք անտիպ են մնացել եւ նրա ինքնագրերում են մեկ հասել «Կամիտասի յիշատակին», «Նավգիկէ», «Արուս Ռեկամեմարին», եւ ուրիշ պոեմներ, որոնք տապալուեցին միայն 1954 թուականից յետոյ: Պոեմներին զուգրեթէ Չարենցն այս տարիներին (1934-1937) ստեղծել է մի քանի տասնեակ խոհական-փիլիսոփայական ու քնարական բանաստեղծութիւններ, որոնք արժանիքները սերտօրէն ատրնշում են «Գիրք մանապարհի»ի տաղերի ու խորհուրդների ճշմարիտ աւանդներին: Այդ աւանդներով են ստեղծուած այնպիսի բարձրարուեստ բանաստեղծութիւններ, ինչպիսիքն են «Յուզումների լեզուն», «Համակերպութիւն», «Իմ լուսատոյր», «Իմ մահուան օրը», «Ջարմանալի աշուն», «Օ՛, մարմարեայ փոյրեր», «Նօթ կախուածներ», «Աշնան երգեր» եւ այլ ստեղծագործութիւններ:

Այս եւ ուրիշ շատ աւարտուն գործերի կողքին Չարենցի ձեռագրերում մնացել են բազմաթիւ անաւարտ բանաստեղծութիւններ եւ պոեմներ, նամակներ, դիմումներ, օրագրեր, խոհեր ու մտորումներ, ծրագրային նշումներ ու պատասխաններ: Սրանք բոլորն էլ արժէքաւոր են, քանի որ նրանց մէջ էլ կան չարենցեան հանճարի բունկումներ, քանդակուած տողեր ու պատկերներ:


ԱՆԱՀԻՏ ՉԱՐԵՆՑ

Ա Կ Ս Ե Լ Ի Ն
Ա Ր Մ Է Ն Ի Ն
Մ Ա Ն Ա Ր ՈՒ Ն

ՏԽՈՒՐ ԿԱՐՈՒՍԵԼ

...Պատուիր, պատուիր կարուսեկ,
Ես քո երզը վաղուց եմ լսել...

ՎԱՀԱՆ ՏԵՐԵԱՆ



ԱՎՍԵԼ ԲԱՌՈՒՆՅ

Հա՛շտ եմ հիմա ես արդէն իմ երգերի, ֆնաքի,

Պոետական իմ յարկի մեծակութեան հետ: —

Եւ չի փոխուում էլ անհուն իմ մեծութիւնը՝ ֆարի, —

Եւ չի դառնում հեռացման ցանկութիւնը՝ նետ...

Շատ էր յախումն իմ ոգիմ, վշտի անընտել,

Ամէն մի խոց՝ հասցրած սեռֆոյլ բարեկամ՝

Վէրք էր դառնում իմ սրտում, տառապանք անդեղ, —

Դառնութիւն էր, որի դէմ ամոքում չկար:

Երիտասա՞րդ էր ոգիս, թէ անփորձ էր դեռ, —

Որ չգիտէր, թէ կեանքում զգուանֆից բացի՝

Անարգանֆից առաւել պիտոյ է ներել,

Որպէսզի սիրտը քիւրեղ վարժել հարուածի:

Ծերանա՞լ էր հարկաւոր, ֆարանա՞լ գուցէ,

Հաւանալու, զգալու համար այն նախ

Իմաստութիւնը, — որ ֆեզ եթէ ֆարկոճեն՝

Պիտոյ է սիրտդ գոցես, որ չար չնայի:

Դուն պիտի սիրտդ գոցես, եւ աչֆերդ ապա,

Եւ պիտի բաց պահես լոկ մեղանչող հոգիդ, —

Որ չտեսնես հայեացֆներ ահով հանդիպած, —

Որ խեղճութիւնը յանկարծ սրտիդ չչոֆի:

Որպէսզի լուռ կարեկաս լուտանք ու ամօք,

Ու դառնութիւն սիրելուդ, անգամ մատնութիւն, —

Եթէ կոչուած ես լինել հիմեր կործանող,

Եթէ գիտես, որ չկայ խմբիչ առանց թոյն:



ՄԿՐՏԻՉ ԱՐՄԷՆ



ԳՈՒՐԳՆԵ ՄԱՀԱՐԻ

Եթէ գգում ես քո մէջ սգի քերթողի,
 Ատեղծողի, կերտողի — առաջնորդի նոր, —
 Եթէ անցնել ես ուզում — դժուարին ուղի, —
 Նքէ ամենի ես ուզում ես գիտես քէ ուր: —

Ա՛խ, պատմութիւնն այս — այնքան, այնքան է ծանօթ,
 Այս պատմութիւնը՝ կեանքի, աշխարհի պէս հին...
 Հրապարակ է այն մեզ-հասակից մանուկ, —
 Պատկերագարդ գրքերում «մեծ մարդկանց» մասին...

Այս պատմութիւնը մարդիկ՝ սերնդից-սերունդ՝
 կարդացել են շարունակ՝ գրքերում ոսկէ, —
 Պատկերագարդ, փառակազմ, շքեղ գրքերում,
 Ռւր կան չքնաղ նկարներ եւ չքնաղ խօսքեր...

Եւ դու է՛լ ես կարդացել, կարդացել ես այդ
 Պատմութիւններն հիասքանչ հեքիաթի պէս լոյս. —
 Եւ տառապանքն անգամ գուր եւ տանջանքը լուր —
 Այդ ոսկեկազմ գրքերում հմայել են մեզ...

Ա՛խ, բոլորս ենք սիրելի հեքիաթներն այդ լոյս,
 Պատմութիւններն այդ՝ գրուած մարդկանց մասին մեծ, —
 Ե՛ւ դառնութիւն, ե՛ւ բախիծ,
 Այդ ոսկեկազմ գրքերում հմայել են մեզ: —

Եւ մենք յետոյ ենք միայն հասկացել՝ յաճախ
 Արդէն բեկուած, — որ, աւա՛ղ, գրքերում այն մեզ —
 Միայն վարդերն են գերել, իսկ խոցերը չար —
 «Պատմութիւն» են բուռացել՝ գրուած «հենց այնպէս»...

պիտութիւնը իր հերթին նորանոր բնագծեր նուաճեց: Բաւական է յիշել բանաստեղծի երկերի նորատեսակ ու ճոխ հրատարակութիւնը, Համալսարանում պարբերաբար անցկացուող «Չարեկցեաք ընթերցումները», «Տուն Թանգարանի» ստեղծումը, և այլն:

Տակաւին տասը տարի առաջ Հայաստանում արդիական առումով բուն չարեկցադիտութիւնը փաստօրէն առաջին քայլերն էր անում: Այսօր պատկերը նրկատելիօրէն այլ է: Չարեկցադիտութիւնը արդէն հիմնուել և շարունակուած է՝ թէ՛ չարեկցեան գրամշակութային երեւոյթի ընդհանուր գնահատման եւ թէ՛ մանրադիւնի վերլուծութիւնների ու վերծանումների իմաստով: Ի հարկէ, ինչպէս տեսուած է, «այդ գործը վախճան չունի», ուսումնասիրութիւնները պիտի շարունակուեն, նորանոր իրողութիւններ պիտի պարզուեն, մինչայժմեան շատ ու շատ երերուն դրոյթներ պիտի հերքուեն: Կարող են եւ ամբողջական պատկերացումներ շրջուել: Այնպէս որ՝ անելիքներ ու լինելիքներ ակնյայտօրէն շատ կան: Իայց միաժամանակ անվիճելի է, որ այսօր Չարեկցի առընչութեամբ շրջանառութեան մէջ գտնուող պատկերացումները ընդհանուր առմամբ անհամեմատ բարձր ու հիմնաւոր են մինչայժմեան բոլոր տասնամեակների տարածուած պատկերացումներին:

Գրականագիտական նորանոր յայտնաբերումների շնորհիւ, հայութեան գիտակցութեան մէջ աւելի է խորանում այն համոզումը, որ, ի դէմս Չարեկցի, հայ հողի վրայ ժամանակին ծնուել ու ապրել է մի արտակարգ բանաստեղծ, արտակարգ դորութեամբ ու ճակատագրով: Հետադասական խորացումները ո՛չ միայն չեն սասանում այդ համոզումը, այլև աւելի են ամրադնդում ու հիմնաւորում, քանի որ հիմնովին ստուգուած փաստարկումների թիւը գնալով աճում է, կամոց-կամաց յետ մղելով ընկալեալ նախադաշարումների իշխանութեամբ պայմանաւորուած դրոյթները: Չարեկցը իսկապէս որ ստեղծարար վաւերական մեծութիւն է եւ համազգային հոգեւոր ու

մի յայտեղալ վկայութիւն ու նաեւ համապատասխան հաւաքական հպարտութեան աղբիւր, — այս միտքն է արծարծւում ու արմատաւորւում հայութեան ներսում եւ այլուր:

Իայց Չարեկցը նաեւ նահատակ է, բռնակալութեան դո՛հ: Այս իրողութիւնը թէ՛ եւ, դո՛նէ իր մերկ ու տարրական չափով, յայտնի է ամէնքին, սովորաբար պատշաճ չափով հրատարակային խօսակցութեան նիւթ չի դառնում: Հայաստանում՝ որովհետեւ նման նիւթերի մասին խօսելն արգելուած է վերին իշխանաւորների կամքով, իսկ Հայաստանից դուրս՝ որովհետեւ բացակայում են փաստական անհրաժեշտ մանրամասնութիւնները: Մինչդեռ համակողմանի քննութեան համար հարկաւոր են համակողմանի աւելեայններ եւ այդ աուելաները վերլուծելու կատարեալ հնարաւորութիւններ: Ներկայումս նման քննութեան ասպարէզ աակաւին ոչ մի տեղ չկայ, ինչ որ չի նշանակում, անշուշտ, թէ կարելի է իրարից անջատել Չարեկցի ի սկզբանէ ակընյայտ մեծութեան ու նահատակութեան փաստերը, տնտեսելով դրանց փոխադարձ կապն ու աւրնչութիւնները:

Յայտնի է, թէ ինչ կարգով է ըստեղծուել Չարեկցի համբաւը՝ իբրեւ բանաստեղծ: Յայտնի են այն մթնոլորտային ելեւէջները, որոնք ուղեկցել են այդ համբաւին՝ թէ՛ կոմունիստական եւ թէ՛ հայ ազգային ոլորտներում: Չարեկցը աշխարհ է մտել իբրեւ հայ բանաստեղծ, բայց, քաղաքական դէպքերի դժբախտ դասաւորման հետեւանքով, կամայ-կամայ դործել կոմունիստական ոլորտում՝ եռանդով, նուիրումով ու ամբողջ թափով: Այդ գործունէութիւնը բնականաբար տարբեր փուլեր ունի, — անվերապահ նոյնացում իշխանութեան հետ, զանազան տարակուսանքներ, ստեղծագործական սթափում, ինքնուրոյն ուղի, եզակի բարձրութիւն, տառապանք ու հալածանք եւ նահատակութիւն: Նահատակութեանը յաջորդեցին ուրացումն ու վերածնունդը: Պէտք է ասել, որ կոմունիստական ճակատը, իր բնութեան համաձայն, կարող է ուղածի չափ Չարեկց

ու շարենցներ շահագործել եւ ի վերջոյ կառավարան առաջնորդել, բայց նրանց արժէքը խկապէս գիտակցել, գնահատել, նրանց մինչեւ վերջ հովանաւորել ու տէր կանգնել՝ երբեք, քանի որ դա կը հակասէր կոմունիստական ոգուն եւ վարքաբարքին:

Մինչդեռ հայ ազգային ճակատում Չարենցի բանաստեղծական տաղանդը արձանագրուել ու ճանաչուել է միշտ, նրա թէ՛ վերելքի եւ թէ՛ վայրէջքի դէպքերում, նրա նահատակութիւնից առաջ թէ՛ յետոյ, մինչեւ հիմա: Միաժամանակ, տւելի կամ սակաւ խտութեամբ, քննադատուել են Չարենցի այս կամ այն խտորումները, իր հոգեւոր կարողութիւնները տիրող հակահայկական ուժերի արամադրութեան տակ դնելն ու նրանց նպատակներին ըստ էութեան ծառայելը, բնատուր տաղանդը թեթեօրէն մսխելու շարենցեան երբեմնի հակումները, եւայլըն: Այսինքն՝ Չարենցը այդ կողմից սիրուել է քննադատուելով եւ քննադատուել է սիրուելով: Եւ սա շատ բնական ու առողջ երեւոյթ է, երբ աչքի առջեւ ենք բերում պատմական իրադրութիւնը: Քանի որ Չարենցը իր էութեամբ ազգային բանաստեղծ էր, ազգային ճակատի գործիչները, վերջին հաշուով, իրաւունք ունէին նրանից սպասել ու պահանջել, որ աղբակայել վերաբերմունք ցոյց տայ սեփական ու հանրային ճակատադրի նկատմամբ: Կեանքը ցոյց տուեց, որ այդ սպասումները անհիմն չէին:

Այս պարագան ոմանց առիթ է տրուել, որ հակասութիւն տեսնեն Չարենցին միեւնոյն կողմից գնահատելու եւ քննադատելու իրողութիւնների միջեւ: Նոյնիսկ Գուրգէն Մահարին տարիներ առաջ լրագրական էջերում այն անհիմն միտքն էր առաջ քաշում, թէ արտասահմանեան հայ ազգային հրատարակախօսութեան ու գրականագիտութեան մէջ ներկայումս Չարենցի հասցէին դրուող գրուատական խօսքերը իրբւ. անկեղծ չեն, որովհետեւ ժամանակին նոյն ճակատում ամէնից շատ են քննադատել բանաստեղծին եւ թէ նրա մահը նոյնիսկ ուրախացրել է քննադատողներին:

Արդ՝ Մահարին այն քչերից է, ովքեր կեանքում ամէն ինչ հեղնելու «ճերմակ քարտ» ու անգիր լիազօրութիւններ ունէին: Նրա հեղնասիրութիւնն ու երգիծասիրութիւնը, սակայն, չի խանգարել, որ հասարակութեան մէջ ճանաչուի նաեւ նրա խորունկ իրատեսութիւնն ու լրջամտութիւնը: Հետեւապէս՝ Մահարին չէր կարող հաւատալ իր ասածներին, որովհետեւ իրականութիւնը այդպիսին չէ: Բայց կարող են լինել նուազ խելացի ուրիշները, որ իւրացնեն այդ կարգի անհիմն սրտումները եւ կամաւոր ինքնախարէութեան զոհ դառնան, իրենց հերթին ապակողմնորոշելով այլ կարգի ուրիշների: Ուստի՝ աւելորդ չէ մի քանի խօսքով հարցի մէջ պարզութիւն մտցընելը:

Բնականոն սյույմաններում՝ քննադատելը ոչ մի դէպքում կախել չի նշանակում: Այն կարող է ճիշդ կամ սխալ, արդար կամ անարդար լինել, բայց ոչ մի դէպքում՝ մահապիճիւ: Քննադատել՝ ամէնից ատաճ, — եթէ արժանի է այդպէս կոչուելու, — նշանակում է հաշուի առնել քննադատուողի գոյութիւնը, նրա կենսական կարելիութիւնները, տեսնել նրա յուսաւոր ու ստուերոտ կողմերը եւ ըստ այնմ էլ ենթակային սթափեցնել, օգնել, դրուշացնել վնասակար քայլերից ու արկածներից: Այդ իմաստով էլ հայ ազգային հրատարակախօսութեան ու նաեւ գրականագիտութեան մէջ ժամանակին քննադատուել են թէ՛ Չարենցը եւ թէ՛ ուրիշները, ոչ թէ նրանց մահը կամեմալու, այլ, ընդհակառակն, նրանց առաւել արժանաւոր կեանքի կոչելու միտումով: Կոմունիստական կոչուող աշխարհում է, որ նաեւ «քննադատութիւն» բառի իմաստն է պղծուել, յաճախ այն նոյնացուելով ամէն տեսակի մատուցութիւնների, «հաղանգների», նուատուցումների ու կործանումների հետ: Այնտե՛ղ է, որ ամէն մի միտումնաւոր «քննադատութիւն», ըստ բնկայեալ բարքերի, անսյույման վերահաս կործանման նախանշան է համարուում եւ ըստ այնմ էլ հրահանգաւորուում է ամբողջ հասարակութիւնը: Ուրեմն, արմատական

տարբերութիւնն կայ կոմունիստական եւ ոչ-կոմունիստական շրջանների «փոռաբանութիւններէ» ու «քննադատութիւններէ» իմաստի միջեւ: Առանց այս կէտը հաշուի առնելու՝ անկարելի կը դառնայ ընթացիկ կողմնորոշումը:

Այսօր, ինչպէս որ արդէն ասուեց, Չարենցի բանաստեղծական մեծութեան ճանաչումը ընդհանրական է՝ թէ՛ խորհրդային եւ թէ՛ արտախորհրդային ուրբաններում: Կան հարցին առաւել կամ պակաս դիտակցօրէն մօտեցողներ, բայց չկան բանաստեղծի մեծութիւնը ժխտողներ, դէթ հրապարակօրէն արտայայտուողների շարքում:

Մինչդեռ, ինչպէս որ նոյնպէս ասուեց, Չարենցի նահատակութեան փաստը հաւասար խորութեամբ հաշուի չի առնուում բոլոր ուրբաններում: Դա ո՛չ միայն ինքնաբերաբար մթադնում է բանաստեղծի ամբողջական դէմքը, այլեւ փակ է պահում նրա երկերի որոշ մասի ցուցադրման ու վերլուծման ճանապարհը, չխօսելով այն մասին, որ անճանաչելի է մնում բանաստեղծին ուղեկցած հասարակական միջավայրը՝ իր մա՛նաւանդ քաղաքական կողմերով:

Չարենցի նահատակութեան թեման ընդգրկում է ո՛չ միայն նրա կեանքի վերջին տարիների տուրեայ եղելութիւնների դումարը, այլեւ՝ այդ տարիների ընթացքում դրուած երկերի բովանդակութիւնն ու ճակատագիրը: Մինչեւ հիմա այդ ուղղութեամբ աչքի ընկնող ուսումնասիրութիւններ չեն կատարուել, հասկանալի պատճառներով, բայց կասկած չկայ, որ սպառնալուծ հենց յատկապէս այդ կէտի՛ն պիտի սեւեռուի շատ հետազոտողների խորաթափանց ուշադրութիւնը: Դա անհրաժեշտ կը լինի ո՛չ միայն բուն նիւթի ընթացիկ ուսումնասիրութեան եւ չարենցադիտութիւնը ծաւալային առումով ամբողջացնելու պահանջի տեսակետից, այլեւ՝ չարենցեան ճանապարհի հանդուցային հատուածի տրամադրած տուեալների օգնութեամբ նաեւ նախորդ հատուածները նոր լոյսի տակ տեսնելու իմաստով: Այդպիսի ուշադրութիւնը անխուսափելի է:

Ահա թէ ինչու այս յօդուածի մէջ ուզում եմ շեշտը դնել Չարենցի կեանքի վերջին տարիների բանաստեղծական երկերի որոշ կողմերի վրայ: Ոչ թէ արտասովոր կամ շատ բան ասելու նպատակով, այլ հեռանկար ունեցող, բայց առայժմ անմշակ բնագաւառը ճշգրտու, Չարենցին վերարեբող ուսումնասիրական նիւթերի ընդհանուր շլթայից դա անջատելու եւ յարեւանական այժմեան առիթով ընթերցողի ուշադրութեան յանձնելու ցանկութեամբ: Տուեալ պարագայում Չարենցի բանաստեղծական գործունէութեան վերջին, աւարտական փուլը աչքի առջեւ պահելը ամէնից կարեւորն է թըրուում ինձ, նրա խոռոյտայն ճանապարհը ճշգրութեամբ ընկալելու համար:

Չարենցը, բնականաբար, ստեղծագործել է նաեւ «Գիրք Գաւառաբարի» հատորը հրապարակուելուց յետոյ, առաւել ծանր ու անտանելի պայմաններում, քան աւելի առաջ: Քանի որ այդ ժամանակ քաղաքական պայմանները առաւել մղձաւանջային մթնոլորտ էին ստեղծել երկրում: Բայց Չարենցը արդէն իր հարգատ հոգեւոր ուղին որոշել էր տարիներից ի վեր, համարեա՛ լիովին աղատուել երբեմնի մոլորեցուցիչ պատրանքներից, եթէ չտեսնեք աւելին: Ողու անդիջելի անկախութիւնը յարուցում էր նաեւ անօրինակ եռանդ ու խիզախութիւն, իսկ դա էլ իր հերթին մղում էր տառապանքի ու երկիւղի՝ ստեղծագործութեան առջեւ ծառայած մահացու վտանգների դիմաց:

Եւ այնպէս պատահեց, որ Չարենցը նահատակութիւնից առաջ կնոջը յանձնարարեց՝ ձեռագրերի դռնէ մի մասը պահ տայ՝ քսանամեայ նկարչուհի Ռեդինա Ղազարեանի մօտ: Նկարչուհին հարպատներից մէկի օգնութեամբ կատարեց այդ յանձնարարութիւնը եւ չարենցեան ձեռագրերը մօտ 17 տարի հողի տակ մընալուց յետոյ լոյս աշխարհ դուրս եկան ու 1955 թուին յանձնուեցին բանաստեղծի գուտարերին, իսկ դրանից մօտ 10 տարի անց էլ՝ սկսեցին աստիճանաբար եւ մաս առ մաս հրապարակուել հայաստանեան դրական պարբերականներում:

Բայց ի՞նչ վիճակում են գտնում այդ ձևապահերը :

Հարցի առաւել հաւաստի պատասխանը կարելի է գտնել բանաստեղծի դասեր՝ Անահիտ Չարենցի 1973 թ. «Չարենցեան բնօրրոմներ»-ի ժամանակ տրւած զեկուցման բացատրութիւններում :

«Եղիշէ Չարենցի ձեռագրերը հակասագրի բերումով ցրուեցին եւ մենք յաւախ չգիտեմք, թէ նրանք որտեղ են ծրւարած : Տարիներ անց այդ ձեռագրերի մի մասը մեզ հասաւ խաթարուած ու բլբլկուած : Մերք լայնածաւալ, կարծես հեամեմի աւետարանից պահուած մագաղաթեայ դեղնաւուն թերթեր ու մերք փոքրիկ, խումացած, ծայրերն ու անկիւններն ասես շերամներից խածուած, քայքայուած ու մզլած քաղմաքիւթերիկներ — ահա այսպիսին են այն թղթերը, որոնց շնորհիւ կարստից փրկուել ու մեզ են հասել չարենցեան ինքնագիր գործերը : Յաճախ այնքան փխրուն են այդ թերթիկները, որ փշրում են, երբ անզգոյշ ձեռք ես տալիս : Խաւարի մէջ մնալով, կարծես, երկչոտ են դարձել, խուսափում են լոյսից, ձեռքերից, նայնիսկ նայուածքից» :

«Իսկ այդ թերթիկների վրայ, — շարունակում է զեկուցողը, — Չարենցի մանիշկազոյն քանաքանակով մերք տառաւոր տառ յստակ, խոշոր, մերք ջղային, խժրուած, ջնջումներով ու սրբագրութիւններով լեցուն, երբեմն գրեթէ անընթեռնելի ձեռագիրը խումացել է, հազիւ է կարդացում, կամ էլ բոլորովին չի կարդացում : Չարենցի ձեռագրերում պատահում են թերթիկներ, որոնք ամբողջական, ամտիպ գործից մեզ հասած պատահիկներ են : Շատ ստեղծագործութիւններից պակասում են էջեր, ութնականներ, ու քանականներ, յաճախ էլ մեզ է հասել գործի վերնագիրը միայն» :

Եւ վերջապէս .

«Մակայն սա չարիքի փոքրագոյնն է : Ողբերգականն այն է, որ չարենցեան անտիպ գործերի ինքնագրերի մի զգալի մասը այնպէս է փտել, որ անհնար է փրկել դրանք : Թերթիկների մի մեծ կոյտ պարզապէս մոխիր է դարձել, մի քանի ափ

մոխիր եւ անվերադարձ թաղել է իր մէջ, ո՛վ գիտէ, ինչ ստեղծագործութիւններ : Այս մոխրացած թերթիկները եւ այն, ինչ պիտի գրէր, բայց չհասցրեց գրել Չարենցը, եղաւ թերեւս ժամանակի ամենամեծ կորուստը հայ գրականութեան մէջ» :

Այսպէս, Եղիշէ Չարենցը նահատակեց ստեղծագործական ուժերի ծաղկման տարիքում եւ հայ գրականութեան համար դրանով իսկ, անտարակոյս, շատ բան կորաւ : Իսկ բազմամեայ հալածանքի օրերին, երբ նրա բեղուն գրիչը շարունակում էր ստեղծել, լռելիայն կուտակուեցին ձևապահեր, որոնց ճակատագիրը եւս նախանձելի չէ : Նրանց մի մասը անյայտ կորաւ, մի մասը փտեց եւ միայն փոքր մասը ընթեռնելի դարձաւ ու հրատարակուեց : Այնուամենայնիւ, այդ հրատարակուածն էլ որոշ ծաւալ է կողմում եւ ժամանակին, անտարակոյս, կենթարկուել յատուկ ուսումնասիրութիւնների : Այդ ամէնը թէեւ անձամբ նրկատի ունեմ, այստեղ պիտի անդրադառնամ միայն երեք կտորների՝ վկայութիւնների, որոնք վերաբերում են 1935, 36 եւ 37 թուականներին ու արտացոլում այդ տարիների հատարակական մթնոլորտն ու բանաստեղծի հոգեվիճակը : Կտորները առաջին անգամ զետեղուած են «Գրական թերթ»-ի 1967 թ. Յունուարի 13ի եւ Մայիսի 12ի համարներում, հաջորդի չառած հետագոյ միւս տեղերը :

Չարենցի այդ ստեղծագործութիւնները, ի հարկէ, կարելի է որոշ իմաստով կիսասեւագրութիւն համարել, անաւարտ ու բոլորովին չլրացուած : Առարկայական պատճառները հասկանալի են : Բայց դա այդպէս է՝ դուռ տրուեստի տեսանկիւնից դատելով : Դրա փոխարէն, իբրեւ կենսագրական ու հոգեբանական վկայութիւններ՝ լոյս տեսած բանաստեղծական բեկորները աւելի քան պերճախօս են : Դրանք բանաստեղծի հիմնական տրամագրութիւնների կորազիծը որոշելու եւ չափելու հաստի ուղեհիշներ են, սրբազան տնտեսարանի : Ահա թէ ինչի մասին է խօսում յիշեալ երեք կիսամըշակ երկերում :

գիտել մա՛նուանդ 1921-25 թուականներին գեթ—լուստատեսութեան յարուցած հրապարակութիւններին կողքին :

Չարենցեան մտահոգութիւններն ու եզրայանդումները սրահատ ուշադրաւ չեն, «Ի խորոց սրտի խօսք բնդ Աստուծոյ» (չակերանները հեղինակինն են) տետրապտիքում (99 տող) : Վերնադրից իսկ պարզ է, որ Չարենցը Աստծու դիմաց մենախօսում է նարեկացու եղանակով, թէ՛ եւ տասերպաէս միայն իրեն յատուկ հոգսերի ճնշման տակ : Բանաստեղծութիւնը գրուել է 1936 թ. Յուլիսի 6-8ին եւ այնուհետեւ շարունակուել : Դրա արտաստիպոր տարողութիւնը ընկալելու համար պէտք է կարդալ, ի հարկէ, ամբողջովին, իսկ ներկայացնելու համար՝ պէտք է ղրմել յատուկ ուսումնասիրութեան : Սակայն ներքին մթնոլորտին հաղորդակցուելու համար հատուկենտ տողե՛րն էլ բաւական են :

Չարենցեան մանրանկար երկը եւս նարեկացու սնեղը «Մատենան»ի նման առաջին հայեացքից կրկնութիւնների կոյտ է թւում, նոյնանման ալեբախումների դոմար : Բայց վաղուց ի վեր յայտնի է, թէ իրականում ինչ է ներկայացնում «Մատենան» իր ներքին բազմազանութեամբ ու հարստութեամբ : Չարենցեան ստեղծագործութիւնն էլ իր հերթին թէ՛ եւ ծաւալով շատ է փոքր ու շատ հեռու «Մատենան»ից, իր ձեւական առկայութեամբ իսկ ուղղակի նրա շունչն է փոխանցում, չխօսելով խոր նմանութիւնների մասին : Բուական է յիշել, թէ ով, երբ եւ ինչ պայմաններում է գրել այդ տողերը ու ինչ տեսլու համար՝ անմիջապէս պարզ կը դառնայ դրուածի նշանակալիութիւնը :

Հենց միայն այն իրողութիւնը, որ Չարենցը այլեւս ոչ մի հեղինակութիւն չի տեսնում աշխարհի վրայ՝ իր խոր ու ճակատագրական մտածումները նրա առջեւ փռելու, իր յուսահատական կացութիւնը ներկայացնելու համար, — ինքնին շատ բան է վկայում : Չարենցի ողբը, ճիշդ է, բանաստեղծական է եւ բա-

ցատրելի է առաւելապէս բանաստեղծական օրինաչափութիւններով : Դա կացութիւններ ու վերաբերմունքներ արտայայտելու ինքնայատուկ եղանակ է՝ ըստ ստեղծագործ հեղինակի անունից : Բայց երկի առաջին իսկ տողերից մինչեւ վերջին տողը պարզ երեւում է, որ Չարենցը միայն ինքն իրեն, իր հաւատի կորուստը չի ողբում, այլ նաեւ շատ աւելի լայն ու մեծ, անանձնական արժէքների արժեզրկումը : Այդ զէպքում ակնյայտ է, որ ողբը վկայութիւն է դարբի մասին՝ բանաստեղծի կողմից :

Բանաստեղծը «ի որոց սրտի» ղրմում է Աստծուն .

Ինչպէս դարեր առաջ վկան նարեկացի, —
Քեզ եմ յղում ես ողբս, ո՛վ Արարիչ,
Ես՝ մեղաւոր քերթոյս աստուածարեալ

դարի, —

Ողջակիզեալ արիւնս վարակածիմ . . .

Վաղ աղջամուղջն այնքան ըղձեալ

Այգաբացի

Մայրախուտի փոխուեց արիւնալիմ, —
Ուր մեր արեւն է նոր սուգում արիւնալի,
Որպէս կարմիր գուլի գլխատուածի . . .

Երբ ըղձեալ Այգաբացի նոյնիսկ վաղ աղջամուղջը արիւնալիճ մայրամուտի է փոխում, բնականաբար փակում են բանաստեղծի յոյսի ու հաւատի, հորիզոնները : Նա ի բնէ «ոգու եւ անարիւն հացի կարօտ» լինելով՝ այժմ տեսնում է միայն «արեգնացեալ կացին» : Յիշում է միայն երկրային երեւոյթներին հաւատալու իր երբեմնի ինքնափստահութիւնը, լսկ «ինքնարարիչ նիւթը անուշեղու» եւ այն իր «հանճարի ուժով իրեն եմքարկելու» ցանկութեան իրողութիւնը : Մինչդեռ հիմա .

Այն կանթնած եմ — գուրկ անգամ
դժնի հացից, —
Եւ կախուած է գլխիս — մի արեգնեալ
կացին :

Այս ամէնից յետոյ լիովին ձեռնու-

նայն բանաստեղծը ուրիշ էլք չունի, Աստ-
ծուն գիմեջուց բացի.

Եւ ես տխուր, ինչպէս վկան Նարեկացի՝
Եւ գարիուրեալ այնպէս, եւ մեռակեաց՝
Զարիուրեղի կեանքի հանդէպ անօգ
կանգնած՝

Ես ո՞ւմ դիմեմ, ո՞վ Տէր, — արդ՝
Քեզմից բացի:

Ինչո՞ւ այսպէս անօգ ես մնացի,
Եւ՝ այնքան բարբ՝ յանկարծ անվերադարձ
հանգաւ

Անդրդուելի հաւատս՝ դէպի գալիքն
անգամ, —

Եւ ինձ գերազ մերկան դարձաւ անծիր:
Եւ ներբողներս՝ յղած ծագող
այգաբացին, —

Ոչ երգեմով իմ լույ, այլեւ արեամբ
իմ բորբ,

Ողբ ու տրտունջ դարձան եւ փոխուեցին
լացի:

*Բանաստեղծը այս ողբով ողբում է ա-
յտադայի հանդէպ տածած իր անստան,
անդրդուելի հաւատի անվերադարձ կո-
րուստը, մորմուքում ու գործեալ մոր-
մուքում եւ սոյա աղաւինում աստուա-
ծային ողորմածութեան վերջին ատեա-
նին: Բանաստեղծութիւնն ունարուում է
այսպէս.*

Քեզ եմ կանչում ես արդ, ինչպէս
Նարեկացին...

Յղում եմ ողբս Քեզ՝ սրտիս խորքից, —
Ինչպէս շիւղն է յղում շունչն իր՝

Նորքից, —
Իբրեւ տեսիլք՝ հեռուում յառնած
Արագածին...

Ինչպէս դողդոջ մի շիւղ բարակածիլ՝
Մի երգեցիկ ցօղուն — ովկիախում բերքի

Ես — դաշտերում անծիր իմ հրկիզեալ
երկրի, —

Ես շշուկն եմ միայն շուրջս շշկածի...
Բայց ես գիտեմ, որ դու՝ շնչով

ստեղծարար,
Ինչպէս անձրեւը վարար՝ անգրական
արտում, —

Ոչ մի մտեղ կամ շիւղ չես թողնելու
ծարաւ...

Ես — երգեցիկ եղեգ, — ինչու այսքան
տրտում

Պիտի դողամ լոյսիդ անեզրութեան
հանդէպ,

Երբ երբեք չես եղել՝ դու այդքան
նեղ...

*Մտ բանաստեղծական երկ է եւ կա-
րելի է վերծանել ու մեկնաբանել ուղած
դիրքերից, տարբեր ուղղութեամբ ու մա-
կարդակով, աւելի կամ պակաս խորհրդ-
դատը իմաստներ կորզելով: Բայց բոլոր
կորզումներից առաջ միանգամայն ակըն-
յայտ է, որ չարեհեան տեսագաշար
փուռում է միջնաւ աստուածային մա-
տոյցները, որ այդ տարածութիւնը լըց-
ւած է, տուեալ դէպքում, բացառապէս
ողբի ձայներով, որ այդ ողբը միայն
երկրային նիւթական ու այլ ուժերի հան-
դէպ տածած հաւատը կորցնելու հետե-
ւանք է եւ հողեւոր անհասանելի դորու-
թեանն ապաւինելու ձգտման տրտայայ-
տութիւն, որ այդ ողբը ո՛չ միայն զուտ
անհատական, այլեւ բնդհանուր ու հա-
ւաքական ողբով կացութեամբ է պայ-
մանաւորուած:*

Ի հարկէ, իբրեւ կանոն, անհատ-
կան մակարդակով բնկալուած ողբերգու-
թիւնն է, որ տեսանելի ու հասանելի է
դարձնում եւ բնդհանրական ողբերգու-
թիւնը: Կարեկցական իմաստով չզրպո-
ղի ու չհասկացողի համար աշխարհում
ցաւալարոյց ոչինչ չկայ: Ուստի՝ Չա-
րեհցի դրածները, ինչպէս ասում է,
միայն բանաստեղծութիւն չեն, այլ առա-
ւելապէս բանաստեղծ մարդու կեանքի
վաւերական տարեգրութիւն, ճակատա-
դրի յարուցած ներքին փոթորիկների ան-
միջական արձագանգ: Իսկ Չարեհցն ան-
ձամբ, անկասկած, ողբերգութիւն էր
ապրում:

Ահա թէ ինչ է դրում նա 1937 թ.
Մարտի 28ի գիշերը, իր ծննդեան 40ամ-
եակի առթիւ.

«...Եւ այսպէս ահա ես — 25 տա-
րի ստեղծագործական աշխատանքով հայ-
րենի հերկը խոփով ոգեկան հերկելուց
յետոյ ահա տօնում եմ կրկնակի յոբելեա-
նը — մեռակ ու հալածական պոետ՝ աք-

տրեալ սեփական հայրենիքում՝ հերկի եզնքին հայրենական երգի՝ ամայացած դաժանագոյն եռանդով սեփական նախարարների եւ պետերի՝ հայրենի երգակիցների դեռ մնացած մի քանի խեղճերի յախուռն ցնծու քեան ներքոյ» : Այս իրողութիւնը Չարենցը շատ աւելի մանրամասնութեամբ ներկայացնում է իր ռեբուսանման վերնագրով եւ բաւական ընդարձակ մի չափածոյ երկում, որը սկսել է զբել 1936 թ. Օդոստոսի 29-30-31ին, Ծաղկածորում, եւ շարունակել ու աւարտել 1937 թուի Փետրուարի 17ին, Երեւանում :

Երկը ամբողջութեամբ վերաբերում է այն ժամանակ սանձարձակութեան հասած ռուսական ճնշմանը, որին հայաստանեան մտաւորականութեան ու, մասնաւորապէս՝ գրողների նկատմամբ : Նա աչքի առջեւ է բերում հայոց բողոքարեան պատմութիւնը, յիշում, թէ ինչն է խանդարել հայրենական մտաւորականութիւն ստեղծելու գործին : Եւ ահա, երբ այդպիսի մտաւորականութիւնը նոր-նոր է սկսում ձեւաւորուել ու կազմակերպուել հայրենի հողի վրայ, — վերստին կործանարար Հոլոքն է մոլեղնում հայրենի աշխարհի ու նրա նուիրեալ գործիչների դէմ, այս անգամ արդէն նաեւ ներքին որոշ տարբերի մեղսակցութեամբ : Այդ կէտը Չարենցը յատկապէս շատ է սրում, թէեւ, ի հարկէ, նա չէր կարող չիմանալ, թէ իրականում որտեղից է գալիս Հոլոքը եւ ինչ օրէնքներով : Նա ամէն ինչ, անուշտ, հասկանում էր եւ սկզբից մինչեւ վերջ աւելի շատ խղճում է դահիճների ձայնակիցներին, քան դատապարտում կամ նշաւակում նրանց :

Երկը սկսում է այսպէս .

Ուրպէս գարշ, դեղին տերեւներ, —
Տրում է հողմը, ցրում, —
Անդադար, սերունդէ-սերունդ —
Նայիրեան երգի արեւկեր,
Աներկիր հուետը անմահ,
Որ վաղուց, իր հողից հեռու՝
Ե՛ւ դարեր առաջ, ե՛ւ հիմա —
Քշուել է տաշեղի նման
Աշխարհի բոլոր բացերում . . .

Եւ կրկին, որպէս տերեւներ,
Քշու՛ւմ է հողմը նրանց,
Որ շընկեն, նրանք չամբանան
Հայրենի հողերի վրայ, —
Այլ, իբրեւ դեղին տերեւներ —
Թշնամի դաշտերում մեռնեն :

Այդպէս է եղել առհասարակ, ի մնաս հայոց հայրենիքի ու հանրութեան : Ըստ էութեան, այդպէս է եւ հիմա՝ նոր Հոլոքի բերումով : Չարենցը զիպուկ կերպով նշում է, որ այդ նորը հներից տարբերում է մի շարք էական գծերով : Ամէնից առաջ՝ հայրենիքի զաւակներին ջարդում են այդ նոյն հայրենիքի անունով : Դա ճշգրտէն արտացոլում է այն կայսրութիւնը, երբ դահակալ ոճրագործները անխնայ կերպով ժողովուրդներ էին ջարդում, ի դէմս նրանց հարազատ զաւակների, «Ժողովրդի թշնամիների դէմ պայքարելու» անուան տակ : Ուրեմն՝ «Հոլոքը» ներկայանում է ո՛չ միայն իր դաժանութեամբ, այլեւ՝ անսահման նենդութեամբ ու երկերեսանիւթեամբ :

Այդ ահակալ վիճակը տեսնում են բոլորը, նոր ոտքի ելնող մանուկներից մինչեւ արեւի ձերբակալները : Տեսնում է նաեւ Չարենցը .

Եւ ընկնում եմ, ընկնում անդադար,
Ինչպէս շուրջս — տերեւներն աշնան, —
Հայրենի հանդերում բուսեամ
Յողուններն՝ հողմերին օտար . . .
Ընկնում եմ, ընկնում եմ անվերջ —
Եւ ծիլեր՝ դեռ նուրբ, նորընծայ,
Եւ — արմատից հնձած —
Բարդիներ՝ արդէն աստղամերձ . . .

Այդպիսին է իրականութիւնը : Հալածում ու խեղդում է հայոց հայրենական ողին՝ իր կրողների հետ միասին : Դրանից աւելի ի՞նչը կարող է տառապանք պատճառել եւ յուսահատութեան հասցնել հայրենաշունչ բանաստեղծին : Բայց նա միաժամանակ նայում է անցեալին եւ անցեալի ուսանելի օրինակով կրկին համոզում, որ, միեւնոյն է, այս ամէնից յետո՛յ էլ դարձեալ անմահ է «նայիրեան երգի սաղմը», նայիրեան ու

դին, արեհական ու սգեկան միւս ստորագրելիներով: Բանաստեղծը սրտառուչ խօսքով դիմում է իր սլաշառած նայիրեան սրտին:

Անճմեւի, ցրտերի, շոգի,
Տանջանքի, սուլի, հարուածի,
Մեհուքեան, դառնութեան, լացի
Բոցերում կարծրացած, օ՛ր, ոգի՛...
Օ, ոգի, օ, սաղմ նայիրեան
Հաննարի, — օ, ինքնութիւն, —
Աշխարհում չկար ո՛չ մի քոյն,
Որ լուծէր հիւլէն քո արեան...

Սա Ա՛ւս հանրայայտ իրականութիւն է, բաղմիջս փորձուած ու ստուգուած իրականութիւն: Ուստի՛ Չարենցը չի կարող զսպել իր հոգու անքակտելի կապերը վերստին հաստատելու, ներքին երգումը նորոգելու ցանկութիւնը, եւ նա անցնում է այսպիսի դոփերզութեան.

Ես գովքն եմ երգում՝ քս անմահ
Ինքնութեանը այդ բարձրաբերձ,
Որ, իբրեւ անխորտակ մի բերդ,
Դարձրեց մեզ — յաւիտեան — մա՛րդ: —
Ես գովք եմ երգում մեր ոգուն,
Որ անկոր ինքնութեամբ կենդանի՝
Փորձութեամբ կարծրացաւ քանի —
Այնքան պիտի դարձաւ ու սոկուն:

Ես գովք եմ երգում նայիրեան
Պանծալի ոգուն հայրենի,
Որ հրով կոպիտած հայրերից
Ժառանգել եմ ես՝ հրի հետ արեան: —
Ես գովք եմ երգում (ցեծութեան)
Յանունն հօր, Ե՛ւ որդու, Ե՛ւ հոգու, —
Նայիրեան բարձրաբերձ ոգուն,
Նայիրեան սաղմին անկորուստ...

Այս ամէնով հանգերձ, կայ ներկայ գժրախտ իրականութիւնը, երկրով մէկ մոյգեցնող Հոգիւր, կան եւ նրա տեղական կամայ-սկամայ ձայնակիցները: Չարենցը դիմում է վերջիններին, սթափման

խօսքեր ասում, զգոստութեան հրաւիրում, զգուշացնում հոգեւոր մահից:

Բայց դո՛ւք, — դո՛ւք, — շուարած,
Չեք մահից առաջ մահացող,
Ինքնամեք լիքնութեան հացով
Մահատիւ կեանքին ձեր փարած, —
Հայրենի հողմի այս մոլի
Գերանդու եռանդուն քափից
Գետնահար փռուած, անխօս,
Օ, վերջին հերկերի ծիլեր...

Գրչակիցների առնուազն բարոյական ուխտագրութիւնը, թուլակամութիւնը, խեղճութիւնը ու երբեմն էլ խորրոզութիւնը ամենամեծ ցտուխ է պատճառում բանաստեղծին: Եւ նա, անկարող լինելով այդ ամէնի սպառիչ բացատրութիւնը վերջնականօրէն ձեւակերպել, բանաստեղծութիւնն սւարտում է բացաղանջական հարցականներով ու տխուր իրականութեան պարզ գրանցումով.

Օ՛ր, այդ ի՞նչ, այդ ի՞նչ գորաւոր
Բացի էր՝ ոգու ցեց խոցէ,
Որ այդքան հե՛շտ սոցցեց
Նայիրեան ոգին գրահաւոր,
Չեր ոգու անկոխ ու անեղծ
Ինքնութիւնն հազարամեայ,
Որպէս մաշկ մարմնի գառամեայ, —
Եւ, որդի նման, մտաւ ներս...

Առաւելագէտ այսպիսի պայմաններում եւ այսպիսի մտատանջութիւններէ մէջ անցան Եղիշէ Չարենցի կեանքի մահաւանդ վերջին տարիները: Այդ տարիները, բնականաբար, նախորդ տարիների տրամաբանական շարունակութիւնն էին: Բայց եւ այնպէս, դրանք աչքի են ընկնում նաեւ որոշակի առանձնայատկութիւններով, որոնք բաւական ցայտուն տրտայայտութիւն են զտել բանաստեղծի սղբաչաղախ ու բողբոջունչ երկերում:

Ե. Զ Ա Ր Ե Ն Ց

«Ի ԽՈՐՈՑ ՍՐՏԻ ԽՕՍՔ ԸՆԴ ԱՍՏՈՒԾՈՅ»(*)

Տ Ե Տ Ր Ա Պ Տ Ի Ք Ո Ս

Ա.

Ինչպէս դարեր առաջ-վկան Նարեկացի, —
 Քեզ եմ յղում ես ողբըս, ո՛վ Արարիչ,
 ես՝ մեղաւոր բերթողս աստուածարեալ դարի, —
 Ողջակիզեալ արիւնքս վարակածին...
 Վաղ ազգամուղջն այնքան ըզձեալ Այգաբացի
 Մայրամուտի փոխուեց արիւնային, —
 Ու մեր ա՛րեւն է նոր սուգում արիւնալի,
 Որպէս կարմիր գլուխ գլխատուածի...
 Բորք աչքերում սակայն հաւատացեալ քիւրոց
 Ծովածառալ արեան ցոլքը շատայլածին, —
 Յուլանում է, իբրեւ ցալ գնծութեան մերոյ:
 Եւ արեգակն է հին վերադառնում դարձեալ
 Արեւմուտքից, իբրեւ յանուն արդար հացի՛
 Միջնադարեան կացին մի արեգնացեալ...
 6-Ց. VII 1936 *Երեւան*

Բ.

Եւ ես դիմում եմ Քեզ, ո՛վ արարիչ, դարձեալ,
 Ինչպէս վկան մեր հին՝ Նարեկացին, —
 Քանզի՛ կարօտ ոգու եւ սնարիւն հացի, —
 Տեսնում եմ լոկ-կացին արեգնացեալ:
 Իբրեւ մի նոր վկայ՝ վաղուց աստուածարեալ՝
 ես՝ Խրկրային՝ երկրին լոկ հաւատացի, —
 Զըկամեցայ Աստուած — ես՝ ինձանից բացի, —
 Ոչ գոյութիւն՝ ինձ պէս գէթ կատարեալ:
 Ես անասցի միայն — իմ հանճարի ձայնին: —
 Ճտնաչեցի լոկ նիւթն ինքնաբարիչ՝
 Եւ՝ հանճարիս ուժով ենթարկեցի այն ինձ:
 Եւ-Քունուար ինքեան, որպէս կարիւն՝
 Ահա կանգնած եմ-գուրկ անգամ դժնի հացից, —
 Եւ կախուած է գլխիս — մի արեգնեալ կացին:

Բ.

Եւ ես դիմում եմ Քեզ, ո՛վ անծանօթ, դարձեալ,—
 Ինչպէս վկան անեղծ՝ Նարեկացին, —
 Քանզի՛ կարօտ ոգու եւ սնարիւն հացի —

(*) Ե. Զարեհի այս ստեղծագործութիւնը
 «Գրական Քերք»-ի խմբագրութեանն է տրամադրել
 Եկարիչ Ռեզինա Ղազարեանը:

Տեսնում եմ լոկ-կացին արեգնացեալ:
 Իսկ այգաբացը մեր այն ըզձացեալ,
 Որ բերելու էր խինդ եւ խոնջութիւն հացի,
 Հացածարաւ, սովեալ արարածին, —
 Եւ ծարաւի ոգուն ցոլք ինքնութեան անծայր, —
 Ես չծագած, աւա՛ղ, — Այդն իրիկուն դարձաւ, —
 Եւ արնացոյ՛ք, կարմիր աղջամուղջում վերջին՝
 Գալարուել եմ իրար վաղուայ օր եւ անցեալ:
 Օ՛ր, խնդութիւն խզնուկ-եղձուկ ազգամուղջի, —
 Եւ արնացոյ՛ք՝ ընդդէմ անայգ Այգաբացի՝
 Մայրամուտից ելնող-արեգնացեալ կացին...
 Գ.

Գ.

Եւ ես-տխուր, ինչպէս վկան Նարեկացի՛
 Եւ զարհուրեալ այնպէս, եւ մեռակեաց՝
 Զարհուրելի կեանքի հանդէպ անօգ կանգնած՝
 Ես ո՛ւմ դիմեմ, ո՛վ Տէր,— արդ՝ Քեզանից բացի:

Ինչո՞ւ այսպէս անօգ ես մնացի,
 Եւ՝ այնքան բորք՝ յանկարծ անվերադարձ հանգաւ
 Անդրդուելի հաւատըս՝ դէպի գալիքն անգամ, —
 Եւ ինձ գերող ներկան-դարձաւ անծիր:
 Եւ ներբողներս՝ յղած ծագող այգաբացին, —
 Ոչ երգերով իմ լոկ, այլիւ արեւմբ իմ բորք
 Ողբ ու տրտունջ դարձան եւ փոխուեցին լացի:
 Կեա՛նքն եմ մեռած արդեօք՝ ոգեկոչում
 դարձեալ, —
 Երագելով, որ այն վերադառնայ՝
 Ղազարոսի նման մահուան ճախից յառնած...
 Արեգակին եւ իմ, եւ իմ արեամբ սաղայծ:

Գ.

Եւ ես-տխուր որպէս վկան Նարեկացի, —
 Եւ զարհուրեալ այնպէս, եւ մեռակեաց,
 Զարհուրանքիս հանդէպ — անօգ կանգնած՝
 Դիմում եմ Քեզ ահա, — ո՛վ արարիչ անծին:
 Ինչո՞ւ այսօր անօգ ես մնացի, —
 Եւ ոչ հուր սիրտ մնաց, ոչ հրապոյր հանգած, —
 Որպէսզի կամէրս-ա՛յլ մի արշայոյս ցանկայ, —
 Եթէ չդողայ անկամ-յանուն լոկ ժամտ Հացի:
 Ա՛յր, — դժնեցի անգամ վերջին Այգաբացի
 Արարչամերժ միայն յանուն Նիւթի ըզձեալ, —
 Անիծելով՝ ե՛ւ տեմչ, ե՛ւ քովչութիւն լացի:

Ընդհանուր հարցումներ և շեղումներ

ՈՂԲ՝ ԿՈՐՐՈՒՍԵԱԼ ԹՈՒՂԹԵՐՈՒ

Եկատարինա Սուրբաթեանը վկայում է, որ Չ.ն Յ. Սուրբաթեանին զրել էր նամակ Պոլսից 10 մեծագիր էջերի վրայ, որն այլ ձևագրերի հետ միասին անհետացել է 1938ին: («Երկիր», Զ. Խատր, էջ 726)

Հախումեանի վկայութեամբ իրեն հասցեատրած Չ.ի այս նամակներից բացի, ինքը ունեցել է երկու նամակ եւս, որոնք կորել են բոլորովին վերջերս. ներկայացրել է «Յիշողութիւններ Եղիշէ Զարեմցի մասին» զրբում իր յուշերին կից գեանդեղու համար, յուշերը չեն տպագրուել, նամակներից երկուսն էլ կորել են՝ ձևագրից ձեռք անցնելով: («Երկիր», Զ. Խատր, էջ 711)

Այս հայտնաւ նամակը, որի էութիւնը շարտրեցի այստեղ համոտոտակի, առատ լոյս կը սփռէր Չարենցի ստեղծողործական էվոլիւցիոյ վրայ, սակայն, դժբախտաբար, այլ նամակների հետ չի պահպանուել:

ՄԻԲԱՅԷԼ ՄԱԶՄԱՆԵԱՆ
(«Յիշողութիւններ Եղիշէ Զարեմցի մասին», էջ 73)

Այսպիսով սկսուեց իմ նամակադրութիւնը մեծ բանաստեղծի հետ: Չարենցի նամակները վերին աստիճանի հետաքրքրական էին ոչ միայն ժամանակի զրական հարցերի լուսաբանման, այլև իր անձնատրութեան ընթացիկ մտայնութեան տեսակետից: Իմ կեանքի հետագայ վայրիվերումների ընթացքում, դժբախտաբար, այդ նամակներն անհետացան: Ո՛վ գիտէ, դուցէ ոչնչացած չեն եւ մի որեւէ տեղից լոյս ընկնեն նրանք:

ՎԱՂԱՐՇԱԿ ՆՈՐԵՆՑ
(«Յուշեր եւ արձագանգներ», էջ 101)

Չարենցին ինձ Յ-4 նամակ է ուղարկել, որոնցում մանրամասն գրում էր, թէ ո՞ր էջում ինչպիսի ուղղումներ է կատարել, նոյնիսկ կէտադրական ուղղումների մասին էր ինձ տեղեակ պահում, գրում էր, թէ քանի՞ անգամ է մամուլները կարգացել: Վերջում փոստով ինձ ուղարկեց գրքիս մամուլները, որ ես կարգում եւ ուղարկեմ վերջնական տպագրութեան: Վշտանալու չափ ափսոսում եմ, որ Չարենցի այնքան արժէքաւոր նամակները թղթերիս մէջ կորսուել են:

ԱՐԱՔԱ
(«Յիշողութիւններ Եղիշէ Զարեմցի մասին», էջ 273)

Ի՞նչ կարող էի կանխագուշակել, որ կ'անցնի շատ կարճ ժամանակ ու չի լինի այս դալուի գեմբով, իմաստալից հայեացքով, գանդրահեր բանաստեղծը, ու չի լինի նրա «խոստացած դիրքը», եւ անհետ կը կորչեն ինձ համար այնքան նուիրական, այնքան թանկ բանաստեղծութիւնները:

ՀՌԻՓՍԻՄԷ ՊՕՂՈՍԵԱՆ
(«Սովետական զրակամութիւն», 1967, ԻԻԼ 9)

«De profundis»ը լոյս չտեսաւ: Հիմա էլ նրա հեաքերը չկան: Ես կրկին ու կրկին ուշի-ուշով կարդում եմ մեծ բանաստեղծի «Իպիֆակամ լուսաբաց»ի պայծառ, արեւաշող էջերը, եւ իմ հայեացքը կանդ է տանում «Այրամ Երգեր»ի վրայ... Օ՛, երանի թէ այդ երգերի հետ դնացած չլինէր ըս հոգու այն ահուոր մտածելը տուտյանքի, որ կրում էր «De profundis» սուները, իմ անմահացած հոգեղայր, իմ ուսուցիչ:

Վ. ՆՈՐԵՆՑ
(«Յուշեր եւ արձագանգներ», էջ 117)

ՋԻՒՆԷ ԵՐԿԻՐ, ՋԻՒՆԷ ԵՐԱԶ...

Ջիւնէ երկիր, ձիւնէ երազ,
 Ու փեղկերու ետին սառող ձիւնէ կղպանք,
 Ուրկէ աչք մը մահագոյն՝ իր իսկ տեսէն թափնուած՝
 Կ'որսար անդուլ ամէն թարքում կենսախայտ...
 Այն օրերուն,
 Ջիւնապիտակ հեֆիաթ մըն էր ամայութիւնն անսահման,
 Որուն թախծոտ փոզոցներուն
 Ստուեր մը լո՛ւռ
 Կ'որոնէր իր նմանը ստուերներուն մէջ ի գո՛ւր...
 Ու ֆայլերուն տակ կաթկթող արեան հեռքը անջնջելի
 Իր հասցէն էր,
 Զոր կը բաշխէր
 Փակ փեղկերու ետին պահուած սարսափահար մարդոց բոլոր:
 Այն օրերուն, երբ ձիւնածածկ հեֆիաթ մըն էր ամայութիւնը անսահման,
 Ու թախիծն երբ հեֆիաթ կ'ըսէր ծալապատիկ թռոններուն՝
 Իր շրթներէն ծլարձակուած երգը կարմիր վարդեր վառեց...
 Ու փեղկերուն ետին սարսող երազանքներն հազարերանգ
 Նշուկեցին մտասեւեռ աչքերուն մէջ իբրեւ պատրանք...
 Ամէն ստուեր,
 Մշուշային հանդերձանքէն ա՛լ մերկացած՝
 Մասիս-մասիս հողը մաղեց՝ իրեն համար արեգակներ որոնելու:
 Լուսաբացին,
 Երբ թռչուններն առասպելի
 Գաղքեցին,
 Ամէն ստուեր անհանգրուան տերեւ մըն էր դեղնավարս՝
 Ջիւնէ երկիր, ձիւնէ երազ...:

ԱՂԱՄԻ ԽԱՆՋԵԱՆԻ ՄԱՍԻՆ

... Բանաստեղծի թղթերում մնացել է աւարտան ու անաւարտ բանաստեղծութիւնների մի շարք՝ բազմաթիւ տարբերակներով՝ զբօսած Ազատի Խանջեանի մահուան անմիջական սոցուսբան տակ: Ըստ Չարենցի մտայնացման, այս շարքը պէտք է բողկացած լինէր ութ ստեղծագործութիւններից հինգը, մնացել են նաեւ բազում տարբերակներ՝ զանազան թղթերի վրայ, ինչպէս նաեւ ստեղծանքի վերնագրերը. «Գոփին նայիրական», «Մայրը», «Սարգիս», «Զատանցանի», «Սանեա փտմանի», «Սոնետ անկշռի», «Իմաստութիւն»: Այս ստեղծագործում ամբողջացում է մտ ու հարգաս մարդու և սիրելի ընկերը կերպարը, երգում է իր վշտը, Խանջեանի մահուան ու յարկաւորութեան մահբամանութիւնները, ոգրում է իր «հերոսական, չքնաղ բարեկամը» մահը:

Ա. Զ.



ՍՈՆԵՏ ՔՍՏՄՆԵԼԻ

Նա պառկած է նախկին սեղանատան միզում, Անփու բօքէն գրում յի սեղանի վրայ. իր դագաղում փայտեայ — Եւ նախատին նրա — Բստմանի կանգչել էր ծաղիկների մի կոյտ:

Մագաղաթի նման ողորկ, ապակեդոյն, կարծես կիզել էր մի անագորայն կրակ — Պապրում էր դէմքի ալաբատորը բարակ Եւ ոչ մի խոս կամ կիրք, իբրեւ պարզամ ոգու,

Ոչ մի խորտուրդ, աւճ, կամ երագանք չնչին. — Բիլ տակալուց ծուլած նրբին մտոնեքն անգամ Անկամ կտոչել էին մտացուրեան շնչին...

Մի՞քէ Գոփինն էր այդ վերջին, նայիրական Արքայակնը ննջած յաւերժական քնով, — Գափնեւոյում միայն... իր սրբիմով:

ԻՄԱՍՏՈՒԹԻՒՆ

Խմաստուն է միայն քառուղիներ հարթոյ վազուայ յաջորդը քո այն երջանիկ, — Որ պիտի գայ գիտեմ — Եւ տեխնիկ հետ քո Մեր յարդուրեան լեզուիդ մահուան նաչից հանի...


Ե. ԶԱՐԵՆՑ

Խանջեանը ուղղակի կոպանարում էր այն ոգայնական սանձարձակ տարբերին, որոնք բոյն էին գրել հայ ինտելիգենցիայի մէջ, գրողների մի ոքոչ հատուածում, որոնք բացայայտ պայքար էին մղում հայ ժողովրդի ձեռով ազգային, բովանդակութեամբ սոցիալիստական կուլտուրայի դէմ, հոկադրելով դրան ձեռով ազգային Եւ բովանդակութեամբ ազգայնական կուլտուրայի հակադրութեան փորձուրը:

Լ. ԲԵՐԻԱ

Ազատի Խանջեան Ծ Յուլիս 1936ին զնգակահարուեցաւ, Ակուէլ Բուկուսնց՝ Խանջեանի զնգակահարութեանն ուղիղ ամիս մը հաջ բանտ նետուեցաւ, իսկ Չարենց ամբողջ տարի մը ու աւելի ժամանակ դարբար մնաց, ու կարգաց ինչ որ գրուեցաւ իր բարեկամներուն մասին, լսեց ինչ որ ըսուեցաւ, գրաց սարքում զուին բովանդակ ար-

ԱԿՍԵԼ ԲԱԿՈՒՆՅԻ ՄԱՍԻՆ



Ազիւ զպայտմով ու տնճան սիրով է շքն-
 շում Չարենցի ներքոյը Ակսել Բակունցին, զըր-
 ւած 1936ին, նշա մահուան յուրք տանելու զիշե-
 րը: Այս բանաստեղծութիւնը արտասուտիանն ու
 հեծկյանքի ընդհատ հատաչանքներով լեցուն
 հրոժեշտի խօսք է, արտասանուած բարեկամի կող-
 մից՝ բարեկամի անվերադարձ մեկնման առթիւ:
 Այստեղ շատ խիստ ձեւաւորուած են Չարենցի
 վերարեմունքն ու ոչըր Բակունցի ստեղծագոր-
 ծութեան հանդէպ: «Միքնաճոք»ի հեղինակի կը-
 կելի մէջ «մեր տրեան սպա» խորհուրդն է զգում
 բանաստեղծը եւ հայ ժողովրդի զարեւով տեն-
 ջած խաղաղութեան երզը: Բայց միտն Բակունց-
 արուեստագէտը չէ, այլ նաեւ Բակունց-մարդն է
 յտնում այս բանաստեղծութեան միջից՝ հայրե-
 նարայր, տատպած, վեհանձնն ու անարատ: Ընդ-
 միշտ հետպոյ սիրելի մարդու ետեւից բանաս-
 տեղծի արձակած նայուածքի տրուութիւնն է այս
 ներքոյի յագահանութեան գաղտնիքը:

Ա. Զ.

*
**

Եւ բառերի համար քա մարմարեայ
 Հնամենի բուրեան, սրպէս մեր հին
 Քարաքանդակ անդուռ մատուռների
 Անջնջելի գրերը հնադարեան, —
 Եւ միտոնի նման սրբագնացոյն,
 Քն երգերի մա՛նուր սկիհներում պահուած
 Խորհուրդների համար մշտախմայ,
 Որպէս խորհուրդը մեր այրական ոգու,
 Քն «Միքնաճոք» համար եւ յուսեղէն՝
 Արթինիկի յուշով սրբագործուած յաւէտ,
 «Ալպիական ծաղկի» այն բուրաւէտ
 Որ բուրելու է յար անհիւքեղէն,
 Եւ վերջապէս քն վեհ, հերոսական
 Սերմնացանի համար, որ ձեռքերով վսեմ
 Շաղում է շողք ու սերմ անանձնական,
 Այս ամէնի՛ համար եւ Ծիրանի
 Հագարամեայ փողի համար քն այն,
 Որ դարերով տեհչած խաղաղութեան
 Երգն է հնչում, եւ մեր ժողովուրդը քանի
 Ունի գէթ ափ մի հոգ արեգակի մերքայ,
 Հնչելու է երգեր եղբայրական:
 Այս ամէնի համար, օ՛, խեղճ իմ բարեկամ,
 Ես քեզ օրհնում եմ արդ իմ անաղարտ երգով,
 Այս ամէնի համար եւ քն եղբրական
 Տառապանքի համար, որ արգ կրկին
 Վիտալիս է խառնում քն անաղարտ երգին,
 Ես քեզ պարզում եմ ձեռք եղբայրական:
 Եւ մերքոյում եմ քեզ սևա կրկին անեղձ
 Իմ շուրքերով, ինչպէս օրեր առաջ,
 Երբ դու դեռ այր էիր մի անարատ,
 Եւ ես ընկերն էի քն բանաստեղծ:

Գաշնակ Բակունցը եւ ուրիշներ, Խանջեանի
 ցուցումով աշխատում էին անցկացնել իրենց հա-
 կայեղափոխական դրուքիւնները: Նրանք պա-
 հանջում էին, որպէսզի կիմն բանուորների եւ
 զինւորացիների յեղափոխական կռիւն արտայայտող
 կիմնակարների փոխարէն՝ ցուցադրի գաշնակ ա-
 ւանտիրիստների յարձակումն օտոմանեան բան-
 կի վրայ. առաջարկում էին կիմնակար պատրաս-
 տել հակայեղափոխական դաշնակ-խմբապետ Անդ-
 րանիկի մասին:

Ա. ԱՄԱՏԱՌՆԻ

Հարութիւնը, ու մահուան մթնոլորտին մէջ սիրտ
 րբաւ իր ու ընկերներուն ողջ տրամբ յանձնելու
 թուղթերուն, սրտնք, զրականին զուգահեռ՝ վկա-
 յարանական նշանակութիւնն մը ունին այսօր:
 Չարենց՝ ստալինեան նախճիբին մեծագոյն
 նահատակը ու ամէնէն գժբարտը...

Քաղաքային հարցումներ և շրջանային

ՀԵՏԱՔՐՔՐԱԿԱՆ Ն Ո Ր Ե Ր

Չարենցի պրեմիում ուղղակի վրասում են Սիրամանթոսյան դարձումը և ուսուցիչները («Ստալոն առաջ ու իրիկուրնե իրիկուրնե», «Հուրիգոնե իրիկուրնե», «Եկա՛ն, Եկա՛ն, Եկա՛ն անոնե», Եւայլն, Եւայլն), որ անկասկած է դարձնում «Երկարաբուսած աւերիւններ»ի գրական ծաղուածը (Սիրամանթո սոնի «Երկարաբուսած աւերիւններ»):

Ս. ԱՂԱՔԱՔԱՆ
(«Եղիշէ Չարենց», էջ 155)

Անգլիացի գրող, ֆանտաստիկ վեպերի հեղինակ Հերբերտ Ուելսի «ժամանակի մեքենան» վեպի հետևողութեամբ գրել է «Ես եւ Իլիւշը»:

(Զ. Խառոյ, էջ 710)

Մի անգամ գրուցեցինք մենք իր ստեղծագործութեան սկզբնական շրջանի մասին, ու Չարենցն առաջ, որ «Սոմա» պոեմը նա գրել է կարգաւոր Օվսենտիկո-Կուրիկովիու մէկ յոգուածը վեպագրի վերաբերեալ:

ԽՈՐԷՆ ՍԱՐԳՍԵԱՆ
(«Յիշուցութիւններ Եղիշէ Չարենցի մասին», էջ 350)

«Հոկտեմբեր 25-26 1917» բանաստեղծութեան մասին ինքը՝ Չարենցը մի նամակում ստեյ է, որ այն գրուած է պուշկինեան «Պիլիմեդե հեծեալ»ի սճով, նրա համար բնորոշ ցեղաբաններով:

ԷԴ. ՋՐԲԱՅԵԱՆ
(«Աշխարհաստեղծութեան և վարպետութիւն», էջ 201)

Ի միջի ալից, Բելու օրինակով գրեց նաեւ «Արիւն»ն, Լ, ըստ իս, աւելի լաւ, քան Բելին:

Գրեց «Նժոյցները» Բարմանի հետևողութեամբ:
ՍՏ. ՉՕՐԵԱՆ
(«Մովետական գրականութիւն» 1977, քիւ 8, էջ 160)

Կասկածից վեր է, որ Մուսային դիմելու բանաստեղծական հարցանքը կալիս է նեկրոսոսից: Որքան էլ Մուսային հետ նրանց զրոյցը տարբեր ինքիւրներ արձարծէր ու կոչում լինէր տարբեր նպատակներ, արուեստը ժողովրդին ծոռայցիներու պահանջի մէջ նրանք նայնանում են: Մուսային հասցէագրած մի շարք բանաստեղծութիւններում նեկրոսոսի հանրագումարի է բերում անցած ճանապարհի արդիւնքները, կատարում ինքնազնաւորումներ: Այդպէս է անում նաեւ Չարենցը:

ԳՍՈՆԻԿ ԱՆԱՆԵԱՆ
(«Գրական քերթ», 1971, քիւ 49)

ՔԻՉ ՊՈՌԱ, ԶԱՐԵՆՑ...

Առաւօտուն, երբ արբնեամ,
Ես գիւ դատարկ կը զգամ նորէն
Ու կը սասկամ...

Արարչութեան բարի ոգին
Կարեկցանքով
Կը բռնէ ձեռքս տկար,
Դուրս կը բերէ անկողինէս
Ու մտերիմ խստութեամբ՝
Ծանօթ բռներ կը շնչայ:

(Մի՛ պոռար, Զարենց,
Առնուազն կամա՛ց պոռա,
Եւ կարելի եղածին չափ նուա՛գ պոռա,
Հոգի՛ Զարենց...):

Օ՛, ներեցէ՛ք, բնկերներ,
Որ վերստին պիտի մեկնիմ ձեր աշխարհէն.
Իմ աշխարհի տէրերն անտէր
Կը ստիպեն, որ աճապարեմ:

Տեսէ՛ք, երբիս արտաբախիծ կշռոյթին մէջ՝
Եւլագարուած գորութիւնս հաւաքելով
Օդին մէջէն կը սաւառնիմ՝ բեղմնափռ յորսալու:

Համբոյրներու վերջին հիւլէն
Քաժնուեցէ՛ք ձեր միջեւ,
Ապա դարձէ՛ք սուր ձեր
Ու ներեցէ՛ք, որ շատ երկար պիտի մնամ առանձին:

(Քի՛չ պոռա, Զարենց,
Առնուազն կամա՛ց պոռա
Եւ կարելի եղածին չափ նուա՛գ պոռա,
Հոգի՛ Զարենց,
Ձայնիդ պայթող միլիոնաւոր բջիջներէն
Բողբոջ բռներս կրճան մոռնալ կշռոյթն իրենց,
Մի՛ պոռար, Զարենց...):

ՊԵՏՐՈՍ ՀԵՐԵԱՆ

Ընագին հարցումներ և շարունակներ «ՄԻ ՉԵՉՈՏ, ՅԱԾՐԱՃԱԿԱՏ ԿԻՆՏՕ»

Չարենց, ինչպէս ծանօթ է ամէնուն, իբրև ժողովուրդի թշնամի, հայրենիքի պաւստան, գաշնակ, արոցկիստ եւ մահապաւ այլ մեղքերով ամբաստանուած գրողներու առաջին խումբին մէջ չէր գտնուեր, Բակունցի, Քոսթովկնցի, Մահարիի հետ բանա չնետուեցաւ եւ առաջին օրերուն այն տպագրութիւնը կար, որ իբրև բազմաբայի եւ բանաստեղծ ամէնէն աւելի հաշմանքներու ենթարկուած ըլլալով հանդերձ՝ պիտի խնայալի իրեն միտներուն բախար:

Հարց կը ծագի, թէ Չարենց կրնա՞ր խաւտափել ստալինեան անարկաւ այդ մաքրագործումներէն:

Այո, կ'ըսեն կարգ մը վկայութիւններ, Չարենց կրնար փրկել ինքզինք, եթէ ինք ուզէր:

Ուշադրաւ է իր կրտսեր ողջկան, Անահիտ Չարենցի խօսքը.

«Մերք էլ Չարենցի բանաստեղծութիւններում խուլ կնչում է այն արտասանքը, թէ ինչու ինքն էլ նրանց մէջ չէ. մի՞թէ ինքը արժանի չէ բաժանելու նրանց հետ «Գողգոթան» լեռան այն սնուց մահի՝ խաչելութեան»:

Իր բանա նետուած ընկերներուն ճակատագիրը կամաւ բաժնելու Չարենցի այդ արածազրութեան մասին տկնարկութիւն մը սինի նաև քննադատ Հրանտ Քամբազեան.

«Քուում է, բանաստեղծն ապրում է անյարմարութեան մի ծանր զգացում, գտնուելով ազնիւ ընկերներից, ամբաստանուած գրողներից ու մտածողներից հետո, ազատութեան մէջ, թուում է, նա ամէն ջանք գործ է դնում՝ իրեն վիեակուած բայտի հանգուցալուծումը արագացնելու համար: Փաստերը բազմաթիւ են, նրանց կարելի է աւելցնել նաև անհատի պաշտամունքի կամ ուղղակի նշանաւոր անհատի դէմ գրած բանաստեղծութիւնը»:

«Նշանաւոր տնհար», հասկնալի է հարկաւ, Ստալինն է, բայց ուղղակի անոր դէմ գրուած ու բանաստեղծին մահը արագացնող պատճառներէն մէկը համարուող մ'չ բանաստեղծութիւնը ներկայացուցած է Քամբազեան եւ ոչ այ տուած է անոր տնուեր:

Մենք, բարեօրին պատահարաբար, գրօտաշրջիկի մը տետրակէն արտագրած ենք «նշանաւոր տնհարին» զէմ տկնարկութիւններ բովանդակող կտոր մը, որ ուժեղ բան մը չէ թէեւ, բայց պլոտիկ լոյս մը կը նետէ «ցածրաճակատ կինտոյի» մասին ունեցած Չարենցի արածազրութեան վրայ:

Ճտկաւոր կօշիկներ հագին,
Գալիփէ շալվար եւ ապա —
Կովկասեան նեղ գօտի կազմ,
Սեւ խալաթ՝ օճիքն ահագին, —
Մի ռուքը — կրեմլի վրայ կիւն,
Միւսը — Ուրալի վրայ, —
Իրաւացի է կերպարանքը նրա,
Չարտուրելի երիւոյթը՝ չեղեալ
Աշխարհում՝ օրերից սուաչին: —

Հոտ է գալիս կրկին արեան
Այս վարպետի եփած մաշից: —
Վեռուկ է սա հնադարեան,

Շառաւի՞ղն է Շահ-Աբասի,
Որ հախտիօր խանդով լեցան
Յարերի գահն ելած հագիւ՝
Մարքսեան, — սևաւալիկ
Հրդեհների հուրիւր բացը
Երկրագնդի մի փոզացը
Կամ բարձր օճիք խալաթ հագին,
Մի ռուքը դրած վրաստան
Միւսը — Վլատիվոստոյ,
Գլուխը ամպերին հասած, —
Բռնել է ահոկիլ, անթով
Կոլոսի նումն մի կացին
Մի չեչոտ, ցածրաճակատ կինտո:

Քամբազեանի տկնարկը ա՞յս կտորին կը վերաբերի արդեօք, թէ Չարենց ուրիշ բանաստեղծութեան մը մէջ եւ իրեն վայել ախտաճանաչումներով եւ թափով պատմութեան յանձնած է «ցարերի գահն էլած կազիւ» նոխճիբիկը սորբած «ցածրաճակատ կինտոն»:

Վերի տողերը գրուած են բանաստեղծին գրական բարեկամներուն ձեռքով: Թեմէն էրկու օր ետք, 11 Օգոստոս 1936ին...

Ո Ի . Ս Ա Ր Ո Յ Ե Ա Ն

Նամակի ոճով հիշուած Սարգստանի հետագայ յօգուածը զբաղած է Չարենցի ծննդեան 70 եւ ժառանգ Յոսեփեանի (1967) տարիներով, եւ սրբանմենք դիտենք՝ հայ ժամուշին մէջ յոյս կը տեսնէ առաջին անգամ :

Շարք մը ընդհանրացումներու հետ՝ Սարգստանի ոգեկոչումին մէջ աչքի կը զարնէ յատկապէս ճշմարտութեան տեղին եւ ժամանակին աւրնչութեամբ «ժամանակի չունչով» կատարած Չարենցի թերազանքը. «Հշմարտութիւնը բեզ համար պակիր, հիմա դրա ո՛չ տեղն է եւ ոչ էլ ժամանակը»:

Կր պարզուի, որ Չարենց առաջինը ի՛նք չկրցաւ գործադրել Սարգստանին տուած իր խորհուրդը եւ սրգէն ձիչդ տ՛յգ խորհուրդին վրայ կր դնուի յօգուածին «խորհուրդը»...



ՉԱՐԵՆՑ, 1935ԻՆ

ԵՂԻՇԷ ՉԱՐԵՆՑ

Մենք իրարու հանդիպեցանք քու պանդոկին՝ Մետրոպոլիի մէջ, Մոսկուայի Կարմիր հրապարակի վրայ, Յունիս 1935ին, երբ ես դեռ 27 տարեկան չկայի, իսկ դուն բնդամէնք 37 էիր՝ փոքրակազմ, ունիւն, մեծ ու կոր փրթով, սեւ, անհանգիստ աչքերով, որ, յամենայնդէպս, կը ցոլացնէին համբերութիւն եւ երգիծանք, եւ ունէիր խորունկ ու ջերմ ձայն, դուն՝ Հայաստանի մեծագոյն բանաստեղծը:

Է, լաւ, ինչ ընենք, այդ օրէն երեսուներկու տարի է անցած:

1960ին լսեցի, որ 1937ին բանտարկուած ես երեւանի մէջ, մեր հանդիպումէն երկու տարի ետք: Քոճախնը, որով երկար ժամանակ կ'ապրէիր, այ չեմ տուած քեզի եւ, այդ պատճառով այ, կամ՝ գուցէ մարդոց անյայտ պատճառներով, կամ եթէ նոյնիսկ յայտնի, ապա այդ մասին ձայնասփիւռով երբեք չյայտարարուած, դուն վերջ տրւիր կեանքիդ՝ հաւանաբար գլուխդ բանտի խուցի փարին ցախջախիւով: Ասիկա անձնասպանութեան տեսակ մըն է, գոր անհնար կը թուի իրագործել, բայց ատիկա տակաւին չի նշանակեր, թէ իսկապէս *անկարելի է*: Կամ գուցէ դուն ուրիշ մահով մը մահացար... Չեմ գիտեր: Երեւանի մէջ 1960ին ինծի ըսին, թէ դուն կրցած ես հարցը լուծել այնպէս՝ ինչպէս նկարագրեցի:

Չարենց, բարեկամս, այս ի՞նչ կը կատարուի մեզի հետ, ոչ թէ բանաստեղծներուս եւ գրողներուս՝ այս ի՞նչ կը կատարուի հայերու հետ: Արդեօք ամբողջ եղածը տեսակ մը *Փանթազիա*՞ է, եւ հայերը հայ չեն՝ ամէն մէկը իրեն համար եւ վե՞րջ: Հնարաւոր է արդեօք, որ պատմութեան ընթացքին անյայտ ենք եղած ո՛չ միայն մենք մեզի, այլեւ՝ բոլոր ազգութիւններուն, բոլոր ժողովուրդներուն ու *էթնիքական* ցեղերուն (անոնցմէ իւրաքանչիւրը այս օրերուն, Ամերիկայի մէջ, շարունակ կը խօսի աշխարհագրական, քաղաքական, կրօնական, տնտեսական, արդիւնաբերական, փիլիսոփայական եւ այլ առումներով), ու դեռ մենք մեզի եւ ամէն օտարի կ'ըսենք. «*Մենք հայ ենք, եւ դուք բնաւ չմտնաք այդ բանը*»:

Իսկ ուրիշ մըն ալ կ'ըսէ. «*Մենք արխագ ենք, եւ դուք չմտնաք այդ բանը*»:

Ինչպէ՞ս կրնայի մտնալ: Անկեղծօրէն ըսելով, նման ժողովուրդի մը գոյութեան մասին գաղափար չունէի՝ մինչեւ 1960ին Մոսկուայի մէջ արխագ գրողի մը հետ ունեցած հանդիպումս: Ճիշդը՝ պիտի չուզէի անկէ աւելի հանելի մարդու հանդիպիլ: Ուրիշ ի՞նչ ըսեմ. կը թուէր, թէ ան իմ ընտանիքի անդամներէն մէկն է: Բայց ատիկա բոլորը չէ տակաւին: Երեւանի մէջ հանդիպեցայ քանի մը ֆիւրդ գրողներու, որոնք լաւ մարդիկ էին, — անկեղծ, հիւրասէր եւ բոլորովին ալ միայնակ եւ մեկուսացուած չէին: Թուրքիոյ մէջ հանդիպեցայ թուրք գրողներու. պարագան նոյնն էր եւ անոնց հետ: Բոլորն ալ լաւ մարդիկ էին, որոնք գուցէ եւ լաւ գրողներ չէին: Ատիկա ճշդելը իմ գործը չէ: Ատով թող ժամանակը կամ քննադատները գրադին: Խորայելի մէջ տեսայ հրեայ գրողներ, ամէն տեսակ լաւ մարդեր, որոնք երբայերէն լեզուով կը գրեն: Ամերիկայի մէջ հանդիպած եմ Ռուսաստանէն ու Լեհաստանէն, Հունգարիայէն եւ Բուլկիիենէն եկած հրեայ գրողներու, որոնք բոլորն ալ անգլերէն կը գրէին: Անոնք ո՛չ միայն հանելի մարդիկ էին, այլեւ՝ իմ ընտանիքի անմիջական անդամներէն էին:

Երբ դուն շատ երիտասարդ էիր, բանաստեղծութիւն մը գրեցիր՝ «*Ես իմ անուշ Հայաստանի...*», գոր հայերը, աշխարհի բոլոր կողմերուն, կը կարդան եւ կ'արտասուեն, կ'արտասանեն ու կ'արտասուեն, կը սորվեցնեն իրենց երեխաներուն կարդալ եւ արտասուել: Ես ինքս անոր արտասանութիւնը լսած եմ երկու-երեք տասնեակ անգամներ եւ հագիւ կարողացած եմ չարտասուել՝ ո՛չ այնքան անոր համար, որ հանդիպած եմ քեզի, վայելած եմ ներկայութիւնդ, խօսած եմ հետդ ու նշմարած քու մեկուսացումը, միևնափութիւնը, *քամեաթին* ու յուսալութիւնը, այլ

պարզ վեհուժեամբ հայոց լեզուով գրելուդ, ինչպէս նաեւ մեր քարքարոտ երկրին նկատմամբ տածած քու սիրոյ, *պատմութեան քառուղիներու* մէջտեղը փոքրիկ օրրան ունենալու բարկութեանդ եւ, վերջապէս, մեր բոլորին տեղահանման քու ժխտումին համար:

Ի՞նչ կը հասկնայիր *ԻՄ ՀԱՅԱՍՏԱՆ* ըսելով: Խօսքը բաւական յատակ է. Նկատի ունիս *ԱՅԴ* տեղը եւ *ԱՅԴ* ժողովուրդը, բայց իսկապէս ի՞նչ կ'ուզէիր ըսել: Հայերէն շատերը, ինչպէս արթագներէն, ֆիւրդերէն, թուրքերէն, խարայէլացիներէն, ամերիկացի երեւաներէն, իտալացիներէն, գերմանացիներէն, անգլիացիներէն, սկովտիացիներէն, իռլանդացիներէն, ֆրանսացիներէն, յոյներէն ու սպանացիներէն շատերուն պէս ձանձրացուցիչ են, աւագակ, խարդախոյ, խարբբայ, ստախօս, պատեհապաշտ եւ պոռնիկի լակոտներ: Այո, անոնք կան իմ բնտանիքին մէջ եւ կը զարմացնեն զիս: Բերանս բաց կը մնայ շփոթ-մունքէն ու խօսք չգտնելու շուարումէս, բայց ես դեռ յամառօրէն կ'աշխատիմ գտնէ հասկնալ զանոնք նոյնիսկ այն բանէն յետոյ, երբ այլեւս հնարաւոր չէ զանոնք յարգել: Երկրի վրայ հողի իւրաքանչիւր կտոր գեղեցիկ է, եւ ո՛չ միայն անպայման այն հողը, որ Հայաստան կը կոչուի: Ուստի՝ ի՞նչ կ'ուզէիր ըսել, արդեօք իրականութեան մէջ դուն ուրի՞շ բանի մը մասին կ'ուզէիր խօսիլ: Հնարաւոր չէ՞ արդեօք, որ քու հայերէնը նոյնը նշանակէ ոեւէ մարդու համար, որ կրնայ բլլալ ոեւէ ուրիշ բնտանիքէ, իսկ ինչ որ ըսած ես Հայաստանի մասին՝ չէ՞ր կրնար բռնիլ, ու այժմ չի՞ կրնառ բռնիլ երկրագունտի որեւէ տեղի մասին:

Ինչո՞ւ համար էր *քոքսիներ*, Զարե՛նց: Ի՞նչ կը նշանակէ գլուխը քարէ պատին գարնել:

Լսէ՛, ես չեմ մոռցած քու ըսածդ, երբ Մաքսիմ Գորկիի հետ մեր ժամադրութիւնը չկայացաւ, որովհետեւ Մոսկուայի ուսերուն խնդրանքով գրած էի բան մը Հայաստանի եւ Ռուսաստանի, մասնաւորապէս ժողովուրդէն եւ կոմունիզմի պայմաններուն մէջ կեանքէն իմ ստացած տպաւորութիւններուն մասին, որ, իրապէս, անոնք խրնդրեցին, ես ալ գրեցի: Գրեցի, առանց նիւթական որեւէ ակրնկալութեան, եւ անոնք նոյնիսկ պահեցին ձեռագիրը: Ըսեմ նաեւ, որ բնաւ ուրիշ օրինակներ չեմ պահեր, ուստի՝ անոնց մօտ է միակ օրինակը, որ կա՛մ ոչնչացուած է եւ կամ կորսուած: Ատիկա առաջին օրինակն էր, ուստի՝ անկարող եմ այժմ սերտել ամենայն ազնուութեամբ ու սրտով կատարած փորձիս յիմարութիւնը:

Այն տտեն դուն ըսիր. «Տղաս, դուն պէտք է աշխատես աւելի խելօք լինել. ասա՛ այո եւ թքիր նրանց աչքերին, այսինքն, ուրիշ խօսքով ասած՝ խուսափիր գլխացա-

ւանքից, ճշմարտութիւնը քեզ համար պահիր, հիմա դրա ո՛չ տեղն է եւ ոչ էլ ժամանակը»:

Ես այդ պահուն գգացի, թէ որքան նիշդ էիր դուն:

Շատ լաւ, սիրելի Չարենց, դո՞ւն ինչու չըսիր՝ «այո» եւ չթփար անոնց աչքերուն: Ճշմարտութիւնը կամաց-կամաց երեւան կու գայ, եւ ատիկա չի վնասեր կոմունիզմին, կամ Ռուսաստանին, կամ Հայաստանին, կամ Ժողովուրդին եւ կամ որեւէ այլ բանի, ընդհակառակն, կ'օգնէ: Ինչո՞ւ համար հիմա չկաս, որ անձամբ տեսնէիր...

Չարենց, տղա՛ս, Մոսկուայի մէջ դո՞ւն էիր իմ հայրը, բայց հիմա փոխուած է խնդիրը, եւ ես ծեր եմ, անլի ծեր, քան կը կարծէի ստեն մը որ կ'ըլլամ, բայց դեռ երիտասարդ եմ, քանի որ, ինչպէս կը տեսնես, դեռ կը շարունակեմ գրել, ուստի դարձեալ լսէ գիս:

1935ին, Մոսկուայի մէջ փոքրիկ աղջնակդ դուն անձամբ կը սնուցանէիր ամենաթանկ անուշեղէններով (այն ալ ա՛յն ատեն, երբ դժուար էր նոյնիսկ հաց հարել), որովհետեւ դուն մեծ գրող էիր եւ կոչուած էիր լաւագոյնին, չնայած որ փոքրիկ, սիրունիկ աղջնակդ այդպէս կերակրելը այնքան սխալ բան էր, որքան քոֆայիւր քեզի համար: Ես գայն տեսայ Երեւանի մէջ, 1960ին, եւ անոր գրկին՝ տղան, որ նոյնպէս կը կոչուէր Եղիշէ Չարենց:

Երկուքն ալ տեսայ, սիրելի բարեկամ եւ հայրենակից, իրաւ անոնք շատ գեղեցիկ էին:

Դուն կրկին հոն էիր՝ քու մօր գրկին մէջ: Հոն էր նաեւ քու Հայաստանը եւ քու հայ Ժողովուրդը:

Բանաստեղծութեանդ մէջ կ'ըսէիր. «*Իմ արեւահամ Հայաստան*», գոր անհնարին է անգլերէնով ըսել, եւ նոյն պատճառով՝ ուրիշ որեւէ լեզուով:

Ինչո՞ւ «*ԱՅՈ*» չըսիր:

Ըսեմ քեզի, թէ ինչու, սիրելի Չարենց:

Որովհետեւ դուն հայ ըլլալէ անլի բարձր մէկն ես, քան ոեւէ մէկը մարդկային ցեղէն: Դուն բանաստեղծ մըն ես՝ այնքան ցնցուած իրենց փրկութեան կանչին ամէն գրնով ձգտող մարդոց դաւաճանութենէն, որ միայն քոֆայիւրի օգնութեամբ կրնայիր մնալ անոնց մէջ եւ ձեւացնել, թէ իրենցմէ մէկն ես:

Թող Աստուած սիրէ զանոնք, ինչպէս ամէն բանաստեղծ ստիպուած է ըսել, ոչ թէ ատելութեամբ, այլ ողորմածօրէն: Անոնք բոլորը դաւաճանեցին ու կը դաւաճանեն, միայն թէ՛ ինչ խորհուրդ որ դուն տուիր ինծի՝ ես բնա՛ւ չգործադրեցի, դուն բնա՛ւ չգործադրեցիր:

ՌԻԻԼԵԼՄ ՍԱՐՈՅԵԱՆ

ՊՁՏԻԿ ՃԵՂՈՒՄՆԵՐ

**Րազին հարցումներ
նշումներ**

Ս. ԱՂԱԲԱԲԵԱՆ, «ԵՂԻՇԼԻ ԶԱՐԵՆՑ», էջ 8

«Զարեհի տեխնիկ կառուարած մէջքիբուսները ազբիւրը երկերի ժողովածուի կրտտարակուրքիւնն է, որն իրագործել է Մ. Արեղիտնի անուան գրականութեան ինստիտուտի սովետական գրականութեան բաժինը (ստաչիւն հատար՝ 1962, Երկրորդ հատար՝ 1963, Երրորդ հատար՝ 1964, չորրորդ հատար՝ 1967, կինգերորդ հատար՝ 1966, վեցերորդ հատար՝ 1967)»:

ԳԻՏԱԿԱՆ ՍԽԱԼ:

Չորրորդ հատարին համար տրուած սպաղրութեան թուականը ճիշդ չէ: Պէտք է ըլլալ 1968:

ՄԿՐՏԻՉ ԱՐՄԷՆ, «ԵՐԿԵՐ», ՀԱՏԱՐ ՉՈՐՐՈՐԳ, էջ 49

«Կամ կենց քէկուզ այդ էլիգանտ բառը՝ «տխրագալուկ»: Ո՞ր փողոցային աղայի բառապաշարում կայ այդ: Եւ եղի՞լ է արդեօք կայ լեզուի բառապաշարում՝ մինչեւ Եղիշէն»:

ԱՆԳԻՏՈՒԹՅԱՆ ՍԽԱԼ:

Զարեհէն տառջ Տէրեանը դրած է.

Կրծքիս դիր դէմքը քո տխրաղալուկ,

Մոռացիր կեանքի տառապանքը մուր:

Ա. ԿԱՐԻՆԵԱՆ, «ՍՈՎԵՏԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ ԵՒ ԱՐՈՒԵՍՏ», էջ 115

«Երրորդ ժողովածուն, որի վերնագիրն էր «Գիրք ճանապարհի», Զարեհը կրտտարակել էր 1933ի այն օրերին. երբ նրա դէմ ուղղուած «պայքարը» չափազանց սուր բնոյթ էր ստացել»:

ԿԷՍ ՍԽԱԼ:

«Գիրք ճանապարհի» 1933 թուականը կը կրէ, յայտ լոյս տեսաւ 1934 թուակիր բանաստեղծութիւններով եւ 1934ին:

ԱՐԱՐ ԱՐԱՐԵԱՆ, «ՍՈՎԵՏԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ», 1959, էջ 131

«1925 թ. Զարեհը Ալիքանդր Միսանիկեանի ստաչարկով մեկնում է արտասահման՝ Թուրքիա, Յունաստան, Իտալիա, Գերմանիա, Ֆրանսա»:

ՄԷԿ ՍԽԱԼ

Զարեհ 1925ին չմեկնեցաւ արտասահման, այլ 1924ի աշնան, 21 նոյեմբերին:

Վ. ՆՈՐԵՆՑ, «ՅՈՒՇԵՐ ԵՒ ԱՐՁԱԳԱՆԳՆԵՐ», էջ 168

«1929 թուականին Մոսկուայում լոյս է տեսնում Զարեհի նախավերջին ժողովածուն՝ «Էպիգրամի լուսաբաց»ը, նրա էւ ամբողջ կայ գրականութեան գարգացման նոր փուլը»:

ԵՐԿՈՒ ՍԽԱԼ:

«Էպիգրամի լուսաբաց»ը 1929ին լոյս չէ տեսած, լոյս տեսած է 1930ին եւ Մոսկուայի մէջ լոյս չէ տեսած, լոյս տեսած է Երեւանի մէջ:

ԱՐԱՔԱ, «ՅԻՇՈՂՈՒԹԻՒՆՆԵՐ ԵՂԻՇԼԻ ԶԱՐԵՆՑԻ ՄԱՍԻՆ», էջ 269

«Առաջին անգամ քայտ ունեցայ Զարեհին հանդիպելու, եք է յիշողութիւնս ինն չի դաւանանում, 1925 թուականի աշնանը, կարմիր Բանակի տանը: Այդտեղ դիպուտ կար: Խօսում էին Զարեհը, Վլատիմ եւ Գ. Արովը»:

ԵՐԵՔ ՍԽԱԼ:

Արաքի յիշողութիւնը անշուշտ կը գուտաճանէ իրեն, եւ կը գուտաճանէ Երեւակ ուղղութեամբ՝ ժամանակային, եղանակային թէ տեղային մշտններով:

«Իրապուտ»ը, որուն կ'տեղնարկէ Արաքը՝ 1925ին տեղի չունեցաւ, տեղի ունեցաւ 1922ին, եւ ոչ թէ աշնան, այլ կիկիչ Յուլիսին, եւ ոչ թէ Կարմիր Բանակի տանը, այլ «Հասարակի Կոմպարտիայի Երեւանի կոմիտէի Երկրորդ յարկի դասընթաց»:

« Ի Մ Լ ՈՒ Ս Ա Ս Տ Ղ Ը »

Առաւօտ կանուխ բարձրացի՛ր,
Երբ նոր, դեռ նո՛ր մարմանդ լուսանում է: —
Կր տեսնե՛ս լուսա՛ստղը կապտածիր,
Որ պայծառ ցոլֆով բարձրանում է: —

Ախ, այդպէ՛ս բարձրացաւ մի օր
Աշխարհում, Չարե՛նց, քո անունը...
Բայց յետոյ կլանեց անհունը
Քո լուսաստղը — ցալուն, ոսկեւոր...

Այդ ո՛չ թէ արեւն էր՝ բարձրացաւ —
Եւ սրբեց ոսկեգօծ քո ցոլֆը
Իր շֆեղ ցոլֆերով պայծառ: —

Ո՛չ: — Չնչի՛ն ամպերի սեւ գօրֆը
Պաշարեց Արեւի՛ց առաջ ֆեգ, —
Իսկ այնտեղ, ներքեւում, — երգի սով էր, —

Բայց ցնծում էր Պառնասն առանց ֆեգ...

1936

*

Թմբուկ եմ խփում — հարսանիք է,
Հարսանիք է երկրում աշնանային, —
Արշաւում է անողոք գալիքը
Զգեցած զգեստներ մահի...
Ինչ լա՛ւ է նայիքեան երկիր,
Որ բերփիղ երկունփից առաջ
Թխարան ֆշուեց, — անարատ
Հելիկոնը սրբազան երգիղ. —
Գունէ արդ, տագնապիդ ժամին —
Ցնծուքեան երգեր կ'երգեն լով
Չղջիկները քո եղկ ու խելօք
Եւ օտար դաշտերի ֆամին...

**

Բայց երբեք, երբեք դեռ իմ խեղն,
Իմ Նայիքեան ոգին
Ցնծուքիւն այսֆան մոլեգին
Եւ խնդրութիւն այսֆան պերն

Ոչ տեսել էր, ոչ երագել,
Եւ ինչպէ՞ս զգար նա իբօք,
Որ այսպէս — այսպէս ծնծղաներով՝
Մեռնելու է մեր երգը վսեմ...

Ե. ՉԱՐԵՆՑ

31 - 10 1936. Ծաղկածոր, ցերեկ

Իր մտերիմ բարեկամներուն՝
Ակսել Բակունցի եւ Աղասի Խան-
ջեանի սուղը խորութեամբ ապ-
րելէ հող ու բանա նետուած
դրական իր միւս ընկերներուն
տառապանքը երգելէ յետոյ, Չա-
րենց նայեան խոր դառնութեամբ
ողբաց այդ «սեւ բարքերը պատ-
ւաստած» դպիւրներուն վստասե-
րումը:

Այլ դպիւրներէն, ինք պիտի
ըսէր շղջիկներէն՝ ոմանք ծանօթ
են ընթերցողին, ուրիշներ ան-
ծանօթ պիտի չմնան եւ ամէնքը
պիտի յիշուին միշտ Չարենցի
տառապանքին սոսիթով ցնծացած
բլլալու իրենց ախուր հոգա-
կով...

Շղբարարիտ բանաստեղծը
յաճախ անդրադարձաւ այդ եղկ
շղջիկներուն պարզած ցնծաղին
հոգեբանութեան ու բուժ վերա-
բերումներուն, բանաստեղծու-
թիւններով ու արձակով: Բա-
նաստեղծական նմոյշներ աըր-
ւած են բովի սիւնակին վրայ:
Ստորեւ նաեւ արձակ նմոյշ մը,
դրուած 28 Մարտ 1937ին.

« ...Եւ այսպէս ահա ես 25
տարի ստեղծագործական աշխա-
տանքով հայրենի հերկը խոփով
ռգելիան հերկելուց յետոյ ահա
տօնում եմ կրկնակի յորելեանը
— մեմակ ու հարածական պոետ՝
ախորեայ սեփական հայրենի-
քում՝ հերկի եզերֆին հայրենա-
կան երգի՝ ամայացած դաժանա-
գայն երանդով սեփական նախա-
բարների եւ պետերի՝ հայրենի
երգակիցների դեռ մեացած մի
ֆամի խեղների յախուռն ցնծու-
քեան մերֆոյ»...

Ասոնք բով բովի դրուած սո-
վորական բառեր չեն, բունաս-
տեղծին պատահած իրականու-
թիւններ են ու, սարսափելի է
կրկնել, սպրուած՝ ուրիշնե-
րու «յախուռն ցնծութեան ներ-
քոյ...»:

ԳՈՒՐՍ ՄԵԱՑԱԾ
Թ Ո Ւ Ղ Թ Ե Ր

**Ընագիշ Բարբոսյաններ
Եղիշյաններ**

«Յիշողութիւններ Եղիշէ Չարենցի մասին» գրքում (Հայկեսրատ, Երևան, 1961 թ.) զետեղուած Վիվանի յիշողութիւնները կրճատուած են, սրի հետեւանքով դուրս են մնացել ձեռագրի մի շարք հետաքրքիր, բայցադի արամագրութիւնները բացայայտող հատուածներ (ԳԱԹ ԶՖ) :

(«Յրկեր», Ա. Խատր, էջ 356)

«Աղայետալիան»ի մասին Մ. Գէորգեանը մանրամասնութիւններ է պատմում իր յուշերում, որը կրճատուեցրով է սպաղարուել «Յիշողութիւններ Եղիշէ Չարենցի մասին» գրքում — Պետհրատ, Երևան, 1961 թ. : Յուշերի լրիւ տեքստը տես ԳԱԹ ԶՖ Մ. Գէորգեանի յուշերի ընդգրկը :

(«Յրկեր», Գ. Խատր, էջ 338)

«Սասունցի Գաւիթ» — Գ. Ալթունեանի այս պիեսի բեմագրութեան առթիւ Զ. Ը զրեւ է ընդարձակ յօդուած, որը, սակայն, խմբագրութիւնը նպատակայարմար դուռ չգետեղել սոյն հատորում : Զ.ի յօդուածը «Սասունցի Գաւիթ»ի, պատմական պիեսների և նացիոնալիստական իդեոլոգիայի մասին» վերնագրով (տե՛ս Կով 1927 թ., № 300.301) :

(«Յրկեր», Զ. Խատր, էջ 656)

Խմբագրութիւնը անհրաժեշտ համարեց Յրկերի սոյն հրատարակութեան մէջ չգետեղել Զ.ի զիմումը Եղիշէի մի քանիսը : ՄԻԻ.ի Հայաստանի Ֆիլիալի կուսարիւում պահպանուող Զ.ի զիմումը «Հայաստանի կամ. կուսակց. վերստուգող յանձնաժողովին» (Թուագրուում՝ 1926, 16 IX), ԳԱԹ ԶՖ պահպանուող զիմումներից՝ «Հայաստանի խորհրդային գրողների միութեան վարչութեան» (Թուագրուում՝ 1935, Մարտի 8), ՀամԿ (Բ) Կ Անդրկովկասեան երկրային կոմիտէին» (Թուագրուում՝ 1935, V 11), «Սոնդոլկեան № 6 չէնքի անային վարչութեանը» (1937) եւ մի երկու այլ զիմում :

(«Յրկեր», Զ. Խատր, էջ 753)

Առնուազն տարօրինակ է եւ անհասկանալի, որ ձեռնարկելով այնպիսի մի պատասխանատու եւ զժուար գործ, ինչպիսին Չարենցի երկերի ծողովածուն կազմելն է, որ ո՛չ խմբագրական կուլեղիան, ոչ էլ, մասնաւորապէս, հատորների կազմողը տարիների ընթացքում ոչ մի անգամ, կրկնում եմ, ոչ մի անգամ չեն զիմել իմ՝ Չարենցի ամենամերձաւոր ընկերներից մէկի, օգնութեանը : Յօսքն այստեղ վերաբերում է ո՛չ միայն մի նոր վկայ եւս ունենալուն : Երկար ժամանակ, ինչ տարտել եմ Հայաստանի գրական կազմակերպութիւնների պատմութեանը վերաբերող մեծածաւալ մի աշխատութիւն (ի դէպ՝ հատորների կազմողը կարդայեցի է այն), հիմնուած բողմաթիւ տղայիւ եւ անտիպ փոստաթղթերի վրայ : Այդ աշխատութեան վրայ գրողուելու ընթացքում ես յայտնարեւել եմ Եղիշէ Չարենցի գրած բողմաթիւ եւ անտիպ յօդուածներ ու գրութիւններ, որոնց կամ ծանօթ չէ կազմողը, կամ չի իմացել, որ անստորադիր կամ այլ ստորագրութիւններ կրող այդ նիւթերը պատահանում են մեր մեծ բանաստեղծի գրչին : Էլ չեմ խօսում այն բողմաթիւ անհրաժեշտ տեղեկութիւնների մասին, որ կարող էր քողել կազմողը Յրդ հատորում տպուած նիւթերի վերաբերեալ, եթէ չըջահայեցորէն օգտագործէր նրան ընձեռուած հնարաւորութիւնները :

Յոյս ունեմ, որ մօտ ապագայում ես հնարաւորութիւն կ'ունենամ մամուլում անդրադառնալու Չարենցի գրած այն բողմաթիւ նիւթերին, որոնք, աւա՛ղ, դուրս են մնացել երկերի ժողովածուի զիտական հրատարակութեան վերոյիշեալ Յրդ հատորից :

ՄԿՐՏԻԶ ԱՐՄԷՆ
(«Գրական թերթ», 1968, Բիւ 27)

Քաղին հարցու՞նէր ճշգրտու՞նէր

ՄԱՅԱՑԵԼ Է 1937Ի ՆՈՑ,
29ԻՆ, ԵՐԵՒԱՆՈՒՄ

Կանխող էջերուն ընթերցողը նկատեց հարկաւ, որ Չարենցի մասին Հայաստանի մէջ լոյս բնծայուած քննի՛ յօդուած որ կարգայ՝ ա՛յնքան շփոթ կը դաժարէ իր մտքին: Կենսագիրներու գրչին աակ շփոթներով լեցուն են բանաստեղծին կենսագրութեան գրեթէ լոյս՛ը հանդրուանները, ու փոխճանախան փուլը, որ երկար ժամանակ տարտամութեամբ ծածկըւած մնաց:

Որքան ծանօթ է մեզի, Հայաստանի մէջ առաջին տնդամ Չարենցի մահուան թուականը յիշատակեցին 1954ին, վերավարկաւարումէն յետոյ իրմէ լոյս բնծայուած «Ընտիր երկեր» անուն տաղին հատորի էջերուն:

«Եղիշէ Չարենցի վաղաժամ մահը 1937 թ. Նոյեմբերին մեծ կորուստ էր ամբողջ տվետական գրականութեան համար, որի ակտիւ գործիչներից մէկն էր ակամաւոր հայ քանաւեղծը»:

Յաջորդող տարիներուն՝ Նորայր Գարաղեան, Արամ Գրիգորեան, Յակոբ Սալախան եւ Չարենցի կեանքին անդրադարձող ուրիշներ կրկնեցին տրուած տաղին տարեթիւը (1937), բայց ոչ ոք փորձեց զուրս գալ Նոյեմբերեան անորոշութենէն:

Այսօրն անցաւ տասնամեակի մը եւ երեք տարի ու վրայ հասաւ բանաստեղծին ծնընդան 70ամեակը, 1967:

Այդ առիթով Կիրովականի յարկինական հանդիսութեան կորգացած իր զեկուցումին մէջ՝ Վաղարշակ Նարենց չափով մը փարտաեց իր նախորդներուն զուշօրէն անվրդով ձգած մտաւարուղը, յայտնելով, թէ՛

«Չարենցի բազմաբեղուն եւ փոթորկալից կեանքն աւարտուեց անարդար եւ անժամանակ մահով 1937 բուականի Նոյեմբերի վերջին»:

Ամէն ինչ չ՛րսեր անչուշտ «Նոյեմբերի վերջին»ը, բայց բոլորովին անորոշութեան մէջ ալ շի ձգեր հետաքրքիր ընթերցողը: «Նոյեմբերի վերջին»:

Այս հետեւողական գաղանապահութիւնը, սակայն, զուս կը բտնար սրու կասկածներու:

Որովհետեւ կորերի չէր հատաւալ, թէ վերոյիշեալ մտաւարականները եւ Չարենցին մօտիկ ապրած բանաստեղծները անժամօթ էին բուն իրականութեան, բայց չեօ զիտեր ինչո՛ւ անոր անունին զիտաց տարեթիւ ու ամիս յիշելէ ետք, կը զժուարանային նշլի օրը, չարչաւրելով հետաքրքիր ընթերցողին միտքը:

Ու պէտք եղաւ սպտակ մինչեւ 1974, մինչեւ Հայաստանի զրույներու միութեան անգամները կենսագրող «Գրական տեղեկատու»ին հրատարակութիւնը, որպէսզի ընթերցողը իմանայ Չարենցի մահուան ճշգրիտ ամսաթիւը, եւ այլ ամսաթիւին հետ մինչ այդ անոր հանդէպ մարդոց ցուցարեւած փափկանկատութեան բուն պատճառը:

«Գրական տեղեկատու»ին մէջ Չարենցի կենսագրականը կ'ուարտի հետեւեալ ծանօթութեամբ:

«Մահացել է 1937ի Նոյեմբերի 29ին, Երեւանում»:

Երեւի մարդիկ չէին ուզեր մեծ բանաստեղծին կորուստին սուրբ կասկէ «Նոյեմբերեան տղարացին» հետ, կ'ուղէին Նոյեմբեր 29ի ցնծագի՛ր ցնծութիւնները զերծ պահել ազհատի յանախոնքներու բարկ հակազդեցութիւններէն:

Ո՛վ գիտէ:

Շարունակութեան մէջ մենք բնու արամազիր չենք հարցնելու, թէ բնակա՞ն մահով մեաու Չարենց թէ մեկուցուցին զինք: Բոնօրէն բանա նետուած մարդու մը մահուան առիթով բնականի հարց չի կրնար գոյութիւն ունենալ: Բայց ս՛ուր կը զանուի իր աճիւնը, կամ զեւ քանի՞ տարի պիտի սպտէ հայ մարդը, որ այլ մասին հասասի բան մը ըսուի իրեն:

... ԶԱՐԵՆՑԻ ԳԵՐԵԶՄԱՆԸ

Քամին հարուածում էր շարունակ:

Բանաստեղծի շապիկն ու լայն շավարը առաջատար պէս ծածանւում էին: Ամենուր գծերը սուր էին, գորշ ու անհանգիստ: Բնութիւնը գերծ էր մեզմ կորուսիւններից: Ամէն ինչ սահողու էր մի յանկարծակի ցատուովից եւ փարացել՝ մի անկրկնելի ցատուով: Եւ հայերը ելել ու կաշի էին էին այս փարերին:

Կանգ առան:

Բանաստեղծը քաշկինակով մակտոնի ու վզի քարտիկը մաքրեց:

Հասել էին մի կէտի, որից այն կողմ գահավէժ անդունդ էր:

Այստեղ սափարակ մի գագաթ էր, ուր անկնկալօրէն անդորր էր տիրում: Կարծես բացօթեայ մեծահան լինէր: Համակ լուսիւն: Կեանքն ու աօրեան մնացել էին վարը: Այստեղ շարունակուող աղօթք էր, մի անեղծանելի դաշն երկրների հետ: Արեւը պատու էր ամպերի կտրծքը եւ հառազել բարձունքի վրայ, ինչպէս աստուածային լուսամփոփից ծորող լոյսի շող: Անհացել էր վահէն:

— Դու Չարենցի գերեզմանն ես ուզում տեսնել, — խօսեց բանաստեղծը:

— Այո: Չարենցի գերեզմանը:

— Ինչո՞ւ, — ասաց բանաստեղծը՝ աչքերում խորանային մրութիւն:

— Ես պէտք է գիտեմամ, թէ ո՞ւր է գտնուում Չարենցի շիրիմը:

— Ինչո՞ւ, — ասաց բանաստեղծը՝ աչքերում խորանային մրութիւն:

— Որպէսզի կարողանամ ապրել:

Բանաստեղծը դարձաւ, հանդիսաւար կերպով յորս դին նայեց, ապա հայեացքը Մասիսին ուղղած խօսեց ծանր ու հանդարտ.

— Տեսնու՞մ ես Արարատը, տեսնու՞մ ես այս լեռնաշխարհը, այս դաշտն ու ֆազաբը, այս գետերն ու այգիները, այս մացառներն ու ֆարերը, այս բոլորը մի մի շիրիմ, մի մի կոթող եմ Չարենցի համար: Քանի՞ ֆանի՞ հայ եկեղեցիներ կամ աշխարհում, ֆանի՞ ֆանի՞ հայ դպրոցներ, համալսարաններ, քանգարաններ ու գրադարաններ կան աշխարհում... այդ բոլորը մի մի շիրիմ, մի մի կոթող եմ Չարենցի համար: Քանի՞ ֆանի՞



ԶԱՐԵՆՑ. 1936ԻՆ

հայ գրողներ, բանաստեղծներ, երգիչներ ու արւեստագետներ կան աշխարհում... ճրանցից իւրաքանչիւրի գործը մի մի յուշակոթող է Չարենցի համար: Դու Չարենցի շիրիմն ես ուզում, երիտասարդ, ճիշդն ասած չգիտեմ... արհաւիրքի օրեր էին... լուսալայծառ շատ կեանքեր խամրեցին, շատերը կորան ախարում, շատերն էլ արմատախիլ եղան դեռ իրենց հագու ծիլերը չարձակած... շիրիմների հետ պղծուեցին դարաւոր սրբութիւններ եւ այդ սրբապղծութիւնների հետ մարեց նաեւ Չարենցի կեանքը... մարեց մեր ամբողջ ժողովուրդի լոյսի նրազը... եւ սակայն Չարենցի վերջին շնչի հետ տնամահացաւ ճրախօսքը եւ բոլոր արեւի պէս տաքացրեց հոգեվարքի մրութեան մէջ սառու հայ հոգիները... դու Չարենցի շիրիմն ես ուզում, երիտասարդ պանդուխտ... Քանի՞ միլիոն հայ կայ աշխարհում... երե՞՛ք, չոր՞ս, հի՞նգ... իւրաքանչիւր հայ, եւ ամէն մի հայի հոգի մի մի կոթող է Չարենցի համար, որովհետեւ Չարենցը ինքը հայութիւնն է՝ Հայաստանը... եւ այդ արեւի մեծ կոթող է, ֆան հարստարապետական վսեմագոյն կառոյցը... եւ Չարենցի շիրիմը չգիտեմ...

Բանաստեղծը մի անգամ եւս արտասուաբոր աչքերով նայեց Արարատին ու ապա զլխահակ հեռացաւ:

(«Անծանօթ հողիներ»)



Վ. ԹՈԹՈՎԵՆՑ ԵՒ Ե. ՉԱՐԵՆՑ

Վերջացնելով իմ այսօրուայ գեղուցուժը, անցնում եմ եղբորականը:

Չայնեթ.— Իսկ Թոթովենցը՞ մասին:

Ես ուզում եմ ստել, որ կեանքը պահանջում է, որպէսզի մենք ազատւենք այդ նիվիլիքովկայից, եւ հետաքրքրակամն աշխէ, որ լեզուի զարգացումը բերեց մեզ այն ընդհանուր յայտարարին, որ լեզուն պէտք է զարգանայ երկրորդ ուղղութեամբ: Նոյնը ընդուն է ո՛չ միայն Թոթովենցի, այլեւ բոլոր սահկահայ զրոյնների համար, որոնք մեր լեզուն իրենց կանոններից չեզոքում են, եւ գտ երբեմն սալիս է բացառիկ էփեկտ: Ես սկզբում ջգայնանում էի զբանից, բայց պէտք է ստել, որ այժմ նրանք օրդանապէս կատուելով մեր լեզուի հետ, բերում են այնպիսի քերականական ձեւեր, որոնք հարցառանցնում են մեր լեզուն: Այնպիսի մի պատուաստ է դա, մերում, որ պէտք է օրինակ լինի: Թոթովենցը, որքան մերում է մեր իրականութեանը, այնքան էլ չի կորցնում իր լեզուական նախկին արժանիքը: Եւ մեր լեզուն այդպիսի բազմաթիւ հնարաւորութիւններ ունի հարստանալու:

ԵՂԻՇԷ: ՉԱՐԵՆՑ

Մեր գրական ժամանակը Չարենց-եան է կոչուելու: Միւս գրողներս միայն շրջապատում ենք Չարենցին եւ միայն այդ չափով ենք յայտնի դառնալու ապագային...

ՎԱՀԱՆ ԹՈԹՈՎԵՆՑ

Վահան Թոթովենցի առիթով արեւմտահայերէնի մասին դրսեւորած Չարենցի հիացումը հասուն սարիքի տղաւորութիւն չէ, այլ հիմէն կուզայ, պատանութեան շրջաններէն: Տէրեանական պատուաստներէն անմիջապէս հտփ, երբեմն անոնց հետ մէկտեղ՝ բացորոշ են Չարենցի լեզուական կազմաւորման մէջ Մեծարենցի, Վարուժանի ու Սիամանթոյի ազդեցութիւնները: Այս վերջիններուն մտք կազմած կամ իրենց յատուկ միջավայրերու մէջ վերակենդանացուցած բառերը, յուշիկը, բուրեանը, կարեւորը, շաւքշտար, ուշնականը, խելայեղը, եւայլն, կրպարած են զինք շարունակ եւ ներս առած է զանոնք իր բառարանէն, ինչպէս կ'ընեն ամէն երեւոյթի ու գործիքի նոր երանգ մը սալու համոզումով շարժող բոլոր նշմարիտ սաղանգները:

Իր գրականութեան իւրաքանչիւր հանգրուանին՝ Չարենց ցարգեց նաեւ լեզուական նոր համագրուան մը, ուր արեւմտահայերէնէն տարբեր տնայկաս եղան: Չափազանցութիւն քուի բերես, բայց ըսեմք նորէն, որ չհաշուած կոլովման ու խոնարհման ձեւերը, երբեմն նոյնիսկ արեւմտահայէն կարդացած ըլլալու տպաւորութիւնը կ'առնէ ընթերցողը անոր տողերէն.

... Ինչպէս սեսաք՝

Սա պոտմութիւնն է մեր հերոսական

Գոյամարտի: — Այս:՝ Մեր այսօրուայ կեանքի Իւրաքանչիւր շնչին հնչիւնն անդամ

Պիտի գտնէք անշուտ արձանագրուած այտուկ:

Արեւելահայերէն ու արեւմտահայերէնը իրարու մտեցնող Չարենցի լեզուական այս գիծը վստահարար չէ վրիպած մեծ բանաստեղծին լեզուին զարգացման գանազան փուլերը դատաւորած ներկուն մտաւորական Ռաֆայէլ Իշխանեանի ուշադրութեանն եւ օր մը քննութեան պիտի ենթարկէ նաեւ վերոյիշեալ գիծը, յայտնելով ընթերցողին աղեկարարին, վարձակին, զբոյրին, հապըշտապին, աղեկաւորին, արիւնսուշին եւ նման բառերու ազդեցութիւնը, այնպէս՝ ինչպէս յայտնած է Չարենցի վաղ շրջանի բառարանը քրմանաժ տտեմ...

Չարենցի լեզուն: Ի՛նքը երեւոյթ մը, կիմ, միջին, հայերէններու համեմբէն նոր բերում ու ենթակային յանգնութիւններով փոփոխած ինքնուրոյն ամբողջութիւն մը, կողմն ու հաւաստի, առիւնեմ'դ:

Հայրենասիրական իր երգերով հայրենիք տատիման մը ստելի սիրելի ընծայելու իր փառքին պէս՝ Չարենց մեր լեզուին տաւու խորացման, բափի ու գունագեղութեան նոր որակ մը, որուն մէջ արեւմտահայերէնի համեմատութիւնը պզտիկ չէ...

Պ. Ս Ն Ա Պ Ե Ա Ն

ՉԱՐԵՆՑ՝ ՉԱՐԵՆՑԻ ՄԱՍԻՆ

(ՀԱՏՈՒԱԾ)



ՉԱՐԵՆՑԻ ՎԵՐՁԻՆ ՆԿԱՐԸ

Գգուեց ինձ սիրով մի ձեռք կայրեմի,
նու ես մի գիշեր իմաստուն դարձայ:
Ե. Չ.

ԻՄԱՍՏՈՒԹԵԱՆ ՃԱՆԱՊԱՐՀԻՆ

1929 թուականը մէկն է Չարենցի ստեղծագործական կեանքի ամէնէն ուշադրաւ անկիւնադարձներէն, որ աւելի ընդդռուեցաւ ու ամբողջացաւ յաջորդ տարի, մթնոլորտային նոյն պայմաններուն մէջ զրի առնուած բանաստեղծութիւններով:

«Էպիֆանիա լուսարաց» — 1930:

Այս անկիւնադարձին վրայ աւարտած տաղնուպի մը անդրադարձները կը պատմէ բանաստեղծը, բայց կը զլայցուի, որ չէ աւարտած տաղնուպը ու կը շարունակուի պարզին, պայծառին, լիահնչիւնին ու մնայունին համար բացուած կռիւը:

Իր գրական ճակատադրին համար բախտորոշ շրջան մը, զժուարին, անձկացին, ցաւադին ապրումներու ալեկոծում եւ, միաժամանակ՝ լիութեամբ ու լոյսով ուղղուած «տեսիլաժամեր»:

Տանջալից երկունք եւ բերկրալից բերք:

«Էպիֆանիա լուսարաց»ին մէջ բանաստեղծի այն տխարան է Չարենց, որ իւր տառապանքով մը հաշուէյարդարը կը կատարէ մօտիկ անցեալին մէջ իր կողմէ եւ իր խիստ կոշտ մին դէմ պործուած դաւաճանութիւններուն եւ կիզիչ կարօտով մը կը կանչէ ներքին աշխարհէն բնօրէն անջատած ու հեռուները աքսորած իր մեծախառով ու մեծարդիւն ուղին:

Իրենք իրենց կոշտ մին դաւած են եւ ուրիշներ ու ճիշդ իր անձին դէմ որդեգրած թշնամական վարձուքով կը գատէ նաեւ ուրիշները: Կը ճշայ անվերջ, կը դաւարի, կ'արբիւնի, կը անբայ՝ ճղնաժամային վայրկեաններ սպորոզ մէկու մը պէս, սարսափահար ու սարսափելի էութեան մը յատուկ խուճապով, բանաստեղծութիւնը ծառայական իր դերէն ապաստարան եւ ար-

ւեռտի մտքրամաքուր ոլորտներուն բարձրացնելու մեծ պատասխանատուութեամբ :

Կ'իմանանք, միշտ իրմէ, որ ծանօթէն դժգոհ եւ պահանջուածէն ահարեկ' Չարենց ատեն մը լսած է, ու անհաս բարձունքներու կանչին ունկնդրութեան յանձնուած իր լուռ օրերուն ձայն բարձրացուցած էն «տաք փախիճներն ի տիղմին հլու» իր թշնամիները, որոնք արդէն աւարտած համարելով իր գրական ճակատագիրը՝ սկսած են երգել իրեն «մահ ու ալելու» :

Բայց դու հանգիստ ես : Սրտիդ խնդուն
Եւ մտքերիդ մեծ, ե'ւ յոյզերիդ
Իջել է մի նո՛ր իմաստաւթիւն՝
Ե'ւ պայծառ, ե'ւ ջիւղ, ե'ւ մտերիմ :

Սրտին, մտքերուն, յոյզերուն վրայ իջած այս նոր, պայծառ, ջինջ ու մտերիմ իմաստութեամբ կը բացատրէ Չարենց գրական իր նոր անկիւնագարձը, անջատու մը իր շրջապատէն, որոշումը՝ «Փախիճների ֆլեմիս երգին» չկարօտնալու, վերադարձը՝ իր բուն կոչումին, նոր հուն մուտքը՝ «աւելի՛ խորունկ, աւելի՛ անշեղ» :

Նախընթաց տարիներու գրական դաւաճանութիւնները հաստատած եւ «հասուցման օրով» զինք հետապնդող ոչին ամէնէն աւելի շատ կը ներկայանայ իրեն իմաստաւթիւն բառին հետ, որ այնուհետեւ մինչեւ իր կեանքին վերջը պիտի չլքէր զինք :

Իմաստաւթիւնը նոր բառ մը չէ Չարենցի բառարանին մէջ, կայ անիկա առաջին իսկ օրերէն, շուրջ մը, ժպիտ մը, յեղատիրական դրոնաւորում ունեցող վայրագ նահանջ մը բնորոշող դործողութեանց կամ կոչական հանդամանքներու մէջ, բայց երեսնական թուականներուն հանդրաձայնին է անիկա, հասունութեան մը աւետարեբ :

Այդպէս ցօղունն է հանդում ծանրանում,
Երբ լցում է ձոյլ, իմաստուն հասկով :

Այդ նոյն բանաստեղծութեան մէջ («Ես այն չեմ այլեւս») որոշակի կը դառնայ նաեւ անոր ազբւրը եւ տեսակարար բոխանդակութիւնը .

Գզուեց ինձ սիրով մի ձեռք հայրենի,
Եւ ես մի գիշեր իմաստուն դարձայ :

Այս ճամբուն մէջ է, որ Չարենց կը գրայ իր գրական բախտին առաւելագոյն սրբութիւնը, ամէն կանչի արձագանդելով այլեւս չմտնուելու յանձնառութեան ուղի պատասխանատուութիւնը : Ու անդրադարձը նոյն ատեն, յետագարձ ակնարկով ապրած ցաւազին խղճահարութիւնը .

Ինչքա՛ն եմ վատներ ես անգին ժամեր,
Եւ ինչքա՛ն հուռեղեր ցրել եմ ձրի, —
Եւ ինչքա՛ն հիմա պիտի աշխատեմ,
Որ գտնեմ ես այն, ինչ գո՛ւր կորցրի :

Անդին ժամերու կորուստին ու ձրիօրէն ցրուելած հունտերուն հետ անշուշտ հառկնալի են յոեղեայն կրակին տրուած բառակոչտերուն անունները : Ակնարկը ուղղակիօրէն կը վերաբերի հայրենի ձեռքին գլուխնէն առաջ զըրւած անհայրենիք իր գործերուն, որոնք խճողեցին իր էջերը նախընթաց հինգ-

վեց ասորիներուն, իր անձէն խղուած եւ արտաքին աշխարհին արձագանդե-
լա հեշտանքին անձնատուր եղած շրջաններու ամբողջ երկայնքին :

Հայաստանի խորհրդայնացումէն քիչ անց, Մոսկուայէն վերադարձէն
(1922) սկսեալ մինչեւ արտասահման երթն ու դարձը (1925) եւ քիչ մըն ալ
աւելի ժամանակ՝ Չարեհիցի բանաստեղծութիւնները յատուկ անուններու, աշ-
խարհամասերու, քաղաքական նշանարաններու, կուսակցական յայտարարու-
թիւններու, առարկաներու ու անորոշ անձերու ասջեւ բաց ձգուած խոս-
նափնթոր ու անբարեհունչ հեղեղատ մըն է, որուն մէջ բանաստեղծութեան
բաժինը հատուածային է միայն, իսկ ինքուուն տա հարիւր համեմատութիւ-
նը՝ ազմուկ ու ցուցամուկ ելույթ, այս աշխարհին կամ այն աշխարհին, այս
ճակատին կամ այն ճակատին, այս անձին կամ միւս անձին ուղղուած հայ-
հայանք, սղջոյն, մարտահրաւէր, օրհնութիւն, սրանք, ինչպէս ըսուած է
տեղ մը, զրականութեան պատմութեան մէջ տեղ ունին անպայման, բայց
զժուար թէ կարենան բարձրանալ զրականութեան մաքուր ոլորտը : Այդ
շրջանին ահաւոր է Չարեհիցի բառարանն անպամ, ուր երջանիկ անպատասխա-
նատուութեամբ զիրար կը հրմշտկեն մէկտանը, չայրանան, զոււնան, դհո-
լը, կամբջիջը, գարաժը, շոֆէրը, միտինդը, թամաշան, թափը, չեկան, եր-
կաթը, մեքենան, էլեկտրա-հողին, մտախարան, չափգտնը, բալչաւիկը
եւայն, եւայն, ու այս մթնոյտրտէն առաջացած զրական այն ալյասերու-
մը, որ

Եթէ դու պէտքսկան ես, պոետ,
Երգերի տեղ երկիրնե՛ր շինէ :

1922էն մինչեւ «Լուսաբաց»ին երեւումը Չարեհիցի զրեթէ միշտ այս-
պէս վարուած է ինքն իրեն հետ, աւելի ճիշդ կ'ըլլայ ըսել թերեւս, որ այս-
պէս վարուած է իրեն հետ իր խոտնուածքը : Այդ հանդուանին համեմէ ա-
ռաջ ոչեւորութեան մըրիկ է միայն ան, ամէն շարժումի, ամէն ալրումի ու
քանդումի կազմակից հակում, քննութեամբ սրեւէ բան ընդունելու անըն-
դունակ բնասորութիւն : Սրտէ սիրտ իր թափոտումները, հայրենասիրութեան
տենդը, կամաւորական շարժումին մասնակցութիւնը, նահանջը, Հարաւա-
յին Ռուսաստանի քաղաքացիական կռիւներու յորձանքին մէջ նետուելու
փաստը, իր համայնալարութիւնը զրական շարժումներ հիմնելու եռան-
դը, սերացումները, նոր կուսքերու անուններ հոլովելու աճապարանքը, բո-
լը, խոտնուածքային մղումներու ծնունդ են աւելի, քան իմացական լոյ-
սին տակ աճած ծաղիկ կամ տատասկ : «Նա, — պիտի ըսէր Կ. Չարեհան, —
հետեւել է կուրօրէն, առանց մտածելու, առանց կասկածելու, առանց վեր-
լուծելու» :

Պէտք չէ լուրջի ատնել համայնալարութեան յարումին եւ քաղաքա-
ցիական կռիւներուն մասնակցած ըլլալու փաստերուն ետին իրեն վերադրուած
զազոփարական ու փրկչական մարդարեւտեսիլ շոսյութիւնները : Պատա-
հականութեան արդիւնք յարումներ ու մասնակցութիւններ են ատոնք : Եթէ
հաւատք ընծայենք իր յուշակիրներէն մէկուն վկայութեան, Չարեհիցի 1918ի
վաղ զարնան երեւանէն ճամբայ ելած էր թրքական վտանգէն խոյս տալու
համար, «իսկ դա առիթ էր համարում «յարգագողի ծիրը» մտնելու : Իր մըր-
քին մէջ «յարգագողի ծիրը» Չինաստանն էր, որուն ճամբան կ'ընդհատուի
Արմաւիրի կոյարանին վրայ՝ Յարիցիին մէջ պայթած քաղաքացիական կռիւ-
ներուն պատճառով : Եւ որովհետեւ չի յաջողիր իրեն «յարգագողի ծիրը»
մտնել, իր արկածատէր հողին նետեց զինք Յարիցիին ծիրէն ներս :

Ամէնէն ճղնաժամային պահուն Հայաստանը իր բախտին լքելով Չինաստանի ճամբան բռնած եւ ապա Յարիցիինի կայարանները գրաւելու համար զէնք բարձրացուցած Չարենցի գործներուն ետին պարզապէս ծիծաղելի է Հայաստանի փրկութեան հաշույն մտածական ենթաճողի մը մտախն մտածելու զիւրահաճութիւնը: Հայաստանի փրկութեան գաղտնիքը պէտք է փրնտաւ Բախտինցի սարգարապտեան խոյանքներուն մէջ եւ ո՛չ թէ Չարենցի ցարիցիներուն պերճանքներուն: Եթէ ամէն ոք խոյս տար թրքական վտանգէն ու անոր զէմ կուրծք զցոյ կարիճներու բանակը չըլլար՝ Յարիցիինէն վերադարձին արդէն Հայաստան չէր գտներ Չարենց եւ մեր արիւնով փրկուածը վերափրկող Յարիցիինի սպիտակամարդարկական ժառանգութիւնը ոչինչ կրնար փրկել, ինչպէս չկրցաւ փրկել մեր ուժերով չփրկուած Կարսը...

Հայաստանի բախտին դիմաց Չարենցի ամէնէն վիրաւոր կողմն է ասիկա եւ անոր իտէարականացումը լուսնուէր մը չէ անոր յիշատակին:

Այդ է: Չարենց մտածած իսկ չէ այն բաներուն մասին, որոնց համար այսօր մարդիկ մարդարէի մը զիւտը կը ճղնին ընել իր մէջ: Չարենցի մտածողական ինքնուրոյն զգայարանքին գործունէութիւնը կը սկսի երեսնական թուականներուն միայն: Ատիկէ առաջ ան երբեք մտածումով չէ առաջնորդւած, ամէն ինչ ընկալած է զրացական հրովառութեամբ:

Արդարեւ, յորդ ու բառն խառնուածք՝ մինչ այդ Չարենց նաեւ դրականութեան մէջ կը մնայ միւս տիպարը, վիան՝ շարժելու, նմանելու, հետեւելու, բլլալու անդուսպ մղումի մը: Իր ճամբուն վրայ հանդիպած բոլոր պատուաստները ընդունելու եւ համապատասխանորար ծաղկելու իր անհամբերութիւնը ուժ ու փորձանք դարձան իրեն նոյն ատեն՝ իր բոլոր հանդրուաններուն մէջ, խորհրդապաշտութենէն մինչեւ յեղափոխական վիպապաշտութիւն, պառնասեան ժուժկայութենէն մինչեւ սոյաթ-նոյաթականութիւն, պատկերապաշտութենէն մինչեւ սպաղապաշտութիւն եւ իրերու պաշտամանքը, ու միւս շփոթմանքը, հսկանքներականութիւնը:

Մեք մեր օրերը, այդը դարու
Հոկտեմբերից եմք հիմա հաշոււմ:

Չարենց շատ պիտի չուշանար՝ ըմբռնելու համար, որ թէ՛ դրականութիւնը եւ թէ՛ պատմութիւնը անպատիժ չեն ձգեր իրենց հետ քմահաճօրէն վարուած անձերը եւ պիտի աճապարէր սրբազրել ինքզինք ե՛ւ մէկուն, ե՛ւ միւսին դիմաց:

Ո՛վ կառնեմում է, որ իր ծնունդից սկսուի այս կեանքը —
Թող իմանայ, որ իր հետ — այն կը մեռնի յաւիտեան:

Չարենցի գրական այս կէտրիչերը քիչ մը դունաորուեցաւ Բուրայատներու սղջամուղջով եւ չքացաւ «Եպիփանկան լուսաբաց»ին հետ, ուր սքանչելի պայծառատեսութեամբ ու նաեւ յուզազաղախ մթնոլորտի մը մէջ գործի կ'անցնի վերլուծող, զանազանող, բնորոշ միտքը, որ կ'անջատէ Լըզը ճիւղէն, քնարը՝ թմբուկէն, մեծը՝ մանրէն, մեղեղին՝ աղմուկէն, յաւերժականը՝ անցաւորէն, կոշուժը՝ ծառայութենէն:

Իմաստութիւնը Չարենցի դրական գործունէութեան վերջին տասնըջորս տարիներուն սահմանադիժն է:

Վերջացած եօթը տարիներու բերքին ստուգաչափը եւ սկսող յաջորդ Եօթին ճանապարհը նշող երդումը: Վերջացածը՝ սառած մոխիր, սկսողը՝ կրակ:

Իմաստութեան յայտնութենէն առաջ, կրկնե՛նք, Չարենց խղումը էր իր մտերիմ անձէն ու միացած իրերու անկիրք աշխարհին, իմաստութեան յայտնութենէն ետք՝ խղուեցաւ իրերու աշխարհէն ու միացաւ իր անձին։

Ու ամէն մարդ գիտէ, թէ զրականութեան մէջ ինչ տխուր հետեւանքներ կ'ունենայ ներքին ուժերու պոստիպումը եւ ծնուցիչ ի՛նչ մեծ պատճառ է միութիւնը։

Առաջին շրջանին իրերու հետ ունեցած փոխյարաբերութեամբ կը չափէր Չարենց իր անձը, երկրորդ շրջանին սկսաւ կշիռ ապ իրերուն ա՛յն չափով միայն, որ անոնք բախաւ ունեցան վերափոխուելու հուշեկան գօտիներու տակ։ Տարբերութիւնը մեծ է։ Բանաստեղծը ա՛ն է ի վերջոյ, որ փոխանակ օգտուելու իրերէն՝ կ'օժտէ իրերը, առարկայ ըլլան անոնք թէ անձ, երեւոյթ թէ տեսիլ։

Չարենցի հանդրուսնային իմաստաբեկէն առաջ այդ իրերը մեծ մասով կ'ապրէին իրենց սեփական ճակատագիրը, ասանց Չարենցին, ըսել կ'ուզենք՝ առանց ներքին պրիսմակներէ արձակուած այլակերպող ու կենդանութեան շունչ փչող ճառագայթներու, մինչդեռ երկրորդ շրջանէն սկսեալ անոնք, իր գրիչին տակ ինկող նոյն նիւթերը՝ սկսան շնչել նոր կեանքով մը։

Նշանակալից է այս երեւոյթը։ Կր հասկցուի, որ զրականութեան մէջ կարելի չէ ուրանալ արեան թելադրանքներուն բախտորոշ նպատակը։ Կուտակուած ժառանգութիւններուն ձգողականութիւնը՝ նոյնպէս։

Գգուեց ինձ սիրով մի ձեռք հայրենի,
եւ ես մի գիշեր իմաստուն դարձայ

Հնարաւոր չէ հարկաւ ճշդել «հայրենի ձեռք»ին ենթական, բայց անուազն հետաքրքրական է մտածել այդ մասին։ Թերեւս երկարատեւ քննութեան մը զգոտացնող անդրազարձն է այդ «գլուանքը», յուսաբեկութեան մը հակազդեցութենէն յանկարծօրէն ժայթքած ճառագայթ մըն է գուցէ, կրնայ հորիզոններ յայտնաբերող գիրքի մը ընթերցումը եղած ըլլալ ազբիւրը, տաճարի մը վեհաշուք բանաստեղծութիւնը, գետի մը կենսատու կարկաչը, յերան մը անրարբատ հայեացքին խօսուն խորհուրդը։

Այս շարքին մէջ, ու միշտ վարկածի սահմանէն ներս՝ կարելի է յիշել նաեւ արտասահմանեան ուղեւորութեան նախօրեակին, րնթացքին ու վաղորդայինն սպրած իր փորձառութիւնները։ Չհաշուած եւրոպական տարրեր ուտաններուն մէջ Չարենցի տեսած մշակութային հսկայ ու հիտարանչ ժառանգութիւններուն բարերար անդրազարձները իր հոգիին ու հայեացքներուն վրայ, հայրենի ձեռքին գգուանքէն իմաստնացած իր նոր ուժին յայտնաբերման մէջ կրնան գեր ունեցած ըլլալ նաեւ իր կարողութիւններուն հաւատացող եւ զառաժուումներուն հանդէպ խտորէն խոժոռած մտաւորականներուն վերաբերումները։ Այս ենթադրութեան համար մենք հիմք ունինք Աղբալեանի «Պոեզոկարծիք»ին գործօրէն հարուստները, պոեզոզուտնայական, կապկազեան ու կուսակազմական թափթփուկները ձեռք տոած Լեւ Կամսարի սուր երգիծանքը, «Ստախտարտ»ը եւ ստանտարտեան բոնները ոչնչացնել տուած Միսանիկեանի գայրոյթը, Օշականի գառական քննութիւնները, Իսահակեանի վէճերը, Նաւասարդեանի բուսն բողձանքը եւ Չարենի անողոք հեղնանքը, որոնք չէին կրնար անտարրեր ձգած ըլլալ Չարենցը։

Իր մէկ զիտուութիւնը հիմնաւորելու առեն՝ Օչական կ'ըսէ՝

«Ան կը խուսափի կենդանի եւ արգաւանդ ճիգէն»:

Այս ասոցերուն Երեսուժին վրայէն լման հինգ տարի չէր անցած ասկաին, եւր Չարենց «Տայրենի ձեռքին» լուրը տուած այդ միեւնոյն բանաստեղծութեան մէջ պիտի ըսէր՝

Եւ աշխատանքի բոցը փրկարար
Իմ անօրեւածեծ երեսը խանձեց:

Եւ ապա, իր նոր կացութիւնը բացայայտող իմաստութիւն բառին հետ՝ պիտի կրկնէր շարունակ նոյն իմաստութիւնը սնուցանող աշխատանք բառը, իր եւ ուրիշներուն ուղղած անջայից հարցումներով՝

... Կոփե՞լ եմք մեմք
Մե՞ս խոյ խոհերն արդեօք աշխատանքի բոցում,
Կոն՞լ եմք խօսք մեր, որպէս պոզպաս,
Որ նա տոկայ, կիզուի, ու անդադար շոգայ
Սերունդների սրտում...

Հոգեխոյսութեան խոտովանութիւն, աշխատանքի բոց, սրտի հանդուստութիւն, ու զօրեղացոյնը՝ իմաստութիւն:

Այս հանգրուանին՝ միայն մէկ-երկու անգամ չի տար Չարենց իմաստութեամբ ողորուած բլլայու լուրը, այլ յաճախ պէտքը կը զգայ յիշեցնել բանաստեղծական իր էութիւնը վերանորոգած այդ նոր ուժը: Երբեմն ներշնչող զիցարանական պոէզիան Մեներվայի բուլին կերտարանքով կ'ըջնէ անիկա վրան, երբեմն կեանքը իբրև յիստանչ ամբողջութիւն ներկայացնող տարածապիտ լոյսի նման, ուրիշ տեղ մետադաձայնը, սեթեւեթ եւ միտները մաքրագործող կրակի մը պէս, այլ էջի մը վրայ՝ «աշխատանքի բոցում» կ'ըզուէլու յամառ ու խտարարոյ կոչ է անիկա, իմաստութիւնը, բայց անոր ամէնէն հնչեղ տրասպայտութիւնները բռնուած են ձոյլ հասկին ու հայրենի ձեռքին զգուանքները կենդանացնող քաղցրացին պատկերներուն մէջ:

Դգուեց ինձ սիրով մի ձեռք հայրենի
Ու ես մի գիշեր իմաստուն դարձայ:

«Ես այն չեմ այլեւս» պոռաց «այն» մնալու զինք հրաւիրող «կարմրադգեստ Փիլիստերներուն ու մարքսիստ շոտներուն» երեսին ու չմնաց «այն», այսինքն՝ ամէն կանչի արձագանցող նախկին անհոյի ձայնափողը, չմնաց անիկ ասածը հոս զուգարող, հետուններէն լսածը մեքենական արագութեամբ մերձաւորներուն կրկնող խոսնափնթոր ձայնը ու նորութեան անունին տակ նեղացուցիչ փոխադրութիւններով էջեր ու էջեր ծանրաբեռնող փոթաջան ուղեկիցը, այլ վար ձգած ամէն ինչ, ամբոխներն ու ամբոխային ամէն բան՝ թուէն ատու մինակութեան, բարձունքներու քորքարտ ճամբուն, պայծառատես իմաստութեան, հայրենավառ անոր լոյսին, այրեց հին երգերը ու զրեց այրող նորերը, որոնց համար ուրիշներ զինք այրեցին:

Հայրենական ձեռքին զգուանքով բացուած իմաստութիւնը դարձաւ Չարենցի նոր ճանապարհին ջահը, առաջնորդեց զինք մինչեւ «Գիրք նախապարհի» եւ եղաւ ի վերջոյ իր ճանապարհ խաչին, լի՝ փառքով ու ողբերգութեամբ:



*
**


Չնչին, ինչպէս Արարատին նետուած քար՝
Դաւերը սեւ մարդուկների այդ անկար
Օ՛, չքիասած փլանցքների անգամ քո՛
Վայր եմ քափում համայնացած քո կամօր —
Եւ առյաւէտ կորչում անգոր ու անկար,
Ինչպէս անհաս Արարատին նետուած քար...

Ալմաստ Չաքարեանի առիթով գրուած վարի պղտիկ գրութեան տարբեր՝ պիտի ուզէինք յարգանքով յիշել (չառ անդամ զիտական իր աշխատութեան կշիւրուն յիշատակ ունեցող) անունները այն վիճանն ու արիասիրտ անձնատրութիւններուն, որոնք մտահոյս փոսնոցներ ոչք առած՝ պահեցին իրենց վտահաւած շարենցեան ձեռագիրները ու փոխանցեցին բուն տիրոջը, հայ գրականութեան։—

- Ռեզինա Ղազարեան (Գ. հատոր, էջ 596)
- Վաղարշակ Նարեկ (Զ. հատոր, էջ 668)
- Խորէն Սարգսեան (Զ. հատոր, էջ 681)
- Տիգրան Հախումեան (Զ. հատոր, էջ 710)
- Նուարդ Թումանեան (Զ. հատոր, էջ 713)
- Գեղամ Սարեան («Իրական քերթ», 1968, թիւ 10)

Մարտիկ Գուրգարեան («Սովետական գրականութիւն», 1971, թիւ 7)

Չարենցէն նամակ կամ խոնարհոյսին պահեալու պահ գրուելու համար թուղթեր ստացած անձերը ասոնք չեն միայն, հոս մտայտածները թող ներքեւ մեզի, պատիւ տակն'ուն։..



ԱՄԱՍՏ ՉԱԿԱՐԵԱՆ

ՇՆՈՐՀԱԿԱԼ ԳՈՐԾ ԵՒ ՇՆՈՐՀԱԿԱԼՈՒԹԻՒՆ

Վերջին քանոմակիին մեր հայրենիքին մէջ եղելէ Չարենցէն հրատարակուեցան բազմաթիւ ժողովածուներ, որոնցմէ իր ընտրած ու լրջութեամբ կ'անջատուի Մանուկ Աբեղեանի անունն գրականութեան ինստիտուտի նախաձեռնութեամբ իրադրուած շարքը՝ վեց հատորներով։

Սրտի պարագ է այս կշիւրուն վրայ արձանագրել երախտադրական խօսք մը այդ հատորներու խմբողիքներուն եւ առանձնապէս «տեքստերը» պատրաստած ու ծանօթագրած Ալմաստ Չաքարեանին մասին, որուն տքնաշուն ու երկարատեւ աշխատանքին շնորհիւ ստացւած է ընթերցողը կարճագոյն ճամբով Չարենցէն մօտեցնող առաջին լուրջ հրատարակութիւնը։

Միւրիչ Արմէն խիստ գոնուած է Ալմաստ Չաքարեանի մէկ թերացումին համար եւ լա՛ւ ըրած է հարկու։ Վստահարար այդ խօսութիւնը անպարզարձ անեցաւ շարենցողէտին վրայ եւ արուած տեղեկութիւնները խնդութեամբ լիցուցին հողին՝ իր նուիրական ձեռնարկը առաւել կատարեալ տեսնելու ճամբուն մէջ։

Մոնտրով գուրս մնացածներուն պատմութիւնը ու նայելով միայն ներս անուածներուն զիտական բաժնին, պիտի բանեք, որ հետաքրքիր միտքը հոս եւս կարգ մը տեղեր զահայում չի գաներ։ Գիտնականը Չարենցի գործերուն մօտեցած է անհասարար բժախնդրութեամբ կամ ծանօթութիւններու քանակով, ամանց («Մանուկ տեսիլ») առիթով յանկարծ ընդհատուած են կրահաւածներուն ծանօթագրութիւնները, որիչներուն («Աքիլլ՝ս, ԲԷ Պիքո») բովանդակած բացայայտ ակնարկութիւնները չեն լուստրանուած, էրբորդ տեղ մը («Պատգամ») զազախարք ենթարկուած է կամասար այլասերման, եւայն։

Բայց ասոնք մտանակի երեւոյթներ են եւ չեն կրնար արդիւր ըլլալ, որ զեղչէնք մեր համարուած Չաքարեանի գործին հանդէպ, որ զինն է մեծ կիրքի մը, խօր պրպատմներու, ճանաչումներու, յաճախ յոնոգնութեան։

Անհատական բարգաւթիւններով, զազախարական վերիվայրումներով, թշնամական կեցուածքներով, թշնամիներով, խորհուրդներով ու խորհրդաւարութիւններով հարուստ դէմքի մը առիթով, որպիսին էր Չարենց, զիտական անթերի գործ մը զլուխ բերելը առայժմ շատ զիւրին չէ մեր հայրենիքին մէջ, ու զլուխ բերուածը պղտիկ չէ արդէն, շնորհակա՛լ աշխատանք։

«ԲԱԳԻՆ»Ի 19776-7Ի ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆԸ



Հեղինակ	Խորագիր	Թիի
Բ Ա Ն Ա Ս Տ Ե Ղ Ծ Ո Ւ Թ Ի Ի Ն		
Գ. ՊԸԼՏԵԱՆ	Վայրեր	1
» »	Լեռ	6
Յ. ՊԵՐՊԷՐԵԱՆ	Պրիամակ	1
» »	Արգիլեալ գոտի	3
» »	Աշխարհահայեացք	4
» »	Շրջաններ	9
» »	* **	9
» »	Զրապտոյտ	9
Պ. ՀԵՐԵԱՆ	Հրատեր մեծերուն	1
» »	Դուր գիտե՞ք աչքեր	1
» »	Խորքին շարժումը	1
» »	Սրբացած դողեր	1
» »	Ալլահին բերը	1
» »	Հրամէ, տար	1
» »	Գրեքէ	1
» »	Թաղումէն ետք	5
» »	Գիչ պոռա՛, Չարեճ	12
Յ. ԳԵՂԱՐԴ	Մեկնումի երգ	2
» »	Աշնան երգ	2
» »	Աշնան անձրեւ	2
» »	Յիշեցում	2
» »	Արեւիս	2
» »	Դուն՝ արեւաբոյր	2
» »	Աղօթք	2
» »	Տրամուրիւն	3
» »	Հրաբուխ	3
» »	Ինֆնօրօրում	3
» »	Թափառում	3
» »	Երջանկութիւն	3

Հեղինակ	ԽՈՐԱԳԻՐ	ԹԻԻ
Յ. ՄԱՆՈՒԿԵԱՆ	Ուղիներով անվերադարձ	2
» »	Անանդրադարձ վայրկեաններու փարափին	2
» »	Լիւրքեան անցարգելին յանդիման	2
» »	Հարսվոյք եւ հեռանկար	3
» »	Գնդեցկուքիւն անիծապարտ	6
» »	Անյայտ իմացումի մը կամբջակին	6
» »	Հոքիգոնական ձգտումներ	6
» »	Վարդարայնի մը հողաթումբին	6
» »	Մտապասկերիւն անպակ	8
» »	Կապուտուչեայ առասպել	12
Ս. ԿԻՐԱԿՈՍԵԱՆ	Աճումարիւն	4
» »	Երկունի	4
» »	Ինքնահանաչում	4
Վ. ՕՇԱԿԱՆ	Հարցումներ իւր	5
Ե. ԳԱՍՊԱՐԵԱՆ	Կտակ	6
Փ. ՃԵՐԱՆԵԱՆ	Մտապասկեր	2
» »	Ես ու դուն	6
» »	Կէս գիշերային պահեր	6
» »	Մայրեր	7
» »	Գրանու սեմին	7
» »	Ներքոց Եղիշէ Չարեցիին	12
Յ. ՆԱԳՈՒԼԵԱՆ	Երագ	7
» »	Երկիր	7
» »	Աչքեր	7
» »	Երագ մը	8
Է. ՍԱՐԱՃԵԱՆ	Ջէրօ պահ	8
ՍԱՀԱԿԻՈՒԽՏ ՍԻԻՆԵՅՅԻ	Անպակեան տաճար	8
Ի. ՈՐԲԵՐԵԱՆ	Սկիզբ եւ վախճան	9
» »	Հիմա որ...	9
» »	Կախարդը	9
ԳՐ. ՆԱՐԵԿԱՅԻ	Թարգմ. Վ. ԳԵՈՐԳԵԱՆ	9
ՅՈՎՀ. ԳՐԻԳՈՐԵԱՆ	Հայաստան	9
» »	Սոսիտ	9
Հ. ԷՂՈՅԵԱՆ	Դիպուկ քամու հետ	9
Դ. ՅՈՎՀԱՆՆԵՍ	Ժողովրդական կատայց	9
	<i>(Լիբրկական սեպարատ)</i>	
Ա. ՄԱՐՏԻՐՈՍԵԱՆ	Թռչուններ	9
Ա. ՅԱՐՈՒԹԻԻՆԵԱՆ	Նոր եղանակ	9
» »	Քեզ	9
ՀՐ. ՍԱՐՈՒԵԱՆ	Այս գիշեր	9
» »	Աշուն	9
Գ. ՊԵՏՐՈՍԵԱՆ	Սէր իմ Հայաստան	9
Ա. ՊԱՐՍԱՄԵԱՆ	Սալուէ	9
» »	Եւ գիշերուայ մութ, տաք ալիքներում	9
» »	Աշուն կարկթոյ իմ տաք մասներով	9

Հեղինակ	ԽՈՐԱԳԻՐ	ԹԻԻ
Դ. ՎԱՐՈՒԺԱՆ	Դաստիարակը	10
Ժ. ՅԱԿՈՒԲԵԱՆ	Դպրոցն ահա	10
Մ. ՄԱՐԳԱՐԵԱՆ	Հայոց ուսուցիչ	11
Ե. ԶԱՐԵՆՑ	Բանաստեղծութիւններ	12

Ա Ր Զ Ա Կ

Պ. ՍՆԱՊԵԱՆ	Պղտոր ջուրեր	1
» »	» »	5
Մ. ԻՇԽԱՆ	Սպասում	1
» »	»	2
» »	Միևս Աշխատող	3
» »	» »	4
Է. ԻՈՆԵՍՔՕ	Դասը	1
» »	»	2
» »	»	3
Ն. ՏԷՐ ՍԱՐԳԻՍԵԱՆ	Քաղաքը	1
» »	Վայրկեանը	1
» »	Պարապր	2
Յ. ՕՇԱԿԱՆ	Մոոցուած բաներ	1
» »	Արծիւները	9
Ն. ԶԱՐԵՆՑԵԱՆ	Լիներ՝, քէ չլիներ	2
ՍՏ. ԶՕՐԵԱՆ	Եւ ես երգեցի	2
Ա. Ն. ԶԱՐԵՆՑԵԱՆ	Լուսինը չնեղճուեցաւ այդ օր	7
Գ. ԲԵՍ	Սենա՞լ, իսկ եա՞նը	2
Յ. ԿԱՐԱՊԵՆՑ	Ո՞վ ասաց քէ քաղաքները չեն մեռնում	3
Ս. ՍԱՆԻՆԵԱՆ	Նիւ. Եսք եւ դարձ	3
» »	Ծիծաղող մարդը	6
» »	Մի անվերջանալի պատմութիւն	6
Ա. ՀԱՅԿԱԶ	Մեր դրացի թորամանեանները	4
Վ. ԳՐԻԳՈՐԵԱՆ	Թագաւորի փոքր որդին	4
Ա. ՄԵՆԱԿԵԱՆ	Անապատի օրերից մէկը	4
Ա. ԻՍԱԶԱՆԵԱՆ	Սուրհի իմ ծառ	4
Հ. ԶԱՐԳԱՐԵԱՆ	Օտարտի արիսպագոս մը	5
Ռ. ՈՐԲԵՐԵԱՆ	Դրագիտուհին	5
ԱԻ. ԻՍԱՀԱԿԵԱՆ	Ուստա Կարօ եւ Օրթէ Յարուք	5
Ն. ՎԻՐԱՊԵԱՆ	Անկեղանոց	6
» »	Յարութեան օրը	9
Ս. ՍԱՀԱՌՈՒՆԻՆ	Մթին որջերի բնակիչները	6
Վ. ՕՇԱԿԱՆ	Փարոս	7

Հեղինակ	ԽՈՐԱԳԻՐ	ԹԻԻ
Բ. ԵՂԻԱՅԵԱՆ	Որդի մարդոյ	7
» »	» »	8
» »	» »	9
Է. ՍՏԵՓԱՆՅԱՆ	Խոր աշուն	8
» »	Անտեսանելի անձրեւ	8
ՐԱՖԳԻ	Տէր Թողիկի դպրոցը	10
Ե. ՍՐՄԱՔԷՇԽԱՆՆԵԱՆ	Թռուցիկ յիշատակներ	10
Բ. ՆՈՒՐԻԿԵԱՆ	Թղկատիցին իր աշակերտներուն հետ	10
Կ. ՍԱՍՈՒՆԻ	Էնոնի ողջ մնան	11
» »	Սատուցի Դաւիթ	11
» »	Յուլը	11

Ի Մ Ա Յ Ա Կ Ա Ն Շ Ա Ր Ժ ՈՒ Մ

Լ. ՄԿՐՏՁԵԱՆ	Փիլիսոփայական մտքի վիճակը Խորհրդային Հայաստանում	1
» »	» »	2
» »	» »	3
» »	Ալեքսանդր Սուլժեցկին	4
» »	» »	5
» »	» »	6
» »	» »	7
» »	» »	8
» »	» »	9
» »	Մանկավարժական մամուլը այժմեան Հայաստանում	11
» »	Բանաստեղծի կեանքին վերջին տարիները	12
Ս. ԿԻՐԱԿՈՍԵԱՆ	«...Եւ շեշտ իւրաքանչիւր տառին վրայ»	1
» »	Անջրպետներու խորհրդուն	2
» »	Էօթէն Իոնեսուցի «Դասը» կամ գոհերուն նախապահը	3
» »	«Ո՞ւր է բանաստեղծութիւնը այսօր»	5
» »	» » »	6
» »	Պ. Սիւննեանի «Կանաչներու առասպել»ը	6
Գ. Ճ.	Բ. Մէքեանի «Cahier noir»ը	1
ՀՐ. ՄԱԹԵԻՈՍԵԱՆ	Մեր բոլորը, մեր ընկերը, մեր խրախուսիչը	2
Ժ. ՊՐԷՆԵՐ	Լուիզ Սեւովիչէնի հարիւր հատարները	2
Յ. ՄԱՆՈՒԿԵԱՆ	Վ. Հանեանի «Հայչազ արծաթներ»ը	1
» »	Յ. Գեղարդի «Սանիսի հրաբուխ»ը	6
Վ. ՆԻՒՐԻԿԷԹԼԵԱՆ	Ե. Հայրապետեանի «Անմահների Երթ»ը	1
» »	Ադամով կամ լինելութեան մոգականը	2
» »	» » »	3

Հեղինակ	ԽՈՐԱԳԻՐ	ԹԻԻ
Մ. Մ.	Փարաջանովի «Մեր նախնիներին մոռացուած ստուերները» շարժանկարը . . .	5
Մ. Լ.	Կաննի կինոփառատոնի մասնակիցների պաշտպանութիւնը Սերգէյ Փարաջանովի օգտին	5
Մ. ԵՈՒԶԲԱՇԵԱՆ Ժ. ՎԻՏԱԼ	Եւ Յարից «Նոան գոյնը» Սերժ Փարաջանեան՝ կամ բանտարկուած բեմադրիչը	5
Բ. ՓԱՓԱԶԵԱՆ	Թատրոնի կոչումը	6
» »	Յառաջապահ քատրոնի մասին	9
» »	Ն. Աղբալեանի մէկ պահը	10
Յ. ՆԱԳՈՒԼԵԱՆ	Թօքափենի անտարբերութիւնը	6
Յ. ՊԵՐՊԵՐԵԱՆ	Գ. Պըլտեանի «Տեղադրութիւն քանդուող քաղաքի մը համար»ը	6
» »	Նախորդ սերունդներուն աւանդը	10
» »	Եղիշէ Զարեց	12
Ս. ՏԻԳՐԱՆԵԱՆ	Նամակ՝ Հ. Հ. Պատուիրակութեան	7
Ս. ԳՈՒՐԵԱՆ	Սիրական Տիգրանեան	7
ԳԱՐԵԳՒՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ	Հայ մշակոյթի դերը հայակերտութեան մէջ	7
» »	Թարգմանի՛չ...	8
Հ. ԱՃԱՌԵԱՆ	Գիտութեան մատուցած ծառայութիւններս	9
Պ. ՍՆԱՊԵԱՆ	Վասն երկարատեւ երկունքներու	7
» »	Շ. Պէրպէրեանի «Արժէքաբանութիւն»ը	7
» »	Յ. Օշական՝ ուսուցիչը	10
» »	Զարեց՝ Զարեցի մասին	12
Կ. ՅՈՎՀԱՆՆԷՍԵԱՆ	Մ. Իշխանի «Սպասում»ը	7
» »	Ա. Կռանեանի «Միայն լուսնով կայ Հայոց փրկութիւն»ը	9
Ռ. ԻՇԵԱՆԵԱՆ	Անեզրական սիրոյ բանաստեղծը	9
» »	Ես ականատես եմ եղել	11
Ռ. ԶԱՐԵԱՆ	Հրաչեայ Անտեան	9
ԷԳ. ԱՂԱՅԵԱՆ	Բազմերախտ հայագէտը	9
» »	Մեսրոպ Մաշտոց	10
Ս. ՍԱՀԱՌՈՒՆԻ	Մշակութային լուրեր	9
Ս. ՊՕՅԱՃԵԱՆ	Հ. Տաննապետեանի «Հայկական Հարցը»	9
Ռ. ԳԱՐԲԻՆԵԱՆ	Սիրոն Յակոբեան	8
Ս. ՍԱՆԻՆԵԱՆ	Հայաստանեան մի երիտասարդ գրողի մասին	8
Ֆ. Լ.	«Հրեզնէ ձիեր»էն դէպի պայքած «Նուռեր»ը	8
Վ. ԱՐԶՈՒՄԱՆԵԱՆ	Նամակ՝ խմբագրութեան	8
Շ. ՄԱԼԷՔ	Մշակոյթն ու մտաւորականը	8
ԳՐ. ՅԱԿՈԲԵԱՆ	Առաջին բանաստեղծուիին	8
Ա. ԿՈՍՏԱՆԵԱՆ	Ռնի հրամայականը	9
Մ. ՂՈՒԿԱՍԵԱՆ	Պատուի եւ անպատուութեան բարէ վկաները	9

Հեղինակ	Խնդիր	Թիվ
Վ. ԱՌԱՔԵԼԵԱՆ	Նարեկացիի լեզուն	9
Մ. Մ.	Գրիգոր Նարեկացի	10
Է. Պ.	Մխիթար Գոշ	10
Փ. Ա.	Վարդան Արեւելցի	10
Հ. ԳԱՐՐԻԷԼԵԱՆ	Գլածորի համալսարանը	10
Ա. ԱՐԵՒՇԱՏԵԱՆ	Յովհան Որոտնցի	10
Վ. ԽԵԶՈՒՄԵԱՆ	Գրիգոր Տարեւացի	10
Մ. Ի.	Լազարեան նեմարան	10
ԱԻ. ԶԱՆԶՈՒՂԱԶԵԱՆ	Դպրոց ազնիւ ու բարի անուն	10
ԱՐՏ. ԱՐԵՂԵԱՆ	Դորպատի դերը	10
Ն. ՊԵՇԻԿՔԱՇԷԱՆ	Պետրոս Մազաբեան	10
ԵՒ. ՊՕՅԱՃԵԱՆ	Տէր Թողիկը	10
Ա. ԶՕՊԱՆԵԱՆ	Մուրառ Ռաֆայելեան վարժարան	10
Ս. ՎՐԱՅԵԱՆ	Գեորգեան նեմարան	10
Ն. ԹԱՇՃԵԱՆ	Սահասարեան վարժարան	10
ԵՂ. ՍԻՄՔԷՇԵԱՆ	Մելիքն Կիւրնեան	10
Գ. ՍՏԵՓԱՆԵԱՆ	Անատեանի հետ	10
Ա. ԱՀԱՐՈՆԵԱՆ	Ինչպէ՞ս գրուեցաւ «Աղտուիթեան ճանապարհ»ն	10
Կ. ՊԱՂՃԵԱՆ (ՎԱԶԳԷՆ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍ)	Խրիմեան Հայրիկ որպէս դաստիարակ	10
Կ. ՍԱՍՈՒՆԻ	Կրթական եւ մտաւորական վերածնունդը Տարօնի մէջ	10
» »	Նախարան՝ «Սասունցի Դաւիթ»ի	11
Յ. Թ. ՀԻՆՂԷԱՆ	Ռէթեոս Պէրպլերեան իբրեւ դաստիարակ	10
Ա. Ն. ՊԱՏՐԻԿ	Վարուժան՝ մեր ուսուցիչը	10
Ա. ՆԱԶԻՆԵԱՆ	Կովիտասի աւանդների շարունակողները	10
Ա. ՀԱՅԿԱԶ	Յ. Օշական	10
Ս. ՓԱՆՈՍԵԱՆ	Մելիքնեան կրթական հաստատութիւնը	10
Ա. Ա. Թ.	Շահան Պէրպլերեան	10
Մ. ԻՇԵԱՆ	Լեւոն Շանթ դաստիարակ	10
» »	Նշխար մը Կ. Սասունիէն	11
» »	Հարցաթերթիկին պատասխանը	11
» »	Ե. Զարեանցի «Գանդրահեր աղան»	12
Յ. ԿԱՐԱՊԵՆՅ	Մեր դպրոցի լոյսը	10
» »	... Զարեանցի գերեզմանը	12
Ե. Մ.	Քարէն Եփփէ նեմարանը	10
Ն. ԶԱՐԵՆՈՒՏԵԱՆ	Ուսուցիչը	10
» »	Եղիշէ Զարեանց	12
ԳԱՐԵԳԻՆ Բ.	«Այդ է իմ կերակուր եւ ըմպելի...»	10
ԱԹՈՌԱԿԻՅ ԿԱԹՈՂԻԿՈՍ		
ՌՈՒՔԷՆ	Սիրելի Սասունի	11
Ա. ՆՈՒՐԵԱՆ	Կ. Սասունի	11
Կ. ԶԱՐԵԱՆ	Սիրելի Սասունի	11

Հեղինակ	ԽՈՐԱԳԻՐ	ԹԻԻ
Վ. ՎԱՀԵԱՆ	Հարցաբերքիկին պատասխանը	11
Ա. ՓԵՀԼԻՎԱՆԵԱՆ	Հարցաբերքիկին պատասխանը	11
Ժ. ՍԱՐԳԻՍԵԱՆ	Հարցաբերքիկին պատասխանը	11
Վ. ՊԵՏՐՈՍԵԱՆ-Ս. ՀԱ- ԽՈՒՄԵԱՆ	Հարցազրոյց	11
Հ. ՂԱԶՈՅԵԱՆ	Ամենակարեւորը՝ ուսուցիչը	11
Բ. ՅՈՎՍԷՓԵԱՆ	Գրական լեզուի ուղին գոեհկուրթիւնը չէ	12
Ե. ԶԱՐԵՆՑ	Նամակներ	12

Խ Մ Բ Ա Գ Ր Ա Կ Ա Ն Ն Ո Ւ Ե Ր

Վերսկսելէ առաջ	1
Վերանորոգ շնչառութեամբ	1
Մեծերուն մեծ կիրքին օրինակով	1
«Յանգ պիտէ պահիր»	2
Յաւալի կորուստ մը	2
Անհանգիստ եւ միշտ ծարաւի	2
Աւելի գօրաւոր, քան իր կացութիւնը	2
Նոր արձակագիրներ	4
Մարդուն մարդկայնացումը	4
«Պատախրեցին յամենել ձեզ»	4
«Նա չի գրի, չի գրի»	5
Գրական լուրեր	5
Անտարբերութեան ուտիչը	5
Յարգելի յարգանք եւ անյարիր բաներ	5
«Հայ ժողովուրդի սերունդներին»	5
Ի սէր Աստուծոյ	5
Թոքովեցի ողբերգութիւնը	6
Սիրական Տիգրանեան	7
Յուսատու հեռանկարներ	7
Օթելլոյի քաշկիմակը	8
Թարգմանչուհիներու ջոկատը	8
Փարաջանովի հարցը	8
Մեծը՝ Հրաչեայ Անառեան	9
Մահ՝ Կարօ Սասունիի	9
Շահեկան գիրք մը՝ «Գրական տեղեկատու»	9
Հոսանքն ի վեր	10
Եղիշէ Զարեանց՝ ուսուցիչը	10

Յարգալիբ, հերոսապաշտ, սրտագեղ	11
«Բազին»ի հարցաթերթիկը	11
«Ոսկի երակը Հնամեայ ցեղիս»	12

Ն Շ Մ Ա Ր Ն Ե Ր

«Եւ գրել, գրել, գրել...»	2
Խորագիրը՝ նկարներով	2
Կամայական մեկնաբանութիւններ	2
Ցանկամ տեսնել	3
Ես մեր լեզուին հարստութիւնը գգացի, երբ...	3
Այս էջին վրայ	6
Խմբագրական ողբերգութիւն	6
Սալնոյ ձոբերում	6
Շնորհաբաշխ շոայլաբաններ	7
«Վարպետը ստեղծագործում էր...»	7
Նորից ու նորից...	7
Մինչեւ հիմա էլ	7
«Եւ աշայէս շարունակ...»	7
Թերեսս	7

Մ Շ Ա Կ Ո Ի Թ Ա Յ Ի Ն Լ Ո Ի Ր Ե Ր

Յայտարարութիւն՝	
«Գէորգ Մելիտինեցի» գրական մրցանակի դատակազմին	7
Հ.Բ.Ը.Մ.ի Ալեք Մանուկեան	
մշակութային հիմնադրամի հրատարակութիւնները	7
Ալեք Մանուկեան գրական մրցանակ (արդիւնքներ)	8
Վերջին կոչ Սփիւռքի հայ գրողներուն (Մ. Թէօլէօլեան)	9

Մեր տրամագրութեան տակ ունինք մեր աշխատակիցներուն կողմէ ներկայ բացառիկին համար պատրաստուած, բայց խմբագրութեանս ուշ հասած շարք մը գրութիւններ, զորս պիտի տանք մեր յաջորդ թիւերով:

Ներկայ բացառիկին մէջ տրամադիր էինք ընթերցողին ուշադրութեան յանձնել նաեւ Չարենցի ամսին ու գործին անդրադարձող Կոստան Չարեանի, Լեռ Կամարի, Ստեփան Զօրեանի եւ կարգ մը ուրիշ դէմքերու վիպական, երգիծական ու յուշագրական էջերէն հմուշներ, բայց տեղի անձկութեան պատճառով հնարաւոր չեղաւ յոյս ընծայել մեր անցատուած այդ էջերը:

Յիշեալ դէմքերուն վկայութիւնները պիտի ներկայացնենք «Քաղին» յաջորդ ապրիլեան ընթացքին, տարբեր թիւերու մէջ:

Չարենցի մասին հայրենի մամուլին մէջ այս տարուան ընթացքին յոյս տեսած բոլոր գրութիւնները, ինչպէս նաեւ բացառիկները դեռ չենք ստացած: Շատ հաւանական է, որ ամռանց մէջ գտնուին անտեսուած գրութիւններ, որոնց ամբողջութիւնը կամ առնուազն լուրը պիտի օգտանք հաղորդել ընթերցողին:



ԵՂԻՇԷ ՉԱՐԵՆՑԻ կիսանդրին
Գործ՝ ԱՐԱ ՍԱՐԳՍԵԱՆԷԻ



ԵՂԻՇԷ ՉԱՐԵՆՑԻ դիմանկարը
Գործ՝ ՌԵԳԻՆԱ ՂԱԶԱՐԵԱՆԷԻ

ՏԱՐԵԿԱՆ ԲԱԺՆԵԳԻՆ

ԼԻԲՐԱՆԱՆ	50 Լ. ՈՍԿԻ
ԱՐՏԱՍԱՀՄԱՆ	27 ՏՈԼԱՐ
ՀԱՏԱՎԱՃԱՌ	5 Լ. ՈՍԿԻ

پاكين

مجلة شهرية ، ادبية وفنية علمية
مدير المسؤول
السيد ارتين كارنيك قزائجيان

PAKINE

REVUE MENSUELLE
LITTÉRAIRE & ARTISTIQUE

Propriétaire

Dr. A. KAZANDJIAN

Բ Ա Գ Ի Ն

ԱՄՍԱԳԻՐ

ԿՐԱՆԱԿՆՈՒԹՅԱՆ

ՈՒ ԲՐՈՒՆԾՈՒՄԻ

Խմբագիր

Պ. ԱՆԱԳԵԱՆ